ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ՅՈՒԼԻՍ 31 - ՕԳՈՍՏՈՍ 1
SAMEDI - DIMANCHE
31 JUILLET - 1er AOUT
2004

LE NUMERO: 1 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 230 եւրօ — Վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար· 270 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
247 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

ՕՐԱԹԵՐԹ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·002 | Fondateur SCHAVARCH MISSAKIAN | 80e ANNEE — N° 21.002

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

79

«Յառաջ» տարի մը ևս բոլորեց հասնելով 80ամեակի սեմին, աւելի դժուար պայմաններու մէջ քան անցեալին, բայց եւ այնպէս տոկաց:

Յամառօրէն տեղի չտուաւ խոչընդոտներու, ամէն անգամ փորձեց յաղթահարել, համոզուած մնալով, որ հակառակ ստեղծուած նոր պայմաններուն, ընթերցողներու անխուսափելի նուազումին, տպագրական բարդ կացութեան, տիրող յուսալքիչ մթնոլորտին, իր գոյութիւնը դեռ անհրաժեշտութիւն կը մնայ:

Ճի՞շդ է: Թերեւս՝ ո՛չ ոմանց համար, քանի ինչ որ առաւելաբար ճնշիչ է, ծաւալառած անտարբերութիւնն է· այն տպաւորութիւնը կը տիրէ որ սփիւռքեան լուրջ տագնապները ոչ ոք կը յուզեն այլեւս:

Կարելի՞ է խուսափիլ կրկնութիւններէ եւ չկրկնել, անգամ մը եւս, օրինակ առնելով մեր գաղութը, ուր ոչ դարաւոր Մըխիթարեան վարժարանին փակումը, ոչ կուսակցական երկրեղու օրաթերթի մը վախճանը, ոչ Ս· Մեսրոպ կրթարանին վերանորոգման մէկ լուծումին բարձի թողի ըլալը իրարանցում ստեղծեցին: Ոմանց համար, թերեւս, հոգերը պակսեցան:

Գոհունակութեամբ, հաւանաբար, հարկ է հաստատել որ համազգային իրարանցում մը ծնունդ առաւ կիպրոսի Մելգոնեան վարժարանի փակումի որոշումին առթիւ, թէեւ ամիսներու երկայնքին պարզուեցաւ որ այդ որոշումին պատասխանատու Վարիչ Մարմինը ոչ մէկ կարեւորութիւն տուաւ հանրային կարծիքին: Ոչ իսկ խոռվեցաւ:

Հակառակ այս յուսալքիչ տուեալներուն, որոնք լաւատեսութեան չեն կրնար տեղի, հարկ է վանել լացի պատեհը ու կառչիլ յուսատու երեւոյթներու: Ի՞նչպէս բացատրել սակայն, որ երբ «Յառաջ» հիմնուեցաւ, ան ալ Օգոստոս 1ին թուականի մը, երբ գաղութը իր ծագում կ'առնէր եւ հազիւ 50 հազար հայ կը հաշուէր, թերթին տպաքանակը հասած էր 5000ի եւ այսօր, երբ կը պարծենանք հինգ հարիւր հազարի բարձրացած թիւով մը, տպաքանակը կէսէն ալ վար է մինչ գաղութին ալ ճոխացած է հայախօս երկիրներէ գաղթած Հայերով: Կարելի՞ է ամէն բան վերապրիլ հեռատեսիլին, համացանցին, հաստատելով որ ծնունդի այդ ըղձանին անոնցմէ ոչ մէկը կար, այլ միայն արմատախիլ Հայը, որ հայերէնն օրաթերթի ծարաւն ունէր: Կը բաւէ՞ արդարացնելու համար տիրող նահանջը, մանաւանդ լեզուի դեռնին վրայ:

Որքան ալ ցեղասպանութիւնը եւ անոր անհրաժեշտ ճանաչումը, գլխաւորաբար Թուրքիոյ կողմէ, կենսական կը մնան, պէտք չէ որ անոնք մեր գոյատեւման միակ հեռանկարները ըլլան: Մեր գոյատեւման համար անհրաժեշտ են մեր լեզուն, մեր մշակոյթը, մեր գրականութիւնը· այլապէս, նոր սերունդները հաչմանդամ կը մնան: Երբ ԱՄՆ-ու մէջ երանելիներ կան որոնք չատագով են հայածէս պատարագը ամերիկերէն ընել, այլ խօսքով, բոլորովին թաղել Մայրենին, կը նշանակէ որ տեղ մը ծուռ բան մը կայ: Ճիշդ՞ կրկին Ժոզէֆ Քէսէլը.- «La langue est l'expression la plus profonde, la plus élémentaire du génie d'une race. C'est elle qui forme l'intelligence et la coule dans un même creuset. ...Je me souviens qu'en Irlande, aux temps héroïques de la Lutte contre la Couronne, les Chefs du SINN FEIN disaient "Le gaélique chassera mieux les Anglais de chez nous que nos fusils"» («*Terre d'Amour et de Feu*»).

Այս պայմաններու մէջ է որ «Յառաջ» կը փորձէ չարունակել իր առաքելութիւնը, կառչած մնալով լեզուին, մեսրոպեան ուղղագրութեան, մերժելով քալել ժամանակին հետ, տասնեակ նոր լեզուներով ճոխացնել «հայ» մամուլը, որ Բաբելոնի աշտարակի վերածուած է Սփիւռքի մէջ: Եւ գաղտնիք չէ որ պայմաններն ալ աւելի դժուար են, երբ կը վերաբերին անկախ օրաթերթի մը, որու ճիտին պարտքն է ինքնաբաւ ըլլալ, ապաւինելով միայն իր բաժանորդներուն, սակաւաթիւ ազգային բնոյթ ունեցող ծանուցումներու եւ բարեգործման ֆոնտին:

Եւ այս պայմաններու մէջ է, որ կը չարունակենք մեր ուղին դէպի ութսունամեակ:

«Յ Ա Ռ Ա Ջ»

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ԱԶՆԻՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Աբձակուրդի առթիւ, տպագրական յաւելեալ դժուարութիւններու հետեւանքով, «Յառաջ» ԲԱՑԱՌԱԿԱՍ լոյս չի տեսներ ՕԳՈՍՏՈՍ 2ին 15 (Օգոստոս 3էն մինչեւ Օգոստոս 14/15ի թիւերը): Խմբագրատունն ալ փակ է Օգոստոս 2էն 16:

ՄԵՐ ՅԱՋՈՐԴ ԹԻՒԸ՝ ԵՐԵՔՇԱԲԹԻ, ՕԳՈՍՏՈՍ 17:

Exceptionnellement «Haratch» ne paraîtra pas les deux premières semaines d'Août (numéros datés **du 3 au 14/15 Août**). Les bureaux restent fermés à la même période.

Notre prochain numéro portera la date du **Mardi 17 Août.**

ՏԵՐՈՒՆԻ

ԿԻ ՄՈՒՍԼԵԱՆ

Նոր ցաւով խմացանք, որ Յուլիս 28ին, յետ երկարատեւ հիւանդութեան, իր մահկանացուն կնքած է Կի Մուսլեան, 63 տարեկանին: Երկար տարի է կը տառապէր արդէն եւ դիտակից էր իր մօտալուտ վախճանին:

Ծնած էր 1941ին պարտիզակցի ծնողքէ եւ կանուխէն, 14 տարեկանին մտած էր Հ.Յ.Դ· Նոր Սերունդի շարքերը, մաս կազմելով Պանեէօղի խումբին· մեծ խանդավառութեամբ մասնակցած էր 60ական թուականներու բանակումներուն: Որպէս ղեկավար տարր 1968էն 1973 անգամ եղած էր Նոր Սերունդի Կեդրոնական Վարչութեան: 1966էն արդէն մաս կը կազմէր Հ.Յ.Դ·ական ընտանիքին, 25 ընկերներու հետ միանալով ողբացեալ Նուպար Նիկոդոսեանի մղումով ստեղծուած Հ.Յ.Դ· Սողոմոն Թէհլիրեան խումբին:

1975ին, մէկը եղած է այն կազմին, որ նպատակ ունէր զարկ տալ Հայ Դատի գործունէութեան Հրայր Թորոսեանի, Ա-րա Գրիգորեանի եւ Տիգրան Թորոսեանի գլխաւորութեամբ: Կարեւոր դեր ունեցած է նաեւ 1975 Յունիս 6ի Փարիզ տէ Գոնկրէի հանրահաւաքի յաջողութեան մէջ:

1991ին մաս կը կազմէր «Շէն-Ֆրանս»ի կոլիզէին, գործնապէս մասնակցելով Հայաստանի եւ Արցախի (ուր գացած էր 1995ին) զարգացման նպաստելու օժանդակութեան աշխատանքին: 1999 - 2002 գլխաւորած է միութիւնը: Երբեք չէ բացակայած Սեւրի Մխիթարեան վարժարանի սրահներէն, Շէնի տարեկան տօնավաճառին, որ իրեն առիթ կը ստեղծէր ձեռնարկուած ծրագիրներուն մասին իր համոզումը բաժնելու ուրիշներու հետ:

Կի, ժողովրդական, համակրելի, անոյշ նկարագրի տէր անձ մըն էր, որու անհետացումը բաց մը կը թողու Հ.Յ.Դ· ընտանիքին մէջ եւ ընկերներու մօտ ջերմ յիշատակը ողջամիտ, ուղղամիտ ընկերոջ մը: Օրինակելի անձի մը մահն է զոր կ'ողբայ մեր գաղութը:

Մեր ցաւակցութիւնները իր կնոջ, զաւակներուն եւ ընտանեկան պարագաններուն: Յուղարկաւորութեան մանրամասնութիւնները տե՛ս· Դ· էջ:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՓԱՐԻԶԻ Թրոքատէրոյի Մարզակային Ի-րադանց եւ Ազատութեանց հրապարակին վրայ, Յուլիս 29ին, Մշակոյթի նախարարը՝ Ռիչըռ Տոնրտիէօ ար Վապր մեծաթիւ յիշատակը արձանագրեց ի-նեցհարիւրամեակի տօնակատարութեանց պաշտօնեաներուն, որոնք մեռած են Լրենց արհեստին բերմամբ: Նախարարին համար՝ 2003ը սեւ տարի մը եղած է մամուլի աշխարհին համար: Բացատրած է նաեւ յուսահատակի մը ի յիշատակ լրագրողներուն՝ «զոհ՝ տեղեկացնելու իրենց պարտականութեան»: Միայն 2003ին շուրջ 50 լրագրող մեռած է:

ՖՐԱՆՍԱՅԻ մէջ, Յունիսին, գործազրկութիւնը 1% յաւելում կրած է, ինչ որ կը նշանակէ թէ 2600 նոր գործադուրկներ կան:

ԻՐԱՔ ժամանած է Յուլիս 30ին, ԱՄՆ-ու Արտաքին նախարարը՝ Գոլին Փաուըլ: Երկրին մէջ կացութիւնը միշտ ծանր է: 13 մեռեալ կայ եւ նոյնքան վիրաւոր Ֆալուճա, բախումներու եւ ամերիկեան յարձակման մը հետեւանքով Յուլիս 29էն 30ի դիչերը: Միւս կողմէ, Քոֆի Անանի դիմումին վրայ յետաձգուած է Ազգ· Համագումարը, որ տեղի պիտի ունենար Յուլիս 31ին եւ պատրաստէր ընդհանուր ընտրութիւնները: Հաւանաբար յետաձգուի երկու չաբաթով: Միշտ եօթը պատանդ կար Յուլիս 31ին եւ երկու հոգի եւս առեւանգուած էին:

ՆԻՔՈԼԱ ՍԱՐՔՈԶԻ հարցազրոյց մը տուած է Ֆիկարոյի (Յուլիս 30) ուր կը չեշտէ գլխաւորաբար որ կ'ուզէ հաչտեցնել Ֆրանսայեները յաղորդութեան հետ: Այս առթիւ, կ'ըսէ նաեւ անուղղակի պատասխանելով Շերաքի յայտարարութեան (կ'որոշեմ, կը գործադրէ), թէ եթէ գործադրեցի, կը նշանակէ որ համաձայն էի: Կը մանրամասնէ նաեւ 2005ի իր պլուտճէն:

2500 ՊԱՂԵՍՏԻՆՑԻՆԵՐ, աւելի քան 10 օր է, կը սպասեն Ռաֆահի սահմանագըլուխին բացման, Գազայի գօտիէն քանի մը տասնեակ մեթր հեռու: Կը սպասեն որ Իսրայէլ արտօնէ սահմանին անցքը, որ փակուած է «ապահովութեան պատճառով»: Այդ 2500 Պաղեստինցիներուն մէջ կան բազմաթիւ հիւանդներ: Հակառակ եգիպտական կարմիր Մահիկին խնամքներուն, առողջապահական վիճակը չատ ծանրակչիռ է: Ջուր չկայ եւ նոր հիւանդութիւններ երեւան եկած են: Կացութեան ստիպողական բնոյթին առջեւ, հաւաքական մարմին մը ստեղծուած է իսրայէլացի եւ պաղեստինցի բժիչկներէ, որ դիմում ըրած է իսրայէլեան ԳերագոյնԱտեանին եւ 30 օր պայմանաժամ տուած որպէսզի բացատրութիւններ տայ փակումի պատճառներուն մասին:

ԱՄՆ-ու դեմոկրատները սկսած են ըժգոհութիւն յայտնել ի տես Շարոնի դիրքին ի նպաստ Պուշի վերընտրութեան: Հակառակ անոր, որ Շարոն կը յայտնէ թէ չի խառնուիր ամերիկեան ներքին գործերուն, երբեք չէ ծածկած իր համակրութիւնը Պուշին նկատմամբ, որ ըստ իրեն «ազատ աշխարհի քաջ ղեկավարն է ահարեկչութեան դէմ պայքարին մէջ»: Ուաշինկթընի իր վերջին այցելութեան առեն Շարոն չէ հանդիպած Քէրիի «ժամանակացոյցի պատճառով», բայց Քէրիի եղբայրը որ հրէացած է, ընդունած է Շարոնի կողմէ, երուսաղէմ: Ալ աւելի բարկութիւն ստեղծուած է դեմոկրատներու մօտ, երբ իսրայէլեան կառավարութեան թիւ երկուքը՝ Եհուտ Օլմըրթ յայտարարած է դիւուրական ձայնասփիւռէն «Հրեայ Ամերիկացիները Պուշը կը նախընտրեն»:

ՖՐԱՆՍԻՍ ՔՐԻՔ, Ս.Տէ.Էն.ի «հայրը», մեռաւ 88 տարեկանին Խլիրդի հետեւանքով: 1953ին է որ այս բրիտանացի գիտնականը Ա.Տէ.Էն.ի կառոյցը դրած է Ա-մերիկացի ճէյմս Ուաթսընի հետ: Այս ձեւով յայտնաբերած է մարդկութեան ամէնէն մեծ գաղտնիքներէն մէկը:

ԱՐԵԻԵԼԵԱՆ ԹՈՒՐՔԻՈՑ մէջ չատ ծանր արկած մը պատահած է Յուլիս 30ի առաւօտուն: Հանրակառք մը բախում ունեցած է երկու բեռնատար կառքերու հետ, որու հետեւանքով 26 մեռեալ կար եւ 30 վիրաւոր:

(Շար·ը Դ· էջ)

ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՐԹԵԻԵԿԻ ԱՐԿԱԾ ԵՐԵՒԱՆԻ ՄԷՋ

Բաղրամեան պողոտային վրայ Յուլիս 29ի կէսօրին աղբահատաք կառք մը ու ճամբորդատար կառք մը բախում ունեցած են· մէկ հոգի մահացած է, 13 վիրաւորներ հիւանդանոց փոխադրուած են: Ըստ առաջին տեղեկութիւններու, արկածին պատճառ եղած է աղբահատաք կառքին արգելակին խանգարումը:

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ԱՐՑԱԽ ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ՅՈՒՇԵՐ

ՆՇԱՆ ՄԱՐԿՈՍԵԱՆ

ԹԷ ԻՆՉՈ՞Ւ ԱՐԵՒՄՈՒՏՔԸ ԹՈՒՐՔԻՈՅ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԿԸ ՏԵՍՆԷ

Գ. Ս. Փ.

Մեծամիտ բայց միամիտ, անհեռատես պետական անձնաւորութիւններ որոնք օրերս անընդհատ Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան համար զիրար կը գերազանցեն, նաեւ դիւանագէտները եւ մանաւանդ Եւրոպական Միութեան Խորհրդարանի երեսփոխաններու մեծամասնութիւնը որ Թուրքիոյ ոչ անցեալի պատմութեան եւ ոչ ալ ներկայի քաղաքականութեան եւ հոգեբանութեան մասին գաղափար ունին, այսօր «չափաւոր» իսլամ եւ «դեմոկրատ» պետութիւնը իրենց մէջ ընդունելու համար մրցումի ելած են: Միւս կողմէ, իբր թէ հանրային կարծիքը լուսաբանելու մտահոգութեամբ, լրագրողներ եւ դասախօսներ եւս չեն պակսիր ««յառաջդիմական եւ ազատամիտ» հանրապետական Թուրքիոյ ներքոյը հիւսելու:

Եթէ առաջին չարքին պատկանողները առհասարակ քաղաքական նպատակներէ մղուած կամ նիւթական հաշիւներէ առաջնորդուած են, լրագրողները եւ դասախօսները գանազան յետին հաշիւներէ մղուած, կը չանան հանրային կարծիքը մոլորեցնել: Ասոր լաւագոյն մէկ օրինակը քանի մը օր առաջ Փիկադիլի Յուլիս 19ի թիւին մէջ Փարիզի քաղաքագիտական վարժարանի դասախօս Տոմինիք Ռէյնիէի յօդուածն էր: Ան չի վարանիր Օսմանեան տէրութեան դարաւոր կործանարար եւ վայրագ քաղաքականութիւնը ուրանալու եւ Սպանիոյ Իզապէլ Թագուհիին օրով արտաքսուած Հրեաներուն Օսմանեան տիրապետութեան ենթարկուած Յունաստանի Սելանիկ քաղաքին մէջ գտած ապաստանի Սելանիկ քաղաքին մէջ «քաղաքակիրթ» Թուրք ժողովուրդին եւ պետութեան մարդասիրական մէկ փաստը ըլլալով կը ներկայացնէ: Ռէյնիէ կ'անդրադառնայ նաեւ Բ. համաշխարհային պատերազմի նախօրեակին հազարներով(*) Հրեաներու Թուրքիա մուտքին:

Ռէյնիէ արդեօք տեղեակ չէ՞ թէ Թուրքիա մինչեւ Սթալինկրատի պատերազմին վախճանը (Փետրուար 1943) երբ զերմանական բանակը չարաչար պարտուելով պատերազմին ընթացքը փոխուեցաւ, Գերմանիոյ աւելի համակիր էր, քան թէ Դաշնակիցներուն: Նոյնիսկ Հիթլէր որ Թուրքիոյ զինակցութիւնը ջերմօրէն ընդունած էր, խոստացած էր պատերազմէն ետք Եգէականի յունական 12 կղզիները իբր վարձատրութիւն անոր յանձնել: Թուրքիա որ Կովկասի վրայ արշաւելու կը պատրաստուէր, Ֆօն Փաուլոսի բանակին պարտութենէն յետոյ իր քաղաքականութիւնը փոխեց: Եթէ Սթալինկրատի մէկ զերմանական բանակը յաղթական ըլլար եւ Թուրքիա պատերազմին մասնակցէր, արդեօք իր զրկարաց ընդունած հարաւոր Հրեաներու վիճակը ի՞նչ պիտի ըլլար ... մարգարէ ըլլալու հարկ չկայ դուշակելու համար: Արդէն 1942 տարւան Նոյեմբերին «Ունեւորութեան տուրք» կոչուած օրէնքով միւս փոքրամասնութիւններուն պէս Հրեաները եւս տուժեցին եւ չատեր ալ նիւթապէս վիճացան: Այս պատճառաւ է որ պատերազմէն ետք բազմաթիւ Թրքահպատակ Հրեաներ Իսրայէլ մեկնեցան: Յետագային, 1955 Սեպտեմբեր 6/7ին իբր թէ Կիպրոսի խնդրին պատճառաւ կառավարութեան հրամանով Յոյներու դէմ կազմակերպուած ցոյցէն Հրեաներն ալ իրենց բաժինը ստացան:

Ռէյնիէ երբ Թուրք պետութեան քարեմասնութիւնները լորձնաչուրթին կը ներկայացնէ, մէկ տող իսկ չի յատկացներ թէ մինչեւ Ա. մեծ պատերազմը Թուրքիոյ (Փոքր Ասիա) չորս միլիոնէ աւելի քրիստոնեայ ժողովուրդները՝ հայ, յոյն, ասորի եւ քաղդէացի, ի՞նչ եղան, ո՞ւր գացին: Ի՞նչ եղաւ նաեւ անոնց դարաւոր ազգային ժառանգը: Հայերը աւելի քան 2000 եկեղեցի եւ վանք ունէին, միւս քրիստոնեայ ժողովուրդները եւս նոյնքան:

Գալով Շիրաքի, Պլէրի, Շրէօտէրի եւ Պէրլիւսքոնիի Թուրքիոյ հանդէպ ցոյց տուած անվերապահ ջերմ ընդունելութեան ,ըստ մեզի նախ քաղաքական, ապա առեւտրական չահերէ մղուած է: Գիտենք թէ Թուրքիոյ վարչապետ Թայիփ Էրտողանի Փարիզ այցին խնդրոյ առարկայ եղած է 40-50 Էրպիւս օդանաւեր Թուրքիոյ ծախելու ծրագիրը որ կը ներկայացնէ 1,5 միլիառ Եւրոյէ աւելի գումար (10 միլիառ Ֆրանք): Անցեալ տարւան ընթացքին երկու երկիրներու առեւտուրը 6 միլիառ Եւրօ եղած է:

Շիրաք իբր հիւրընկալ, Թ. Էրտողանի հաճելի թուելու համար մոռնալ ձեւացուց ոչ միայն Թուրքիոյ Եւրոպական Միութեան անդամակցութեան մասին Եւրոպական Խորհրդարանի 1987 Յունիս 18ի որոշումը, այլեւ նոյնիսկ հազիւ երեքուկէս տարի առաջ իր կողմէ ստորագրուած պաշտօնական օրէնքը որ կը հաստատէր թէ «Ֆրանսա կը ճանչնայ հայկական ցեղասպանութիւնը»: Էրտողան քաջալերուած Շիրաքի այս յայտարարութիւններէն, առիթը չարմար նկատեց ըսելու համար թէ «Աւելի (հայկական ցեղասպանութիւնը) պատմաբաններուն ձգենք»:

Բայց ըստ մեր համոզումին, Թուրքիոյ հանդէպ ցոյց տրուած այս «ջերմ» յայտարարութիւնները որոնք կրնան 8 - 10 տարուան բանակցութիւններէ յետոյ Եւրոպական Միութեան իր անդամակցութիւնը ապահովել, քաղաքական չատ լուրջ եւ վտանգաւոր դրդապատճառներու եւ ծրագիրներու հետեւանք են: Ջմոռնանք որ ՕԹԱՆ «խաղաղութիւն ապահովելու» պատրուակով արդէն Եւրոպայի դրեթէ բոլոր երկիրները իրեն ենթարկած է: Որո՞ւ դէմ է որ ՕԹԱՆ կ'ուժէ զանոնք պաշտպանել: ՕԹԱՆ-ի սահմանները մինչեւ Ռուսաստան երկարած են: Ինչպէս Ելցին քանի մը տարի առաջ Միացեալ Նահանգներու առաջնորդութեամբ ՕԹԱՆի «պաշտպանութեան» ենթակայ երկիրներուն հետզհետէ Ռուսաստանի սահմաններուն մօտենալուն պատճառաւ մտահոգութիւն յայտնեց, պուտին եւս քանիցս բողոքեց: Եւրոպական Միութիւնը իր սահմանները հետզհետէ բնդլայնելով մինչեւ Սեւ Ծով հասաւ: ՕԹԱՆ-ի ռազմավարական ծրագիրը եւ Եւրոպական Միութեան տնտեսական մարզի մէջ ընդլայնումը զիրար կը լրացնեն եւ իրենց դիտաւոր նպատակը Ռուսաստանը հետզհետէ մեկուսացնել ու ներքին ազատագրական խլրտումներ գրգռելով բոլորովին քայքայելն է: Քանի մը տարի առաջ Գլինթըն բացայայտ կերպով կը յայտարարէր թէ «միլիառներ ծախսեցինք Խորհրդային Միութիւնը քանդելու համար»: Իսկ հիմակուան ծրագիրն է Ռուսաստանը եւս Եուկոսյաւիոյ նման բաժան-բաժան ընել, իր բնական հարստութիւնները որոնք Սիպերիոյ մէջ անսահման են, դրաւել եւ իրենց հակակշռին ենթարկել: Առաջին հերթին կու գան անշուշտ կասպից ծովու քարիւղի հանքերը: Թուրքիա թէեւ ռազմագիտական կարեւոր դիրք կը գրաւէ կեդրոնական Ասիոյ ծագումով թուրք ցեղակիցներուն մօտ, բայց թրքական ծաւալապաշտական ձգտումները միշտ նկատի ունեցող Ամերիկան Կովկասի մէջ գոյն կարենալ իր հակակշռին ենթարկելու համար, Հայաստանի եւ Վրաստանի եւս ձեռք կ'երկարէ: Զօսարթնոցի օդակայանէն դէպի Երեւան ճամբուն վրայ ամրոցանման հսկայ ամերիկեան դեսպանատան շինութիւնը որ բոլոր ճամբորդներուն ուշադրութեան առարկայ եղած է, յետագային Ամերիկայի Կովկասի եւ կեդրոնական Ասիոյ մէջ գտնուող զինուորական թէ տնտեսական նախաձեռնութիւններու հսկայ կեդրոն մը ըլլալու սահմանուած է:

Այս բոլորէն յետոյ, եթէ Թուրքիա իրօք 8-10 տարիէն Եւրոպական Միութեան անդամակցի, արեւմտեան տէրութիւնները ի՞նչ կրնան չհիլ: Ըստ մեզի, այս անհեռատես քաղաքականութիւնը Եւրոպայի երկու տերունդ յետոյ իսլամացումով եւ ազգային դիմագիծին կորուստով միայն կրնայ վերջանալ: Ինչպէս աւելի քան երկու տասնեակ տարիներ առաջ Խոմէյնի լսած էր «Եւրոպան կ'իսլամանայ» եւ քրիստոնեայ քաղաքակրթութիւն քարոզող եւ յառաջդիմութիւններով հպարտացող Արեւմուտքը պատմութեան կ'ացնի: Եւրոպայի ճակատագիրը իրենց փառասիրութեան գոհող մեր օրերու պետական անպատասխանատու անձնաւորութիւնները անգիտակցաբար իրենց ժողովուրդներուն կորուստը կը պատրաստեն:

Նախորդ տարիներու նման, այս տարի եւս, Մայիսի կիսուն, Ֆրանսայի հայկական հիմնադրամը, տասը օրուան ընթացքում մը կազմակերպեց Հայաստան եւ Արցախ: Աւելի քան երեսուն զբօսաշրջիկներ, հայ թէ ֆրանսացի, հաճոյքը ունեցան մօտէն ծանօթանալու բազմաթիւ տեսարժան վայրերու եւ արդիւնաբերական հաստատութիւններու, որոնք լաւագոյն տպաւորութիւնը ձգեցին մեր վրայ:

Հայաստանի տեսարժան վայրերուն, վանքերուն մասին չատ գրուեցաւ եւ անոնք չատերուն ծանօթ են: Միայն հարկ է վերյիշել թէ հայրենիքին վերեւլքը զգալի է օրէ օր եւ գրեթէ ամէն կողմ:

Մենք աւելի օգտակար նկատեցինք այս գրութիւնը յատկացնել մեր եռօրեայ շրջապտոյտին ղէպի Արցախ, թուղթին տակ տպաւորութիւններ այս այցելութեան մասին: Արցախ ըսելով, մենք կը հասկըննանք Լեռնային Ղարաբաղը իր շրջակայ ադատագրուած հողամասերով, որոնք միշտ հայաբնակ պատմական հողեր եղած են:

Մեր այս եռօրեայ ճամբորդութիւնը տեղի ունեցաւ գեղեցիկ արեւշատ օդով եւ կապոյտ երկինքով:

Մեր հանրակառքը Երեւանը ձգեց կիրակի առաւօտ եւ ուղղուեցաւ հարաւ-արեւելք, Այրարատեան դաշտը կտրելով եւ իբր ընկերակից ունենալով Մասիսի ձիւնածածկ զոյգ գագաթները աչքին եւ Գեղամայ լեռնաշղթան՝ ձախին:

Գեղեցիկ է Հայաստանի գարունը, ամէն կողմ կանաչ, գոյնզգոյն վայրի ծաղիկներով դաշտերուն մէջ, պտղատու ծառերը ծաղկած, տեսարանը հոյակապ ամէնուրեք:

Կառքը կը սուրայ մայրուղիին վրայ: Ահա Երասխ գիւղը, քիչ մը աւելի հարաւ, Նախիջեւանի փակ սահմանն է: Մեր ուղին կը չեղի դէպի արեւելք: Կամաց-կամաց եւ տին կը ձգենք Այրարատեան դաշտը եւ կը բարձրանանք աւելի լեռնային շրջան մը: Հիմա կը տեսնուին Զանգեզուրի ձիւնածածկ առաջին գագաթները: Ճամբանիս կը չեղենք կարճ այցելութիւն մը տալու Մոմիկ վարպետին գլուխ գործոց Նորավանքին եւ ապա ուրիշ կարճ պտոյտ մը Ջերմուկ հանքային տաք ջուրերով հարուստ փոքր քաղաքը եւ կը վերադառնանք մայրուղի:

Սիւնեաց աշխարհը կը կտրենք Զանգեզուրի բարձունքներուն ներքեւ եւ ահաւասիկ վարը, Գորիսը, ուղղահայեաց փողոցներով եւ կարմրադոյն տանիքներով կոկիկ քաղաք մը, կանաչներու մէջ թաղուած: Մեր չուրջը կը տեսնուին բազմաթիւ քարանձաւներ որոնք հին ժամանակներէ ի վեր բնակութեան ծառայած են: Ահա Հայաստանի վերջին սահմանային գիւղը՝ Տեղ, եւ մի քանի քիլոմեթր անդին, այժմ ազատագրուած, նախկին ադրբեջանական սահմանը:

Ներկայ սահմանը նշուած է միայն դրօշակաձեւ մը որ կը յայտարարէ թէ այս կէտէն մայրուղին շինուած է համապատասխան հայութեան կողմէ: Արդէն տարբերութիւնը զգալի է, ճանապարհը աւելի լաւ վիճակի մէջ է եւ աւելի լայն ու արդիական չափանիշներով շինուած:

Հիմա, մայրուղին զառիվար կ'իջնէ մինչեւ Հազարի գետը եւ յետոյ կրկին կը բարձրանայ մինչեւ Բէրդաձոր, նախկին Լաչինը որուն սկիզբը կը տեսնուի, հոյակոցաւոր վեղարով նորաշէն եկեղեցին: Ուղին միշտ օձապտոյտ կը բարձրանայ, տեսարանը հոյակապ է, ամէն կողմ կանաչազարդ լեռներ, անտառներ եւ մարգագետիններ, եւ աւելի հեռուն, Մոաւ լեռնաշղթային ձիւնածածկ գագաթները:

Կը մտնենք Շուշի: Մեր հանրակառքը կ'անչարժանայ քաղաքին խորհրդանիշ դարձած Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ մայր տաճարին առջեւ, իր բարձր թմբուկով եւ գովքնտի առանձին զանգակատունով, բոլորն ալ ժ. դարու շինութիւն: Բլրակի մը վրայ շինուած կաթնագոյն քարերով, այս վերանորոգուած հրաշակայ համալիրը իսկապէս փառաւոր է: Ներսը ընդարձակ եւ լուսաւոր, ամբողջովին ճերմակ քարերով չինուած:

Եկեղեցիին չուրջը, քազմաթիւ 3-4 յարկանի չէնքեր կը տեսնուին եւ աւելի հեռուն, հայկական ուրիշ եկեղեցի մը բաւական լաւ պահպանուած: Քաղաքին վարչի պարտկական եւ թաթարական հին թաղերէն անցնելով, ուր կը տեսնուին հին աղբիւրը, մզկիթին կապտագոյն մինարէն եւ բազմաթիւ քարաշէն տուներ որոնք կորնցուցած են իրենց տարնիքները, ինչպէս նաեւ հին բերդը, կ'ուղղուինք դէպի մայրաքաղաք Ստեփանակերտ որ կը տեսնուի ձորին մէջ:

Արդէն լրիկուն է եւ մենք կ'ուղղուինք վերանորոգուած Նայիրի պանդոկը, հանգըստաւէտ ու մաքուր չինութիւն մը:

Յաջորդ առաւօտ պիտի պտրտինք Արցախի հիւսիսային մասը, անցնելով նոր, բայց տակաւին չինուելու վրայ հիւսիս. հարաւ մայրուղիէն, տեղ-տեղ մեքենաները ճամբան լայնցնելու վրայ են: Չչինուած մասերը ցեխոտ եւ խորտուբորտ են ու փոսերով լեցուն:

Այսպիսի ճամբաներով կը հասնինք Դիմբան գիւղը, Տրտու գետի եզրին, Սարսանգի ջրամբարին կից: Գիւղին քով այցելեցինք պղինձի եւ ոսկիի նոր արդիւնաբերուած հանքը, ինչպէս նաեւ գիւղին կեդրոնը գտնուող խեղճուկ դպրոցը իր 80 աշակերտներով եւ քովը չինուելու վրայ նոր, աւելի ընդարձակ դպրոցը որ իր դռները պիտի բանայ այս Սեպտեմբերին, 120 աշակերտ ընդունելով:

Մեր երկրորդ այցելութիւնն է Գանձասար, - Արցախի նշանաւոր հրաշակերտ վանքը: Դէչ վիճակի մէջ ճամբաներով, կը հասնինք Վանք գիւղը, ուրկէ բարձր կանաչազարդ բլուրին վրայ կը տեսնուի Գանձասարի գմբէթը: Քառորդ ժամ ետք, կը հասնինք վանական համալիրը, իր հոյակապ դիրքով, լեռներով եւ ձորերով շրջապատուած: Եկեղեցին իր գաւիթով, պարիսպով եւ չուրջի խցիկներով լաւ պահպանուած վիճակի մէջ է: Ժ.դ. կառուն չինուած եկեղեցին իր քանդակազարդ պատերով եւ հոյանոցաւոր վեղարով որ կը հանդիսի հիանալիօրէն զարդարուած թմբուկին վրայ, իսկապէս հոյակապ է, նոյնպէս եւ գաւիթը որ ներքնամասին կ'ամբողջացնէ համալիրը: Ներսը շքեղ եւ խորհրդաւոր է, հակառակ իր պարզութեան: Ազատագրական պատերազմի ժամանակ, գանձասարը բազմիցս ռմբակոծուած է, եկեղեցին չէ վնասուած, ամբողջ համալիրը յաջող կերպով վերանորոգուած է այժմ: Վանքին կից, չինելու վրայ է դպրեվանքին միայարկ շէնքը:

Պարիսպին քովը ճաչելէ ետք, որ կրկին ուրիշ հաճոյք մըն է, կը վերադառնանք Ստեփանակերտ, միեւնոյն ճամբով: Արցախի մայրաքաղաքը նահանգային տեսքով բաւական մեծ քաղաք մըն է, կանաչազարդ բլուրներով եւ անտառներով շրջապատուած: Մեծ թիւով 4-5 յարկանի չէնքեր կան, չատերը դէչ վիճակի մէջ, նոր շինութիւնները աւելի գեղեցիկ են եւ յաջող: Կառավարական հրապարակը իր պետական չէնքերով եւ գեղեցիկ պրօսպեկտով, որուն կեդրոնը կը գտնուի հրապարակ չատրուաններով աւազան մը, բաւական հաճելի մթնոլորտ ունի: Քիչ մը անդին, բնակութեան եւ վաճառականական թաղերն են, իրենց խանութներով եւ հանրախանութներով, առատ ապրանքներով լեցուն, գնողները բազմաթիւ են եւ կը յիշեցնեն եւրոպական փոքր քաղաքները: Ժողովուրդը մաքուր հագուած է եւ ազատօրէն մեզի հետ կը խօսի:

Հիմա կ'ուղղուինք քաղաքին հիւսիսային կողմը, այցելելու համար Ղարաբաղը խորհրդանշող «Մենք ենք մեր լեռները» կոթողը: Շուրջ ութ մեթր բարձրութեամբ, նարնջագոյն տուֆէ այս արձանը կը ներկայացնէ զարթաղցի մամիկոնեան կը պապիկը, որոնք այս հողը միշտ հայ պահեցին:

Քիչ մը յուզուած, բայց գոհունակ, կը վերադառնանք պանդոկ:

Յաջորդ առաւօտ, վերադարձի ճամբան

ԱՐՈՒԵՍՏ

ՏԻԳՐԱՆ ՏԱՏՐԵԱՆ

ՈՒՐՈՅՆ ԵՐԱԿ ՄԸ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Թ. դարու վերջաւորութեան տպաւորապաշտութիւնը ճիւղաւորուելով ծնունդ տուաւ չարք մը գեղանկարչական նոր ուղղութիւններու, որոնց կարգին՝ կէտապաշտութեան: Այս ուղղութիւնը թէեւ ունեցաւ բազմաթիւ հետեւորդներ, սակայն անոնց գլխաւոր ներկայացուցիչները Ժորժ Սէօրան եւ Փօլ Սինիաքը կը նկատուին: Կէտապաշտները, հետեւելով ապաւորապաշտներու (որոնք գոյները չէին խառներ) սկզբունքին, նոր երանգ եւ կամ ուզուած գոյնը վերստեղծելու համար արբեր գոյներով կէտեր իրարու քով կը դնէին: Նոյն արհեստագիտութիւնը կ'օգտագործէ նաեւ Տիգրան Տատրեան, այն արբերութեամբ, որ եթէ յետապաւորապաշտ սերունդի կէտապաշտները բնութիւնը եւ կամ բնութեան մերուած կերպարներ կը պատկերէին, ապա ան կը ձգտի բացարձակ վերացականութեան:

Տիգրան Տատրեան կէտապաշտութիւնը զարգացնելով մտաւ հպապաշտական ոլորտներ, ուր անոր վրձնահարուածները դարձան աւելի համարձակ ու ինքնաւլուսաւոր: Հպապաշտական ուղղութիւնը թէեւ ծնունդ առաւ կէտապաշտութենէն, սակայն հեռացաւ անկէ, որովհետեւ այս ուղղութեան արհեստագիտութիւնը հիմնուած է առաւելաբար բիծերու վրայ, որոնք կը ստեղծեն կշռութեաւոր չարժումներ: Բոլորովին ինքնատիպ արտայայտչաձեւերուն եւ ուրոյն յղացքներու տէր այս գեղանկարիչը մէկ կողմէ լոյսը կը դնէ արտայայտիչ ընթացքի մը վրայ, իսկ միւս կողմէ դունարիծերը կը մղէ դէպի հորիզոնական տարածքներ: Անոր ներչնչումները կը բխին իր ներաշխարհին մէջ կուտակուած տպաւորութիւններէ, ուր նախնադարեան լուսաւորը ու երփնեղանդ տեսիլքները կը բացուին նոր ժամանակներու արդի լեզուամտածողութեան վրայ:

Տիգրան Տատրեան ծնած է 1929ին, Զահլէ (Լիբանան): Գեղանկարչական նախնական դիտելիքները ձեռք կը բերէ Կիպրոսի «Մելգոնեան» կրթական հաստատութեան մէջ: Անոր կեանքին վրայ ճակատագրական դեր կ'ունենայ Ֆրանսացի գեղանկարիչ Ժորժ Սիրի հետ հանդիպումը, Պէյրութի մէջ: Ժորժ Սիր կը քաջալերէ զինք, կը կազմակերպէ անոր առաջին ցուցահանդէսը եւ պատճառ կը դառնայ, որ Տիգրան Տատրեան փարիզ մեկնի կատարելագործելու համար իր գեղանկարչական ուսումը: 1957ին կը սկսի ցուցահանդէսներ կազմակերպել Փարիզի մէջ եւ ժամանակի ընթացքին կը դառնայ կէտապաշտութեան ինքնուրոյն մէկ ներկայացուցիչը: Յարդ անոր գործերը ցուցադրուած են Եւրոպայի եւ Միացեալ Նահանգներու տարբեր քաղաքներուն մէջ: Համաշխարհային բարձր եւ դրուատական կարծիքներ արձանագրուած են Տատրեանի արուեստին հասցէին: Արուեստաբաններէն չատեր (ինչպէս՝ Ալէն Բուտէր, Քրիսթիան Ձերմակ, Ա. Թ. Նավիա, Տորա Վալիէ, Ռոժէր Վան ձինհէրթահէլ, Գլօտ Ռիվիէր եւլն.), զինք կը նկատեն փարիզեան դպրոցի կարկառուն ներկայացուցիչներէն մէկը: Անոր ստեղծագործութիւններէն չատեր մնայուն ցուցադրութեան արժանացած են եւրոպական ժամանակակից բազմաթիւ թանգարաններու մէջ, ինչպէս «Միւզէ տ'Ա Մոտէռն տ Փարի», «Միւզէ Կէօթ-Պումփոթըր», «Միւզէ տը Փէրփինեան», «Պիպլիոթէք Նասիոնալ տը Փարի», «Միւզէ Ռեմպօ» եւ այլն: Անոր անուան եւ կենսագրութեան կը հանդիպինք նաեւ «Պէնեզիթ» արուեստի միջազգային բառարանին մէջ:

Տատրեանի ինքնուրոյնութեան եւ գործերու գունաբիծերու կշռութեաւոր գեղեցկութեան մէջ յատուկ տեղ կը գրաւէ հայկական կարպետագործութիւնը: Այս մասին հարկաւոր է անդրադառնալ առանձին:

ՄՈՎՍԷՍ ԾԻՐԱՆԻ

«Ա զ դ ա կ»

ԿՐԿԻՆ ՎԵՆԵՏԻԿ - ԻՍԹԱՆՊՈՒԼԻ ՄԱՍԻՆ

Մօտ 10 օր առաջ, Վենետիկի աւանդական - կրօնական մեծադոյն տօնին առիթով, Վենետիկի ձախակողմեան քաղաքապետ Պ. Փաոլօ Գոսթա, չհասկցուեցաւ թէ ի՞նչ չարժառիթէ մղուած, ափիբերան Թուրքիոյ քաղաքացիները, մեծ ուրախութեամբ աւետելով որ փութով Տոճերու քաղաքը զուգորդ պիտի դառնայ Իսթանպուլի հետ, եւ այդ առիթով, քաղաքի մեծադոյն տօնին առթիւ պատուոյ հիւր է Թրքական պատուիրակութիւն մը...:

Մի քանի օր վերջ, տեղական մամուլին մէջ, յատկապէս Իլ Կածզեթթիոյի, բողոքի նամակներ սկսան լոյս տեսնել քաղաքապետին այս եզական առաջարկին դէմ:

Առաջին ձայնը հայկական էր. երկար նամակով մը հեղինակը կու գար յիշեցնելու թէ Բիւզանդիոն եւ Իսթանպուլ նոյն բաները չեն, եւ եթէ քաղաքապետը կ'ուզէ բարեկամական ձեռք մը երկարել Թուրքերուն թող չոտնակոխէ ոչ հայ նահատակները, ոչ Իզմիրի մէջ ծուլ թափուած Յոյներն ու Հայերը, ոչ Լեփանթոյի պատերազմի դաշտին վրայ նահատակուած հազարաւոր վենետիկցի երիտասարդները, ոչ ալ բռնի իսլամացած պալքանեան քրիստոնեաները...:

Ուրիշ ընթերցող մը, Պոսքոլօ ստորագրած, աւելի խիստ բառեր գործածելով կը թելադրէ որ Պ. Գոսթա իր անձնական տեսակէտները իրեն պահէ եւ հակապատմական սխալ մը մէջ չիյնայ:

«800 տարի առաջ, - կը գրէ Պոսքոլօ, - Թուրքերը կը բռնաբարէին, կը սպաննէին, կը վաճէին տասնեակ հազարներով քրիստոնեաները... անոնք զանազան առիթներով վճռու զօրութեամբ քշուեցան Եւրոպայէն... եւ հիմա Պարոն քաղաքապետը կ'ուզէ մեր քաղաքին դուռը իրենց լայն բանալ: Ի սէր Աստուծոյ, հանդիստ թողէք Թուրքերը ուր որ են, ոչ ալ փորձեցէք Եւրոպա մտցնել զանոնք. յուսամ որ այդ մասին ժողովրդավարական օրէնքով մեր ալ կարծիքը կ'առնեն համբարձումի միջոցով»:

Ծանօն Ճինօ, ուրիչ միջամտող մը, կը թելադրէ որ քաղաքապետը Պատմութիւնը լաւ սերտէ... եւ չչփոթէ 1204 թուականի Բիւզանդիոնը, որ վենետիկցիները կողոպտեցին եւ որուն համար որպէս նեբողոքութիւն Իսթանպուլի հետ զուգորդութիւն կ'առաջարկէ... Եթէ Պարոն քաղաքապետը կ'ուզէ անպատճառ բարեկամութիւն մշակել Թուրքերու հետ, իր դիտանալիքն է. բայց կը խնդրենք որ պատմական չփոթութեան մէջ չմոլորի... Վենետիկի օտար համայնքները որ այսօր ամբողջական մասը կը կազմեն անոր պատմութեան (Հայերը, Յոյները, Հրեաները), տնտեսական մշակութային օգտակար գործերով արժանացած են այդ պատիւին. հարց կու տամ թէ ո՞րն է Թուրքերուն արժանիքը որուն համար Տոճերու քաղաքին դռները լայն կ'ուզէ բանալ մեր յարգելի քաղաքապետը...:

ՑԻՊԼ

ԱՆՑԵԱՑԱՆԵԱՆ

ԹՊԻՏ

- Լաւ, սպիտակամորթ, - ասում է սեւամորթը, - այ, ես սեւ եմ, երբ արեւայրուք եմ ընդունում, սեւ եմ, երբ մըրսում եմ, սեւ եմ, երբ հիւանդ եմ, սեւ եմ, երբ մահանում եմ: Իսկ դու մրսելից միանգամից կապտում ես, արեւայրուքից՝ դառնում չագանակագոյն, հիւանդանալիս դեղնում ես, իսկ մահանալով՝ կանաչում: Եւ այդ ամէնից յետոյ դեռ համարձակւում ես ինձ անուանել «գունաւո՛ր»:

***

Աւտոպուսում մի տատիկ դիմում է դէջուած-քներով աժդահային:

- Տղայ ջան, ազատ տեղեր կան: Ինչո՞ւ չես նստում:

- Շնորհակալ եմ, մօրքուր, ես իմ բաժինն արդէն նստել եմ:

- Աստուա՛ծ իմ, ինչի՞ համար:

- Աւտոպուսում մի պառաւ էի մորթել

չատ խօսելու համար:

***

Կանանց մենաստանի մայրապետն ասում է տղամարդկանց մենաստանի վանահօրը.

- Տէր հայր, երէկ ձեր վանականներն ընկել էին իմ միանձնուհիների յետեւից:

- Եւ ինչ, հասա՞ն:

- Ոչ:

- Ուրեմն դրանք իմ վանականները չէին:

***

Դատաւորը հարցնում է.

- Ի դէմս ամբաստանեալի ճանաչո՞ւմ էք այն մարդուն, որը գողացաւ ձեր մեքենան:

- Նրա փաստաբանի ելոյթից յետոյ արդէն կասկածում եմ՝ իսկ ունեցե՞լ եմ արդեօք մեքենայ...

***

Մի մարդ մահանում է: Ընկերները կանգնած են դագաղի մօտ: Մէկն ասում է.

- Լսէք, իսկ նա բաւական լաւ տեսք ունի:

- Բա ի՞նչ էիր ուզում. երեք օր է չի խմում:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԼԻՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

4

Իրեն կը թուէր թէ փոխուած է Պոլիսը: Իրեն կը թուէր թէ տասնեակ տարիներ չէ տեսած Պոլիսը: Հարցումներ կ'ընէր իր մօրը: Ու կը հանդարտէր պատասխաններ առնելով: Բիւզանդիոնը իր տեղն էր իր վէմերով, իր առօրեայ հոգերով, իր ցաւերով, իր ուրախութիւններով, իր բարքերով ու իր թիփերով:

Ամէն բան իր տեղն էր: Բերան ճիշդ առաջուան նման: Քանի մը հոգի մեռած ու քանի մը հոգի ծերացած էին: Փողոցին մէջ ալ քանի մը հոգի ծնած: Խօժէնիի կը թուէր նաեւ որ կորնոցուցած է իր մտերմութիւնը Պոլսոյ հետ: Կամ փոխուած են իր աչքերը այդ մանկական ծննդավայրը իր ակնարկներով կրկին վայելելու համար:

Խօժէնի իր մայրը տարուս Մուսանիա, Պրուսա: Տունէ տուն եւ չուկայ չուկայ պտտցուց: Ցետոյ «Քօրու»ի մօտակայ պուտիկը ինկան այցելել: Անտառներու մէջ եւ արքերու հետեւ լինած գիւղեր կային: Անոնք աշխարհէ կտրուած ճղնաւորներու խումբի մը պէս բնութեան մէկ անկիւնը կը բռնենք, վերջին մնաք բարով մը ըսելով քարաշէն մամիկին եւ պապիկին: Ամբոխ եւ տաք օդով կը կտրենք օճախը-տոյտ ճամբան, կրկին Բեըրգմոր, Հայաստանի պաշտօնական սահմանը, Գորիս, Նիդնաձոր եւ ահա Այրարատեան դաշտը, իր բազմաթիւ գիւղերով եւ պտղատուներով: Կարճ այցելութիւն մը Խոր Վիրապ եւ կը հասնինք Երեւան, իրիկուան մութին, անչուշտ քիչ մը յոգնած, բայց հոգեպէս կաղդուրուած:

Հայաստանի կողքին, կ'արժէ այցելել և ծանօթանալ Արցախին եւ տեսնել թէ ի՛նչպէս այս նոր ազատագրուած ազգային հողը բարգաւաճելու վրայ է, իր բնիկ ժողովուրդին աշխատասիրութեամբ ու կենսունակութեամբ: Արցախը պտըտիլ կը նմանակ հոգեպէս կաղդուրուիլ եւ լաւատես ըլլալ մեր ժողովուրդի ապագային համար:

Ն. Մ.

«Ա զ դ ա կ»

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԼԻՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

4

Իրեն կը թուէր թէ փոխուած է Պոլիսը: Իրեն կը թուէր թէ տասնեակ տարիներ չէ տեսած Պոլիսը: Հարցումներ կ'ընէր իր մօրը: Ու կը հանդարտէր պատասխաններ առնելով: Բիւզանդիոնը իր տեղն էր իր վէմերով, իր առօրեայ հոգերով, իր ցաւերով, իր ուրախութիւններով, իր բարքերով ու իր թիփերով:

Ամէն բան իր տեղն էր: Բերան ճիշդ առաջուան նման: Քանի մը հոգի մեռած ու քանի մը հոգի ծերացած էին: Փողոցին մէջ ալ քանի մը հոգի ծնած: Խօժէնիի կը թուէր նաեւ որ կորնոցուցած է իր մտերմութիւնը Պոլսոյ հետ: Կամ փոխուած են իր աչքերը այդ մանկական ծննդավայրը իր ակնարկներով կրկին վայելելու համար:

Խօժէնի իր մայրը տարուս Մուսանիա, Պրուսա: Տունէ տուն եւ չուկայ չուկայ պտտցուց: Ցետոյ «Քօրու»ի մօտակայ պուտիկը ինկան այցելել: Անտառներու մէջ եւ արքերու հետեւ լինած գիւղեր կային: Անոնք աշխարհէ կտրուած ճղնաւորներու խումբի մը պէս բնութեան մէկ անկիւնը քաշուած՝ իրենց հնօրեայ կեանքին համբերին կը քաշէին: Այդ պիւղերը լոլորն ալ Թրքաբնակ էին: Ամբողջ ապրող բնակչութիւնը Աստուծոյ մարդերն էին, Նոյ նահապետի ժամանակէն մնացած մատնութիւնով: Իրենց հիւրասիրութիւնը սակայն նուիրական երանգ մը ունէր:

Տիկ. Նուարդ չատ սիրեց այդ պիւղերը ու եթէ կարելիութիւնը ըլլար՝ կը նախընտրէր բնակիլ այդ խելօք մարդերուն մօտ ու իրեն համար Աստուծոյ չափ պաշտելի բնութեան ծոցին մէջ:

Տիկ. Նուարդ՝ հակառակ քաղաքի մէջ ծնած ըլլալուն՝ խորին պաշտամունք ունէր բուսական աշխարհին համար: Անիկա ծաղկափէտի մը չափ ուսումնասիրած էր ծաղիկները: Անոնց լեզուին կը հասկնար ու կը գգուէր անոնց հոգին: Իր տան պատուհաններուն առջեւ միշտ թագարներ ունէր, լեցուն այլազան ու ազնուական ծաղիկներով: Կը սիրէր նաեւ պտղատու ծառերը եւ բանջարանոցները: Իր խոհանոցը պարտէզով տուն մը ունենալ:

Խօժէնի ուրախ էր իր մայրիկին մանկական խամբավատութիւնը տեսնելով բոլոր բոյսերուն հանդէպ: Երբ որ ճամբաներէն կը քալէին՝ տիկ. Նուարդ տասը քայլի կը քալէին՝ տիկ. Նուարդ մէկ անգամ կը ծռէր պղտիկ ծաղիկի մը վրայ ու դէմքը մօտեցնելով գգուական բառեր կը հնչէր, իր նայուածքով կը համբուրէր, ու ազօթքի պէս խօսքեր կ'ուղղէր այդ հրաշքներուն ստեղծողին անունին:

Ցետոյ պիւղ կը մտնէին: Մինչդերուն հետ կը խօսակցէին բերքերու մասին, եղանակին մասին ու քիչ մըն ալ Սթամպոլի մասին: Միշտ իրենց հետ պղտիկ նուէրներ կ'ունենային փոքրիկ աղջիկներու համար: Ու միշտ ալ իրենք նուէրներով փեռնաւոր կը վերադառնային: Նուպարիկը ու իր եղբայրը կը մտնէին ռուպով լեցուն տասկառներուն մէջ, որոնց վրայ հազարաւոր կծոց ճանճեր թառած կ'ըլլային: Ու պատերազմը կը սկսէր ճանճերուն ու Նուպարին միջեւ: Օդը կը լեցուէր բզզիւններով:

Նուպար իր ատամերին խայթոտած դուրս կ'ելլէր պայքարէն, փոքրիկ հերոսի մը նման:

Վերադարձին իրենց առջեւ կը բացուէր քնութեան լայնարձակ համայնապատկերը: Հողը անհուն քնարանի մը կը վերածուէր: Ծառերը ու ծաղիկները եւ բոլոր բոյսերը յոգնած իրենց հասակները կը հակէին: Վայրի ծառերը իրենց հովանիին ներքեւ պտնուող թուփերուն օրրերիններ կ'երդէին: Ծաղիկները մանկիկներու նման խորունկ քունով կը նինջէին: Հովը գգուանքի մը նման կ'անցնէր բոլոր տերեւներուն վրայէն: Թռչուններ կը թռչէին վերեւէն: Ու վերջալոյսը իր վհատիտ հրաշքները կը ցուցադրէր հորիզոնին վրայ: Պարապամանի երկու ամպերու վրայէն լոյսի սանդուխներ, տատանելիներով, կը կախուէին: Երկու ամպերէն լեռներէ վար, լոյն ճառագայթներու ջրվէժներ կը հոսէին:

Տեսարանը կը նմանէր նաեւ սրբազան պատկերներու մէջ դրուած երկու մեծ ու սպիտակ ամպերու, որոնց վրայէն լոյսի բիւրաւոր լարեր կ'անցնէին: Ու նկարի վրան՝ անամպ երկնի վրայ կ'երեւին գոյներու լճակ մը՝ լեցուն կարմիրով, վարդագոյնով, կանանչով ու մանիշակագոյնով: Ու առաքեալ մը կամ տուրք մը, որ կը թեւածէ այդ բոլորէն վեր՝ դէպի երկինք:

Կրօնական ոգի մը դրոշմուած կ'ըլլար այդ հրաշալի տեսարանին մէջ:

Չերուն, մեր ճամբուն վրայ, լսելի կ'ըլլար ուշացած կառքերուն աղմուկը: Գիշերը իր դրքին սեւ էջերը կը թափէր երկրի վրայ: Ու համատարած լռութիւնը կը լողար բնութեան վրայ, ծփալով ու նըւազելով: Երեկոյեան ճաշէն վերջ, ամբողջ խումբով կը հաւաքուէինք կայարանին դրան առջեւ: Խօժէնի երբեմն կը տիպուէր ներս երթալ, մանկիկին ճիչերը դադրեցնելու համար:

Այդ ամայի կայարանին վրայ երկինքը իր խորհուրդներուն ամէնէն համայիչները կը կախէր: Տիեզերքը իր մեծութիւնը լայնօրէն զգալի կը դարձնէր: Հազարաւոր աստղերու քազմութեան ներքեւ մարդկային խումբ մը կը խօսէր, լռութեան հսկայական ալիքները օրօրելով:

Խօժէնի Պրուսայի մէջ դտած էր Միսաք Մեծարենցի երկու երկերը՝ «Մի խածան»ն ու «Նոր Տաղեր»ը: Դիւթական սիրով մը բռնուած էր այդ գրքերուն: Այնքան կարդացած էր զանոնք, որ շատ մը տաղեր գոց էր ըրած ակամայ:

Ու դաշտերուն վրայ, առուակներուն մօտ, ծառերու առջեւ, պիչերատան մէջ միշտ տուն մը, տող մը, երբեմն ամբողջ տաղիկ մը կը յիշէր ու մտովի կ'արտասանէր:

Իր մայրիկէն լսած էր այդ անուշ տղուն մահը: Փոյրիկի մը նման յուզուած էր ու բացած: Ամէն երեկոյ կը յիշէր անոր «Իրիկուան Իզձ»ը:

(Շար. 94)

Տիկին Շաքէ-Փափլին Մուսէեան, կինը

Մարք-Վահէ Մուսէեան, *Շուշան եւ Գէորգ Ափրիկեան*, զաւակները

Էլիզապէթ Մուսէեան, հոյրը

Թագուհի եւ Շուշանիկ Մուսայեան, զարմիկները

ինչպէս նաեւ Տէր Սահակեան եւ Մուսայեան ընտանիքները (Միացեալ-Նահանգներ)

ընտանեկան բոլոր պարագաներն ու բարեկամները

խոր ցաւով կը ծանուցանեն

ԺԱՆ-ԿԻ ՄՈՒՍԷԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Յուլիս 28ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի երեքշաբթի, Օգոստոս 3, ժամը 10ին, Փարիզի Ս. Յովհաննէս-Մկրտիչ եկեղեցին

15, rue Jean-Goujon, Paris 8e

ուրկէ մարմինը կը փոխադրուի Պանեէօ-Գոմիւնալ գերեզմանատունը, ժամը 11·15ի չուրջ։

Ոչ ծաղիկ, ոչ ծաղկեպսակ։ Փոխան ծաղիկի նուէրնեը ընել «Շէն» կազմակերպութեան, Հ. Յ. Դաշնակցութեան, Հ. Յ. Դ. Նոր Սերունդին, Հայ Դատի Յանձնախումբին։

Որեւէ մահագդ ղրկուած չըլլալով, կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել։

(Շար. Ա. էջէն)

ԻՏԱԼԻԱ օրէնք մը քուէարկած է Յուլիս 30ին, որ 2005էն սկսեալ վերջ կը դնէ զինուորական ծառայութեան։ Այս կարգադրութիւնը կը ձգտի արհեստավարժ բանակի մը ստեղծման։

ՓԱՔԻՍՏԱՆի մէջ ձերբակալուած է Ալ-Քահտայի մէկ պատասխանատուն զոր Ուաշինկթըն կը փնտռէր։ Հպատակութեամբ Թանզանիայի, կասկած կայ որ մասնակցած է ԱՄՆ Քենիայի եւ Թանզանիոյ դեսպանատուներու դէմ ոճրափորձերուն։

VOLS DIRECTS
ARMÉNIE
• SÉJOUR À LA CARTE
• VOYAGES ORGANISÉS
Paris→Erevan→Paris
3 Vols Hebdos Juillet
4 Vols Hebdos Août
3 Vols Hebdos Septembre
SABERATOURS
→ 11, RUE DES PYRAMIDES 75001 PARIS
TEL 01 42 96 10 10 - FAX 01 42 96 18 77
saberatours@selectour.com
SEVAN VOYAGES
→ 48, COURS DE LA LIBERTÉ 69003 LYON
TEL 04 78 60 13 66 - FAX 04 78 60 92 26
sevan@selectour.com
WASTEELS VOYAGES
→ 67, LA CANNEBIÈRE 13001 MARSEILLE
TEL 04 95 09 30 60 - FAX 04 95 09 30 61
marseille@wasteels.fr
EREVAN
→ 32-38, RUE HANRABEDOUTIAN EREVAN
TEL 52 55 55 - FAX 56 40 30
sabera@arminco.com
CARGO 2 VOLS HEBDOS
EN COLLABORATION AVEC LA NOUVELLE COMPAGNIE AÉRIENNE ARMENIAN INTERNATIONAL AIRWAYS
ÉTÉ 2004

ՅԱՌԱՋԻ ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

79ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ՄԱՐՍԷՅԼԷՆ՝

Հայ Մշակոյթի Տուն 500 *Եւրօ*,
Տէր եւ Տիկին Ալպէր Պօղոսեան 500 *Եւրօ*,
Սէն Լուի Ս. Գէորգ եկեղեցի 300 *Եւրօ*,
Տէր եւ Տիկին Ժիրայր Շալճեան 150 *Եւրօ*,
Օր. Սօնիա Յովսէփեան 150 *Եւրօ*,
Տէր եւ Տիկին Կարօ Յովսէփեան 150 *Եւրօ*,
Տէր եւ Տիկին Յակոբիկ Խաչատուրեան 150 *Եւրօ*,
Տիկին Մարի Տօրումեան 150 *Եւրօ*։

Ի ՅԻՇԱՏԱԿ

փաթիլ Գրիգորեանի մահուան առաջին տարելիցին յիշատակին Տէր եւ Տիկին Գրիգորեան 100ական Եւրօ նուիրած են «Յառաջ»ին, «Համազգային»ի Փարիզի մասնաճիւղին, Փարիզի Կապոյտ Խաչին, Իսթ-Լէ-Մուլինոյի Թարգմանչաց ղպրոցին։

CHAVILLE

Eglise St Grégoire l'Illuminateur

6 rue Père Komitas

Pendant la saison d'été, il n'y aura pas de messe les dimanches 1er août, 8 août, et 22 août.

Le dimanche 15 août, à l'issue de la messe de l'Assomption, se déroulera la traditionnelle cérémonie de bénédiction du raisin.

Les offices reprendront normalement à partir du dimanche 29 août.

•

ECOLE «LEVON CHANTH»

Les cours de l'Ecole hebdomadaire «Lévon Chanth» de Chaville reprendront le **mercredi 8 septembre à 9 heures**, dans la salle de l'église.

Inscriptions sur place.

6 rue Père Komitas
92370 CHAVILLE
Tél. : 01. 47. 09. 23. 18



Date à retenir

Grande Braderie de Chene

les 4 et 5 décembre

CHENE FRANCE

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ

Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ–ՄԿՐՏԻՉ ՓԱՐԻԶ

ԿԻՐԱԿԻ, ՕԳՈՍՏՈՍ 15·
Վերափոխումն Սուրբ Աստուածածնի

Տաղաւար այս օրը կը տօնախմբուի Ս. Յովհաննէս-Մկրտիչ Մայր Տաճարին մէջ՝

Առաւօտեան ժամերգութեամբ՝ ժամը 8·30էն սկսեալ։

Պատարագի մատուցմամբ՝ ժամը 10·30ին։

Պատարագի աւարտին խաղող *կ'օրհնուի։*

Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՕԳՈՍՏՈՍ 16·
Բ. Օր Վերափոխման՝ Ցիշատակ է Մեռելոց։

Առաւօտեան ժամերգութիւն՝ ժամը 9-ին։

Պատարագ՝ ժամը 10ին։

Պատարագի աւարտին Հոգեհանգիստ կը կատարուի վասն համօրէն ննջեցելոց։

Ս. ՄԱՐԻԱՄ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԻՍԻ

ԿԻՐԱԿԻ, ՕԳՈՍՏՈՍ 15
Վերափոխումն Սուրբ Աստուածածնի

Ժամերգութիւն՝ ժամը 9·30ին,

Պատարագ՝ ժամը 10·30ին։

Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի *աւանդական արարողութիւն։*

Այսօր հոգեհանգիստ չի կատարուիր։

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ՕԳՈՍՏՈՍ 16
Բ. Օր Վերափոխման։ Ցիշատակ Մեռելոց

Պատարագ՝ ժամը 10ին, ապա Հոգեհանգստեան պաշտօն վասն համօրէն ննջեցելոց։

ՎԱՐԱԳԱՅ Ս. ԽԱՉ ԱՐՄՈՒԿԻ

ԿԻՐԱԿԻ, ՕԳՈՍՏՈՍ 15
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի։

Պատարագ՝ ժամը 10·30ին։

Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողի աւանդական *օրհնութիւն եկեղեցւոյ շրջափակին մէջ։*

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲ–ԼԻՈՆ

ԿԻՐԱԿԻ, ՕԳՈՍՏՈՍ 15
Տօն է Աստուածածնի

Այս առթիւ Լիոնի Ս. Յակոբ Մայր Եկեղեցւոյ մէջ հանդիսաւոր պատարագ կը մատուցուի։

Օրուան պատարագը կը մատուցանէ եւ կը քարոզէ՝

ՆՈՐՎԱՆ ԵՊԻՍԿ. ՋԱՓԱՐԵԱՆ
Հայր. Պատուիրակի Փոխանորդ
Լիոնի եւ Շրջակայից

Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի *աւանդական արարողութիւն։*

Հաւատացեալները որոնք օրհնութեան համար ուխտած են խաղող նուիրել կրնան ուղարկել եկեղեցւոյ Դիւանատունը։

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

ԿԻՐԱԿԻ, ՕԳՈՍՏՈՍ 15·
Տօն Վերափոխման Ս. Աստուածածնի

Պատարագ՝ ժամը 10ին։

Կը պատարագէ եւ կը քարոզէ՝

ՋԱՏԻԿ ՎՐԴ. ԱՒԵՏԻՔԵԱՆ
Հոգեւոր Հովիւ,
Հայր. Պատուիրակի Փոխանորդ
Հարաւային Ֆրանսայի

Յաւարտ պատարագի կը կատարուի խաղողօրհնէքի *աւանդական արարողութիւն։*

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՎԵՐԱՄՈՒՏ

ՓԱՐԻԶԻ ՄԱՄՆԱՁԻԿ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին 17 ռիւ Պլէօ 9րդ թաղամաս - Մեթրօ Գաղ
Մանկապարտէզ 4 տարեկաներէն սկսեալ (*կը խնդրուի արագօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ*).
+ CPէն մինչեւ Պաբալօրէա, նաեւ չափահասներու դասարան։

Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, Երգ, Թատրոն, Պար։

Հեռաձայնել երեկոյեան Յուլիսին՝
- Ալիս Սոնկիւթ՝ 01·42·93·03·56
- Անիկ Կէօճոլու՝ 01·45·22·11·95

Օգոստոսին՝
- Արաքսի Գարաճիլեան՝ 01·39·83·71·19

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— **ARNOUVILLE**
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73

— **ISSY-LES-MOULINEAUX**
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25 (le soir)

— **SEVRAN**
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76

— **VALENCE**
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99 (l'après-midi)
MCA : 04 75 55 12 49

— **DECINES**
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97

— **GRENOBLE**
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43

— **ST MAURICE DE BEYNOST**
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07

— **VIENNE**
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80

— **MARSEILLE-VILLE**
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66 (le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեզի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն։

*
**

La Section «Lola Sassouni»
de Marseille
organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— Restaurant tous les soirs et piqueniques assurés.
— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).

Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne tout compris, visa inclus hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84976

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 17
MARDI
17 AOUT
2004

LE NUMERO: 1 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 230 եւրօ — Վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար· 270 եւրօ (Ամէնօդեայ առաքում)
247 եւրօ (Շարաթական առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

ՏՕՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·003 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 80e ANNEE — N° 21·003

ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐՈՒ ԳԼԽԱՒՈՐ ԴԷՊՔԵՐԸ

Օգոստոսի առաջին օրէն իսկ, գլխաւոր դէպքը մնաց Իրաքը, ուր ոճրափորձ, խռովութիւններ, անձնասպանական արարքներ լարու յաջորդեցին: Առաջին անգամ ըլլալով, Օգոստոս 1ին տեղի ունեցան հանգիստառնեայ արարքներ Պաղտատ եւ Մուսուլ: Այս առընչութեամբ, Պէյրութի մեր պաշտօնակիցը՝ «Ազդակ» կապ հաստատած է իրաքահայ դաղութի ներկայացուցիչներուն հետ եւ քաղած հետեւեալ տեղեկութիւնները, ինչ կը վերաբերի հայկական ճակատին: Պայթում մը տեղի ունեցած էր Պաղտատի հայ կաթողիկէ եկեղեցւոյ առջեւ: Իրաքի ազգային իշխանութեան պատասխանատուներէն Պարոյր Քակոեան հաղորդած է, որ եկեղեցւոյ առջեւ ականուած լիքնաչարժին պայթումը պատահած է պատարագի պահուն, երբ եկեղեցին լեցուն էր հաւատացեալներով:

Աւելի ուշ, հայ կաթողիկէ վարդապետ Ֆ. Գէորգ Աստուրեան տեղեկացուցած է, որ պայթումը պատճառած է վիրաւորներ եւ մեծ վնասներ: Եկեղեցւոյ կից առաջնորդարանը հրոյ ճարակ դարձած է: Իրաքի մէջ այսր կ'ապրին շուրջ 800 հազար քրիստոնեաներ, որոնց մէջ Հալէբը կը կազմեն ուշագրաւ տոկոս: Մայրաքաղաք Պաղտատի մէջ կան հայ առաքելական երեք եկեղեցիներ եւ հայ կաթողիկէ ու հայ աւետարանական մէկական եկեղեցի: Մուսուլի մէջ եւս կան հայկական եկեղեցիներ:

Ա. Խ. Փ· լրատու գործակալութիւնը հաղորդած է, որ հայկական եկեղեցւոյ առջեւ կատարուած պայթումը ինքնաշարժով անձնասպանական գործողութիւն էր:

Շինիներու գերագոյն կրօնապետ այատոլլա Ալի Հիւսէյնի Սիսթանի խստօրէն դատապարտած է այս «ոճրային արարքները» եւ աւելցուցած, թէ անոնց հիմնական դիրախները «Իրաքի միասնութիւնը, կազմութիւնը եւ անկախութիւնն էին»:

Օգոստոսեան այս առաջին արարքէն ետք, խռովութիւնները չարունակուեցան օրէ օր աւելցալ զոհերու թիւը: Օգոստոս 10ին վեցերորդ օրն էր, որ չիւնեղու սրբազան քաղաքին՝ Նաճաֆի մէջ նաւը բախումներ տեղի կ'ունենային ամերիկեան ուժերու եւ չիի քաղաքացիներուն միջեւ: Զէնքերը վար դնելու կոչերը ապարդիւն մնացած են, մինչ Մոքթատա ալ-Սատր Օգոստոս 8ին յայտարարած էր որ մինչեւ վերջ, մինչեւ իր արեան վերջին կաթիլը պիտի պայքարի ամերիկեան դրաւման դէմ: Ինք խորհրդանիշն իսկ է իրաքեան դիմադրութեան՝ դրաւման դէմ:

***

• Պուշ ՍԻՍ-ի նոր տնօրէն նշանակած է հանրապետական խորհրդարանական մը՝ Փորթըը Կոս, 65 տարեկան: Ցարդ Ներկայացուցչական Ժողովի տեղեկատուութեան յանձնախումբին նախագահն էր: Կը յաջորդէ ձորճ Թենէթի որ իր հրաժարականը տուած էր Յունիս 11ին: Այս անգամ ալ Մայքըլ Մուր հեղինակով կը յիշէ որ կոս, Սեպտեմբերին յայտարարած էր Միացեալ Նահանգներու «Չեմ կրնար ՍԻՍ մնանել այսօր, ձեռնհաս չեմ, օտար լեզուներ չեմ գիտեր, գաւակներս ալ կը կրկնեն ամէն օր որ պէտք է յառաջդիմեմ»:

• Երեքշաբթի, Օգոստոս 10ին երկու ռմբափորձեր գործած են Պոլիս, զբօսաշրջութեան թաղամասի երկու պանդոկներու մէջ: Երկու մեռեալ կար եւ 11 վիրաւոր: Արարքին տէր եղած էին քրտական անծանօթ խմբակ մը՝ «Քիւրթիստանի Ազատութեան Բազէները», ապա նաեւ խոշմապաշտ խումբ մը՝ Ապու Հաֆս ալ-Մասրիի Ջոկատները, որոնց համար Լալելիի այդ ոճրափորձերը սկիզբն էին ծծումբուն գործողութիւններու եւրոպական երկիրներու դէմ»: Այդ գոյդ լսանձնումները որոշ չփոթութիւն մը ստեղծած են առաջին օրէն իսկ, թէեւ Թուրքերը նախընտրութիւն կու տան քրտական ազրիւրին: Ներքին նախարարը ակնարկած է չորս Քիւրտերու ձերբակալման եւ զէնքերու դրաւման, ինչ որ կ'ամրապնդէ, ըստ իրեն, քրտական լսանձնումը: Երկու մեռեալներուն մէկը Թուրք է, միւսն ալ՝ Պարսիկ:

• Կալիֆորնիոյ փոխ կառավարիչը Ս. Լէոնով ձերբակալուած է որովհետեւ 150 հազար տոլարի կաշառք մը ստացած է ռուս գործատէրէ մը:

• Ռաֆարէն Գոմպլուի սամրանոցը, ուր արձակուրդը կ'անցընէ, ընդունած է Նիքոլա Սարքոզիի: Ըստ երեւոյթին, Սարքոզի կ'ուզէ Տնտեսական նախարար մնալ, եթէ նոյնիսկ Իւ· ԷՄ· Փէ·ի նախագահ դառնայ:

• Երկաթուղիի արկած մը պատահած է Շաբաթ օր, Օգոստոս 11ին, երկու ճեպընթացներու բախումին հետեւանքով Անգարա - Պոլիս պլիթին վրայ: Ութ մեռեալ եւ 88 վիրաւոր կար:

• Օգոստոս 12ի գլխաւոր «դէպքն» էր, դոնէ Ֆրանսայի համար, Զինեթին Զիտանի քաշուիլը Ֆութպոլի Ֆրանսական ազգային խումբէն, վերջ տալով մի՛շտ ազգային հանդիպումներուն: 32 տարեկան, մարզիկը կը դոնէ որ առեն մը կու գայ երբ պէտք է սթռփ ըսել:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻ 23 ՄԱՐԶԻԿՆԵՐՈՎ

Ողիմպիական խաղերու հիմնադրութենէն 3000 տարիներ ետք (առաջին տեղեկութիւնները կու գան Ն·Ք· 776 թուականէն), Ուրբաթ, Օգոստոս 13ին, Աթէնքի մէջ, հանդիսաւոր արարողութեամբ բացումը կատարուեցաւ նոր ժամանակներու Ողիմպիական 28րդ խաղերուն (վերսկսած էին 1896ին, Փիէր տը Գուպերթէնի ջանքերով եւ պէտք է չարունակուին չորս տարին անգամ մը, կը դադրին պատերազմի ատեն):

Օգոստոս 13ի բացումը դէպ սկսաւ ոսկեայ կազմակերպիչ երկրին՝ Յունաստանի համար, որու երկու գլխաւոր մարզիկները՝ Թոմթաս Քէնթէրիս եւ Քաթերինա Թանու չէին ներկայացած խթանիչ դեղերու դէմ պարտադիր քննութեան եւ կրնային արտաքսուիլ մրցաշարքէն: Յանձնախումբը Օգոստոս 16ին յետաձգած էր իր որոշումը: Արարողութիւնը մթագնած էր այս պատճառով, մինչ մեծ օր մըն էր Յունաստանի համար, օրերը ողիմպիականներու, ուր խաղերը կը վերադառնային այս տարի:

***

Հայաստանի խումբը Աթէնք ժամանած էր Օգոստոս 13ին եւ ունի հետեւեալ եազմը: Ստորեւ նաեւ իրենց մասնակցութեան թուականները··

ՅՈՒՆԱՀՌՈՄԷԱԿԱՆ

Արմէն Նազարեան (60 քիլօ) - կը մրցէր Օգոստոս 14ին:

ՀՐԱԶԳՈՒԹԻՒՆ

Նորայր Բախտամեան - 10 մեթր օդամղիչ ատրճանակով եւ 50 մեթր ազատ ոճի ատրճանակով· կը մրցէր Օգոստոս 14ին: (Ոչ մէկ յաղթանակ):

ԹԻՆԻՍ

Սարգիս Սարգսեան - կը մասնակցի մեներախաղերու· կը մրցէր Օգոստոս 15 եւ 16ին:

ԼՈՂ

Վարդուհի Ալեքսեան - 100 մեթր յառաջընթաց· կը մրցէր Օգոստոս 15ին: (Ոչ մէկ յաղթանակ):

ԾԱՆՐԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ

Արմէն Ղազարեան (69 քիլօ) - կը մրցի Օգոստոս 18ին: Գէորգ Ալեքսանեան կամ Խաչատուր Քեափանակցեան (երկուքն ալ 77 քիլօ) կը մրցին Օգոստոս 19ին: Տիգրան Մարտիրոսեան (85 քիլօ) կը մրցի Օգոստոս 21ին: Աշոտ Դանիէլեան (105 քիլօ)· կը մրցի Օգոստոս 25ին: Արթիւր Դանիէլեան, Տիգրան Գամալեան, Հռիփսիմէ Խուրշուտեան, Արսէն Մելիքեան, Վարագդատ Վասիլեան:

ԿՌՓԱՄԱՐՏ

Ալեքսան Նալպանտեան (48 քիլօ)· կը մրցի Օգոստոս 18, 21, 24, 27 եւ 29ին:

ԴԱՍԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶ

Արմէն Մարտիրոսեան - եռացաթռ· կը մրցի Օգոստոս 20 եւ 22ին:

Մարինէ Ղազարեան - 100 մեթր վազք· կը մրցի Օգոստոս 20 եւ 21ին:

ԸՄԲՇԱՄԱՐՏ

Վաղինակ Գալստեան (65 քիլօ), Լեւոն Գեղամեան (84 քիլօ) եւ Հայկազ Գալըստեան (120 քիլօ)· կը մրցին Օգոստոս 24 եւ 25ին:

ԱԶԱՏ ԸՄԲՇԱՄԱՐՏ

Մարտին Պէրպէրեան (55 քիլօ), Ժիրայր Յովհաննիսեան (66 քիլօ), Արայիկ Գէորգեան (74 քիլօ), Մամէտ Աղայեւ (84 քիլօ)· կը մրցին Օգոստոս 27 եւ 29ին:

***

Հայաստանի ողիմպիական պատուիրակութիւնը կը գլխաւորէ մարմնամարզի փոխ նախարար եւ ողիմպիական կոմիտէի նախագահ Իշխան Զաքարեան:

Նախագահ Ռ· Քոչարեան Օգոստոս 23ին կը ժամանէ Աթէնք, հրաւիրուած ըլլալով ներկայ գտնուելու Աթէնքի 28րդ ողիմպիականներուն:

***

Օգոստոս 14 եւ 15ի արդիւնքներէն եռք, Զինաստան 5 ոսկի, 2 արծաթ եւ 1 պրոնզեայ մեռալ չահած էր, Աւստրալիա՝ 4 ոսկի, 1 արծաթ, 3 պրոնզեայ, Թուրքիա՝ 2 ոսկի, մէկ պրոնզեայ, Ճափոն 4 ոսկի, մէկ արծաթ, Իտալիա՝ 2 ոսկի, մէկ արծաթ, Ֆրանսա՝ մէկ ոսկի, 2 արծաթ, 2 պրոնզեայ:

ՓԱՍԱՏԻՆԱ

ՀԱՆՐԱԿԱՒՈՒԹԻՒՆ ԱՐԿԱԾ, ՀԱՅ ՋՈՀԵՐ

Գալիֆորնիոյ Փասատինա քաղաքին մէջ հայ ճամբորդներ փոխադրող հանրակառք մը արկած ունեցած է: Երեք կիներ մահացած են, կան տասնեակ մը վիրաւորներ: Տրուած լուրերու համաձայն ճամբորդները Փասատինայի հայկ· եղբայրական աւետարանական եկեղեցւոյ կիներու խումբին անդամներն էին:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 13/16)

«ԿԻԼԻԿԻԱ»Ն ՌՈՒՄԱՆԻԱ ՀԱՍԱՒ

«Կիլիկիա» նաւը հասած է Ռումանիա եւ Գոսթանցա նաւահանգիստին մէջ անձնակազմը դիմաւորուած է Հայաստանի դեսպան Եղիշէ Սարգիսեանի եւ ռումանական պաշտօնատարներու կողմէ: Ճամբորդները կը յուսան Աթէնք հասնիլ Ողիմպիականներու ասպարէզն առաջ: Մեծ ծովուն վրայ «Կիլիկիա»ն երկօրեայ ալեկոծութեան մէջ ինկած է, բայց անվնաս դուրս եկած:

***

ԱՐԱՐԱՏԸ ՎՏԱՆԳԱԻՈՐ ԳՕՏԻ Է

Թուրքիոյ իշխանութիւնները արտօնութիւն չեն տուած խումբ մը ռուս երկրաբաններու, լեռնագնացներու, լրագրողներու որոնք մտադրած են Արարատի գագաթը բարձրանալ ու փնտռել Նոյեան տապանը: Խումբին ղեկավարը ըսած է ռուսական մամուլին թէ Թուրքերը արտօնութեան մերժումը պատճառաբանած են ապահովութեան նկատումներով, քանի որ չրջանին մէջ քրտական զինեալ ուժեր կան:

***

Տ· ՌՈՒՄՍՖԷԼԴԻ ԲԱԺՈՒ ԱՅՑԸ

ԱՄՆ-ու Պաշտպանութեան նախարար Տ· Ռումսֆէլտ Օգոստոս 13-14ին այցելած է Բաքու ուր հանդիպումներ ունեցած է երկրին բարձրաստիճան ղեկավարներուն հետ: Ադրբեջանի Պաշտպանութեան նախարարը Ս· Աբիեւ Ռումսֆէլտի յիշեցնելէ եռք թէ իր երկիրը ռազմա-քաղաքական չրջանակի մէջ ԱՄՆ-ու հետ կը գործակցի եւ ՕԹԱՆ-ի «Գործընկերութիւն յանուն խաղաղութեան» ծրագրին գործընկերն է, ըսած է թէ Ադրբեջան ԱՄՆ-ու աջակցութիւնը կ'ակնկալէ զրաւուած տարածքներէն հայկական ուժերը դուրս բերելու համար: Նոյն հարցին մասին ամերիկացի նախարարը յայտնած է թէ ԱՄՆ կը ձգտին հակամարտութեան կարգաւորման Ադրբեջանի տարածքային ամբողջականութեան չրջանակին մէջ: Ան ըսած է նաեւ թէ իր երկրին կողմէ Ղարաբաղի կատարուած օգնութիւնը պէտք է նկատել որպէս ոչ թէ «անօրինական վարչակարգ»ի մը աջակցութիւն, այլ՝ մարդասիրական արարք:

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԱՊԸ Օգոստոս 14ին Լուբա ժամանեց եւ որպէս սովորական ուխտաւոր ապատան ընտրած էր «Աքէօյլ Նոթր Տամ»ը, ինչպէս բոլոր հիւանդները: Ինք թէեւ հրաչքի չէր սպասեր եւ առաջին վայրկեանէն իսկ ցոյց տուաւ թէ բոլորովին սպառած է եւ ուժասպառ հասաւ Քարայրը, ուր փորձեց ծունկի պալ Ս· Կոյսին արձանին առջեւ, բայց հաւասարակշռու-

(Շար·ը Դ· էջ)

ԻՏԱԼԱԿԱՆ ԴԻՒԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՈՒՂԹԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Documenti Diplomatici Italiani sull' Armenia

Իտալիոյ հայ գաղութը, համեմատած Իտալիոյ 60 միլիոն հաշուող քնակչութեան, կարելի է ոչնչութիւն կոչել, հազարը հազիւ անցնող, խմբուած գլխաւորաբար Միլանոյի եւ Հռոմի մէջ, Վենետիկի ու Ուտինէի փոքր կորիզներն ալ նկատի առած: Ոմանք 60·000ի կ'ուզեն հասցընել, նկատի առնելով արդարացիօրէն այն բազմահազար ընտանիքները, որոնք թէեւ բոլորովին ձուլուած-հալած են ընկերութեան մէջ, բայց պահած են հայկական ծագումը մատնող բարեփոխուած ընտանեկան անուններ: Այս առումով կարելի է նոյնիսկ վստահօրէն հաստատել թէ չատ աւելի կրնան ըլլալ քան վերոյիշեալ թիւը, քանի բազմաթիւ իտալական քաղաքներ հինէն ի վեր ունեցած են հայկական թաղամասեր. անոնցմէ մէս մը պահուած է մինչեւ այսօր:

Իտալիոյ գաղութը, յատկապէս Միլանոյի հատուածը, իր թիւէն անհամեմատօրէն աւելի որակաւոր դեր կը խաղայ Սփիւռքի մշակութային կեանքին մէջ:

Անոնք սովորութիւն չունին հրապարակներու վրայ ցոյցեր ընելու, թերթիկներ բաժնելու, ելոյթներ ունենալու, սկիզբէն ի վեր չանցած են լուրջ աշխատանք տանիլ քաղաքական եւ մասնաւորական շրջանակներուն մէջ թափանցելու եւ այդ ուղղութեամբ իրենց կատարած դործը պարզապէս հիանալի է, յարդանքի արժանի:

Պահ մը պատկերացուցէք, թէ ինչպէս բուռ մը Հայեր, որ մայրենի լեզուին անդամ չնորհքով չեն տիրեր, յաջոդած են 60 միլիոնոց Իտալիոյ՝ ցեղասպանութիւնը ճանչցնել տալ:

Այս լուրջ, հետեւողական աշխատանքը տասնեակ տարիներ առաջ սկսած է հայ մշակոյթին նուիրուած շրջուն ցուցահանդէսներով, մանրանկարչութիւն, ճարտարապետութիւն, ցեղասպանութեան նուիրուած փաստաթուղթերով եւ լուսանկարներով, որոնց հետեւեցան իտալերէն լեզուով բազմաթիւ հրատարակութիւններ, դրականութեան, պատմութեան, մէջին դարու հոգեւոր հեղինակներու, յուշերու, օրագրութիւններու եւ ամէնէն կարեւորը կոթողային աշխատանք մը նուիրուած Հայ ճարտարապետութեան, եռալեզու (իտալերէն, անգլերէն, հայերէն), դործակցութեամբ հրապարակի մեծ անուններու, փրոֆ. Ալփակօ-Նովէլլոյի, փաօլօ Գունէոյի, Թոմազօ Պրէչչա Ֆրաթատդքիի եւ Հայաստանի Ակադեմիայի անուանի մասնագէտներու, քսան դուներէ հատորներէ կազմուած:

Ձարտարապետական հրատարակութիւնները մեծ ազդեցութիւն դործեցին դիտական աշխարհին մէջ, մանաւանդ երբ վերջին պատուհան մը բանալով Հայաստանի վրայ: Բազմաթիւ յուշարձաններու նորոգութիւններ, պետական հոմանաւորութեամբ եւ յատկապէս արտասահմանի Հայերու օժանդակութեամբ, սկսան վերականդնիլ, Հայաստանեայց Եկեղեցւոյ դործօն մասնակցութեամբ:

Իտալիոյ հայ գաղութի նոր ձեռնարկը կը համարիմ որ առաջինն է իր տեսակին մէջ, Հայաստանի եւ Սփիւռքի համար: Ուսումնասիրել, հաւաքել եւ լիակատար հրատարակութիւնը պատրաստել 1878էն մինչեւ 1923 թուականը երկարող, Իտալիոյ պետական դիւանները մէջ գտնուող բոլոր այն փաստաթուղթերուն որ Հայաստանի կը վերաբերին: Այս տիտանային գործը պատմական երկար ժամանակամիջոց մը կ'ընդգրկէ որ կը սկսի Պէռլինի վեհաժողովով (1878) վերջանալու համար քէմալական հանրապետութեան արդի Թուրքիոյ հիմնարկութեամբ (1923):

Իտալիա դաշնակից էր Անգլիոյ եւ Ֆրանսայի, հետեւաբար որպէս թշնամի Աւստրօ-Հունդարիոյ եւ Գերմանիոյ, ամէն կողմ հիւպատոսարաններ ունէր, բացի դեսպանատունէն. եւ բազմաթիւ եկեղեցական հաստատութիւններ որոնք անուղղակի կերպով կարեւոր տեղեկութիւններ կը հաղորդէին իրենց երկրի իշխանութիւններուն: Կարելի է երեւակայել թէ որքան ճոխ դիւանային նիւթեր կարելի է գտնել հոն մեր պատմութեան ամենաարեւխուռ ժամանակաշրջանը լուսաբանելու՝ օտար աղբիւրներու միջոցով:

Սոյն բացառիկ աշխատանքը կազմուած է երեք չարքերէ:

Առաջին չարքը երեք հատորներէ բաղկացած, կ'ընդգրկէ 1878-1890 տարիները:

Երկրորդ չարքը կը բաղկանայ 6 հատորներէ եւ կ'ընդգրկէ 1891-1916 տարիները:

Երրորդ չարքը կը բաղկանայ երեք հատորներէ, ամփոփելով 1917-1923 տարիշրջանը:

Այս վիթխարի աշխատանքին կազմակերպութիւնը յանձնուած է Իտալացի եւ օտար պատմագէտներու յանձնախումբի մը, նախագահութեամբ Էննիօ տի Նոլֆոյի, Ֆիրէնցէի համալսարանէն:

Իւրաքանչիւր հատոր իր կարգին յանձնուած է երիտասարդ բանասէր պատմագէտներու որ կը հոգան հատորին ներածութիւնն ալ:

Փաստաթուղթերը կը տպուին ամբողջութեամբ եւ հարազատ բնագիրներով:

Առ այսօր լոյս տեսած հատորներն են երկրորդ չարքի չորս հատորները:

Հատոր Ա. - Կ'ընդգրկէ 1891 Յունուար 1 - 1894 Դեկտեմբեր 31 ժամանակաշրջանը, պատրաստուած Մարկիզ Ռուսսիի կողմէ (Ֆիրէնցէ, 1999): 275 էջ:

Հատոր Բ. - Կ'ընդգրկէ Յունուար 1էն 1895 Օգոստոս 31: Պատրաստուած՝ Լաուրա Լումինարիի կողմէ (Ֆիրէնցէ, 1999): 525 էջերէ բաղկացած:

Հատոր Գ. - Սեպտեմբեր 1էն 1895 Դեկտեմբեր 31· պատրաստուած՝ Լորէնցօ Մեքիի կողմէ (Ֆիրէնցէ, 2000): 517 էջերէ բաղկացած:

Հատոր Դ. - Յունուար 1էն 1896 Յուլիս 31, պատրաստուած՝ Սալվաթորէ Սփէչիալէի կողմէ: (Ֆիրէնցէ, 2003): Բազկացած 403 էջերէ:

Ինչ լաւ պատրաստութիւն պիտի ըլլար եղեռնի 90ամեակին առիթով, իւրաքանչիւր գաղութ օրինակ առներով իտալականէն, իր բնակած երկրին դիւանները պըրպտէր եւ լուրջ հրատարակութիւններով դիմաւորէր քաղաքական աշխարհին չոր փաստերու կարօտ դիրքորոշումը:

Հ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊՋՏԻԿԵԱՆ

Ս. Ղազար
Յուլիս 22

Ծանօթութիւն. -
Փափաքողները կրնան դիմել ՕՒՄՄԻ հրատարակչութեան հետեւեալ հասցէով՝

OEMME Edizioni
DD. 1602 - 30123 Venezia
Tél. + Fax : (39) 041 - 5224225

ՍՏԱՑԱՆՔ

ՍԻՈՆ
Կրօնական - գրական - բանասիրական պաշտօնաթերթ
Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան

Թիւ 1-2-3, 2004

Ս. Յակոբեանց Տպարան, Երուսաղէմ

*
**

ԹԵԼԱԴՐԱՆՔ
ՀՈԳԵԻՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ
(1938 - 1944)

ՇՈՒՀԱՆ Ռ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ս. Յակոբեանց Տպարան, Երուսաղէմ

ՊՐԻՄԱԿԻԷՍ

«ԿԵՌԱՍ ԲԵՐԱՆ»

ՄԱՐՈՒԾ ԵՐԱՄԵԱՆ

Մարզկային պատմութեան մէջ մշակոյթի պատմութիւնը մեծ ու դեղեցիկ խճանկար մըն է, ուր քով-քովի են տարբեր ժամանակներու՝ նախադարէն մինչեւ դեր արդիական դար, տարբեր արուեստներու եւ դրականութեան, եւ տարբեր երկիրներու եւ ազդութիւններու ներկայացուցիչներ: Կարելի է հետեւցնել, որ իւրաքանչիւր ապրող մարդ, որուն առօրեային մէջ նաե՛ւ հոգեկանը տեղ չունի, պարտաւոր է այդ մեծ խճանկարին մասին որոշ դաղափար մը ունենալ:

Վերջերս, բարեկամուհի մը ձիներկիպ Ա.Թ.Մ.Աթոռի «Դարէն աւելի երկար օր»ը առաջարկեց եւ պնդեց որ կարդամ: Առաջին մտածումս այն եղաւ թէ՝ «բայց ինչո՞ւ Ա.Թ.Մ.Աթոռ, կիրակիզ հեղինակ մը, երբ տակաւին այնքա՞ն ուրիշ դէմքեր կան միջազգային դրականութեան մէջ»: Սակայն կարդացի: Հոն նկարագրուած կիրակիզեան տափաստաններու կեանքը ջրնարակ էր միայն, որուն տակ մարդկայի՛ն կեանքն է, իր ցաւով ու ցաւով...

Միշտ ալ կրկնած եմ այն թեւաւոր խօսքը, որ կ'ըսէ՝ «բոլոր մեծ արուեստները ազդային են, բայց բոլոր ազդային արուեստները չեն, որ մեծ են»:

Այս ենթախորքին վրայ իրապէս այլ տարողութիւն կը ստանայ թարգմանական արուեստը, որուն ամենամոր մէկ օրինակն է արաբ սուրիացի արձակագիր Հանննա Մինայի «Կեռաս Բերան» վէպը, որ հրատարակուած է Երեւան, 2004ին, Մուղնի հրատարակչութեան կողմէ, Գէորգ Եազըճեանի թարգմանութեամբ, արեւելահայերէնով:

Հանննա Մինա լայն ճանաչում նուաճած արձակագիր մըն է ոչ միայն Սուրիոյ եւ արաբական աշխարհին, այլ նաեւ այն բոլոր երկիրներուն մէջ, որոնց լեզուներով թարգմանուած են իր դործերը: Այս նուաճումը կու գայ անշուշտ իր դիւրահաղորդ ոճէն, իր հեղասահ լեզուէն, բայց նաեւ կեանքը սեւեռելու, կեանքին խաւերէն ներս թափանցելու, մարդոց կեանքերուն ահռելի նմանութիւնն ու անոնց տառապանքին խորունկ տարբերութիւնները իր դրականութեան մէջ արտայայտելու հմտութենէն:

Հանննա Մինա ծնած է 1924ին Սուրիոյ Ծովեզերեայ Լաթաքիա քաղաքը: Մինդքին հետ չրջան մը կ'ապրի Ալեքսանտրէթի (Սանճաք) Սուէտիա քաղաքը: Բայց Ալեքսանտրէթի Թուրքիոյ յանձնումին հետ Լաթաքիա կը վերադառնայ:

Աղքատութեան պատճառով իր ատիպուն ընդհատել ուսումը եւ նետուիլ աշխատանքի, եղած է նաւաստի, բանուոր, բեռնակիր եւ լրագրող:

Գրել սկսած է 1942ին: Պատմուածքները լոյս տեսած են տարբեր պարբերականներու մէջ, բայց առանձին հատորի մէջ չեն ամփոփուած, եւ այսօր կորսուած կը համարուին:

Առաջին վէպը լոյս կը տեսնէ 1954 թուականին, որմէ վերջ կը նուիրուի դրականութեան եւ կը դառնայ արհեստավարժ դրագէտ:

Արժանացած է զանազան չքանչաններու եւ մրցանակներու: Հրատարակութիւնները մինչեւ 150ի կը հասնի, բոլորն ալ քանի մը լեզուներու թարգմանուած:

«Կեռաս Բերան» վէպին վայրը Քեսապն է, կիլիկեան Հայաստանի վերջին հայկական դիւղը, իսկ ժամանակը այն պահն է, երբ Արաբները Ֆրանսական դաղութատիրութեան դէմ ըմբոստացումի ձեռնարկած են: Այս ըմբոստութեան կը մասնակցին, վէպին մէջ, նաեւ Քեսապի Հայերը:

«Կեռաս Բերան»ին մէջ նաեւ սիրոյ պատմութիւն մը կայ քեսապցի Երանիկին եւ արաբ Ճառուտին միջեւ, որ կ'աւարտի զոհողութեան գեղեցիկ արարքով մը: Երանիկը իր սիրոյն եւ հայրենիքի սիրոյն առջեւ երկընտրանքի մատնուած, կ'ընտրէ երկրորդը, եւ Հայաստան կը ներգաղթէ:

Հանննա Մինա, ջերմ համակրանքով, իր հաւատքն ու համոզումները վէպին մէջ արտայայտած է այնպիսի եռանդով մը, որ յաճախ երկրորդական մնացած են վէպին կառոյցը, կերպարներուն կերտումը եւ այլ թէքնիք հարցեր: Սակայն վէպը գեղեցիկ հաստատում մըն է Հայու դերին համար:

Հանննա Մինա եւ իր հետ արաբական աշխարհը այս վէպով կը հաստատեն կարծիքէ Հայերուն չնորհակալ ապրումները, Արաբներուն կողքին կենալու իրենց արարքով:

«Գ ա ն ձ ա ս ա ր»

ՕՐՈՒԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱԿԱՀՐԷՈՒԹԵԱՆ ՎԷՃԸ ՖՐԱՆՍԱՅԻ ՄԷՋ

Ֆրանսայի մէջ հակահրէութեան վտանգաւոր նկատուած երեւոյթին մասին Իսրայէլի վարչապետ Ա. Շարոնի արտայայտութիւնները եւ երկրին հրեայ գաղութին ուղղուած ներդաղթելու կոչը լուսական խիստ արժեւորում գտան ֆրանսական արտաքին քաղաքականութեան չրջանակին: Նիւթը յատկապէս արձագանգ գտած է իսրայէլեան ու յետոյ ամերիկեան մամուլին ալ: Այդ արձագանգներէն հետաքրքրական է մանաւանդ տեսնել Թէլ Աւիվի մամուլի ծանօթ անուններէն «Հաարեց» օրաթերթին մէջ տեղ գտած թեր ու դէմ կարծիքներով դրութիւնները: Անոնք կրճատում. ներով առնուած են «Գուրիէ Ինթերնասիոնալ»ի Ցուլիսի վերջին թիւին մէջ:

Ա. Շարոնի համախոհներուն տեսակէտը ներկայացուած է Իսրայէլի Փարիզի նախկին դեսպան Ժ. Քէյզարքի ստորագրած նամակով: Ան կ'ըսէ թէ վերջապէս Ֆրանսայի քաղաքական դէմքերն ու հանրութիւնը մէկդի ձգեցին Ջայլամի քաղաքականութիւնը, սկսան ընդունիլ որ հակասեմականութիւնը հակասիոնականութեան, Իսրայէլի ատելութեան ու Պաղեստինցիներուն հետ նոյնացումի դիմակով արթնցած է: Օր չանցնիր որ Ֆրանսական մամուլի մեծ թերթերէն մէկը մասնաւոր թղթածրար մը չհրապարակէ հրէական հարցին մասին: Մանաւանդ որ ատիկա չուկային վրայ փնտռուած ապրանք կ'ընէ թերթը:

Ֆրանսացիներու կարծիքով՝ հակասեմականութիւնը երկրին ժողովուրդին մեծամասնութեան կեցուածքը արտայայտող բան չէ: Ներածուած է: Ցեղով, կը պնդուի որ Ֆրանսայի պարագան ուրիշ երկիրներու մէջ եղածին չափ սասկի չէ: Բայց ուշադրութիւն կը դրաւէ յատնուած ըլլալով մարդկային իրաւունքներու եւ քաղաքացիներու հաւասարութեան երկրին մէջ:

Անոնք որոնք համոզուած են Ֆրանսայի մէջ հակահրէութեան ներկայութեան, կ'ըսեն թէ Ֆրանսացիները հակում ունին Հրեաներու դէմ ատելութիւնը լուրջ չընկատելու, գաղութացնութեամբ բացատրելու զայն, ինչպէս կ'ըսէ նախկին դեսպանը: Սակայն մէւս կողմէն, երկրին հանրապետական եւ աչխարհավար պատկերը սկսած է ճեղքեր ունենալ վոքրամասնութիւններու կրօնական գարձումով, միասեռականութեան իրաւայատկութեան ճանաչումով, կամ չրջանային իշխանութիւններու հզօրացումով: Իսկ ատոնք բաներ են որ չեն կրնար ապահովութիւն ներչնչել Ֆրանսա ապրող Հրեաներուն:

Հակառակ թէզին հետեւորդները կը թիւրդեն բուսական զգուչութեամբ մօտենալ հարցին: Առաջին մատնանչումը այն է որ երկրին մէջ յուսանգքային խմբեր կան, անոնք ամէն օտարի հանդէպ ատելութիւն կը անուցանեն, իսկ հակահրէութիւնը գործն է բնդհանուր առմամբ ուրացական երկիրներէն Ֆրանսա հաստատածներու: Անոնք կ'ըսեն թէ Հրեաները իրենց նիւթական հզօրութեամբ ամբողջ աչխարհի տիրելու հետամուտ են. ազդեցութիւն ունին Սպիտակ Տան եւ լրատուութիւններու վրայ, կը ջանան տարածել սիոնան ու թմրեցուցիչը եւ Պաղեստինցիները մղել դէպի Իրաք:

Նոյնիսկ եթէ ընդունուի որ Ֆրանսայի մէջ հին հակասեմականութեան վրայ հիմնուած հակահրէութիւն մը կայ, կարելի չէ ընդհանրացնել երեւոյթը: Մեծ բան չի նչանակեր բսել այ թէ Ֆրանսացիները կը թիւրդեն բուսական զգուչութեամբ մօտենալ հարցին: Առաջին մատնանչումը այն է որ երկրին մէջ յուսանգքային խմբեր կան, անոնք ամէն օտարի հանդէպ ատելութիւն կը անուցանեն, իսկ հակահրէութիւնը գործն է բնդհանուր առմամբ ուրացական երկիրներէն Ֆրանսա հաստատածներու: Անոնք կ'ըսեն թէ Հրեաները իրենց նիւթական հզօրութեամբ ամբողջ աչխարհի տիրելու հետամուտ են. ազդեցութիւն ունին Սպիտակ Տան եւ լրատուութիւններու վրայ, կը ջանան տարածել սիոնան ու թմրեցուցիչը եւ Պաղեստինցիները մղել դէպի Իրաք:

Նոյնիսկ եթէ ընդունուի որ Ֆրանսայի մէջ հին հակասեմականութեան վրայ հիմնուած հակահրէութիւն մը կայ, կարելի չէ ընդհանրացնել երեւոյթը: Մեծ բան չի նչանակեր բսել այ թէ Ֆրանսա

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ՊՐՕՐՈՒԹի Հայ Կաթողիկէ Գէօրգ Հարպոյեան երկրորդական վարժարանի վկայականներու բաշխումը տեղի ունեցած է Ցուլիս 4ին, Ձալքայի Ս. Խաչ եկեղեցւոյ «Պետոզլեան» սրահին մէջ, նախագահութեամբ Հայ Կաթողիկէ Պատրիարքական Փոխանորդ Վարդան Եպիսկ. Աղջարեանի: Բացումը կատարած է Ը. դասարանի աշակերտուհիներէն՝ Նայիրի Ասլանեան: Ապա, չրջանաւարտներու անունով հայերէն, արաբերէն եւ անգլերէն հաւէշտի ուղերձներ արտասանած են Նաիրի Գալայճեան, Քրիսթել Ճուհարճեան եւ Մարիա Թենպէլեան: Տարեվերջի խօսքը եւ հուսկ բանքը արտասանած է տնօրէնուհին՝ Ձուարթ Նահարեան: Ան նշած է որ դպրոցին առաջադիմական ծանր վիճակէն զատ կայ ուրիշ տագնապ մը, որուն չարունակումը կրնայ անորոշացնել հետեւանքներ ունենալ: Սակայ մէկ կողմէ որակի ու ճաշակի նահանջն է, իսկ միւս կողմէ՝ լաւագոյնին ձգտելու, ինքզինք դէպի յառաջդիմութեան պահանջը: Վերջին խօսքը արտասանած է Վարդան Եպիսկ. Աղջարեան: Հանդիսութիւնը վերջ գտած է վկայականներու յանձնումով:

***

ՊՐՕՐՈՒԹի «ՀՄԸՄ-Աղբալեան» մարզական հաստատութեան համալիրի մէջ, Ցուլիս 9ին հանդիպում-ըրոյց մը տեղի ունեցած է Լ. Ղարաբաղի Հանրապետութեան վերաբնակեցման պետական վարչութեան պետ՝ Սերժիկ Ամիրխանեանի հետ: Ցուզադրուած է վաւերագրական ժապաւէն մը վերաբնակողներու եւ անոնց առօրեայ կեանքին մասին: Ապա խօսք առած է Ս. Ամիրխանեան որ արտայայտուած է այդ մասին, չեչտելով թէ վերաբնակեցման ծրագրին նպատակն է գաղթական բոլոր բնակիչները վերադարձնել իրենց հողին, անոնց տրամադրելով բնակարան, հողային տարածք՝ ցանքի համար: Ցայտնած է թէ արդէն իսկ վերադարձած են 3000 հոգի 44 նոր գիւղերու մէջ:

***

ՄՈՆՐԻԱԼԻ Հայ Կեդրոնի «Ա. Ահարոնեան» սրահին մէջ, Ցունիս 23ին, հովանաւորութեամբ Գանատայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոնէական Որհնութեան եւ Ս. Ցակոբ Քրիստոնէական Դաստիարակութեան ու Համազգային Սահմանադրական դրական յանձնախումբերուն կազմակերպութեամբ, դասախօսութիւն մը տրուած է նիւթի առնչութեամբ՝ «Համայնքին նահանջը: Ձուլո՞ւմ թէ համարկում»: Դասախօսը՝ տիկին Վաղան Դանիէլեան վկայուած՝ Պէյրութի Սէն Ժոզէֆ համալսարանի արեւելագիտութեան բաժնի հայագիտութեան ճիւղէն, Մոնրէալի համալսարանէն ալ ստացած է Ասիւլթ Խիւքասիանի մէջ, Մագիստրոսի աստիճան: Հեղինակ է հայերէն լեզուի դասաւանդման դասագիրքի մը, որ քանի տարի է կը ծառայէ օտարներուն հայերէն սորվեցնելու: Իր յայտնած միտքերն էին ձուլումի եւ համարկումի (ասիմիլասիոն եւ էնթէկրասիոն) վերաբերող վերլուծումներ: Ձուլումը կը պատահի երբ անձ մը իր ինքնութիւնը, իր ընկերային եւ մշակութային նկարագիրը արմատականօրէն կը ժխտէ եւ կը յարի զինք հիւրընկալող ժողովուրդին: Համարկումը կը պատահի, երբ ներգաղթող եւ հիւրընկալող ժողովուրդներու միջեւ փոխադարձ ճանաչողութիւն եւ համերաշխութիւն կ'ըլլայ եւ հիւրընկալող երկրին իշխանութիւնը թոյլատուութիւն կու տայ ներգաղթող փոքրամասնութեան վերապրումին եւ անոր մշակոյթի պահպանման ջանքերուն հանդէպ: Գանատահայ համայնքը ձուլուիլ ուզող ժողովուրդներու չի պատկանիր: Դասախօսուհին չեշտած է որ առանց լեզուի անկարելի է դիմադրել եւ պայքարիլ:

ԵՐԳԻՁԱՆՔԻ ՄԷՋ ՄԻԱՑԱԾ

ԻՍԼԱՄ ԿԱՏԱԿԵՐԳԱԿՆԵՐ ԿԸ ԾԻԾԱՂԻՆ ՅԵՂԱՑԻՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ: «Պի. Պի. Սի.» ԿԸ ԳՐԷ.

Իր մեծ մօրուքով ու կլոր գլխարկով Ազհար Ոսման բեմին վրայ կը քալէ կոչտ ձայնով «Ասալամ ալէյքում» պոռալով:

«Անոնց համար, որոնք չեն գիտեր, թէ ի՛նչ կը նշանակէ ասիկա, բացատրեմ, կ'ըսէ ան: - Կը նշանակէ՝ ես պիտի սպանեմ ձեզ»: Հանդիսատեսները կը ծիծաղին:

Սակայն անոր չեչտէն յայտնի է, թէ իսլամ ըլլալու կողքին՝ Ազհար Ոսման Ամերիկացի է:

«Ալլա մէյտ մի ֆաքի» (Աստուած զիս խնդալիք դարձուց) վերնագիրով կատակերգութիւնը խումբ մը ամերիկացի իսլամներու կողմէ կատարուած ճիգ մըն է՝ դիմագրաւելու ժխտական նախապաշարմունքները եւ կեցուածքները իսլամներուն եւ Արաբներուն նկատմամբ: Անոնք կը խնդան իրենք իրենց վրայ, իրենց համայնքներուն վրայ եւ իրենց դիմագրաւած նախապաշարումներուն:

Հրեայ կամ ափրիկեցի կատակերգակներու պէս, «Ալլա մէյտ մի ֆաքի» կատակերգութեան դերակատարները չեն վախնար իրենք զիրենք ծիծաղի առարկայ դարձնելէ:

Թատերախաղին մէջ մանրավէպեր կան ուշացող իսլամներու եւ մզկիթներու մէջ ձայնային սխալ սարքաւորումներու վերաբերեալ:

Թատերախաղին առաջին ներկայացումը տեղի ունեցաւ վերջերս Ուաշինկթընի մէկ ակումբին մէջ:

Անիկա յղացումն է Փրիչըը Մոսի, որ կ'ըսէ, թէ իր նպատակն է կամրջել տարբեր հաւատքականութիւններու միջեւ վիհերը, որոնք խորացած են 2001 Սեպտ. 11էն ետք, ինչպէս կ'ըսէ ան:

«Ուզեցինք բան մը ընել Սեպտեմբեր 11էն ետք, իսլամ համայնքը լուսանցքներէ դուրս բերելու համար, - կ'ըսէ Մոս, որ ափրիկեցի ամերիկացի իսլամ մըն է: - Ասիկա առիթ մըն է երկխօսութեան եւ իսլամներն ու ոչ իսլամները լուսաւորելու ու հաճոյացնելու»:

Թատերախաղին հանդիսատեսները կու գային տարբեր համայնքներէ, ինչ որ արտասովոր երեւոյթ էր Ուաշինկթընի մէջ:

Նորաձեւութեան հետեւող երիտասարդ պաշտօնեաներ նստած էին շղարշով փաթթուած իսլամ կիներու, չրջազգեստներ հագած ափրիկեցիներու եւ ասիացիներու կողքին:

Հոս է, որ Ամերիկան կը հանդիպի իսլամութեան, ոչ թէ պայքարի մէջ, այլ՝ խնդուքի:

«Բազմաթիւ մարդիկ կան, որոնք իսլամ չեն, - կ'ըսէ Մոս: - Անոնք հետաքրքրուած են երկխօսութեամբ եւ բարեկամութեամբ, որմէ զուրկ ենք: Այստեղ կան նաեւ իսլամներ, որոնք կ'ուզեն իրենք զիրենք արտայայտել եւ խօսիլ»:

Հանդիսատեսներուն հակազդեցութիւնը չատ դրական է:

«Երգիծանքը կը միացնէ բոլորս, - կ'ըսէ երիտասարդ կին մը: - Կարեւոր չէ, թէ սպիտակամորթ ես, իսլամ, հինացի կամ հնդիկ: Երգիծանքը երգիծանք է»:

Իսլամ հանդիսատես մը կ'ըսէ. «Կ'ենթադրեմ, որ այժմ իսլամները լաւ աչքով կը դիտուին հանրութեան կողմէ, որովհետեւ ցոյց կու տան, թէ իրենք եւս երգիծանքի զգացողութիւն ունին: Թատերախաղային մանրավէպերուն մէջ անոնք լուսարձակի տակ կ'առնեն նախապաշարմունքը: Ասիկա զատարակչական դեր կը կատարէ, հետեւաբար չատ դրական է»:

Կատակերգակ Ազհար Ոսման կ'ըսէ, որ իր նպատակն է Ամերիկացիներուն ցոյց տալ, թէ իսլամներուն մեծամասնութիւնը մոլեռանդ չէ: Սակայն ան նաեւ կը ծրագրէ թատերախաղը ներկայացնել իսլամական երկիրներուն մէջ, որպէսզի իսլամական աշխարհը աւելի լաւ հասկնայ Ամերիկան:

Ան արդէն հրաւէր ստացած է չրջապտոյտ մը կատարելու դէպի Մարոք, Սաուտի Արաբիա, Քուէյթ, Օման եւ Քաթար:

«Անկասկած, որ ատոր չրջապտոյտը պայթում մը պիտի ըլլայ իսլամական աշխարհին մէջ: Եւ ասիկա բառախաղ չէ, - կ'ըսէ Ոսման: - Կարեւոր է գիտնալ, թէ այնպէս ինչպէս իսլամները իրենց կրօնքը սխալ հասկցուած կը զգան Ամերիկայի մէջ, նոյնպէս Ամերիկա մեծապէս սխալ հասկցուած է իսլամական աշխարհի տարածքին»:

Իսլամներուն քով Ամերիկա կորնգուցած է իր վարկը ամերիկացի դիւանագիտներու կողմէ իրաքցի բանտարկեալներու նկատմամբ անմարդկային վերաբերումին պատճառով, թէեւ ամերիկացի դեկավարներ կը չեչտեն, թէ միայն քանի մը դիւանագիտներ յանցաւոր են:

Թատերախաղը կը միտի ցոյց տալ, թէ նոյն ձեւով խումբ մը ծայրայեղականներու կողմէ իսլամութեան անունով գործուած արարքները կապ չունին իսլամութեան մեծամասնութեան հետ:

Սակայն Սեպտեմբեր 11ի յարձակումներէն ետք բազմաթիւ իսլամներ կը հաւատան, թէ ամերիկեան արդարութիւնը կողմնակալ է իրենց նկատմամբ:

Ազհար Ոսման այս նիւթը կ'արծարծէ իր թատերախաղին մէջ:

«Մեծ յառաջդիմութիւն արձանագրած ենք Ամերիկայի մէջ ցեղային խտրականութեան վերջ դնելու համար, - կ'ըսէ ան հանդիսատեսներուն: - Սակայն այս մասին կը լսենք տասնամեակներէ ի վեր: Սեւամորթ մը պիտի ըսէր, թէ երբեք արդար դատավարութեան պիտի չարժանանար Ամերիկայի մէջ»:

Ապա պահ մը լռելէ ետք ան կը չարունակէ. Սակայն Արաբներն ու իսլամները կ'ըսեն, թէ իրենք նոյնիսկ դատավարութեան չեն արժանանար»:

Հանդիսատեսները ուժգին կը ծափեն:

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ՊՐՕՐՈՒԹի Հայ Կաթողիկէ Գէօրգ Հարպոյեան երկրորդական վարժարանի վկայականներու բաշխումը տեղի ունեցած է Ցուլիս 4ին, Ձալքայի Ս. Խաչ եկեղեցւոյ «Պետոզլեան» սրահին մէջ, նախագահութեամբ Հայ Կաթողիկէ Պատրիարքական Փոխանորդ Վարդան Եպիսկ. Աղջարեանի: Բացումը կատարած է Ը. դասարանի աշակերտուհիներէն՝ Նայիրի Ասլանեան: Ապա, չրջանաւարտներու անունով հայերէն, արաբերէն եւ անգլերէն հաւէշտի ուղերձներ արտասանած են Նաիրի Գալայճեան, Քրիսթել Ճուհարճեան եւ Մարիա Թենպէլեան: Տարեվերջի խօսքը եւ հուսկ բանքը արտասանած է տնօրէնուհին՝ Ձուարթ Նահարեան: Ան նշած է որ դպրոցին առաջադիմական ծանր վիճակէն զատ կայ ուրիշ տագնապ մը, որուն չարունակումը կրնայ անորոշացնել հետեւանքներ ունենալ: Սակայ մէկ կողմէ որակի ու ճաշակի նահանջն է, իսկ միւս կողմէ՝ լաւագոյնին ձգտելու, ինքզինք դէպի յառաջդիմութեան պահանջը: Վերջին խօսքը արտասանած է Վարդան Եպիսկ. Աղջարեան: Հանդիսութիւնը վերջ գտած է վկայականներու յանձնումով:

***

ՊՐՕՐՈՒԹի «ՀՄԸՄ-Աղբալեան» մարզամչակութային համալիրի մէջ, Ցուլիս 9ին հանդիպում-ըրոյց մը տեղի ունեցած է Լ. Ղարաբաղի Հանրապետութեան վերաբնակեցման պետական վարչութեան պետ՝ Սերժիկ Ամիրխանեանի հետ: Ցուզադրուած է վաւերագրական ժապաւէն մը վերաբնակողներու եւ անոնց առօրեայ կեանքին մասին: Ապա խօսք առած է Ս. Ամիրխանեան որ արտայայտուած է այդ մասին, չեչտելով թէ վերաբնակեցման ծրագրին նպատակն է գաղթական բոլոր բնակիչները վերադարձնել իրենց հողին, անոնց տրամադրելով բնակարան, հողային տարածք՝ ցանքի համար: Ցայտնած է թէ արդէն իսկ վերադարձած են 3000 հոգի 44 նոր գիւղերու մէջ:

***

ՄՈՆՐԻԱԼԻ Հայ Կեդրոնի «Ա. Ահարոնեան» սրահին մէջ, Ցունիս 23ին, հովանաւորութեամբ Գանատայի Հայց. Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոնէական Որհնութեան եւ Ս. Ցակոբ Քրիստոնէական Դաստիարակութեան ու Համազգային Սահմանադրական դրական յանձնախումբերուն կազմակերպութեամբ, դասախօսութիւն մը տրուած է նիւթի առնչութեամբ՝ «Համայնքին նահանջը: Ձուլո՞ւմ թէ համարկում»: Դասախօսը՝ տիկին Վաղան Դանիէլեան վկայուած՝ Պէյրութի Սէն Ժոզէֆ համալսարանի արեւելագիտութեան բաժնի հայագիտութեան ճիւղէն, Մոնրէալի համալսարանէն ալ ստացած է Ասիւլթ Խիւքասիանի մէջ, Մագիստրոսի աստիճան: Հեղինակ է հայերէն լեզուի դասաւանդման դասագիրքի մը, որ քանի տարի է կը ծառայէ օտարներուն հայերէն սորվեցնելու: Իր յայտնած միտքերն էին ձուլումի եւ համարկումի (ասիմիլասիոն եւ էնթէկրասիոն) վերաբերող վերլուծումներ: Ձուլումը կը պատահի երբ անձ մը իր ինքնութիւնը, իր ընկերային եւ մշակութային նկարագիրը արմատականօրէն կը ժխտէ եւ կը յարի զինք հիւրընկալող ժողովուրդին: Համարկումը կը պատահի, երբ ներգաղթող եւ հիւրընկալող ժողովուրդներու միջեւ փոխադարձ ճանաչողութիւն եւ համերաշխութիւն կ'ըլլայ եւ հիւրընկալող երկրին իշխանութիւնը թոյլատուութիւն կու տայ ներգաղթող փոքրամասնութեան վերապրումին եւ անոր մշակոյթի պահպանման ջանքերուն հանդէպ: Գանատահայ համայնքը ձուլուիլ ուզող ժողովուրդներու չի պատկանիր: Դասախօսուհին չեչտած է որ առանց լեզուի անկարելի է դիմադրել եւ պայքարիլ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԻԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

4

Նիկուան մէջ անհետելու յոյսն ունենալ
եւ յանձնելուն նուրբ կածանի մը բըմայիւնքարիի մը պէս թողուլ ձանձրոյթն ու յափրանճն ալ
եւ անդորրով պատմուճանել հիւանդ հոգին...

Ու մանաւանդ դիւերները իրեն կը յաճախեր Մեծարենցը:

Գիշեր անոյշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու պալասանով.
Լուսեղէն ճամբէն ես կ'անցնիմ գինով՝
Գիշերն անոյշ է, գիշերն հեշտագին...

Էօժէնի իր մտքէն դոց կ'ըսէր այս տաղերը: Ուրախ էր որ նուրբ բանաստեղծ մը, այսպէսով, կը խօսէր իրեն հետ, իր մայրենի լեզուով:

Ու կայարանին առջեւ նստած, կը խօսակցէին հաստատուտ բառերով: Սակայն, անոնց հոգիին մէջ կար նիւթ մը, խօսակցութիւն մը, որ արթնք չէր բարձրանար շրթունքներու վրայ: Ցաւոտ նիւթը կար: Ան մտքերու մէջ կը դառնար, կրակէ հոլի մը նման, ան կը սեղմէր սրտերը, կը լեցնէր նէրը նայուածքները, կը յայտնըւէր չարժումներու մէջ եւ տակայն երբեք չէր հոսեր:

Այդ նիւթին դուրս դալը կը ցանկըր Տալեան եւ իր մայրը: Անոնք գիտէին որ այդ խօսակցութիւնը կրնայ բերել անախորժութիւններ, նոյնիսկ աղէտ: Կը նախընտրէին սակայն դանել լինքզինքին աղէտին մէջ ու ճանչնալ ճակատագիրը քան թէ միշտ մոլեթի, անորոշութեան, վախի, կասկածի, մտահոգութիւններու մէջ ապրիլ:

Տիկ. Նուարդ չէր ուզեր քանալ այդ վէրքը: Անիկա հանդարտասիրտ եւ քաղաքավար կին մըն էր: Որեւէ գինով չէր ախորժեր անհամոյ խօսքերու ներկայ ըլլալ: Այս քննութիւնը իր մէջ եկած էր ոչ թէ ինքնասիրութենէ, այլ փափկանկատութենէ, քնքշութենէ, քաղցրութենէ: Անիկա աւելի արմատական դարմանի մը մասին կը մտածէր: Զայր ու վիրաւորիլ խօսքերը իրեն համար ոչ մէկ ցանկալի արդիւնք կ'առաջացնէին: Ան իր յոյսը դրած էր Մաղաքեանին վրայ: Էօժէնիին համար մէկ փրկութիւն կար: Հարկ էր որ Պաթիստը փոխադրուի Պոլիս: Ուրիշ կերպ մտածել կարելի չէր: Իր աղջիկը սուրբ պատկով կապուած էր այդ մարդուն: Ինչ որ ալ ըլլար իր աղջկան կեանքը, պարտաւոր էր կրել իր լաժինը յանուն պատկին սրբութեան, յանուն ընտանիքին եւ անկէ ծնած զաւակին, յանուշ հաւատքականութեան դրուած ու անգիր օրէնքներուն, յանուն կնոջ մեծութեան որ հասած էր մինչեւ աստուածային մայրութիւնը:

Էօժէնի իր անցեալը մոռցած էր իր մայրիկին ներկայութիւնով եւ մայրիկէն եւս կատած ապառնի յայտին խանդավառութիւնով: Էօժէնի, երազող հոգի, արդէն կը գտնուէր իր ապառնի կեանքին մէջ, ըստեղծելով վարդագոյն տեսիլներ: Ու տեսակ մը ակամայ արհամարհանք ունէր հանդիպ իր ամուսնոյն եւ իր կեսուրին:

Ու անոնք դուրը նստած կը խօսակցէին հեռաւոր, անկապ ու տաներորդական նիւթերու վարյ: Սակայն, անոնց բերնին մէջ թաւալող խօսքերուն տակին միշտ կըրակէ ուրիչ խօսքեր կային, որոնք չէին դառնար դէպի դուրս: Կեսուրը կ'ըսէր.

- Ի՛նչ աղուոր դիւեր...

Ու այդ խօսքը ըսած միշտին կը մտածէր՝

«Ի՞նչ կը խորհի սա կինը արդեօք մեր սա կեանքին ու իր աղջկան մասին...

- Ձմրան դիւերները ի՞նչպէս կ'ըլլան...

- Ձմրա՞ն դիւերները...

Ու կեսուրը կը պատասխանէր թէ ինչպէ՞ս կ'ըլլան ձմրան դիւերները ու միեւնոյն ժամանակ կը մտածէր.

«Այս հարցումը դիտմամբ էր, մխտումներ: Ըսել կ'ուզէ թէ այո՛, ամառը բաւական տանելի է այստեղի կեանքը, ձմեռան կեանքը այնքան տաղտկալի, այնքան ձանձրացուցիչ, այնքան միօրինակ, այնքան, այնքան, այսինքն՝ այնքան... բան... բան... դէշ... մահացուցիչ... սոսկալի... օ՛, սոսկալի... Այո՛, այս ըսել կ'ուզէ, այս հասկցնել կ'ուզէ... Բայց ինչո՞ւ քացէ ի քաց չըսեր: Օ՛, այո՛, խօսք կը նետէ, նրբօրէն, կոպտակի կերպով, պոլսեցիի նման»:

(Շար. 95)

Livres reçus

JUBILEES
OF ARCHIBISHOP
TORKOM MANOOGIAN

REFLECTIONS

St. James Press
Jerusalem

Béatrice et Patrick Avakian-Chandeze,
sa fille et son gendre,

Maïda et Astrig,
ses petites-filles

Et toute la famille

on la douleur de vous faire part du décès de

Madame Meline AVAKIAN

(née KILIDJIAN)

survenu le 14 août 2004, dans sa 92ème année, à Paris.

La cérémonie religieuse aura lieu le mercredi 18 août à 14 heures 30 en l'église arménienne Saint Jean-Baptiste, 15 rue Jean-Goujon 75008 Paris.

Ni fleurs, ni couronnes.

Cet avis tient lieu de faire-part.

28 rue Mousset Robert 75012 Paris

Ի ՅԻՇԱՏԱԿ

Կի Մուսէեանի թարմ յիշատակին, Տէր եւ Տիկին Լեւոն Տէր-Մինասեան 50 եւրօ կը նուիրեն Հ. Ց. Դ. Նոր Սերունդին (ըստանալ «Ցառաջ»էն) եւ 50 եւրօ «Ցառաջ»ին:

*
**

Տիկին Հայկանոյշ Սարգիսեանի մահուան առթիւ, փոխան ծաղիկի, Տիկին Մ. Ցովհաննեան (Սէն Քլուէն) 50 եւրօ կը նուիրէ «Ցառաջ»ին:

Տէր եւ Տիկին Սուրէն Փափազեան եւ զաւակները՝ Տէր եւ Տիկին Միքայէլ Փափազեան եւ Անայիս

ցաւով կը ծանուցանեն իրենց զաւկին եւ եղբօր՝

ՎԱՐՈՒԺԱՆ ՓԱՓԱԶԵԱՆԻ

արկածալի մահը, որ պատահեցաւ Օգոստոս 7ին, Ամթերտամ, 32 տարեկանին

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Շաբաթ, Օգոստոս 14ին, Փարիզի Ս. Ցովհաննէս-Մկրտիչ Մայր եկեղեցին, ընտանեկան մտերիմ շրջանակի մէջ:

Փոխան ծաղիկի նուէրները ազգային հաստատութեանց:

«ՅԱՌԱՋ»- Մեր ցաւակցութիւնները Տէր եւ Տիկին Սուրէն Փափազեանի:

ՅԱՌԱՋԻ ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ
79ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԹԻԻ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

ԳՈԼՈՄՊ- Տէր եւ Տիկին Գեղամ Թորոսեան 170 եւրօ:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Շրջանային Վարչութիւնը խոր ցաւակցութիւն կը յայտնէ ընկերուհի Շաքէ Մուսէեանի, զաւակներուն, Տիկին Էլիզ Մուսէեանի, ընկերուհիներ Թագուհի եւ Շուշան Մուսայեանի, կի (կարպիս) Մուսէեանի մահուան առթիւ:

Տիկին Աստղիկ Պօղոսեան,

Տիկին Սօնիա Պօղոսեան,

Տիկին Նատին Պօղոսեան եւ Մարք Գիւլփա եւ զաւակները

Տէր եւ Տիկին Գրիգոր եւ Ռոզէթ Եաւերեան եւ զաւակները,

Տէր եւ Տիկին Ալպէր Պօղոսեան եւ զաւակները,

Տէր եւ Տիկին Տարօն եւ Սեդա Պօղոսեան եւ զաւակները

եւ ընտանեկան պարագաները սրտի խոր կսկիծով կը ծանուցանեն մահը իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր եւ ազգականին՝

ԺԱՔ-ԹՈՐԳՈՄ ՊՕՂՈՍԵԱՆԻ

որ պատահեցաւ Օգոստոս 1ին:

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Օգոստոս 3ին, Պուլվար Օսման Ս. Ցակոբ եկեղեցին:

Մարմինը ամփոփուեցաւ Սէն Փիէրի դերեզմանատան ընտանեկան դամբարանը:

«ՅԱՌԱՋ»- Մեր ցաւակցութիւնները Տիկին Պօղոսեանին, զաւակներուն եւ Պօղոսեան ընտանիքներուն:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Շէն-Ֆրանսայի Վարչութիւնն ու անդամները մեծ վիշտով կը դուժեն մահը Շէն-Ֆրանսայի նախկին առենապետ կի Մուսէեանի, որ պատահեցաւ Ջորեքշաբթի, Յուլիս 28ին: Այս տխուր առիթով Շէն-Ֆրանսայի, Հայաստանի, Արցախի եւ Ջաւախքի Վարչութիւններն ու անդամները իրենց խոր ցաւակցութիւնները կը ներկայացնեն հանգուցեալին կնոջ, զաւակներուն եւ հարազատներուն:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Շէն-Ֆրանսայի Վարչութիւնն ու անդամները մեծ վիշտով կը դուժեն մահը Շէն-Ֆրանսայի նախկին առենապետ կի Մուսէեանի, որ պատահեցաւ Ջորեքշաբթի, Յուլիս 28ին: Այս տխուր առիթով Շէն-Ֆրանսայի, Հայաստանի, Արցախի եւ Ջաւախքի Վարչութիւններն ու անդամները իրենց խոր ցաւակցութիւնները կը ներկայացնեն հանգուցեալին կնոջ, զաւակներուն եւ հարազատներուն:

(Շար. Ա. էջէն)

Թիւնը կորնգուց եւ ինկաւ, կրկին ոտքի, չկրցաւ լամել ապիւրին ջուրը, բայց եւ այնպէս յամառօրէն ինքզինքը դուաւ: Շրջապատուած էր 15 ծիրանաւորներով, շուրջ 30 օտար եպիսկոպոսներով, 71 Փըրանսացի եւ հարիւրաւոր քահանաներով: Ֆրանսայի նախագահը ընդունած էր Պապը «քրիստոնէութեան այս հին հողամասին վրայ», յետագային Արտաքին նախարարը կը ներկայացնէր Ֆրանսան: 48 ժամուան ընթացքին Ցովհաննէս-Պօղոս Բ. հակառակ թափած չանքերուն, չկրցաւ քօղարկել իր վատառողջ վիճակը (դիմաւորաբար Փարքինսոնի հիւանդութիւնը), բայց եւ այնպէս ինք արտասանեց իր ելոյթներուն մեծ մասը, նոյնիսկ կիրակնօրեայ պատարագէն առաջ հոգեւոր իր ճառը Անարատ Յղութեան վարդապետութեան սահմանումին 150րդ տարեդարձին առթիւ: Խօսքը ուղղեց գլխաւորաբար կիներուն, որոնք Անտեսանելիին պահակները պէտք է ըլլան: Նախատեսուած էր 300 հազար հոգի, բայց կը թուի որ բազմութիւնը 100 հազարի չուրջ էր միայն: Պապը Հռոմ վերադարձաւ Օգոստոս 15ի երեկոյեան: Ցիշենք որ Պէռնատէթի քաղաքը 15 հազար բնակիչ ունի, օրական 30 հազար այցելու (չուրջ վեց միլիոն տարեկան): Ամէն օր 52 պատարագներ կը մատուցուին, կրօնական 22 վայրերու մէջ, Ապրիլէն Հոկտեմբեր: Ցարդ 66 ապաքինումներ արձանագրուած են: Հրաշքի արդիւնք ամէն մէկ ապաքինում կը քննուի միտական մարմնի մը կողմէ: Առաջին հրաչքը պատահած է 1858 Մարտ 1ին, երբ Կոյսը 12րդ անգամ ըլլալով երեւցած էր Պէռնատէթի: Օգոստոս 14էն 15ի գիշերը ուխտաւոր մը յանկարծամահ եղած է, զոհ սրտի սուր տագնապի մը:

Թուիլոնի նաւահանգիստը օդանաւատար Շառլ դը Կոլ նաւուն վրայ է, որ Օգոստոս 15ին, ժամ Շիրաք ոգեկոչեց Փրուվանսի ցամաքահանման 60ամեակը: Զինքը շրջապատած էին նախարարապետն ու բազմաթիւ նախարարներ, ինչպէս նաեւ ափրիկեցի 16 պետական ղեկավարներ, որոնց կարգին Ալժերիոյ նախագահը՝ Պութեֆլիքա, որու ներկայութիւնը վրդոված էր հարքինները, որոնց ծնողքները չարդուած էին Էֆ. Էլ. Էն.ի կողմէ որպէս զաւճան, քանի կը ծառայէին Փրանսական բանակին: Հանդիսաւոր արարողութիւնեւոն, չարքին տեղի ունեցաւ ծովային եւ օդային տպաւորիչ տողանցք մը: Պատուոյ լեգէոնի ասպետի աստիճան չնորհուեցաւ ափրիկեան 20 պետութիւններու վեթերաններուն, բայց Շիրաք այլ, անհասկնալի չնորհում մը ըրաւ երբ Պատուոյ լեգէոն չնորհեց Ալժէ քաղաքին, որպէս «մարտնչող Ֆրանսայի մայրաքաղաքը», ինչ որ եզակի դէպք մըն է եւ նոյնպէս խռովեց հարքինները: Այս հանդիսութիւններով Ֆրանսա ուզեց պատուել այն 100 հազար ափրիկեցի մարտիկները, որոնք կռուեցան Ֆրանսացիներու կողքին, բայց այսօր բաւական դառնացած են, երբ տարեկան 425 եւրոյի թոշակ կը ստանան միայն:

ՊՐԻՄՍԷԼԻ եւրոպական Ցանձնախումբին նորընտիր նախագահը փորթուկալցի Խոսէ Մանուէլ Պարոզօ, Օգոստոս 12ին հրապարակեց իր 24 գործակիցներուն անունները: Ֆրանսա կը ստանայ մէկ փոխ նախագահութիւն, յանձին Ժագ Պարոյի, որու կը յանձնուի նաեւ փոխադրութեան վերաբերող պաշտօնը: Միւս բոլոր պաշտօններն ալ բաշխուած են համաձայն 25 անդամներու, յարգելով համեմատութիւնները:

ՆԱՃԱՖԻ մէջ եւ չուրջը կռիւները կր չարունակուին մինչ պաղտատ հասած են 1300 իրաքցի ներկայացուցիչներ, որոնք պէտք է պատրաստեն ընտրութիւնները եւ Իրաքի ժողովրդավարութեան հաստատումը: Նաճաֆի բանակցութիւններուն ձախողութիւնը պատճառ էր որ ճակատումները չդադրին եւ Մոքթատա ալ-Սատր չարունակէ գլուխ բռնել Ամերիկացիներուն: Այլ քաղաքներ ալ, ինչպէս Սամարա, կռիւներ կան եւ բան Ամերիկացիներուն կեռիլլայի 50 անդամ ըսպանած են:

ՖԼՈՐԻՏԱՆ զոհ գնաց Զարլէյ Թաթոնին, որ մեծ աւեր գործեց չարաթաւերջին: Ամէնէն աւելի վնասուած է 15 հազար բնակիչ ունեցող Փունթա Կորտա փոքրիկ քաղաքը, ուր քարուքանդ եղած են տուները: 16 մեռեալ կար, հարիւրաւոր վիրաւորներ եւ անհետացած անձեր: Օգոստոս 15ին, նախագահ Պուշ այցելեց որոշ վայրեր եւ «աղէտեալ չրջան» հռչակեց, որպէսզի հարկ եղած օգնութիւնը ստանայ: Նիւթական վնասը 15 միլիառ տոլար կը նկատուի:

ԳԱԼԻՖՈՐՆԻՈՑ Գերագոյն Ատեանը չեղեալ համարեցաւ այն 4167 միասեռականներու ամուսնութիւնները, որոնք արձանագրուած են Սան Ֆրանսիսքօ, Փեար 12էն Մարտ 11ի ընթացքին: Նոյն օրը (Օգոստոս 12) Նիւ Ձըրզիի դեմոկրատ կառավարիչը, 47 տարեկան, կողքին ունենալով իր երկրորդ կինը, յայտարարեց թէ կը հրաժարի իր պաշտօնէն: Հրաժարականին պատճառն ալ տուաւ ըսելով- «Ձեմարտութիւնն այն է, որ միասեռական Ամերիկացի մըն եմ»: Մամուլը անմիջապէս յայտնած է կառավարիչին մէկ նախկին գործակիցը՝ հրեայ բանաստեղծ մը, որ ապահովութեան պաշտօնի նշանակուած էր, երբ որեւէ ձեռնհասութիւն չունէր:

ՊՈՒՐՈՒՆԴիի մէջ դոնկոզի թութռի 160 հոգի ջարդուած է, փամփուշտով կամ ողջ-ողջ այրելով, դրացի Գոնկոյէն հասած յարձակողներու կողմէ: Ցարձակումը գործուած է սահմանագլխուն, որ Ռուանտայէն գաղթականներ կ'ընդունի:

ԼԵՀ ԳՐԱԳԻՏ Շեսլա Միլոչ, Նոպէլեան դափնեկիր (1980), մեռած է Գրազուիա, 93 տարեկանին:



Date à retenir

Grande Braderie de Chene

les 4 et 5 décembre

CHENE FRANCE

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976



CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— PARIS
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19

— ARNOUVILLE
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73

— ISSY-LES-MOULINEAUX
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25 (le soir)

— SEVRAN
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76

— VALENCE
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99 (l'après-midi)
MCA : 04 75 55 12 49

— DECINES
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97

— GRENOBLE
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43

— ST MAURICE DE BEYNOST
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07

— VIENNE
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80

— MARSEILLE-VILLE
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66 (le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեզի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն:

*
**

ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին
17 ռիւ Պլէօ 9րդ թաղամաս - Մեթրօ Գառէ Մանկապարտէզ 4 տարեկաններն սկսեալ
(կը խնդրուի արագօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ).
+ CPէն մինչեւ Պաբալօրէա, նաեւ չափահասներու դասարան:

Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, երգ, Թատրոն, Պար:

Հեռաձայնել Օգոստոսին՝
- Արաքսի Գարաճֆիլեան՝
01·39·83·71·19

*
**

La Section «Lola Sassouni»
de Marseille
organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— Restaurant tous les soirs et piqueniques assurés.
— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).

Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne
tout compris, visa inclus
hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

ՀԱՅՐԱՍ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

ՀԱՐԱՏՉ

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS

TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70

COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա : Տար· 230 եւրօ — Վեցամսեայ : 122 եւրօ

Արտասահման : Տար· 270 եւրօ (Ամէնօրեայ առաքում)

247 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1 եւրօ

C.C.P. PARIS 15069-82 E

ՋՈՐԵՔՇԱԲԹԻ

ՕԳՈՍՏՈՍ 18

MERCREDI

18 AOUT

2004

LE NUMERO: 1 €

80ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·004

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

80e ANNEE — N° 21·004

ԹՈՒՐՔԻԱՆ ԵՒՐՈՊԱ ՉԷ ԸՍՏ ԿԱՐԴԻՆԱԼ ԹԱՑԻՆԿԷՐԻ

Ֆիկարօ-Մակազինի մէջ (Օգոստոս 13), չհեկեան հարցազրոյց մը հրատարակուած է Վաթիկանի Հաւատոյ Ժողովի նախագահ եւ Պապին աջ բազուկը՝ ծիրանաւոր Ժոզֆ Ռացինկէրի հետ: Այլ հարցերու կարգին կայ նաեւ Թուրքիոյ անդամակցութեան հարցը եւ կարդինալը չատ վրճռական է: Իրեն համար Եւրոպան մշակութային ցամաքամաս մըն է եւ ոչ՝ աշխարհագրական: Այդ իմաստով Թուրքիա, պամուքեան ընթացքին ուրիշ ցամաքամաս մը կը ներկայացնէ, մնայուն համագործակցութեան մէջ Եւրոպայի հետ: Պատերազմներ եղան Բիւզանդական կայսրութեան հետ· կայ նաեւ Պոլսոյ անկումը, պալքանեան պատերազմները եւ Վիէննայի եւ Ատրիոյ սպառնալիքը: Կարդինալին համար, նոյնացնել երկու ցամաքամասերը սխալ մը կ'ըլլայ: Հարստութեան մը կորուստը, մշակութային անհետացումը ի չահ անտեսութեան: Թուրքիա, որ ինքզինք լաւ պետութիւն կը համարի, բայց խլամի հիման վրայ կըրնայ փորձութիւնն ունենալ մէկտեղ հանելու մշակութային ցամաքամաս մը դրացի արար երկիրներուն հետ եւ այդ ձեւով դիմատար դերակատարը դառնալ մշակոյթի մը որ իր իսկ ինքնութիւնն ունի:

***

«Նիւ Եորք Թայմզ» «Ոչ ըսել Թուրքիոյ» խորագրուած էջով մը «դրգռիչ» կ'որակէ կարդինալին արտայայտութիւնները, չհետեւիլով թէ Եւրոպայի ընդլայնումի հարցը ան չի կազմեր եկեղեցւոյ կալուածին: Ապա կը թելադրէ որ Միութիւնը Թուրքիոյ հետ բանակցութեան թուական որոշելու վճռական պահուն նկատի առնէ Ռացինկէրի տեսակէտները:

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՐԳՈՎ, ՆՈՒԱԳՈՎ ՈՒՍՈՒՑԱՆԵԼ

Պոլսոյ «Ակօս» շաբաթաթերթը (Օգոստոս 6) կը տեղեկացնէ թէ Թուրքիոյ Կրթութեան նախարարութիւնը որոշած է նոր մեթոտ մը կիրարկել, դպրոցականներուն սորվեցնելու համար թէ ինչ է «Հայկական հարց» կոչուածը: Նոր մեթոտը կը յայտորդէ «Հայկական անհիմն պնդումներ»ու մասին հարադրութիւն դրել տալու, այդ նիւթով դասախօսութիւններ կազմակերպելու հրահանգներուն:

Ստեղծագործ հանճարի նորագոյն այս գիւտը կը վերաբերի այս անգամ երգով ուսուցանելու Հայկական հարցը: Որոշուած է դասամիջոցին մեկնակէտ ընել Ալի փաշային նուիրուած Ողբը: Փաշան Վանի մէջ պաշտօնավարած է, յետոյ խաղերով ու դաւերով պաշտօնազրկուած· Պոլիս մեկնելու համար նաւ մուած պահուն ըսպաննուած է Հայերու կողմէ: Իրեն ճօնուած է «Գարի ցանեցի չկրցայ հնճել, եւրազ մը տեսայ չկրցայ պարզել» խորագրուած ողբը:

Այդ ողբին չրջանակին մէջ աշակերտներուն պիտի պատմուին ռուսեւթուրք պատերազմէն ետք երեւան եկած Հայկական հարցին Ռուսերու հետ կապը, հայկական կոմիտէներու յայտնութիւնը, կիրարկուած մեթոտները, կարգ մը երկիրներու հայկական ապստամբութիւններու տուած նեցուկը, Օսմանեան պետութեան անոնց դէմ կիրարկած քաղաքականութիւնը, ողբին յօրինուած տարիներուն Վանի կուսակալական եւ քաղաքական կառոյցը, եւլն.:

Թերթը նոյն թիւին խմբագրականին ալ նիւթ ըրած է որոշումը, գրելով· «Մինչ հայկական աշխարհը կը պատրաստուի 1915ի 90ամեակին, Թուրքիա վերջին տարիներուն աշխուժացուցած իր դէմ քարոզչութեան կ'աւելցնէ նոր մեթոտներ որոնք ծաղրանկարներու նիւթ կրնան ծառայել»: Գրութիւնը կ'աւարտի արդար ափսոսանքով· «Ձարահատութիւնր ա՞յս աստիճանի դառն երգիծանիք յօրինել կուտայ եղեր, ո՛վ Աստուած»:

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՓՈՂ Ի ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՄՆ-ու նախագահը՝ Պուշ յայտարարեց Օգոստոս 16ին, որ 70-էն 100 հազար ամերիկացի զինուոր վերջ պիտի տան իրենց ներկայութեան Եւրոպա եւ Ասիա, ինչ որ աննախընթաց որոշում մըն է ջլամարտի վերջաւորութենէն ի վեր: Գործողութիւնը կերկարի տասը տարուան վրայ: Սինհանթի արտասանած իր ելոյթին մէջ, օտար պատերազմներու վերաբաններուն առջեւ, նախագահը չեչտած է «տառնամեայներու երկայնքին մեր զօրքերը մնացին հոն, ուր վերջ գտան նախորդ դարու պատերազմները, Եւրոպա եւ Ասիա: Ամերիկեան ուժերու կառոյցը նախատեսուած էր մեզ պաշտպանելու համար, ինչպէս նաեւ մեր զինակիցները՝ խորհրդային ըսպառնալիքին դէմ: Արդ, այդ սպառնալիքը անհետացած է, աշխարհ չատ փոխուած է...»: Պուշ աւելցուցած է նաեւ «մեր զօրքերը աւելի գործօն պիտի մնան Միացեալ-Նահանգներ, ուրկէ պիտի կրնան գործել ամբողջ աշխարհի մէջ տարածելու համար ազատութիւնն ու խաղաղութիւնը»...:

ՎԻՆԵԶՈՒԵԼԱՅԻ նախագահը՝ Հուկօ Չաւէզ յաղթական եկաւ Օգոստոս 15ի հանրաքուէին, ստանալով ձայներու 58,25%ը (ընդդիմութիւնը՝ 41,74%): Միացեալ-Նահանգները քննութիւն մը կը պահանջեն արդիւնքը օրինաւոր չնկատելով, ընդդիմութիւնն ալ խարդախութեան մասին կը խօսի: Շաւէզ յայտարարած է որ չուզեր ամերիկեան գաղթականի մը վերածուիլ, նշելով նաեւ որ Պուշ ապուշ մըն է: Շաւէզ այլեւս իշխանութեան գլուխ կը մնայ մինչեւ 2007: Հանրաքուէին նպատակն էր զինքը վար առնել: Քարիւղի արտադրութեան մէջ հինգերորդ տեղը գրաւելով, Վենեսուելայի նախագահը ապահովութիւն տուաւ որ իր կառավարութիւնը պիտի երաշխաւորէ քարիւղի համաշխարհային չուկայի կայունութիւնը:

ԱԼԺԵՐԻՈՑ նախագահը՝ Ապտելազիզ Պութէֆլիքա ճաշի հիւրը եղաւ նախագահ Շիրաքի, Օգոստոս 16ին, Պրէկանսոնի ամրոցին մէջ, ուր Շիրաք կը գտնուի (Վաոի Նահանգի նախագահական ամառանոցը): Պութէֆլիքա յայտարարեց որ հին վէրքերը սպիացած են եւ նոր էջ մը կը բացուի երկու երկիրներու յարաբերութիւններուն մէջ:

ՀԱՐԱԻԱՑԻՆ ՕՍԼԻՒՈՑ մէջ կացութիւնը օրէ օր կը վատթարանայ եւ մրցակից ուժերու բախումներէն արդէն 17 հոգի

(Շար·բ Դ· էջ)

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 16/17)

Ռ. ՔՈՉԱՐԵԱՆ – ՎԼ. ՊՈՒՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Նախագահ Պուտին Օգոստոս 16ին հասած է Սոչի: Հոն չարք մը հանդիպումներ, մէյմզզային բանակցութիւններ կ'ունենայ: Այդ չարքին մէջ, Օգոստոս 18ին նախատեսուած է հանդիպում մը Հայաստանի նախագահին հետ:

***

«ՄԷԿ ԱԶԳ, ՄԷԿ ՄՇԱԿՈՑԹ» ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՓԱՌԱՏՕՆԸ ԲԱՑՈՒԱԾ

Օգոստոս 15ին նախագահ Ռ. Քոչարեանի հովանաւորութեամբ բացումը կատարուած է «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» մշակութային առաջին համահայկական փառատօնին որ կը տեւէ չարաթ մը: Կը մասնակցին Հայաստանէն, Արցախէն ու Սփիւռքէն աւելի քան 1500 արուեստագէտներ, մշակոյթի գործիչներ:

Բացման հանդիսութիւնը տեղի ունեցած է Օփերայի մեծ սրահին մէջ, ուր ներկայ գտնուած են նախագահին հետ Գարեգին Բ., Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեան, Մշակոյթի նախարար Հ. Հովհէեան, բարձրաստիճան պաշտօնատարներ: Նախագահ Ռ. Քոչարեան իր ողջոյնի ուղերձին մէջ ըսած է թէ փառատօնը աչխարհասփիւռ հայութեան համար հոգեւոր համախմբումի նոր ազդակ է:

Փառատօնին ընթացքին տեղի կ'ունենան մշակութային բազմապիսի գործունէութիւններ· պար, երգ, թատրոն, ցուցահանդէսներ, դիրքերու քննարկում, եւլն.:

Փառատօնին մասնակիցները Օգոստոս 16ին բարձրացած են Մխիթեռնակաբերդ, յարգանքի տուրք մատուցանելու Եղեռնի զոհերու յիշատակին: Հարիւրաւոր երիտասարդներ ծաղկեպսակ դրած են յուշարձանին, անմար կրակին չուրջ մեխակներ, վարդեր սփռած: Փառատօնին մասնակից սփիւռքցիները եղեւին մը տնկած են Ճիչատակի ծառուղիին մէջ:

Թեհրանի երգչախումբը հոգեւոր երաժշտութեան համերգ մը տուած է ամբողջ արարողութեան ընթացքին:

***

ԻՐԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԱԲԱՑՈՒԻ

Երեւանի Ի· Աբովեան մանկավարժական համալսարանի «Սփիւռք» կեդրոնի տնօրէնը Ս· Դանիէլեան յայտնած է թէ իրենց կազմակերպած ամառնային վերապատրաստութեան ընթացքին այս տարի առաջին անգամ Իրաքէն ութ ուսուցչուհիներ կը մասնակցին, «Հայաստան» Հիմնադրամին աջակցութեան չնորհիւ: Մշակոյթի ու երիտասարդութեան հարցերու նախարար Հովիկ Հովհաննիսեան ալ տեղեկացուցած է թէ նախարարութիւնը պիտի օժանդակէ Իրաքի հայկական դպրոցներուն:

Կը ծրագրուի վերաբանալ այդ դպրոցները որոնք պետականացուած էին Ս· Հիւսէյնի օրով, հայ մանուկները զրկելով մայրենի լեզուով կրթութիւն ստանալու կարելիութենէն:

Իրաքի մէջ այսօր 22 հազար կը նկատուի հայութեան թիւը· անոնց 15 հազարը կ'ապրի Պաղտատի մէջ· կը նախատեսուի որ դպրոցները վերաբացուելու պարագային չուրջ 500 աշակերտ կ'ունենան:

***

ՄՇԱԿՈՑԹԻ ԳՈՐԾԻՉՆԵՐՈՒ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԼԻԿԱ

Արդարադատութեան նախարարութիւնը պաշտօնապէս արձանագրած է «Մշակոյթի գործիչներու համահայկական լիկա»ն: Նպատակն է համախմբել տարբեր երկիրներու մէջ ապրող մշակոյթի, արուեստի հայ գործիչները: Կազմակերպութեան նախագահն է Դաւիթ Ղազարեան:

Նախատեսուած է մասնաճիւղեր եւ ներկայացուցչութիւններ բանալ հայկական մեծ համայնքներու տէր երկիրներու մէջ, ինչպէս Ամերիկա, Եւրոպա, Ռուսաստան, Մերձաւոր Արեւելք, նաեւ ԼՂՀ: Ծրագիրը մշակուած է «Հայկական մշակոյթ» ամսագրին հրատարակութեան:

ԻՐԱՔԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԱՆԳԱՐԱ ԱՑՔԸ

Իրաքի նոր նախագահը կապի Ալ Եավէր արտասահմանեան առաջին այցը կատարած է Անգարա: Թուրքիոյ Հանրապետութեան նախագահը Ա·Ն· Սեզէր պինք ընդունելով երեք գլխաւոր կէտ չեչտած է երկու երկիրներուն յետագայ փոխյարաբերութիւններուն մէջ: Առաջինը վերաբերած է Իրաքի մէջ աչխատող Թուրքերու դէմ կատարուած յարձակումներուն, պատնդ առնելու դէպքերուն: Թուրք նախագահը պահանջած է որ վերջ տրուի անոնց որպէսզի տնտեսական եւ առեւտրական փոխյարաբերութիւնները կարենան չարունակուիլ:

Երկրորդ կէտը նիւթ ունեցած է քրտական պինեալ խումբերու դոյութիւնը: Ա·Ն· Սեզէր զանոնք որակած է Թուրքիոյ ապահովութեան ուղղուած սպառնալիք, ըսելով որ Իրաք պէտք չէ անոնց ապաստան տայ:

Երրորդ կարեւոր կէտը կազմած է Քէրքիւքի պարագան: Ակնարկելով հոն Քիւրտերու տիրակալութեան ջանքերուն, Թուրքիոյ նախագահը ըսած է թէ Իրաքի ղեկավարութիւնը պէտք չէ թոյլատրէ որ քաղաքին բազմազգ բնակչութենէն որեւէ խումբ տիրութեան նկրտումներ ունենայ, վտանգելով երկրին կայունութիւնն ու ապահովութիւնը:

Թուրք մամուլը տեղեկացնելով այս հանդիպումին մասին, կը գրէ թէ իրաքեան կողմին համար Ա·Ն· Սեզէրի պահանջները նչանակած են Իրաքի ներքին հարցերուն միջամտութիւն ու նախագահ Կազի Ալ Եավէր պատասխանած է իր խօսակիցին թէ պատրաստ են Թուրքիոյ հետ դրծակցելու, այն պայմանով որ Անգարա չմիջամտէ Իրաքի ներքին քաղաքականութեան:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

Օգոստոս 15ին, Սարգիս Սարգսեան (Թէնիս) պարտուեցաւ խրուաթ Իվան Լուպիչիչէն, որ յաղթեց 6-3, 6-4: Լողի մէջ ալ Վարդուհի Ալեխսեան դուրս կը մնայ այլեւս մրցաչարքէն (100 մեթր յառաջընթաց) 42րդ դիրքը գրաւելով 48 մասնակցողներու վրայ:

Օգոստոս 17ին, 39 մարզական մրցումներէ ետք, առաջին դիրքը կը գրաւէ Զինաստան 10 ոսկի մետալներով, 4 արծաթ եւ մէկ պրոնզեայ: Հինգերորդ տեղը կը գրաւէ Ֆրանսա 7 մետալներով (2 ոսկի):

ՈՒՍՈՒՑԻՉ ՀԱՅՐԱՊԵՏԸ

Ամենայն Հայոց Վազգէն Ա. կաթողիկոսի վախճանման 10րդ տարելիցին առթիւ

Գաղտնիք չէ թէ որոշ անձնաւորութիւններ, յատկապէս մանկավարժներ, մեծ ազդեցութիւն կրնան ունենալ պատանիներու վրայ, խորապէս տպաւորելով զանոնք: Այդ ժամանակ, անոնք այդ պատանիներուն համար կրնան դառնալ օրինակներ, տիպարներ, մէկ խօսքով՝ հեղինակաւոր դաստիարակներ: Դպրոցական եւ ուսանողական տարիներուս անձամբ քիչ հանդիպած եմ նման անձնաւորութիւններու: Սակայն խումբին մէջ թերեւս կրնամ դասել նախակրթարանի ուսուցիչներէս Օր. Փլասառ, իսկական նուիրեալ մը, եւ համալսարանի դասախօսներէս միշնադարեան պատմութեան մասնագէտ՝ փրոֆէսէօր Մարսէլ Փաքօ: Սակայն Ֆրանսական հանրային, աշխարհական դպրոցի հարազատ պտուղը ըլլալով հանդերձ, որպէս տիպար, օրինակելի դաստիարակ, կը մտաբերեմ ամէնէն առաջ Վազգէն Ա. Կաթողիկոսը: Կեանքի մէջ նոյնպէս, որոշ հանդիպումներ վճռական կրնան ըլլալ. անոնցմէ մէկը եղաւ անտարակոյս հանդիպումս երջանկայիշատակ Հայրապետին հետ, տասնըմէկ կամ տասներկու տարեկան հասակիս: Այս հանդիպումը կը պարտիմ հօրս որ զիս Լիոնի Ս. Յակոբ եւ կեղեցին տարած էր Վեհափառին հովուական մէկ այցելութեան առթիւ(1): Պատարագին աւարտին, կաթողիկոսը իր չքեղախումբով կը շրջէր պարպուած եկեղեցիին մէջ դիտելով նկարիչ Արտաւազդ Պէրպէրեանի սրբապատկերները երբ յանկարծ իր աջկեր դնուեցաւ: Հայրս անմիջապէս ըսաւ՝ «տղա՛ս, Վեհափառին աջը համբուրէ եւ Աստուած օգնական ըսէ»: Անկեղծ ըլլալու համար պէտք է խոստովանիմ թէ չեմ յիշեր թէ որքանով յաջողեցայ իր յորդորին պատասխանել. այդ պահէն կը յիշեմ միայն Վեհափառին ժպիտը եւ ճակատիս դրած աջը: Դժուար է ըսել թէ ինչ պատահեցաւ իմ մէկու այդ պահին, սակայն զիտեմ այսօր թէ ինչ մեծ ազդեցութիւն ունեցաւ երկու վայրկեաննոց այս հանդիպումը ապագայ կեանքիս մէջ: Երկրորդ հանդիպումս տեղի ունեցաւ փարիզի առաջնորդարանը թեմական կանոնագրութեան հարցով կազմակերպուած ժողովի մը առթիւ 1984ի Ցունիս ամսուն: Այս ժողովին կը մասնակցէի որպէս Լիոնի եկեղեցւոյ վարչութեան անդամ: Ժողովի աւարտին, խընդրանքովս, Նորվան Եպիսկ. Վեհափառին դիմած էր որպէսզի էջմիածնի Հոգեւոր ձեմարան ընդունուիմ: Աչնան կը հասնէր դպրոցական պատասխանն ու վիզան:

Նոյեմբեր 1984, Երեւանի օդակայանը. «Դո՞ւք էք Ֆրանսիացին»: Առաուտան ժամը մէկին է կամ երկուքը, օդը՝ ցուրտ: Հարցնողը աչխարհականի հագուստով եւ հոգեւորականի օձիքով երիտասարդ մըն է: Քունէն նոր արթնցած է. աչքերը չփեթով կը շարունակէ՝ «անունս Ստեփան Սրկ. Դաւթեան է»(2) ու հարցումը կը կրկնէ. «Դո՞ւք էք Ֆրանսիացին»: Շուարած եմ... ի՞նչ պատասխանեմ. Եկած եմ քանի մը ամիս Հոգեւոր ճեմարան ուսանելու, հայկական մթնոլորտի մը մէջ թաթխուելու, սորվելու համար այն հայերէնը զոր չեմ սորված հայկական դպրոց յաճախած չըլլալուս համար եւ զիս հայրենիքի մէջ դիմաւորողը բարի գալուստ կը մաղթէ ինծի համար անհասկնալի այս հարցումով: «Այո՛ ես եմ» պատասխանեցի: Դուրս ելանք, մոխրագոյն Վոլկա մը նստանք ու ճամբայ ելանք դէպի էջմիածին: Մութին մէկէն կը փորձեմ քանի մը պատկերներ որսալ. խեղճուկ կանթեղակալները աւելի կը չեշտեն ճանապարհի ափին զտնուող միթայարկանի տուներուն անչքութիւնը: Առաջին տպաւորութիւններս խրախուսիչ չեն ու պահ մը կասկածով ես ինծի հարց կուտամ թէ ի՞նչ գործ ունէի այստեղերը... Ո՛չ վարորդը կը խօսի հետս, ոչ ալ դիմաւորող սարկաւագը: Վերջապէս էջմիածին կը հասնինք՝ Աւետեաց Երկիր... Մայր տաճարը հազիւ կ'ուրուագծուի երկինքի յատակին վրայ: Զիս կը մտցնեն Վանատուն ուր պէտք է քանի մը ժամ քնանամ: Զեմ քնանար, անհամբեր արեւածագը կը սպասեմ... քնանալու ժամանակը չէ. Արարատը հոս է, Մայր տաճարը հոս է... ինչպէ՞ս քնանալ: Ժամերը կ'անցնին: Մէկանգէն յանկարծ ձայն մը կը հնչէ «Իսքէնտէ՛ր, Ֆրանսացիին սատ թող նախաճաշի գնայ ու յետոյ մտնի Վեհափառի մօտ»: Վանատան պահակը խակոյն զուռս բախելով զիս միաբանական սեղանատուն կ'առաջնորդէ հայրատունեան առաջին նախաճաշիս համար: Նախաճաշը արագօրէն կուլ տալէ ետք նոյն արագութեամբ կը քալեմ դէպի վեհարան. յուզումով կ'անցնիմ Տրդատ Թագաւորի կամարին տակէն, վերջապէս կը հասնիմ ընդունարանը ուր աշխոյժ մթնոլորտ մը կը տիրէ: Աւլած չուրջս կը նայիմ պատերէն կախուած նկարներն ու հայրատուաչխարհացոյցը, ընդունարանի զեղեցիկ ժամացոյցը, անցնող դարձող հոգեւորականներ. կը վերյիշեմ «Էջմիածին» ամսաթերթին էջերէն քանի մը դէմքեր ու յանկարծ կը լսեմ. «Ֆրանսահայ ուսանողը ո՞ւր է... Վեհափառին մօտ թող մտնէ»: Պահը մոգական պէտք էր ըլլար. տարիներով սպասածս ահա կը կատարուէր վերջապէս, սակայն ծունկերս եւ սրունքներս կը դողային եւ վստահ չէի որ պիտի հասցնէին մինչեւ հայրապետին գըրասեղանը: Զեմ յիշեր թէ ինչպէս կրտրեցի պաշտօնական դրասենեակին ամբողջ երկարութիւնը... կը յիշեմ միայն Վեհափառին լայն ժպիտն ու «Բարի եկար»ը: Գօտեպնդուած, համարձակօրէն պատասխանեցի՝ «Ծառայ եմ, Վեհափառ Տէր»: Մէկ ժպիտով ու երկու խօսքով ան յաջողած էր փարատել բոլոր մտատխրութիւնները: Ութ ամիս ապրեցայ Մայր Աթոռի մէջ: Առաւօտները, որպէս պատրաստութեան պարտաւորութիւն: Այսպէս օրերս կ'անցընէի ուսումի եւ ժամերգութեանց մէջեւ: «Արտաքին աչխարհ»ը գիս ոչ կը հրապուրէր, ոչ ալ կը հետաքրքրէր: Այդ տարին, 1985ին, գարնան հետ հասաւ քաղաքական գարուն մըն ալ... Գորբաչով, կլազնոստ, պերեստրոյկա... Սակայն որո՞ւն պէտք էր այդ բոլորը. ես եկած էի «հայանալու» համար, աչքիս առաջ կար միայն՝ Գրաբար, Հայոց Լեզու, Հայ Եկեղեցւոյ Պատմութիւն, չարակատարութիւն, ծիսագիտութիւն եւ քարոզախօսութիւն: Այս վերջինը ամէնէն շատ սիրած դասս էր դուցէ, ու ամենավտանգաւորը որովհետեւ մեր ուսուցիչը ինք՝ Վեհափառն էր(3): Հայրապետին կենսագրութեան քիչ մը ծանօթ ըլլալուս դիտէի որ նախքան հոգեւոր աստիճան մտնելը ան ուսուցիչ եղած էր Պուքրէշի հայկական վարժարանը: Լսած էի նաեւ որ ան հեղինակն էր «Մրմինեան Հայրիկ որպէս դաստիարակ» աշխատութեան(4): Առաջին դասէն իսկ զգացի որ նախկին մանկավարժը չէր անհետացած հոգեւորականի սքեմին տակ. ան մանկավարժի վայել համբերութեամբ կը լսէր մեր քարոզները, կը սիրէր ճչգրտութիւնը լեզուի գործածութեան մէջ, «Արեւմտահայերուս» (երեք հոգի էինք) կը թելադրէր հաւատարիմ մնալ մեր լեզուին: Գիտէր սրբագրել մեր սխալները առանց վիրաւորելու, գիտէր գնահատել եւ մանաւանդ քաջալերել: Իր մէջը ունէր մանկավարժին առաջին յատկութիւնը՝ «ծնելու արուեստը», այդ՝ խոստով ան իսկական ուսուցիչ մըն էր, հայր մը, հոգեւոր հայր մը: Մենք, ուսանողներս, չաբթուան ընթացքին քիչ առիթներ ունէինք իրեն հետ չփոթմի, սակայն ամէն վայրկեան կը զգայինք իր հայրական հոգատարութիւնը: Որպէս մանկավարժ եւ մանաւանդ որպէս Գէորգ Զ. Կաթողիկոսի յաջորդ, լաւ գիտէր այդ հոգեւոր հաստատութեան ցաւագին պատմութիւնը: Գիտէր անոր տհմամանափակումներն ու յաջողութիւնները: Բնաւորութեամբ լաւատես էր եւ ուսանողներու իւրաքանչիւր յաջողութիւնն իրեն համար ուրախանալու արդար պատճառ մըն էր: Բոլորին ծանօթ է թէ իր կարեւոր յատկութիւններէն մէկն էր դիւանագիտութիւնը. ան յաջողած էր լեզու գտնել Հայաստանի համայնավար կամարներուն հետ եւ Հոգեւոր ճեմարան հրաւիրել պետական համալսարանի լաւագոյն դասախօսներէն քանի մը հոգի: Քրիստոնէավայել ներողամտութեամբ մը ան արտօնած էր կարգաթող քանի մը հոգեւորականներու վերադարձը, նկատի առնելով իրենց դիտական եւ մանկավարժական արժէքն ու փորձառութիւնը, սակայն հոգեւոր այս հաստատութենէն հեռու կը պահէր այն անձերը որոնք էապէս վնաս հասցուցած էին Եկեղեցւոյ, յատկապէս ստալինեան շրջանին(5):

Իր իւրաքանչիւր այցը Հոգեւոր ճեմարան, առիթ մըն էր մեզ խրատելու պարզ եւ սիրով լեցուն խօսքերով: Իր ձայնը մեղմ էր, եւ սակայն յոյժ գրաւիչ, եթէ ոչ հմայիչ: Երբեմն կը պատահէր որ իր հանդարտ ձայնը աստկնաւոր ու անսպասելի պոռթկումով կընար արտայայտուիլ, սակայն անմիջապէս ձայնը կը մեղմանար եւ իր ուսուցողական, խաղաղ ուրոյն ոճը կրկին կը տիրէր: Ուսուցիչ էր ամբողջ էութեամբ. նոյն համբերութեամբ, ճչգրտութեան նոյն ջծախնդրութեամբ, ուսուցողական իր այդ ոճով կը յարաբերէր բոլորին հետ՝ հոգեւորական, քաղաքական գործիչ, բանուոր, արուեստագէտ, դիտնական. միշտ բացատրելով, միշտ փորձելով համոզել, երկրի մը եւ ընկերութեան մը մէջ ուր հրահանգը եւ հնազանդութիւնը համատարած օրէնք էին:

Իր ամբողջ կեանքին ընթացքին ան հաւիւրաւոր աչակերտներ ունեցաւ: Անոր ժանեաքար անոնցմէ մէկը կը համարձակիմ նկատել ինքզինքս. ան ինծի տուաւ հայերէնով արտայայտուելու համարձակութիւնը եւ եթէ Ֆրանսա վերադառնալէս յետոյ յանդգնութիւնն ունեցայ «Ծառայ»ին ղրկելու առաջին յօդուածներ՝ իրեն կը պարտիմ: Քարոզախօսութեան դասին կը պատահէր որ Վեհափառը ուսանողներէն մէկը քաջալերէ, հրահանգելով որ իր դրած քարոզը «Էջմիածին» ամսաթերթին մէջ հրատարակուի: Անսպասելիօրէն պատահեցաւ որ օր մը այս բախտը ինծի վիճակի: Տասնըհինգ օրը անդամ մը Վեհափառը Ս. Գիրքէն առնուած բնաբաններ կ'որոշէր ամէն մէկուս համար: Զարմանալիօրէն Նոր Կտակարանի ուսմանեղէն տարբերակ մը կը գործածէր եւ այդ պատճառով ալ աստր մէջ կը տեսնէի գուցէ «սփիւռքեան» հասարակայ դիծ մը որ դիս աւելի կը մօտեցնէր իրեն: Ամէն ուրբաթ, դասի ժամանակ, լսարանի ուսանողներէն երեք կամ չորս հոգի իրենց դրած քարոզը պիտի կարդային. պէտք չկայ անչուչտ չեչտելու, թէ ի՛նչ երկիւղով կը կատարէինք այդ պարտականութիւնը... Օրին մէկն ալ կարգս եկաւ. Վեհափառը պահանջեց որ չարադրած քարոզս կարդամ: Բնաբանս էր Ս. Մաթէոսի աւետարանէն «երանի»ներու չարքէն (գլուխ Ե. համար 7) հետեւեալ նախադասութիւնը՝ Երանի ողորմածաց, զի նոքա ողորմութիւն գտցեն: Հոս ալ չեմ յիշեր թէ ինչպէս կարդացի գրածս. վերջին ընթերցողն էի կարծեմ: Ուրբան որ կը յիշեմ, Վեհը մասնաւոր արտայայտութիւն մը չունեցաւ գրածիս մասին. լակոնական ու մեղմ ձայնով ըսաւ. «Խմբագրատուն գնա՛, պարոն Մելքոնեանին(6) յանձնէ քարոզիդ բնագիրը որպէսզի հրատարակէ»: Գրեթէ քսան տարի անցաւ այդ օրուընէ սակայն նոյն յուզումով եւ նոյն երախտագիտութեամբ կը վերյիշեմ դէպքը: Նոյն հպարտութեամբ կրնամ ըսել թէ հայրապետական այդ գնահատականը ինծի համար եղաւ ու կը մնայ ամբողջ ուսանողութեանս ամէնէն թանկագին «վկայական»ը: 1994 Օգոստոս 18ին, իր մահով միաժամանակ կը սպանի թէ՛ Հայրապետ եւ թէ ուսուցիչս:

Երանելի՛ Հայրապետ, յաւէտ օրհնեալ է յիշատակդ: «Մեծ տեսիլքի զաւակնե-րդ» (7) համար անջնջելի է տապանքարիդ վրայ փորագրուած պատգամդ Սէրը երբեք չանցնիր (Ա. Կոր. ԺԳ., 8):

ՍԱՀԱԿ ՍՈՒՔԻԱՍԵԱՆ
Վիէն, Ֆրանսա

Ծանօթագրութիւններ

(1) Հովուապետական այս այցելութիւնը տեղի ունեցաւ 1970 Մայիսին:

(2) Մայրավանքի մէջ բոլորին ծանօթ էր «Բաֆուեցի» անուաց տակ, բանի մը տարիներ ծառայած ըլլալուն համար Բաֆուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր եկեղեցւոյ մէջ: Յետագային աբեղայ ձեռնադրուեցաւ 1988ին, ստանալով վահան անունը: Ան յաջորդ տարին Արցախեան ազատամարտի առաջին գոհերէն մին եղաւ, Ադրբեջանի սահմանին վրայ ռումբի մը պայթումին հետեւանքով:

(3) Վերջին յարաբանի ուսանող էին՝ Ռոպէր Ադամեան, «երկու Սամուէլեաններ» Դանիէլեան եւ Կնոյեան, Սարգիս Մելիքեան, Հայկ Զուլճեան, Մարգար Տէրտէրեան, Մխիթար Քհնյ. Սարիբեկեան: Լսարանի օրինական ուսանողութեան, այսինքն Հոգեւոր ճեմարանի լման ծրագրին հետեւած ուսանողներուն միացած է. հիմ Լենինականէն տիրացու մը՝ Սահակ Կիւրեղեան եւ ես:

(4) Ա. տպագրութիւն, Պուրէշ, 1943:

(5) Քանի մը տարիներ յետոյ, 1993 փետրուարին, եթէ չեմ սխալիր, մտերմիկ զրոյցի մը առթիւ յայտնած էր որ «Ազատ եկեղեցականներէն» նախկին Բեյնիկ վարդապետը գահակալութենէն անմիջապէս վերջ իր հետ յետոյ փորձած էր գինի համոզել որպէս զի Հոգեւոր ճեմարան պաշտօն ստանար. վեհը վճռականապէս մերժած էր իր խնդրանքը:

(6) Երուանդ Մելիքոնեան այդ տարիներուն Հոգեւոր ճեմարանը Գրաբար կը դասաւանդէր եւ «Էջմիածին» ամսաթերթի գլխաւոր խմբագիրն էր:

(7) Ս. Էջմիածնի Հոգեւոր ճեմարանի հայկերգին առաջին բառերն են:

ՍՈՒՐԻԱՀԱՑ ՆԱՄԱԿԱՆԻ

ՀԱԼԷՊԻ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՑԻՆ 80 ՏԱՐԻՆԵՐԸ

ԼԵՒՈՆ ՇԱՌՈՑԵԱՆ

Վերջերս հրապարակ հանուած պատկերազարդ յուշամատեան մը յիչեցուց մեզի, որ արդէն իր 80ամեակը բոլորած է Հալէպի Հայ Ծերանոցը:

Մեր ժողովուրդին նուազ բախտաւոր ու անհէր պապիկ-մամիկներն են որ ապաստան գտած են այս հաստատութեան երդիքին տակ: Հաստատութիւնը հաւասարապէս կը հովանաւորուի Հալէպի հայ երեք համայնքներուն կողմէ ու կը մատակարարուի զանոնք ներկայացնող միջկարանոնական խնամակալութեան մը վերահսկողութեամբ:

Ակնարկուած նորատիպ յուշամատեանը (որ «Հայ Ծերանոց» տեղեկատու պարբերաթերթերի բացառիկ թիւ մըն է՝ 224 էջանի) յատկապէս պատրաստուած է հաստատութեան 80ամեակին առիթով: Լոյս տեսած է 2003ին, Հալէպի «Արեւելք» տպարանէն, Կոմիտաս Քհնյ. Տաղաւլեանի խմբագրութեամբ: Գլուխ հանուած աչխատանքը ճիշդ մըն է՝ վեր առնելու մարդասիրական այս հաստատութեան նախանամական առաքելութիւնը եւ ուրուագրելու ծերու ուժ տատնամեակներու անոր անցեալին պատմութիւնը:

80ամեակը, ինչպէս մարդ անհատին, նմանապէս ալ որեւէ հաստատութեան համար նչանակալից հանդրուան մըն է: Երկարատեւ ծառայութիւն եւ մեծդի վաստակ կ'ենթադրէ այս թուականը: Եւ արդէն, ա՛յդ է որ կը չեշտեն Հալէպի հայ երեք համայնքներու հոգեւոր պետերը՝ յուշամատեանի առաջնորդող էջերուն փոուած իրենց ողջոյնի խօսքերուն մէջ: Իր կարգին, հատորին խմբագիրը նկատել կու տայ որ «80 տարիներու ընթացքին Հայ Ծերանոցը անցաւ զանազան հոլովոյթներէ, բայց հաւատալով գործին՝ տոկաց ու մնաց, շինեց ու վերաշինեց: ...Այսօր, անցեալի տախտակամէն հիւդակները փոխարինուած են մեծ ու չքեղ շէնքով, յարմարաւէտ զանազան յարկաբաժիններով, ուր կայ վայելչութիւն, մաքրութիւն, հանգստութիւն եւ անդորը.

ՀԱՅԿԱԶՆ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ ՓԱԿ

թութիւն, որու շրջապատը զարդարուած է մայրիի բարձր ծառերով»:

«Հայ Ծերանոց»ի բացառիկ այս թիւը լեցուն է անշուշտ հաստատութեան անցեալն ու ներկան ցոլացնող նկարներով, բայց երեք յօդուածներ հիմնական կորիզը կը կազմեն անոր բովանդակութեան:

Այդ դրութիւններէն առաջինը կը պատկանի Սօսէ Փերտահճեանին, եւ ուր վերագրը կ'ընէ Հայ Ծերանոցի պաշտպան սուրբը հանդիսացող Մեծն Ներսէս Հայրապետի (353-373 թ.) կեանքին ու գործունէութեան պատմական դրուագներուն: Կը խօսի Արշակ Բ. Թագաւորին հետ Մեծն Ներսէսի ունեցած բախտակիցներուն, Արշակաւանի հիմնադրութեան, Մեծն Ներսէսի իրագործած աննախընթաց բարեկարգումներուն, Արշակի յաջորդին՝ Պապի մասին:

Երկրորդ ուշագրաւ դրութիւնը կը պատկանի Վարդի Քէչիչեանին, որ կ'ուրուագծէ Հայ Ծերանոցին պատմութիւնը՝ ըսկզբնէ մինչեւ 1935: Հոն կ'ըսուի թէ Ծերանոցը, որ հիմնուած է 1923ին, իրականութեան մէջ չարունակութիւնը կը նկատուի Մարաչի Հայոց Ծերանոց - անկեանոցին, որ Կիլիկիոյ ազէտէն ետք կը փոխադրուի Հալէպ: Հաստատութեան հիմնադիրներն եղած են վեր. Ահարոն Շերամեան (1861-1939, հայ աւետարանական համայնք), Ներսէս Ա. Քհնյ. Պապայեան (1878-1955, հայ առաքելական համայնք), եւ Գօղոս Ծ. Վրդ. Զալըքեան (հայ կաթողիկէ համայնք): Առաջին 12 տարիներուն Ծերանոցը կ'ապրի դժուար ու թշուառ պայմաններու մէջ՝ հայկական քմմփի սախտակաչէն ու թիթեղածածկ հիւղակի մը ապաւէնով... 1935ին, երբ Սուրիոյ ֆրանսական հոգատար իշխանութեանց հրահանգով կը քանդուին Հալէպի հիւղամանները, Հայ Ծերանոցը կը փոխադրուի Մէյտան թաղամաս, հայասէր բարերարուհի Օր. Էմիլ Ռապըրթոի կողմէ սիրայօժար տրամադրուած սենեակներու մէջ: Այստեղ, այդ օրերու 40 պատսպարեալներուն համար կը ստեղծուին յարաբերաբար աւելի տանելի պայմաններ:

Երրորդ դրութիւնն ալ ստորագրուած է Ալի Ֆիչչնճեանի կողմէ ու կը կրէ «Հայ Ծերանոցը 1935էն մինչեւ օրերս» խորագիրը: Նկատել կը տրուի, թէ Ծերանոցը հետզհետէ կը բարւոքէ իր կենցաղային եւ առողջապահական պայմանները: 1955ին, Ծերանոցի հին չէնքը կը վաճառուի եւ անոր փոխարէն յաջորդ տարի կը ձեռնարկուի բոլորովին նոր երկյարկանի այժմու չէնքին շինարարութեան՝ Հալէպի Պոստան փաշա կոչուած արուարձանին մէջ: Շինարարութեան կ'օժանդակեն Կիլիկեան Հիմնարկը, ամերիկահայ բարերարուհի Էլլա Գարակէօզեան, ՄԱԿ-ի Գաղթականաց Գրասենեակը եւ բազմաթիւ անհատ բարերարներ: Տարիներու ընթացքին կ'ամբողջանան ներքին սարքաւորումներն ու կահաւորումն ալ:

2001 Յունուարին կը ձեռնարկուի Հայ Ծերանոցի ենթակառոյցը ամբողջութեամբ վերանորոգելու աշխատանքներուն: Կը հաստատուի հիւանդարան մը: Կը վերանորոգուին կոյուղիի ու ջուրի ցանցերը, խոհանոց, լուացարան, մթերանոց, հանդերձարան, լողարաններ ու ճեմիչ՝ կ'արդիականանան: 2000էն սկըսեալ ալ՝ հոն կը սկսի գործել մաքսիմ թերահ մանուկներու «Արեւիկ» կեդրոնը, անջատ մատնաբաժինի մը մէջ: Փաստօրէն, «խիղճ, խելք ու սէր կը միաձուլ այս յարկին տակ, վերածելով զայն գութի հաստատութեան մը, որ պատիւ կը բերէ մեր ազգին», ինչպէս գրեր է բանասէրազգ Վահէ Վահեան՝ հաստատութեան յուշամատեանին մէջ, այցի մը ընթացքին, 1970ին:

*
**

Հայ Ծերանոցին պատմութիւնը դրուագող էջերուն մէջ, տեղ մը հանդիպեցանք հետեւեալ նշումին ալ. «1966ին 16,5 մեթր խորութեամբ ջրհոր աղբիւրի բացման աշխատանքներու ընթացքին, խոհանոց, լուացարան, մթերանոց, հանդերձարան, լողարաններ ու ճեմիչ՝ կ'արդիականանան: 2000էն սկսեալ ալ՝ հոն կը սկսի գործել մաքսիմ թերահ մանուկներու «Արեւիկ» կեդրոնը, անջատ մատնաբաժինի մը մէջ: Փաստօրէն, «խիղճ, խելք ու սէր կը միաձուլ այս յարկին տակ, վերածելով զայն գութի հաստատութեան մը, որ պատիւ կը բերէ մեր ազգին», ինչպէս գրեր է բանասէրազգ Վահէ Վահեան՝ հաստատութեան յուշամատեանին մէջ, այցի մը ընթացքին, 1970ին:

*
**

Հայ Ծերանոցին պատմութիւնը դրուագող էջերուն մէջ, տեղ մը հանդիպեցանք հետեւեալ նշումին ալ. «1966ին 16,5 մեթր խորութեամբ ջրհոր աղբիւրի բացման աշխատանքներուն: Կը հաստատուի հիւանդարան մը: Կը վերանորոգուին կոյուղիի ու ջուրի ցանցերը

CONCERT

Mozart **Chœur et Orchestre Amadeus** **Eglise de la Madeleine, Paris**

Ave Verum et Requiem — lundi 23 août à 21h

Ave Maria de Gounod et Schubert

Lisa Levy, soprano — Thierry Dagon, haute-contre

Guy Flechter, ténor — Olivier Peyrebrune, basse

Direction : LUC BAGHDASSARIAN

■

Mozart **Chœur et Orchestre Amadeus** **Eglise de la Madeleine, Paris**

Ave Verum et Requiem — samedi 28 août à 21h

Ave Maria de Gounod et Schubert

Lisa Levy, soprano — Thierry Dagon, haute-contre

Jean-François Chlama, ténor — Olivier Peyrebrune, basse

Direction : LUC BAGHDASSARIAN

(Շար. Ա. էջէն)

մեռած է։ Զոհերուն մէջ կան զինուորներ որոնց պարտականութիւնն էր խաղաղութեան պահպանումը ապահովել։ Կացութիւնը ալ աւելի հակասական բնոյթ ունի, որովհետեւ միջնադիր ուժերը կը բաղկանան Օսէթիներէ, Վրացիներէ եւ Ռուսերէ։ Վրաստանի Խորհրդարանը պահանջած էր անցեալ շաբթու, որ ռուս զինուորները քաշուին, քանի Օսէթները կը պաշտպանեն։ Սահակաշվիլի ալ միջազգային ժողով մը կը պահանջէ եւ վարչապետը՝ ժըվանիա ճղած է այդ առթիւ, որ Օ. ԷՍ. Սէ. Ը.ն արդէն դրական պատասխան մը տուած է։ Սահակաշվիլի կ'ուզէ խաղաղ միջոցներով հարցը լուծել, թէեւ կրկնած է.- «Մեր նախնիքը այս երկիրը մեզի չեն ձգած խնճորի մը պէս, որպէսզի մէկը կարենայ կտոր մը խածնել»։

ԻՍՐԱՑԼԻ եւ պաղեստինցի իր բանտարկեալներուն միջեւ լարուած մթնոլորտ մը կը տիրէ եւ այս վերջիններուն հաստատուն չարժումը կը ծաւալի։ Նաֆհայի, էչէլի, Քէտարի եւ Հատարիմի 1550 բանտարկեալներ «անսահման ժամանակի համար» հացադուլի դիմած են եւ վախ կայ որ 2400 ուրիշներ ալ միանան չարժումին։ Բողոքը կը վերաբերի կեանքի իրենց պայմաններուն եւ Իսրայէլացիներու նուաստացուցիչ վարուելակերպին։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Շրջ. Վարչութիւնը չնորհակալութեամբ ստացած է 100 Եւրօ Տէր եւ Տիկին Ժապ Գրիգորեանէ Տիկին Փաթիլ Գրիգորեանի մահուան Ա. տարելիցին առթիւ։

Rentrée des classes

Les inscriptions pour l'année 2004/05 à l'école hebdomadaire «Siamanto» de Bagneux auront lieu :

le mercredi 15 septembre à 15 heures

à l'école Henri Wallon,

2 avenue de Stalingrad à Bagneux

Au cours de ces inscriptions, une réunion conviviale aura lieu, comme chaque année, sur le déroulement de la nouvelle année scolaire.

Les cours commenceront le mercredi suivant -22 septembre : le matin pour les plus jeunes enfants -environ 5 à 10 ans-, et l'après-midi pour les adolescents jusqu'au baccalauréat et les enfants au dessus de 10 ans.

Pour tout renseignement :

— Mme Lucie Dossikian: 01 45 46 10 11

— Mme Elisabeth Davidian: 01 46 65 81 53

CHAVILLE

Eglise St Grégoire l'Illuminateur

6 rue Père Komitas

Pendant la saison d'été, il n'y aura pas de messe les dimanches 1er août, 8 août, et 22 août.

Le dimanche 15 août, à l'issue de la messe de l'Assomption, se déroulera la traditionnelle cérémonie de bénédiction du raisin.

Les offices reprendront normalement à partir du dimanche 29 août.

●

ECOLE «LEVON CHANTH»

Les cours de l'Ecole hebdomadaire «Lévon Chanth» de Chaville reprendront le **mercredi 8 septembre à 9 heures,** dans la salle de l'église.

Inscriptions sur place.

6 rue Père Komitas

92370 CHAVILLE

Tél. : 01. 47. 09. 23. 18

«ՅԱՌԱՋ»Ի ընթացիկ ազդեցու սակագինը

	€	
Մասիսպ	**140**	**(167,44)**
Հոգեհանգիստ	**125**	**(149,50)**
Շնորհակալիք	125	(149,50)
Հարսնիք–Նշանտուք	125	(149,50)
Ծնունդ	125	(149,50)

Բոլոր ազդեցու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թ.Վ.Ա. (տե՛ս. վաճառքի մէջ ընդհ. գումարը)։

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդեցու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՕՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8–րդ (12–13 տող) մնացեալին։

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել Թերթին վաճառքեան։

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— PARIS
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19

— ARNOUVILLE
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73

— ISSY-LES-MOULINEAUX
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25 (le soir)

— SEVRAN
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76

— VALENCE
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99 (l'après-midi)
MCA : 04 75 55 12 49

— DECINES
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97

— GRENOBLE
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43

— ST MAURICE DE BEYNOST
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07

— VIENNE
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80

— MARSEILLE-VILLE
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66 (le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեզի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն։

*
**

ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին 17 ու. Պէտ Յրդ թաղամաս - Մեթրօ Գառէ

Մանկապարտէզ 4 տարեկանէն սկսեալ (կը խնդրուի արագօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ)։

+ CPէն միւնչեւ Պաֆալօրէա, նաեւ չափահասներու դասարան։

Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, Երգ, Թատրոն, Պար։

Հեռաձայնել Օգոստոսին՝
- Արաքսի Գարաճիլեան՝
01·39·83·71·19

*
**

La Section «Lola Sassouni»
de Marseille
organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.

Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...

— Restaurant tous les soirs et piqueniques assurés.

— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).

Départ de Marseille

Prix : 1595 Euros par personne tout compris, visa inclus hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Pensez à nous réserver votre journée du DIMANCHE 12 SEPTEMBRE

pour participer à notre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchetre SPITAK

qui se déroulera dans les jardins
du Dr et Mme KEGHIAN
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel
(en cas de pluie, la fête se déroulera dans la salle paroissiale d'Arnouville-lès-Gonesse, 69 avenue Henri Barbusse 95400 Arnouville)

Programme : Divine Liturgie à 11 heures
Repas à partir de 13 heures
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage des deux **Tombolas** (Enfants et Adultes)

Participation aux frais de la journée : Adultes 20 Euros
Enfants 12 Euros

Réservation par tél. : 01 44 59 23 50 (Paroisse de Paris)
01 40 51 11 90 (Centre Culturel)

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 19
JEUDI
19 AOUT
2004

LE NUMERO: 1 €

ՀԱՅՐԱՆԻՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925
DIRECTRICE : ARPIK MISSAKIAN
83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 230 եւրօ — Վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար. 270 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
247 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

80ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.005 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 80e ANNEE — N° 21.005

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՓԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԿԱՐԴԻՆԱԼ ԺՈԶԷՖ ՌԱՏՅԻՆԿԷՐԻ հարցադրոյցը Ֆիկարօ-Մակազինի (Օգոստ. 13) հեղնական անդրադարձի մը առիթ տուած է Գանար-Անշէնէֆ (Օգոստ. 18), ուր փաթրիս Լեմթրոհան կը ձաղկէ Հաւատոյ Տարածման ժողովի նախագահին դիրքը ընդհանրապէս, ներառեալ Թուրքիոյ անդամակցութեան դէմ մերժողական դիրքը («Ճառագ», Օգոստ. 18), ուրու համար կը գրէ. «իրեն ի՞նչ»: Ճօդանը կ'անդրադառնայ ծիրանաւորին դերմանական ծագումին, ժամանակավրէպ նկատած ըմբռնումներուն եւ յեռամնայ յայտարարութիւններուն: Կը յիշուի նաեւ որ վրդոված է հրէական համայնքները, երբ ըսած է.- «Աբրահամի հաւատքը իր վախճանը կը գտնէ Յիսուս Քրիստոսի իրողութեան մէջ»: Ճօդանածաղիրը ցաւ կը յայտնէ նաեւ որ Պապին վախճանման պարագային, իր պաշտօնին բերմամբ իրեն կը վիճակուի պատրաստել նոր պապին ընտրական ժողովը (կարդինալներու):

ՆԻՔՈԼԱ ՍԱՐՔՈԶԻԻ թեկնածուութիւնը իւ. էմ. փէ.ի նախագահական ամրոխին այլեւս գաղտնիք ըլլալէ դադրած է եւ անհրաժեշտ չէ մինչեւ ամսուն վերջ սպասել: Արձակուրդի իր չըջապտոյտը ընտրական բնոյթ առած է եւ Օգոստոս 17ին Աթքաչոնի մէջ է, որ բացայայտ կերպով պարզեց իր ծրագիրը: Կարտըն-փարքիի մը ընթացքին մեծարելէ ետք նախկին նախագահ Ալէն Ժիւպէն, ապահովութիւն տուաւ որ «նոր պատերազմի մը դործիքը վեմ ըլլար երբեք: Ամէն ինչ կ'ընեմ ամէնէն լայն համախմբումի մարդն ըլլալու համար»: Ըստ իրեն, կարելի է տարակարծութիւններ ունենալ, բայց քաղաքական իր ընտանիքին մէջ իրաւունք չկայ հակառողոր ունենալու: Արդէն իսկ ձեռք երկարած է Պայրուի ԻԻ.ՏԻ.ԼԻՖ.ին, որու կ'ուզէ վերջ տալ «անհատակացողութեան»: Նոյն դիրքն ունի «ինքնիշխանականներու» (Տը Վիլիէ, Փասքուա) հանդէպ: Իր ելոյթին մէջ Սարքոզի չէ ակնարկած ԻԻ.էմ.փէ.ի նախագահի եւ նախարարի կրկնակի պաշտօններուն, բայց կը թուի որ միաք չունի հետեւելու Շիրաքի Յուլիս 14ի վերընտրին:

ԱԹինքի Թուրքիոյ դեսպանը՝ Եիղիթ Ալփողան Ապահովութեան Ազգային Խորհուրդի ընդհ. քարտուղար նշանակուած է: Առաջին անգամն է որ ոչ դինուորական մը կը յանձնուի նման պաշտօն մը: Պատճառ է որ Խորհուրդը կը բաղկանայ երկրին գլխաւոր զօրավարներէն եւ պահանջատու քաղաքական դեկավարներէն: Յարդ, այդ պաշտօնը կը վարէր զօրավար մը: Եւրոպայի պահանջներէն մէկն ալ Թուրքիոյ անդամակցութեան համար, այն է որ քաղաքային հակակշիռ ըլլայ դինուորական մեքենային վրայ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՊՕՂՈՍ Բ. եթէ առողջական վիճակը թոյլատրէ, Պոլիս պիտի այցելէ Ցունաց Պատրիարք Բարթուղիմէոսի հրաւէրով: Այցը ծրագրուած է Նոյեմբեր 30ին: Պիտի մասնակցի Ցունաց պատրիարքարանին մէջ կատարուելիք ատրողութեան մը ու նոյն օրը վերադառնայ Հռոմ: Պապին Պոլիս երկրորդ այցը պիտի ըլլայ այս մէկը առաջինէն ճիշդ 25 տարի ետք:

ՖՐԱՆՍԱՅԻ կարդ մը նահանգներ՝ Կառ, Վօքլիւզ, Հէրօ ապէտայի կազմութիւնն մը պարզեցին Օգոստոս 17ին սաստիկ փոթորիկներու հետեւանքով, որոնք պատճառեցան մարդկային զոհերու ալ: Հակառակ վտանգը ազդարարող դրօշակներուն (կարմիր) ոմանք չեն վարանած ծով մտնելու եւ խեղդամահ եղած են (երկու անձեր Հէրոյի նահանգը):

ԼՈՒՐՑ անանկութեան ճամբուն վրայ է Պապին այցելութեան հետեւանքով: Ծախսուած է մէկուկէս միլիոն եւրօ եւ նուէրները հազիւ 200 հազար Եւրոյի հասած են: Կոչ կ'ըլլայ հաւատացեալներուն, որպէսզի բայը զոցուի: Թարպի եպիսկոպոսը՝ գերդ. Ժաք Փերիէ կոչ ըրած է այդ ուղղութեամբ որ նուէրները ըլլան, քանի սրբավայրերը չեն կրնար այդ բացը կրել եւ եթէ պէտք ըլլայ, փոխառութեան պիտի դիմեն:

ԳԵՐՄԱՆԻԱ մտահոգ է Պուշի յայտարարութենէն ետք, ըստ որուն ԱՄՆ իրենց զօրքերը պիտի քաշեն նաեւ Եւրոպայէն: Արդարեւ, Գերմանիոյ հողամասին վրայ 73 հազար ամերիկացի զինուորը կայ, այլ խօսքով Գերմանիա այն երկիրն է ուր ամերիկեան զինուորական ներկայութիւնը ամէնէն կարեւորն է: Ինդրոյ առարկայ ղէմաւոր ըլլանները՝ Ռենանի-Վեսթֆալի, Հէս, Պաւարիա եւ Պատըվիւրթընպէրկ առաւելաբար մտահոգ են քանի կը վերաբերի 80 հազար աշխատանքի կորուստին: Ամէնէն աւելի թիրախ եղած քաղաքները սկսած են հաշիւներ բռնել: Ամերիկացի զինուորներն ու իրենց ընտանիքները իրենց եկամուտին 30%ը Գերմանիա կը ծախսեն: Ռենանի-Վեսթֆալէն մէջ, 8500 հոգի կ'աշխատին շրջնորհիւ ամերիկեան ներկայութեան: Նոյնն է կացութիւնը այլ շրջաններու համար: Գերմանիոյ Արտաքին նախարարը փորձած է ապահովութիւն տալ որ որոշումը անմիջական գործադրութիւն չունի եւ թէ վերջնական ալ չէ:

ՍՈՒՐԻՈՑ Պետութեան Ապահովութեան Ատեանը ազատ արձակած է մարդկային իրաւանց պինուորեալ Աքթամ Նայէն, ընդառաջելով պաշտպան փաստաբաններու դիմումին: Ենթական բանտարկուած էր Ապրիլէն ի վեր, ամբաստանուած է որ «կ'ընդդիմանայ յեղափոխութեան հետեւնկարներուն եւ գործունէութիւն կը տանի որ դէմ է Պետութեան ընկերվարական դրութեան»: Դատարան պիտի ներկայանայ որպէս ազատ քաղաքացի:

ՊԱՀԵՍՏԻ իսլամական առաջին դրամատունը Եւրոպայի մէջ ստեղծուած է եւ Սեպտեմբերէն իսկ պիտի առաջարկէ քարտեր եւ վարկեր Մեծն Բրիտանիոյ 2,5 միլիոն մահմետականներուն: Անունն է «Իսլամիք Պանք օֆ Պրիթըն»: Եկամուտի ապահովումը հաշտեցնելու համար հզդեւոր պահանջներուն, հաւատոյ վարդապետներու խորհուրդ մը պիտի ունենայ, որ պիտի հսկէ Գուրանի սկզբունքներուն յարգանքին: Իսլամական իրաւագիտութիւնը, օրինակ, կ'արգիլէ տոկոսներու դանձումը:

ՄԱՂՐԵՊՑԻԻ մը վրայ յարձակում գործողը եւ Լիոնի հրէական գերեզմանատան չիրմներ պղծողը յայտնաբերուած է իր իսկ խոստովանութեամբ: Սովորութիւն ունէր արարքները Ֆինէյաս (Փինէհէս) բուտորագրելու եւ յայտարարած է որ կ'ատէր Արաբները, բայց տեսնելով որ իր յարձակումը հազիւ քանի մը տողի արժանացած էր տեղական մամուլին մէջ, որոշած էր արարք մը գործել որ աւելի հեռաքրքրէ մեդիաները եւ այդ պատճառով յարձակած էր հրէական չիրմներու վրայ: Կրնայ ցկեանս բանտարկութեան դատապարտուիլ ջեղապատշ յանցագործութեան համար:

ԹՈՆԻ ՊԼԷՐ իր արձակուրդը կ'անցընէ Սարտէնիա, Պէրլիւսքոնիի ամբրանոցը, ուր կը գտնուէր անցեալ տարի Պուտին: Ահաբեկչական սպառնալիքները եւ Թոնքանի իր չքեղ արձակուրդը որպէս հիւրը Իխան Սթրոցցիի չեն կրցած միտքը փոխել տալ: Բրիտանական մամուլը չատ խիստ կերպով արտայայտուած էր աչխատաւորական պարագլուխին «փառահեղ» արձակուրդին մասին:

ԳԱՆՆԻ (Ծովային Ալպեան) մէկ չքեղ պանդոկին մէջ՝ Նիկա Հիլթըն, յաջորդական կողոպուտներով, Օգոստ. 14ին, 200 հազար Եւրոյի դոհարեղէն եւ տարադրամ գողցուած է: Երկու Սաուտիներէ 210 հազար տոլար գողցուած է եւ անցագրեր: Տանիէլ Հէյթըրի կնոջ պայուսակն ալ գողցուած է 46 հազար Եւրոյի զոհարեղէնով, երբ պանդոկ կը հասնէր: Գողերը յաջողած են նաեւ չորս Քուէյթցիներու սեներակները մանել, ուրկէ 10 հազար Եւրօ եւ անցագրեր առնուած են: Բազմաթիւ տարիներէ ի վեր նման կողոպուտ չէր կատարուած Գաննի պանդոկի մը մէջ:

ՀԱՅԱՍՏԱՆ

ԱՐՑԱԽ

ՔՐՄՔՆՓՐԷՍ,

(Օգոստոս 17/18)

«ՄԻԿ ԱԶԳ, ՄԻԿ ՄՇԱԿՈՑԹ» ՓԱՌԱՏՕՆԸ

Օգոստոս 16ին Գեղարքունիքի Գաւառ, Սեւան եւ Մարտունի քաղաքները հիւրընկալած են փառատօնին մասնակիցները: Իրանէն, Ռուսաստանէն, Աւստրիայէն, Սուրիայէն, նաեւ Արցախէն մասնակից խումբեր լեփ-լեցուն դահլիճներու մէջ ելոյթ ունեցած են երգով, պարով, խաղերով ու կատակներով:

Երեկոյեան ելոյթները չարունակուած են Սեւանի «Հարսնաքար» համալիրին մէջ ու աւարտած խարուկահանդէսով մը:

Յաջորդ օրը Ազգ. Պատկերասրահին մէջ բացուած է «Հայ կերպարուեստ» խորագրով ցուցահանդէս մը ուր ներկայացուած են սուրիահայ վեց արուեստագէտներու -Հլրադան Թոքմաճեան, Արթօ Համբարձումեան, Զաւէն Պարտադճեան, Վիգէն Շառոյեան, Վրէժ Քապունի, Վարդգէս Պարսումեան (քանդակագործ)- աչխատանքները: Կից սրահի մը մէջ ալ ցուցադրուած են Հալէպէն ութսունամեայ նկարիչ Ռոզվարդի (Ռոզին Վարդուհի Սիսեռեան) պաստառները:

Փառատօնի չրջանակին մէջ նոյն օրը Հայաստանէն ու Սփիւռքէն 24 ճարտարապետներու գործերէն կազմուած «Նախագիծ եւ իրականացում» խորագիրով ցուցահանդէս մը բացուած է: Հոն ներկայացուած են պոլսահայ ծանօթ լուսանկարիչ Արա Կիւլէրի վաթսունէ աւելի աչխատանքները, այդ կարգին «Հայաստան» եւ «Թուրքիա» չարքերը, հանրայայտ դէմքերու լուսանկարները: Ճարտարապետութեան Թանգարան-հիմնարկին անօրէնը Աչոտ Գրիգորեան ըսած է թէ ենթանքի մէջ կը հիմնուի «Արա Կիւլէրը» լուսանկարչական թանգարանը:

Ժողովրդական արուեստի Թանգարանին մէջ ալ ցուցադրուած են ձեռագործ աչխատանքներ:

*
**

ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՑԻ ՀԻՒՐ

Երեւանի Խ. Աբովեան մանկավարժական համալսարանի «Սփիւռք» կեդրոնին վերապատրաստութեան ընթացքին հետեւորդ սփիւռքահայ ուսուցիչները Օգոստ. 17ին հիւրընկալուած են Գիտութեան ակադեմիային մէջ: Նախագահ Ֆ. Սարգսեան համառօտ կերպով ներկայացուցած է ակադեմիային ստեղծման պատմութիւնը, ըսած թէ ան այսօր հինգ հազար աչխատակից ունի: Հիւր ուսուցիչներն ալ ներկայացուցած են իրենց պաշտօնավարած դպրոցներուն հարցերը ուրոնց գլխաւորը կը վերաբերի դասագիրքերու:

Այս դասընթացքները հինգերորդ տարին է որ կը կազմակերպուին նոյն կեդրոնին կողմէ: Այս տարի հետեւողներու թիւը 50 է:

ԱՆԳԱՐԱ ԴԻՄԳՈՀ Է ԻՐԱՔԻ ՆԱԽԱԳԱՀԷՆ

Իրաքի նոր նախագահը կազի Ալ Եավէր որ Անգարա կը գտնուէր, յայտարարած է թէ Թուրքիոյ բնակիչները պարտին այցադիր ունենալ Իրաք մուտք գործելու համար: Այս լուրը ցնցող տպաւորութիւն գործած է Թուրք իչխանութիւններուն վրայ որոնք անմիչապէս հակազդած են: Սակայն կ. Ալ Եավէր անդրդուելի մնացած է, բացատրելով որ այցադիր կիրարկելու որոչումը Թուրքերու դէմ առնուած միչոց չէ, կը ծառայէ ահաբեկիչներու մուտքը արգիլելու, եւ թէ պիտի կիրարկուի բազմաթիւ երկիրներու:

Թուրք պաշտօնատարներու հետ հանդիպումներու նիւթ եղած է Քէրքիւքի մէջ Թրք. հիւպատոսարան բանալու հարցն ալ. Ալ Եավէր ըսած է թէ Թրքական հիւպատոսարան մը արդէն գործած է մինչեւ 1995 եւ պատճառ չկայ որ ան չվերաբացուի:

Իրաք տրամադիր է նաեւ Թուրքիոյ հետ սահմանային երկրորդ անցք մը բանալու:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

Ատրճանակով 50 մեթր նչանառութեան մրցումներուն Նորայր Բախտամեան 564 կէտով 4րդ հանդիպացած է, Օգոստոս 17ին:

*
**

Մարզական 50 մրցումներէ ետք, Օգոստոս 18ին, դասաւորման գլուխը կը մնար Չինաստան 18 մետալներով (10ը ոսկի), կը յաջորդէին ԱՄՆ, Աւստրալիա, Ճափոն, Ուկրանիա, Ռուսաստան, Իտալիա, Ֆրանսա (8 մետալ, երկուքը ոսկի):

ԵՒՍԵԲԻՈՍԸ ՈՒ ԻՐ ԱՌԱԿՆԵՐԸ

Ոչ Եւսեբիոսը Եւսեբիոս է, ոչ ալ առակները՝ առակներ: Ինչ ոլոր գրուած է փոքր հատիկ այդ գրքին 85 էջերուն մէջ, գրուած է մեր քաղաքին՝ Հալէպի մասին, հալէպահայերու կենցաղին եւ ընդհանրապէս գաղութի կեանքին մասին:

Եւ գրուած է հեգնանքով, երգիծանքով, բայց նաեւ՝ ցաւով: Որովհետեւ գրուած է դրսեցիի մը կողմէ, մէկը, որ ի պաշտօնէ գաղութին մէջ կ'ապրէր, բոլոր դասակարգերուն հետ չփում ունէր, եւ դրսեցի ըլլալուն, կը տեսնէր այն բոլորը, զոր մենք, վարժուած ըլլալով այստեղի կեանքին, չենք տեսներ ու կը շարունակենք չտեսնել:

Օրին «Ցառաջ»ի մէջ լոյս տեսած այս քրոնիկները բաւական աղմուկ բարձրացուցին: Աղմկողները ընդհանրապէս... լսողաց էին, չէին կարդացած գրուածները· ինչպէ՞ս կարդային, երբ մեր քաղաքը միայն... երկու թիւ «Ցառաջ» կը հանի: Բայց հալէպցին այդպէս է, թէեւ ինքզինքին թոյլ կու տայ ինքզինքն ու իր շրջապատը քննադատել, չի կրնար նոյնը ներել զայն խօսող, արտայայտող դրսեցիին:

Եւսեբիոսը, դարձեալ ի պաշտօնէ, հեռացաւ Հալէպէն: Այլ վայրեր գրաւեցին զինք, այլ նիւթեր գրաւեցին իր գրիչը: Եւսեբիոսը մոռցաւ Հալէպը, Հալէպն ալ՝ զինք:

Բայց կը մնայ գիրքը՝ «Հալէպահայ քրոնիկ 1993», Երեւան լոյս տեսած 2004 թուականին, «Զանգակ 97» հրատարակչատունէն: Գրութիւնները, գիրքի մը մէջ ամփոփուած, յանկարծ այլ ծանրութիւն կը ստանան: Գիրքը կը ստիպէ, որ լրջօրէն անդրադառնաս այնտեղ գրուածին, որովհետեւ եթէ թերթը իր մէջ կը պահէ առօրեային կշռոյթը, հեւքը, եւ յետոյ նոյն հեւքով կ'երթայ հանդիպիլ «անցեալ» կոչուած չտեմարաններուն մէջ (Հայերուն քանի՞ տոկոսը օր մը պիտի մտածէ պեղել մեր հսկայածաւալ մամուլը, ուր չա՛տ աւելի որակաւոր գրութիւններ պրպտող - յիշող - ուսումնասիրողներու կը սպասեն, հաւատքով եւ համբերութեամբ), գիրքը սակայն կը նուաճէ իր տեղը գրադարաններու մէջ, եւ յաճախ, անսպասելի պահերու, ձեռքի տակ կ'իյնայ:

Ուրեմն այլ աչքերով կը կարդամ խմբագրուած գրութիւնները, եւ հարց կու տամ ինքզինքիս՝ ճի՞շդ են գրուածները: Ու կը գտնեմ, որ այո՛, ճիշդ են, թէեւ երբեմն չափազանցուած:

Քրոնիկներու այս փոքրիկ հատորը սակայն թերութիւններէ զերծ չէ· առաջին եւ ամենամեծ թերին վրիպակներու առատութիւնն է, ուղղագրական թէ քերականական վրէպներ, ապաթարցի սխալ գործածութիւն կամ չգոյութիւն, եւլն.: Այս բոլորը հասկնալի են, երբ նկատի առնենք, որ գրաշարութիւնն ու հրատարակութիւնը Երեւանի մէջ եղած են, արեւմտահայերէնին ոչ-գիտակ մարդոց կողմէ: Սրբագրութեան չգոյութիւնն է անհասկնալին: Ու երբ մտածենք, որ արեւելահայեր եւս թերեւս կարդան այս գիրքը (գիրքերը), որքա՛ն թիւր կարծիք պիտի կազմեն անպայման արեւմտահայերէնին մասին:

Գրութիւնները կը տառապին նաեւ արագ, հապճեպ եւ քիչ մըն ալ անուշադիր կերպով գրուած ըլլալու թերութեամբ:

Հակառակ ասոնց, գիրքը իր մէջ կը պահէ հալէպահայ գաղութին կենդանի մէկ պատկերը, երբեմն խարքունգի պէս գծանկարային:

«Երեւանեան քրոնիկ»ը «Հալէպահայ քրոնիկ 1993»ին հետ զուգահեռ մը կը կազմէ, աւելի լայն ծաւալով (276 էջ), եւ կը գայ կ'անցնի նախորդը իր սուր ոճով եւ թերիները բացայայտելու յանդըգնութեամբ:

«Երեւանեան քրոնիկ»ը յագեցած է պատմական յիշողութիւններով, որոնք, դրուած այսօրուան Հայաստանի առօրեային դիմաց, տխուր հակապատկեր մը կը կազմեն, ու կը մղեն, որ քրոնիկագիրը յաճախ բացագանչէ՝ «Ա՛խ սա Հայերը, որ այնքան կարճ յիշողութիւն ունին» (էջ 164):

Գիրքը նաեւ արագ տեղեկութիւններ կու տայ վանքերու եւ ճարտարապետական այլ կոթողներուն մասին, որոնք, դուրս մնալով զբօսաշրջիկութեան ուշադրութենէն, մոռացութեան ենթարկուած են: Անոնց արագ նկարագրութիւնը ու հեղինակին ջերմ համակրանքը ընթերցողը կը մղեն զանոնք փնտռելու եւ անոնց տեսութեան երթալու:

Այսպիսի վանքեր են Ախթալան եւ Փոքայրին, առաջինը Ալավերտի քաղաքին մօտիկ, Լոռիի կիրճերուն մէջ կանգուն հրաշալիք մը, «մեծդի, տպաւորիչ»:

Այստեղ կարելի է նաեւ ահազանգներու հանդիպիլ, ինչպէս է պարագան ճաշարանի մը կառոյցին համար Ակսէլ Բակունցի տուն-թանգարանին քանդումը պատմող գրութեան:

Այս գիրքը չատ աւելի մեծ տպաղապով առաջնորդուած է, քան իր նախորդը: Ի վերջոյ անոր առանցքը գլխագիրով գրուած Մայրաքաղաք մըն է, զոր բոլորս ալ կը փափաքինք անթերի տեսնել:

2004 Թուականին Պզտիկեանին գրիչէն լոյս տեսած են... վեց գիրքեր, բոլորն ալ Երեւան հրատարակուած:

«Հայկական ցոլքեր»ուն երեք հատորները, 1, 2, 3 թուագրուած, կը խմբեն Պզտիկեանի յօդուածները, գրախօսականները, թղթակցութիւնները, ճամբու նօթերը, եւ պատմութեան ու գեղարուեստի նուիրուած գրութիւնները, 350 էջերու ամբողջութիւն մը, գրուած գրեթէ չորս տասնամեակներու ընթացքին: Այնտեղ ներառնուած է նոյնիսկ գրարար ճառ մը, «խօսուած 1963ին Ս· Ղազարի միաբանութեան Աբբահօր եւ վանականներուն առջեւ»:

Այս երեք փոքրիկ հատորներուն մէջ քանի մը յօդուածներ ուշադրութիւն կը գրաւեն.

ա - «Մխիթարեան Պոլիսը» (գիրք թիւ 1, էջ 43-74), որ ծնունդ կ'առնէ Վարդան Մատթէոսեանի մէկ զեկոյցին բացթողումներէն: Վ. Մատթէոսեան ելոյթ ունեցած է Բիւզանդիոն-Պոլսոյ նուիրուած դիտաժողովին (ԵՈՒ·ՍԻ·ԷԼ·ԷՑ·, Մայիս 17-20), ուր սակայն ո՛չ մէկ խօսք ըսուած է Պոլսոյ Մխիթարեաններուն մասին: Այս պակասն է, որ կը դարմանուի յիշեալ յօդուածով, ուր կ'երեւին անունները ոչ միայն մեծ մխիթարեաններու, այլ մանաւանդ բոլոր անոնց, որոնք Մխիթարեան դպրոցներու սան եղած են:

բ - «Եբրայարանութիւններ Ս· Գրքի հայերէն թարգմանութեան մէջ» (գիրք 2, էջ 61-86): Իր խօսքը օրինակներով բացայայտելէ ետք, հեղինակը այսպէս կ'ամփոփէ·

«Եզրակացնելով ըսեմ, որ Ս· Գիրքի հայերէն թարգմանութեան եբրայարանութիւնները անհարազատ ըլլալով հայերէն լեզուի հնդեւրոպական կառոյցին, ի սէր եւ ի յարգանս Ս· Գիրքին բնագրին, տեղ գտած են միայն Աստուածաշունչին մէջ եւ չեն ազդած յետագայ դարերու հայ գրական արտադրութիւններուն»:

Ցանկաւին կայ 139 էջերու վրայ երկարող մտորումներու չարքը՝ «Մոհեր կեանքին մասին»ը:

Բոլոր այս գիրքերը հաճոյքով ընթերցելէ ետք (թէեւ վրիպակներուն առատութիւնը իրապէս ջղայնացուցիչ է), կը հաստատենք, որ հեղինակին առաջին, թերեւս միակ առնչադրանքը ճշմարտութեան բացայայտումն է, ա՛յն ճշմարտութեան, որ կը կապուի Հայերուն, բոլոր Հայերուն, եւ կը փորձէ ցաւը մատնանշելով դարմանի մասին մտածելու մղել ընթերցողները:

«Ա՛խ, այս Հայերը...»:

ՄԱՐՈՒՇ ԵՐԱՄԵԱՆ

Հալէպ, Ցունիս 8

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԸ ՍՈՒՏՈՎ

ՕՍՄԱՆԵԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐ 1600 - 1923

Հեղինակ՝ ԿԱՐՕ ՔԻՒՐՔՄԱՆ

Հրատարակչատուն՝ *Մաթեսաւէմ*

988 էջերէ կազմուած 2 հատորով տրուած

Չափ՝ 32,50 × 24

Տպարան՝ *ՄԱՄ* - Պոլիս 2004

Հաստ փայլուն թուղթի վրայ ակադեմական գործ մը, ընտիր դունատար տպագրութեամբ որ 1600էն մինչեւ Թուրքիոյ ներկայ Հանրապետութեան հիմնադրութիւնը, 423 տարիներու վրայ երկարող, ծագումով հայ շուրջ 450 նկարիչներու դիւցազներգութիւնն է, քաղուած բազմաթիւ առանձնական եւ պետական դիւաններէն, մէկէ մը որպէս օսմանեան արուեստի մասնագէտ՝ Պոլսոյ աճուրդի սրբահներուն մէջ, իր արժէքաւոր ծանօթութիւններով, պոլսեցիի յատուկ նուրբ դիւանագիտութեամբ եւ 15 տարիներու պըրպտումներէ վերջ, լոյս ընծայած է գեղարուեստական զոյգ հատորներ, անդլերէն լեզուով միայն, որ պատիւ կրնան բերել մեծ պետութեան մը ակադեմիային:

Եթէ գոյութիւն ունենար տարուած ամէնէն արժէքաւոր, օգտակար եւ գեղատիպ հրատարակութիւնը վարձատրող ազգային կամ միջազգային հաստատութիւն մը, արդարացիօրէն ոսկի մետալը կարօ Քիւրքմանի այս աշխատութեան պիտք է շնորհէր:

Կարոյի չորրորդ դեղարուեստական հրատարակութիւնն է: Առաջին երեքը դարձեալ անգլերէնով, միեւնոյն չափերով, նոյն քնարի թուղթի վրայ, դունատար, նուիրուած են՝

1· Անատոլեան չափեր եւ կշիռքներ,

2· Օսմանեան արծաթէ կնիքներ

3· Օսմանեան չափեր եւ կշիռքներու:

Ամէնուն մէջ միեւնոյն բծախնդիր մասնագէտն է որ կ'ուզէ ակադեմական կատարելութեան հասցնել իր աշխատանքը, շրջելով երկրագունտի չորս անկիւնները. հոն ուր կարելի է կտոր մը պղինձ, նկար կամ փաստաթուղթ մը գտնել եւ բնականաբար գիտէ յայտնաբերել կնիքները, անոնց օսմանեան անունին ներքեւ պահուած հայ արուեստագէտը, կամ աշխատանոցը եւ այսպէս ծանօթացնել միջազգային հանրութեան եւ յատկապէս Թուրքերուն թէ անցեալին որքան կայսրութիւնը պարտական եւ չէնոցուցած են Ցակոբները, Արթինները, Սիմոնները, Պարսեւները ու Զաւէնները:

Կարօ ծայր աստիճան համեստ անձնաւորութիւն մըն է· հակառակ իր այսքան հմտութեան եւ յառաջացած մասնագիտութեան երբ զոյգ հատորները անձամբ նուիրեց, խնդրեց որ դրախօսած միջոցիս նկատողութիւն չընեմ, համարձակ գրեմ թերութիւններու մասին եւ այդ օրէն ես մեծ հետաքրքրութեամբ երկու հատորներն ալ կը թերթատեմ, ամէն անգամ անյայտ տաղանդաւոր հեղինակի մը ծանօթանալով, քաղուած անմատչելի դիւանի մը կամ անձնական հաւաքածոյէ:

Ցառաջաբանին մէջ կը բացատրէ թէ 450 նկարիչներէն մաս մը սիրող դասակարգին կը պատկանի, ես չեմ հասկցած ուր է սիրողին սահմանը նկատմամբ արուեստագէտին· յաճախ աւելի վարպետութիւն կայ անոնց մէջ:

Հեղինակները տրուած են լատինական այբբենական կարգով ինչ որ կը դիւրացնէ որեւէ փնտռտուք սակայն պատճառ կը դառնայ որ տեսակները իրարու խառնուին եւ Արչիլ Կորքիի նման հսկայի մը կողքին յայտնուի ողորմելի անծանօթ մը:

Եթէ մինչեւ 1923 Թուականը Թրքական հողին վրայ ծնողը օսմանեան հայ նկարիչ պիտի նկատուի, մեր մեծագոյն դասական նկարիչները, քիչ բացառութեամբ, այդ դասակարգին մէջ կ'իյնան սկսեալ Գառզուէն, Խակար Շահին, Ագամեան, Կորքի եւլն..., ինչ որ անիրաւ ընդհանրացում մըն է, քանի ոչ մէկ մշակութային կապ ունին Պոլիս ապրած եւ ստեղծագործած Շայեաններուն, Ճիւանեաններուն, եւ այլոց հետ: Աւելի ճիշդ պիտի ըլլար առանձին գլուխներ յատկացնել ազդեցութիւններու ներշնչումով արտադրած, խումբերու բաժնելով, օսմանեան շրանին ծնած բայց Ֆրանսական, ամերիկեան, իտալական, լիբանանական կամ եգիպտական դպրոցներու պատկանող ենթաժանումներով:

Երկրորդ անդրադարձութիւն մըն ալ ունեցայ նկատելով հատորին մէջ կարգ մը իտալական դասական նկարիչներու գործերու վերարտադրութիւններ՝ հայ նկարիչներու կողմէ, առանց նշելու անոնց «վերարտադրութիւն» ըլլալը եւ բնագրին հեղինակը:

Այս զոյգ անպատեհութիւններէն դուրս որ ոչ մէկ կերպով կ'ազդեն գործին ընդհանուր յաջողութեան եւ կատարելութեան, մեզի կը մնայ մեր անձնական եւ մշակութային կեդրոններու զրադարանները ճոխացնել նման պատուաբեր հատորներով, որ կրնան նոյնիսկ հրաշալի նուէր որպէս՝ տրուիլ մեր մատուռական հայ եւ օտար բարեկամներուն:

Հ· ՑԱՐՈՒԹԻՒՆ Գ·

Ս· Ղազար

Հեղինակին հասցէն՝
Garo Kürkman
P.K. 121
Tesvikiye 34367
Istanbul — TURQUIE

ՍՏԱՑԱՆՔ

ՍԻՈՆ
կրօնական - Գրական - Բանասիրական
Պաշտօնաթերթ
Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան
Թիւ 4 - 5 - 6
(Ապրիլ, Մայիս, Ցունիս 2004)
Երեւսաղէմ

«ԱՆՁԻՆՔ ՈՆԽԻՐԵՄ»
ՇԱՐԱԿԱՆԸ
ԳՐԻԳՈՐ ՓԻՏԼՃԵԱՆ
«Սիս» Հրատարակչատուն
Ազգ· Առաջնորդարան, Նիւ-Եորք

Ի ՅԻՇԱՏԱԿ ԺԱԳ-ԹՈՐԳՈՄ ՊՕՂՈՍԵԱՆԻ

ՄԱՐՍԷԼ («ՅԱՌԱՋ»)։

Հակառակ օգոստոսեան հեղձուցիչ օդին եւ արձակուրդներուն, հարազատներու, բարեկամներու, ընկերներու ստուար բազմութիւն մը լեցուց Մարսէյլ քաղաքի Պլ. Օտտօ թաղամասի Ս. Յակոբ եկեղեցին ու բակը, ուղեկցելու համար Ժագ-Թորգոմ Պօղոսեանի վերջին հրաժեշտին դէպի իր վերջնական հանդրուանը՝ Սէն Փիէռի գերեզմանատան ընտանեկան դամբարանը։

Ժագօ Պօղոսեան իր մահկանացուն կնքեց Օգոստոս 1ին, գոհ ուղեղային արիւնահոսութեան մը։

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ Օգոստոս 3ին, Պլ. Օտտօյի Ս. Յակոբ եկեղեցին, ներկայութեամբ Շահան Ա. Քհնյ. Տէր-Յակոբեանի եւ հոգեւոր հովիւ՝ Մաքար Ա. Քհնյ. Նաճարեանի։ Իրենց մխիթարական խօսքը արտասանեցին քահանայ հայրերը, վեր առնելով Թորգոմ Պօղոսեան մարդուն եւ հայ մարդուն արժանիքները։ Ս. Յակոբ եկեղեցւոյ թաղական խորհուրդի անունով արտայայտուեցաւ Սագօ Տէմիրճեան. ննջեցեալը պատուոյ նախագահն էր եկեղեցւոյ։ Զանգի Գալբրիէլեան, ընտանիքի մօտիկ բարեկամներէն բերաւ մտերմիկ յիշատակները։ Որպէս երկարամեայ բարեկամ եւ գաղափարակից, ամփոփ դիծերով կարօ Յուսէփեան ներկայացուց ողբացեալը։

Ժագ Պօղոսեան ծնած էր Մարսէյլ 1930ին։ Ամուսնացած 1956ին ինժեներական Յաղիկ Պետրոսեանի հետ։ Հայր էր երկու աղջիկ զաւակներու եւ երեք թոռներու։ Իր կեանքը դեռ չէր հասած իր ծաղկումի լիութեան, դեռ ամբողջովին չէր վայելած, ճաշակած իր ցանած ու մշակած բարիքները ու դեռ չէր յագեցած անոնցմով։ Ապրեցաւ կեանք մը, որուն ակօսները բացաւ, ոռոգեց ու բեղմնաւորեց սեփական ճիգերով, քրտինքով, կամքով, նախաձեռնութիւններով, իրագործումներով եւ բիւր վաստակներով, ապրեցաւ կեանք մը որուն հաւատքական տեսլականը եղաւ՝ յանձնառութիւն եւ ծառայութիւն։

Ինողքը ընիկ մշեցի, իրեն տուին մանուկ հասակէն հայրենասիրական դաստիարակութիւն մը, սէր մը հանդէպ նուիրական արժէքներուն, հօրենական սրբութիւններուն։ Իր ընտանիքէն ներս վայելեց նաեւ դաստիարակ չունչը զօրավար Սմբատի։ Ինքնահաւը պատրաստ էր նետուելու համար ազգային հաւաքական կեանքին մէջ։ Ներ նաեւ Հայ Աւրի եւ սկաուտական շարժումէն ժառանգեց կարգապահութեան, չարքաշութեան, համակամութեան

ՔԱԹԱՐԻ «ՆԱՐԵԿ» ՄԻՕՐԵԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԸ

Քաթարի հայ համայնքի նոր սերունդներուն հայեցի կրթութիւն եւ քրիստոնէական դաստիարակութիւն փոխանցելու միտումով, Սեպտեմբեր 2003ին, ազգանուէր անհատներու խմբակի մը նախաձեռնութեամբ, հիմնադրուեցաւ «Նարեկ» հայկական միօրեայ վարժարանը։

Շրջանի հայութիւնը մեծ ուրախութեամբ ընկալեց այս գաղափարը եւ պատրաստակամութիւն յայտնեց ամէն ձեւով օժանդակելու անոր յաջողութեան։ Հայ կաթողիկէ կեդրոնի դասարաններն ու այլ տարածութիւնները օգտագործուեցան նըպատակի իրականացման համար։

Գրիգոր Նարեկացիի «Մատեան»ի հազարամեակին առիթով վարժարանը կոչուեցաւ «Նարեկ» միօրեայ վարժարան։

Վարժարանին գլխաւոր նպատակն է օտար վարժարաններ յաճախող աշակերտութեան հայեցի դաստիարակութիւն փոխանցել, Հայոց պատմութեան, մշակոյթի, մայրենի լեզուի ու գրականութեան պիտակ սերունդներ կերտել եւ անոնց մէջ ամրապնդել հայապահպանութիւնն ու հայրենասիրութիւնը։

Տարեկան ծրագրին մէջ նկատի առնուած են Հայոց լեզուի, պատմութեան, կրօնքի, երգի ու մշակոյթի դասապահեր, որոնց ընթացքին ուսուցիչները կը ջանան աշակերտներուն ծանօթացնել յատկանշական դէմքերն ու դէպքերը։

Վարժարան կը յաճախեն չուրջ 35 աշակերտներ, որոնցմէ ոմանք դասերուն կը մասնակցին հետեւողական կերպով, իսկ փոքր թիւով աշակերտներ որոշ դասապահերու կը հետեւին։

Ուսուցիչները յատուկ ուշադրութիւն դարձուցին այն աշակերտներուն, որոնք յաւելեալ օգնութեան պէտք ունին։

Աշակերտութիւնը բաժնուած է տարիքային հինգ դասարանների, որոնք ունին իրենց ծրագիրները, համապատասխան դասագիրքերն ու աշխատանքները։

Իբրեւ արտադպրոցական աշխատանք՝ վարժարանին աշակերտները իրենց մասնակցութիւնը բերին քրիստոնէական միջհամայնքային երկու միջոցառումներու՝ արժանանալով ներկաներու գնահատանքին։

«Նարեկ»ի մէջ հայկական տօներն ու յատկանշական թուականները կը նշուին յատուկ ձեռնարկներով եւ հաւաքներով։ Ս. Ծնունդին, Բարեկենդանին, Տեառնընդառաջին, Վարդանանցին, Համբարձումին, Ապրիլ 24ին եւ այլ առիթներով աշակերտները պատրաստեցին համապատասխան յայտագիրներ։ Անոնց մանրամասն բացատրութեան իւրաքանչիւրին իմաստը, արժէքը, խորհուրդը եւ անոնց առընչուող աւանդութիւններն ու սովորութիւնները։

Աշակերտութիւնը ունեցաւ նաեւ ընկերային պահեր, մարզական մրցումներ եւ հայկական մտերմիկ մթնոլորտի մէջ կայացած հաւաքներ։

Քաթարի փոքրաթիւ գաղութին համար հայ դպրոց մը հիմնելը, անհրաժեշտութիւն ըլլալու կողքին, մեծ մարտահրաւէր մըն էր, սակայն շրջանի հոգատար անձերուն չնորհիւ անիկա դարձաւ իրականութիւն։ Այս դպրոցը այսօր դարձած է շրջանի հայութեան գուրգուրանքի առարկան, որովհետեւ անիկա կենսական կըռան մըն է հայրենիքէն դուրս ապրող հայութիւնը իր արմատներուն կառչած պահելու, հայ լեզուն եւ մշակոյթը պահպանելու եւ հայ սերունդներ կերտելու։

«Նարեկ» արդէն տարի մը ամբողջացուց եւ մեծ յոյսեր կան, որ տարուէ տարի ան բարգաւաճի, ապահովի մեծ թիւով աշակերտներ ունենալ եւ իր աշխատանքները ընդարձակելով՝ աւելի լայն առաքելութիւն ծառայէ։

ԳՕՂԱԹՔԷ ԳՕՂԱԹՔ

ՊԷՅՐՈՒԹի Հայ Կաթողիկէ Մեծարոտեան բարձրագոյն եւ արուեստից վարժարանները 2003-2004 տարեշրջանի վախճանին տուած են 375 շրջանաւարտներ, որոնց վկայականները չնորհուած են երկու անջատ հանդէսներու ընթացքին։ Յուլիս 3ին տեղի ունեցած է Մեսրոպեան բարձրագոյն եւ արուեստից վարժարաններու հանդէսը նախագահութեամբ Մշակոյթի նախարար՝ Ղազի Աբխոէի։ Շուրջ 1000 ներկաներու առջեւ, զոյգ վարժարաններուն անունով խօսք առած է Կրեկուար Գալուստ, նշելով որ 65 տարի առաջ վաղուան նոր Լիբանանը կառուցանելու մտասեւեռումով, մարդկային եւ քաղաքացիական առաջնորդութեամբ սերունդ պատրաստելու մղումով կեանքի կոչուած է Հայ Կաթողիկէ Մեսրոպեան վարժարանը, որ այսօր կու գայ իր 65րդ հունձքը յանձնելու Լիբանանի եւ հայ ժողովուրդին։ Կ. Գալուստ վերահաստատելէ ետք Մեսրոպեանի հայկական ինքնութիւնը, իբրեւ հայկական ազգային դիտակցութեան եւ հայ քրիստոնէական դաստիարակութեան գարբինոց, չեչտած է որ վարժարանը է ու պիտի մնայ Լիբանանի հայ ազնիւ, պարկեշտ եւ գործօն քաղաքացին կրթող եւ դաստիարակող կրթական եւ ընկերային միջավայրը։ Իր հայրական խօսքը բերած է Լիբանանի Հայ Կաթողիկէ վարժարաններու տնօրէններու խորհուրդի նախագահ Վարդան Եալիկ։ Աշդարեան։ Իրեն յաջորդած է Մշակոյթի նախարար Ղազի Աբխոէ։

ՉՀՐԱՏԱՐԱԿՈՒԱԾ ՉԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

եւ վեհանձնութեան ոգին։ Ապա, մտաւ Հ.Ց.Դ.ական Նոր Սերունդի շարքերը, պատրաստուելու եւ դառնալու համար համոզուած, հաստատուր դաշնակցական կուսակցական։ Վարեց պատասխանատու պաշտօններ։ Միշտ հետեւեցաւ այն ոգեղին զոր ըրշմեցին հիմնադիրները եւ զոր հազարաւոր զէնքի, գրչի, մտքի հայդուկներ սրբագործեցին յեղափոխութեան աւազանին մէջ։ Ժագօն եղաւ Հայ Մշակոյթի Տան համար գուրգուրացող բազուկ մը եւ չնորհիւ իրեն եւ Տարօնի Հայրենակցական Միութեան իր ընկերներուն, Տարօնի Մամիկոնեան արձիւը իր ուխտով եւ «ՅԱՌԱՋ»ի երկու վերջին թիւերը, Յուլիս 30ի եւ Յուլիս 31/ Օգոստոս 1ի, թիւեր զոր մահացու հարուածը թոյլ չէր տուած որ կարդայ։

Ժագօ Պօղոսեանի հետ սերունդի մը հաւատաւոր անդամներէն մին է որ կը մեկնի, սերունդ մը, որ օտար ափերուն վրայ միշտ արձագանգ ուտաւ հեռուէն, պատմութենէն եւ ժագդայի պարագային Մշոյ Հայոց խրոխտ լեռներէն եկող ձայներու եւ կոչերու։

Յարգա՛նք իր յիշատակին։

ԿԱՐՕ ՅՈՎՍԷՓԵԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՐԻՒԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

4

Իօժէնիի աչքերը լեցուած էին արցունքով։ Անիկա մուխէն օգտուելով՝ պաղատանի պահեց բոլորէն իր արտասուքները։

-Այո՛, անմիջապէս որ Պոլիս դառնամ՝ առաջին գործս պիտի ըլլայ այս խնդիրը կարգադրել։ Ամէնքդ ալ Պոլիս կը հաստատուի՛ք։ Մեծ քաղաքները իրաւ է որ շատ աղմուկ ունին եւ կը յոգնեցնեն մարդս եւ սակայն անոնց մօտ կարելի՛ է գտնել լռութիւնը։ Կրնաք պիւզ մը քնակիլ՝ օրինակ Գալաթիոզ։

Այդ դիւերը, երբ ամէն ոք մտաւ անկողին, քաղցրութիւն մը եւ անդորրութիւն մը կար հոգիներու մէջ։ Յուսո հարցը արտայայտուած էր նոյնիսկ զարմանը զրնգիկ գոնուած։ Մայրը ու տղայ խորհեցան միկ։ Նուարդի մասին։

-Ազնիւ, պատուական կին մըն է։

Ու մղձաւանջը փարատած էր։ Երկար տարիներ լի վեր կուտակուած սեւ ամպերու բարեկան կարաւանները, որոնք աւելի խնամած էին, տիկ. Նուարդի ներկայութեամբ յանկարծ փարատած էին։ Քանի մը կայծակներ, քիչ մը խուլ որոտում եւ յետոյ անձրեւ մը, այնքան լուռ ու նրբերը։ Ու երկիրը մաքրուած էր։ Երկինքը իր վայելուչ երեսն ու հոգին բացած։ Այնտեղ սեւ հրէշներու նման, սեւ ժեռերու նման, փախած էին հեռուները։ Մտասեւեռումը երկաթէ սեւ խաչի մը նման մտքին վրայ կը ճնշէր։ Անիկա չքացած էր։

Գործողութիւնը աւելի ոգեւորուած էր Պաթիստի մէջ։ Այդ բոլոր սեւ, հալածող ու հոգիին կապոյտներուն, կանանչներուն վրայ տիրող պատկերը հալած էր, գինքը փրկելով դժուարաշնչութենէ։ Անիկա երկար ժամանակ չկրցաւ քնանալ։

Աչքերը փակ լինկաւ վերազանքի մը գուռնագեղ հոսանքի մէջ, վերլանալով։ Ճառագայթէ չինուած կանանչ ու մեծ սարդոստայններ կը տեսնէր։ Ճիշդ կեդրոնը վարմիր աստղ մը կը վառէր։ Աստղէն կ'ելլէր լուսեղէն սպիտակներու մէջ Իօժէնին։ Յանկարծ կը չքանար կանանչ սարդոստայնը և ամբողջ խորքը կապոյտի կը փոխէր։ Ոսկեզօծ պսակ մը կ'իյնար Իօժէնիի ղլխուն վրայ եւ անոր մարմնին չուրջը դեղին, մանիշակագոյն, նարնջագոյն լոյսի գօտիներ կլոր շրջանները կը գծէին։ Ձեռոյ պատկերը կ'անհետանար, կը սպրըծէր ու Իօժէնին կը գտնէր իր գրկին մէջ, ամէն, կողմ բազմութիւն։ Փողոցներու մէջ, տուներու մէջ, քարափներու վրայ, կամուրջներու վրայ բազմութիւններ։ Ու ծաղիկներ, ու անուշահոտութիւն ու երգեր, ու պարեր։ Ահա ամբողջ ժողովուրդը, որ մեծ համերգի մը ունկնդիր կը պարէ գրկուած, արբեցութիւնով։ Բիւրաւոր ոտքեր համաչափ ու ներդաշնակ չարժումով կը գառնան։ Պարին մէջ կը մտնէ ինք՝ գրկած Իօժէնին։ Վարդերը միշտ կը տեղան։ Ու պատրոնները կը փոխադրուին բաց ու մեծ դաշտավայրի մը մէջ։ Կը չարունակեն չամբարբառ ու հեռզհեռ արձագ չարժումները։ Օդին մէջ, պարողներուն վրայ, երկնային նուագախումբ մը, քնարներով, արինգներով, փողերով, տաւիղներով։ Նուագախումբը կը ղեկավարէ այն աշակերտը, որուն հետ Իօժէնի ամէնէն շատ կը սիրէր պարել։ Ան ալ ինքզինքը կորսնցուցած էր։ Ան ալ կը տեսնէր միայն Իօժէնին։ Ան ալ կը զգար միայն Իօժէնին։ Ան ալ կը լսէր միայն Իօժէնին։ Ան ալ կը շնչէր միայն Իօժէնին։ Ան ալ կը մտածէր միայն Իօժէնին։ Ան ալ կը սիրէր միայն Իօժէնին։ Ան ալ կը պաշտէր միայն Իօժէնին։ Ան ալ կը ցանկար միայն Իօժէնին։ Ան ալ կը ցնծար միայն Իօժէնին։ Ան ալ կը հրճուէր միայն Իօժէնին։ Ան ալ կը հիանար միայն Իօժէնին։ Ան ալ կը ցնդէր միայն Իօժէնին։ Ան ալ կը մոլորուէր միայն Իօժէնին։ Ան ալ կը մոլեգնէր միայն Իօժէնին։ Ան ալ կը մոլագնար միայն Իօժէնին։ Ան ալ կը մոլուկնար միայն Իօժէնին։ Ան ալ կը մոլուկնար միայն Իօժէնին։ Ան ալ կը մոլուկ

Rentrée des classes

Les inscriptions pour l'année 2004/05 à l'école hebdomadaire «Siamanto» de Bagneux auront lieu :

le mercredi 15 septembre à 15 heures
à l'école Henri Wallon,
2 avenue de Stalingrad à Bagneux

Au cours de ces inscriptions, une réunion conviviale aura lieu, comme chaque année, sur le déroulement de la nouvelle année scolaire.

Les cours commenceront le mercredi suivant -22 septembre : le matin pour les plus jeunes enfants -environ 5 à 10 ans-, et l'après-midi pour les adolescents jusqu'au baccalauréat et les enfants au dessus de 10 ans.

Pour tout renseignement :
— Mme Lucie Dossikian: 01 45 46 10 11
— Mme Elisabeth Davidian:
01 46 65 81 53

ՇԱԻԻԼ Ս.ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Պատարագները կանոնաւոր ձեւով կը վերսկսին Կիրակի, Օգոստոս 29ին։

*
**

Շաւիլի «Լեւոն Շանթ» դպրոցի վերաբացումը տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, Սեպտեմբեր 8, ժամը 9ին։

Բժանագրութեան համար դիմել եկեղեցւոյ վարչութեան

Eglise Arménienne
St Grégoire l'Illuminateur
6 rue Père Komitas 92370 CHAVILLE
Tél. : 01. 47. 09. 23. 18.



Date à retenir

Grande Braderie de Chene

les 4 et 5 décembre
CHENE FRANCE

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

100-ԱՄԵԱԿ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ

Այս Առթիւ, երախտագէտ ապրումներով կը Ծանուցանենք մեր Հկեղեցւոյ գաւակներուն Թէ՝

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 3-ին

Փարիզի Սուրբ Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ Պատարագի մատուցմամբ յատուկ Գոհաբանական Աղօթք պիտի ըլլայ Մայր Տաճարի եկեղեցաչէն բարերարին՝

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆի ու ՄԱՆԹԱՇԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ,

Տաճարին Օծումը կատարող՝ Մանչէսթէրչն Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ

ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻՒԹԻՒՃԵԱՆի,

վեհամեծապուհ Արքեպիսկոպոս Քիպարեանի, ի Տանէ Արջուկենայ, նաեւ կատուցումէն ի վեր Մայր Տաճարի Բարերարներուն համար։

Ցաւարտ այս արտայայտութիւններուն, կը հրաւիրուին ամէնքը մասնակից դառնալ Սիրոյ Սեղանին՝ Մատաղի բաժնեկցութեամբ։

●

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2-ին

Նախատեսուած հն

կամ մը եւ Ընդունելութիւն մը Սալ կաւոյի Սրահներուն մէջ,

ժամը 16-էն 22·30

կը թելադրուի նախօրօք ապահովել տոմսերը

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Pensez à nous réserver votre journée du DIMANCHE 12 SEPTEMBRE

pour participer à notre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchetre SPITAK

qui se déroulera dans les jardins
du Dr et Mme KEGHIAN
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel
(en cas de pluie, la fête se déroulera dans la salle paroissiale d'Arnouville-lès-Gonesse, 69 avenue Henri Barbusse 95400 Arnouville)

Programme : Divine Liturgie à 11 heures
Repas à partir de 13 heures
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage des deux **Tombolas** (Enfants et Adultes)

Participation aux frais de la journée : Adultes 20 Euros
Enfants 12 Euros

Réservation par tél. : 01 44 59 23 50 (Paroisse de Paris)
01 40 51 11 90 (Centre Culturel)

TISSUS DES URSULES
Tout le décor de la maison
Siège Social 9, rue J. Duclos
42400 St-Chamond

SAINT-ETIENNE
SAINT-CHAMOND
CANNES LA BOCCA
VILLENEUVE-LOUBET

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— PARIS
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19

— ARNOUVILLE
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73

— ISSY-LES-MOULINEAUX
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25
(le soir)

— SEVRAN
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76

— VALENCE
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99
(l'après-midi)
MCA : 04 75 55 12 49

— DECINES
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97

— GRENOBLE
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43

— ST MAURICE DE BEYNOST
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07

— VIENNE
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80

— MARSEILLE-VILLE
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66
(le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեղի մօտ գտնուղի պատասխանատուներուն։

*
**

ՓԱՐԻԶԻ ՄԱՄՆԱՁԻԿ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին
17 ռիւ Պէօ 9րդ թաղամաս - Մեթրօ Գառէ
Մանկապարտէզ 4 տարեկանէն սկսեալ
(կը խնդրուի արագօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ)։
+ ՔԷն միջնեւ Պաբալօրէա, նաեւ չափահասներու դասարան։
Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, Երգ, Թատրոն, Պար։
Հեռաձայնել Օգոստոսին՝
- Արաքսի Գասպարեփեան՝
01·39·83·71·19

*
**

La Section «Lola Sassouni» de Marseille organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— Restaurant tous les soirs et piqueniques assurés.
— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).
Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne tout compris, visa inclus hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 20
VENDREDI
20 AOUT
2004

LE NUMERO: 1 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 230 եւրօ — վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար. 270 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
247 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

80ՐԴ ՏԱՐԻ. ԹԻՒ 21.006 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 80e ANNEE — N° 21.006

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՕՍԼԷԹԻՈՑ ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԼԱՐՈՒԱԾ ՄԹՆՈԼՈՐՏ
ՄՈՍԿՈՒԱՅԻ, ՈՒԱՇԻՆԿԹՐՆԻ
ԵՒ ԹԻՓԼԻՍԻ ՄԻՋԵԻ

Հարաւային Օսէթիոյ մէջ խռովութիւնները կը չարունակուին եւ չատեր պատճառները կը փնտռեն այս յանկարծակի բռնումներուն: Օգոստոս 17էն 18ի գիշերը վրացի երեք զինուորներ սպաննուած են, ինչ որ կը հաստատէ որ հրադարբերը չատ խախուտ է: Վրաստան եւ Հարաւային Օսէթիա իրարու վրայ կը ձգեն կռիւներու վերսկսումին պատասխանատուութիւնը: Մնաց որ, ինչ որ աւելի հակասական է, այն է որ երկու կողմերն ալ երրորդ կողմի մը միջամտութեան կ'ակնարկեն, անձնաւոր «երրորդ» մը, որ դրդիչը կը նկատուի գիշերային բռատութեանց զարթնումին: Շատեր կը կասկածին նաեւ ռուսական միջնադիր ուժերու անկողմնակալ դերքէն: Թիֆլիսի Խորհրդարանը պահանջած էր արդէն որ Ռուսերը քաշուին: Ե. Կոկոյեի, օսէթ դեկավարը, կը մերժէ արդէն հնթարկուիլ Սահակաշվիլիի, Վրաստանի նախագահին, ծանօթ որպէս «վարդերու յեղափոխութեան» հերոսը, թէեւ այս վերջինը խոստացած էր ամբողջ երկիրը իր իշխանութեան տակ առնել: Օսէթներուն ուզածն այն է որ կամ Հնչկուշ իրենց անկախութիւնը կամ կցուին Հիւսիսային Օսէթիոյ, Ռուսաստանի դաշնակցութեան ծոցը: Այս պահանջը որոշ ձեւով տրամաբանական է, քանի այդ հողամասին վրայ, ռուբլին կը գործածուի եւ բնակիչներուն մեծ մասը ռուսական անցագիր ունի: Այս անցագիրներն ալ այնքան դիւրութեամբ չնորհած են, որ Թիֆլիս կը կասկածի որ գնուորական միջամտութիւն մը կրնայ արդարացնել, ապահովութիւն տալով որ հարցը «ռուս քաղաքացիներու» պաշտպանութեան կը վերաբերի: Մնաց որ այս «երրորդ» կողմը կրնայ նաեւ օսէթ անջատողականները ըլլալ կամ վրացի դրդիչներ, մէկը միւսը ամբաստանելով, որ պատրուակ մը կը փնտռեն արդարացնելու համար պատերազմի մը սկիզբը, որու նպատակն է Թիֆլիսի հակակշռին վերահաստատումը այդ չրջանին վրայ:

Մորքին մէջ, հակամարտութիւնը կը վերաբերի Ուաշինկթընի եւ Մոսկուայի, որոնց չահերն են խնդրոյ առարկայ: Անդրիոյ յաղողութենէն ետք, Սահակաշվիլի հարաւային Օսէթիայով կը զբաղի, ինչ որ աւելի դժուար է: Թիֆլիս միշտ կը մեղադրէ Ռուսաստանը որ զօրավիգ է Օսէթներուն, ինչպէս ըրած էր 12 տարի առաջ: Կրեմլին նաեւ չղազդուած է որ վրացական այս «ներքին հարցին» ԱՄՆ ալ մէջտեղ է, քանի Ուաշինկթընի եւ Թիֆլիսի կապերը ալ աւելի ամրապնդուեցան Սահակաշվիլիի Ուաշինկթըն այցելութեամբ, այն ալ հարաւային Օսէթիոյ տագնապին առեն: ԱՄՆ խոհեմ կը մնան եւ կը հրաւիրեն կողմերը որ յարգեն հրադադարը: Կ'ուզեն խուսափիլ պատերազմէ մը: ԱՄՆ մօտէն կը հետեւին սակայն, քանի կողմ են Բաքու - Թիֆլիս - Ճէյհան նաւթուղիին հարցին մէջ եւ ան պէտք է լրանայ 2005ին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՇԱՐՈՆ անդամ մը եւս իր կուսակցութենէն՝ Լիքուտի զօրակցութիւնը չի վայելէր, քանի այս վերջինը դէմ արտայայտուէր աշխատաւորներու ներկայութեան կառավարութեան մէջ: Քուէարկութիւնը տեղի ունեցաւ համագումարին ընթացքին եւ 843 պատգամաւորներէ դէմ քուէարկեցին եւ 613 թեր: Ժողովը մերժեց նաեւ նախարարապետին առաջարկը բանակցութիւններ տանելու Աշխատաւորական կուսակցութեան հետ: Անոնք որոնք ծայրայեղ տարրը կը ներկայացնեն կ'ուզեն անպայման ձախողեցնել Գազային քաչուելու հարցը: Շարոն, ի յառաջադունէ յայտարարած էր որ Լիքուտի որոշումը պարտադիր բնոյթ չունի եւ թէ պիտի չարունակէ իր ծրագրին դործադրութիւնը:

ՄՈՒԹԱՏ ԱԼ-ՍԱՏՐ համաձայնած էր դէնքերը վար դնելու Օգոստոս 18ին, բայց Օգոստոս 19ին բախումները չէին դադրած: Ուղերձ մը ղրկած էր Ազգ. Համագումարին, ուր կը հաստատէր որ կ'ընդունի առաջարկուած բոլոր պայմանները, բայց հարկ է նախ հրադադար մը ըլլայ: Ժողովն ալ որու աշխատանքները վերջ գտած էին Օգոստոս 18ին, ծափահարած է Ալ-Սադրի այս ընթացքը: Ներկայացուցչական այդ ժողովը Օգոստոս 16ին բանաձեւ մը քուէարկած էր, ուր կը պահանջէր որ Սադրի բանակը քաչուի մզկիթէն, դէնքերը յանձնուին եւ քաղաքագործը քաղաքական կուսակցութեան վերածուի: Օգոստոս 19ին սակայն կռիւներ կային եւ Նաճաֆի մէջ ամերիկացի զինուոր մը սպաննուած էր, կռիւներ կային նաեւ Պաղտատ:

ԱՐԱՖԱԹ ինքնաքննադատութեան դիմեց հրապարակային ելոյթով մը, զոր արտասանեց Օգոստոս 18ին պաղեստինեան օրէնսդրական խորհուրդի մէկ ժողովին առջեւ, Ռամալլա: Ան չէչտեց «ոչ ոք զերծ է սխալ գործելէ, առաջինը՝ ես: Մարզարէներն ալ սխալներ գործած են»: Արաֆաթ այս ձեւով ուզեց պատասխանել Գազայի եւ Այսրյորդանանի ժողովուրդին քննադատութեանց, ընդհանրացած կաչառակերութեան վերաբերեալ: «Պէտք է միասին գործենք, ըսաւ Արաֆաթ, սրբագրելու համար մեր սխալները. առայժմ, ոչ մէկ իսկական ճիգ թափուած է օրէնքն ու կարգ-կանոնը յարգել տալու համար»: Արաֆաթ քաղաքական գետնի վրայ մեծ բան չըսաւ, իր զօրակցութիւնը կրկնեց «եղբայր» Քորէյնի: Պաղեստինեան իշխանութեան դեկավարը այս ընթացքով ուզեց ցոյց տալ որ կը լսէ ժողովուրդին ձայնը եւ անտարբեր չէ ԱՄՆ-ու, Եւրոպական Միութեան եւ Եգիպտոսի թելադրանքներուն:

ՖՐԱՆՍԱՑԻ տեղատարափ անձրեւները եւ Միջերկրականի ալեկոծութիւնը, նաեւ չատերու անխոհեմութիւնը պատճառ եղան որ ինը հոգի մեռնի եւ Օգոստոս 19ին կային նաեւ երկու անհետացած անձեր: Փոթորիկը աւեր գործեց նաեւ Իլ-ու-Ֆրանսի չրջանը Օգոստոս 18ին եւ կը թուի որ կացութիւնը պիտի չհանդարտի կիրակիին առաջ:

ՔԱՐԻԻՂի գիներու յարաճուն յաւելումները (Օգոստոս 18ին, տակառը 47 տոլարի հասած էր Նիւ Եորք) պատճառ եղան որ առաջին առթիւ Իւ-Ֆրանս 1%, 2% եւ 12% յաւելումներ ընէ, ըստ գիծերու: Առաջին երկուքը կը վերաբերին ներքին գիծերու, 12%ը՝ հեռաւոր վայրերու: Տնօրէնութիւնը կ'ըսէ թէ յաւելումը պիտի ընդունի եթէ տակառին գինը 35 տոլարէն վար ըլլայ, 30 յաջորդական օրերու ընթացքին: Բայց, ծանօթ է որ, որեւէ յաւելում չի ընդունիր:

ՊԷՐԼԻՒՍԿՈՆիի Սարտէնիոյ ապարանքին մօտ պայթուցիկ մը դանուած է, Թոնի Պլէրի հետ խօսակցութիւններէն քիչ եաք, Օգոստոս 18ին: Հակառակ այս իրողութեան Իտալիոյ վարչապետը կը չարունակէ իր արձակուրդը:

ԱՖՂԱՆԻՍՏԱՆի մէջ հրադադար մը կարելի եղած է հաստատել չնորհիւ ամերիկեան միջամտութեան մը փայլուն քաղաքագործին եւ Հերաթի կառավարիչին մարդոց միջեւ:

ԻՆՏՈՆԵԶԻՈՑ մէջ 1200 ապստամբներ սպաննուած են տասը ամիսներու երկայնքին:

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ ՄՈՍԿՈՒԱՑԻ ՄԷՋ

Ադրբեջանի Արտաքին գործերու նախարարը է. Մամէդեարով Օգոստոս 18ին Մոսկուայի մէջ հանդիպում ունեցած է Ռուսաստանի Արտաքին գործերու նախարար Ս. Լաւրովի հետ, օրակարգի վրայ ունենալով նաեւ Ղարաբաղի հարցը: Ադրբեջանական մամուլի 525րդ թերթը (Օգոստոս 19) արձագանգելով հանդիպումին, գրած է թէ տեսակցութեան ատարին տրուած մամուլի ասուլիսին Լաւրով պատասխանելով Ղարաբաղի մասին հարցումին, դոհացած է Մոսկուայի ծանօթ կեցուածքը կրկնելով: Կոդմերը՝ Հայաստան ու Ադրբեջան իրենք պէտք է համաձայնին լուծումի տարբերակին, իսկ Ռուսաստան պատրաստ է այդ համաձայնութեան ուղղութեամբ գործնական քայլերու երաչխաւոր ըլլալու:

Թերթը կ'ըսէ թէ ռուս նախարարը քօդարկուած ձեւով յայտնած է թէ իր երկիրը կը գօրակցի հակամարտութեան Ադրբեջանի հողային ամբողջականութեան սկզբունքով լուծումին տեսակէտին:

*
**

ՓԱՌԱՏՈՆԻՆ ԱՌԹԻԻ ԳԻՐՔԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ

«Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատոնին չրջանակին մէջ, Օգոստոս 18ին Երեւանի Շառլ Ազնաւուր հրապարակին վրայ հայաստանեան եւ սփիւռքեան հրատարակութիւններու բացօթեայ ցուցահանդէս-վաճառք մը բացուած է: Հոն Հայաստանի չուրջ 50 հրատարակչութիւնները ներկայացուցած են վերջին տարիներուն լոյս տեսած մօտ հազար անուն գիրք: Տեղ տրուած է նաեւ թարգմանուած հատորներու:

Նոյն առիթով կը նշուի թէ Լաւրովի արտայայտութիւններուն մէջ նորութիւն չկայ· արդէն Միխակի խոսքին ոուս եւ ամերիկացի նախագահներն ալ նման արտայայտութիւն ունեցած էին: Նոյնիսկ ամերիկացի նախագահը Ս. Միաւ չէչտած էր թէ կոդմերը միջնորդներէն հրաչք պէտք չէ ակնկալեն: Գլխաւոր տարբերութիւնը որ կը մատնանչուի ադրբեջանական թերթին կոդմէ, այն է որ ամերիկացի նախագահը յստակօրէն ըսած է թէ Ա.Մ.Ն զօրավիգ են Ադրբեջանի հողային ամբողջականութեան:

Թերթը կը յիչեցնէ թէ Մինսկի նախագահներուն չրջան վերջին այցին ընթացքին Ադրբեջանի անհաճոյ տեսակէտները արտայայտած են: Անոնցմէ մէկը միւնչեւ իսկ տեսակէտ յայտնած է թէ Ղարաբաղի իշխանութիւնն ալ որպէս հակամարտութեան երրորդ կոդմ պէտք է բանակցութեան սեղանին վրայ տեղ գրաւէ: Կեցուածք որ իր վրայ հրաւիրած է Ադրբեջանի կառավարութեան կրկնակի քննադատութիւնները:

Մամէդեարով - Լաւրով հանդիպումին նիւթ եղած են երկու երկիրներու փոխյարաբերութիւնները, տնտեսական չրփոփումները, կասպից ծովու խնդիրները, մարդասիրական - մչակութային հարցեր, Ադրբեջանի մէջ ամերիկեան խարիսխներու հաստատումը, եւլն.:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

ՃԱՐՄՔՆԵՓՐԷՍ,

(Օգոստոս 18/19)

ԾԻԾԵՌՆԱԿԱՒԲԵՐԴԻ ՄՕՏ ԱՆՏԱՌԱՑԻՆ ՀՐԴԵՀ

Օգոստոս 17ի երեկոյեան Ծիծեռնակաբերդի մօտակայ Կիեւեան կամուրջին չրջանին մէջ հրդեհ ծագած է, պատճառ ըլլալով 10 հեկտար անտառային տարածքի հրկիզումին: Հրդեհը բռնկած է չորս կէտերու վրայ ու հովին պատճառով միացած, մեծցած: Կէս գիչերէն ետք կարելի եղած է մարել. հերթապահութիւն հաստատուած է հրդեհի վայրին վրայ:

*
**

ՓԱՌԱՏՕՆԻՆ ԱՌԹԻԻ ԳԻՐՔԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ-ՎԱՃԱՌՔ

«Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատոնին չրջանակին մէջ, Օգոստոս 18ին Երեւանի Շառլ Ազնաւուր հրապարակին վրայ հայաստանեան եւ սփիւռքեան հրատարակութիւններու բացօթեայ ցուցահանդէս-վաճառք մը բացուած է: Հոն Հայաստանի չուրջ 50 հրատարակչութիւնները ներկայացուցած են վերջին տարիներուն լոյս տեսած մօտ հազար անուն գիրք: Տեղ տրուած է նաեւ թարգմանուած հատորներու:

ՕՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

Կռիւամարտի 48 քիլօ դասակարգին մէջ, Օգոստոս 18ին Ալեքսանդր Նալպանտեան 27-20 արդիւնքով չաղթեց Ռետուան Ալլամի (Ֆրանսա), 16րդ աւարտականին: Նալպանտեանի յաջորդ հանդիպումը տեղի կ'ունենայ Օգոստոս 21ին, որակուելու պարագային նաեւ Օգոստ. 24, 27 եւ 29ին: Ռետուան 23 տարեկան է, Նալպանտեան 33, բայց մարզական մանանագէտներն ալ չեն ծածկեր որ Նալպանտեան չատ փորձառու է եւ խանդարող խաղ մը ունի: Ռ. Ալլամ դուրս կը մնայ մրցաչարքէն:

*
**

Ֆրանսացիները անակնկալներու բախեցան Օգոստոս 18ին: Արդարեւ, հեծելարւեստի մէջ Նիքոլա Թուզէն նախ արժանացաւ արծաթէ մետալի, ապա չաղթական Գերմանուհիին յաջորդական սխալները մատնանչուեցան, ինչ որ պատճառ եղաւ ոսկի մետալին Ֆրանսացիին չնորհուելուն, պատժելով Գերմանուհին: Փիչ ետք նոր փոփոխութեամբ մը ոսկի մետալը կրկին տրուեցաւ Գերմանիոյ եւ արծաթը մնաց Ֆրանսայի: Ֆրանսա իրաւարար դատարանին ներկայացուց իր բողոքը եւ Օգոստոս 19ին վճիռը պէտք է տրուէր:

Ընդհանուր դասաւորումը (71 մարզական չաղերէ ետք) դրեթէ նոյն պատկերը կը պարզէ: Գլուխն է միշտ Չինաստան 22 մետալով (11ը ոսկի), 8րդ դիրքի վրայ է Ֆրանսա 10 մետալով (երեքը ոսկի):

ՓՈՒԼ-ՊՈԼ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԲԱԺԱԿ 2006

ԶՏՄԱՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Մակեդոնիա 3 - 0 չաղթեց Հայաստանի Օգոստոս 18ին: Ճաղթական խումբին կէտերը նչանակեցին Փանտեւ (5րդ վայրկեանին), Սաքիրի (37րդ), Սիմոլիքոսքի (89րդ): Այս Ա. խումբի դասաւորումն է՝ Մակեդոնիա, ապա՝ Ռումանիա, Անտորա, Հոլանտա, Զեխիա, Ֆինլանտա, Հուսկ՝ Հայաստան:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

ԴԺՈԽՔԻ ՇԵՄԻՆ

Յունիսի 13ը «Բռնադատուածներուն օրն» է: Օրուան պատշաճ կամ ընդունուած խօսքերի փոխարէն որոշեցինք հրապարակել մի հատուած բռնադատուած Ռազմիկ Մամիկոնի Երեմեանի յուշերից, որոնք առաջիկայում հրատարակուելու են առանձին գիրքով:

«ԵՐԿԻՐ»

***

Այդպէս մենք ապրում էինք մինչեւ այդ օրը: Ապրում էինք կեանքով լի հոգսերով, ցրտի եւ սովի մէջ, բայց մեր հողի վրայ, մեր տանը, թէկուզ եւ անչուք, կիսաւեր:

- Փառք քեզ, Աստուած, այս օրն էլ անցաւ, եւ իմ երեխաները ողջ եւ առողջ են, - ասում էր մայրս օրհնելով Աստծուն ամէն մի նուիրուած օրուայ համար:

- Թէ չէ, երբ վերադառնայ, ինչպէ՞ս կարող եմ նրա աչքերին նայել, ի՞նչ կը պատասխանեմ, - չարունակում էր նա արտայայտել իր մտքերը:

Այն ժամանակ ես չէի հասկանում նրա խօսքերի իմաստը, նաեւ այն խօսքերի, որոնք նա ասում էր բեռնատար վակոնում, որը մեզ տանում էր մեր անից հեռու, դէպի անյայտութիւն:

- Աստուած ջան, ո՞ւր ես մեզ տանում, - աղերսում էր մայրս արցունքն աչքերին, կուչ եկած վակոնի վերին հարթակի անկիւնում, որը զբաղեցնում էր ընտանիքը: «Ախր կը կոտորուեն նրանք, ախր կը կորցնեմ: Դեռ ոչինչ, եթէ ինքը կողքիս լինէր: Այդ ժամանակ ես քեզանից ոչինչ չէի խնդրի եւ չէի անհանդստացնի քեզ»:

Աքսորավայրում նա նոյնպէս դիմում էր իրեն էներգիա եւ ուժ տնուցող անբաւ աղրիւրին. «Աստուած ջան, դու միշտ յիշել ես ինձ: Տուր ինձ ուժ, որպէսզի դիմանամ եւ այս փորձութեանը, պահպանիր երեխաներիս, օգնիր ինձ կատարել երդումս»:

Միայն աւելի ուշ ես գիտակցեցի նրա խօսքերի իմաստը եւ հասկացայ, թէ ում հովի հետ է վարում իր յաճախակի զրոյցները:

Իսկ այդ օրը, այդ դժբախտ օրը, մեր ընտանիքը աքսորում էին որպէս դաշնակցականի ընտանիք, որպէս «ժողովրդի թշնամու» ընտանիք:

Մայրս պատմում էր, որ ամէն ինչ այնպէս էր, ինչպէս տասներկու տարի առաջ, երբ «վերցնում» էին հօրս: Միայն այս անգամ չէին պատառոտում հայցահատիկով լի տոպրակները (նրանք չհային էլ), չէին պատառոտում անկողինը ինչ-որ բան փնտռելով: Այո, այս անգամ ջարդ չկար: Ուղղակի չրջապատեցին մեր տունը եւ ասացին.

- Ձեզ արւում է կէս ժամ հաւաքելու: Վերցրէք ձեզ հետ ամենաանհրաժեշտ իրերը՝ ուրիշ տեղում ապրելու համար, որը մենք ձեզ ցոյց կը տանք: Աւելին, մենք «սիրով» ձեզ կը հասցնենք այնտեղ:

Բացատրութիւնը, պէտք է ենթադրել, հետեւեալն էր.

- Այստեղ դուք աւելորդ էք, քանզի դուք դաշնակի վիժուածքներ էք եւ խանգարում էք մեզ հանգիստ ապրել: Ձիշդ է՝ տասներկու տարի առաջ մենք նրան վերցրինք եւ ոչնչացրինք, բայց չենք հանգստանայ՝ մինչեւ այս դաշնակի բոյնը չաւերենք, չարօրենք, չջնջենք գետնի երեսից:

Այո, այս անգամ ամէն ինչ հանդիստ էր, բոլորովին ոչ այնպէս, ինչպէս 1937 թ. դաժան տարում, երբ գիշատիչները չափազանակում էին չանաչիրաբար ամէն ինչ մեր տանը գլխիվայր անել տարակուսանքով:

Գիշատիչները բռնել էին հօրս ձեռքերը: Ուշքի գալով նա կռահեց, թէ ինչ են փնտռում «ընկերները»:

- Ձկո՞ւք էք փնտռում, - հարցրեց նա:

Իրօք, ուշքի եկան նաեւ «դիչաղ» գիշատիչները: Ձկո՞ր որ նա մեզնից լաւ կ'իմանայ, թէ որտեղ է այն, ինչ մենք փնտռում ենք:

- Այո՛, մենք փնտռում ենք հէնց այդ, իսկ դո՛ւ, չա՛ն որդի, գիտես եւ լռում ես, չուտ արա, բեր այստեղ, - եւ ձեռքերը բաց թողեցին:

Հայրս բերեց ու յանձնեց իր ...մասնագիտական զգեստը: Մարտական ձին վերցրել էին աւելի վաղ:

Հօրս քարչ տուեցին դէպի դուրս եւ առանց կամոք առնելու տարան: Մայրս աղաղակելով ուզեց վազել նրանց եռեւից, բայց նրան ղրան չեմին կոպիտ ձեւով կանգնեցրին՝ հրամայելով չաղմկել եւ առաջ չչարժուել:

- Ես կանգնած էի ա՛յ այստեղ, իսկ նրանք արդէն ա՛յ այնտեղ էին, - պատմում էր մայրս ցոյց տալով տան չեմից մօտաւորապէս հինգ մեթր հեռուն: Այդ տեղում հայրս, հպելով ոտքերը հողին, կանգնեցրեց իր «ուղեկիցներին», չուռ եկաւ դէպի մայրս, որքան դա հնարաւոր էր իր վիճակում, եւ աղերսեց.

- Սաթէն ջան, կը տեսնուե՞նք արդեօք նորից: (Զատեսնուեցին): Տղամա՛րդ եղիր: Մի բան եմ խնդրում՝ մեծացրու երեխաներին եւ, եթէ կը կարողանաս, չթողնես նրանց առանց ուսումի.. եւ դրնաց (տարան):

Եւ մայրս նրան խոստացաւ, երդուեց («երդում եմ տուել»):

Հայրս այն ժամանակ երեսունինը տարեկան էր, մայրս՝ երեսունչորս, ես՝ չորս ամսական:

Սակայն դա այն ժամանակ էր: Դա 1937 թիւն էր: Իսկ այժմ 1949 թիւն է: Շուտով կը լրանայ իմ տասներկու տարին, եւ արդէն ես ինքս եմ «ժողովրդի թշնամի» ու ենթակայ եմ աքսորի:

Աքսորեալներով լի գնացքը չարժուեց:

- Վերջապէ՞ս, - լսուեց վակոնի բոլոր անկիւններից:

Մարդիկ նոյնիսկ դրանով էին ուրախ: Շարժման մէջ լինելն աւելի լաւ է, քան անվերջ սպասումը, քանզի չարժումը մօտեցնում է աւարտին, ինչպիսին էլ այն լինի: Հանդարտուեց նոյնիսկ համատարած դժգոհութիւնը այն բանի համար, որ չարժուելուց առաջ վակուեցին վակոնների բոլոր «պատուհանները»: Քեռի Արամը հանդստացնում էր:

- Վաղը առաւօտեան պատուհանները կը բացուեն, եւ ոչ միայն ալկոմեան կուսը, այլ բոլոր չորսն էլ:

Չէին հաւատում, եւ բոլորը զարմացած էին, երբ յաջորդ օրը պատուհանները բացուեցին:

- Այցնում ենք Թուրքական սահմանի կողքով, - բացատրեց քեռի Արամը:

Քեռի Արամը հօրս հօրեղբօր տղան է: Դաշնակցականների իշխանութեան ժամանակ միասին ծառայել էին Դրոյի բանակում: 1937 թուին նրանց երկուսին էլ ձերբակալել էին: Հօրս անմիջապէս գնդակահարել էին, իսկ Քեռի Արամը գլուխը պրծացրեց «Թէքեա վախով» ստալինեան ճամբարների տասը տարուայ տոսպանքով: Ցետոյ նա վերադարձաւ տուն ու կարծում էր, թէ այժմ հանգիստ կ'անցկացրի իր կեանքը, սակայն միւսները այլ կերպ որոշեցին, եւ այժմ նրան աքսորում էին բազմանդամ ընտանիքով հանդերձ:

Մեր վակոնում տեղաւորուած էին հինգ ընտանիք: Բացի մեր եւ Քեռի Արամի ընտանիքներից (իսրաքանչիւրում եօթը հոգի), եւս երեք ընտանիք կար Միկոյ հանից (Ղէդնաձորից): Քեռի Նիկոլի ընտանիքը՝ երեք հոգի, Միխայէլի ընտանիքը՝ հինգ հոգի, Թամարի ընտանիքը՝ երկու հոգի:

Միխայէլի եւ Նիկոլի մեղքն այն էր, որ Հայրենական պատերազմի ժամանակ, ընկնելով ՀԼՔ-ական գերութեան մէջ՝ չէին հրաժարուել իրենց կեանքից եւ դերի էին յանձնուել, Թամարի ամուսինն 1937 թուին «դատապարտել» էին տասը տարով «ժողովրդի թշնամի» ստանդարտ ձեւակերպումով: Տասը տարի յետոյ նա վերադարձաւ տուն, սակայն մէկ տարի անց նրան նորից արտաքսեցին կրասնոեարսկի երկրամաս, այն ժամանակ անորոշ ժամանակով: Բայց դա էլ քիչ համարեցին, ա՛յժմ աքսորում էին նրա ընտանիքը: Թամարի որդին՝ Թելմանը, աքսորման օրը տասը չէր: Նրան յետոյ գտել էին եւ ուղարկել

Ի ՅՈՒՇ ԻՐ ՄԱՀՈՒԱՆ 30ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ

- 1974 Օգոստոս 20 -

ՎԱՂԸ

(Հատուած)

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

Պէտք է բաւական յառաջացած ըլլալ կեանքի մէջ որպէսզի իր լիակատար իմաստն զգենու սա առածը, որ ազգարարութիւն մըն է. «Մեր արարքները կը հետեւին մեզի գաղտնաբար»: Գրչի մարդուն արարքները որ իր սեփական ստեղծագործութիւններն են, կը հետեւին իր քայլերուն հաւատարմօրէն, նման իր ստուերին: Կը բաւէ որ արեւն իր դիրքը փոխէ երկու ծխնելոյզներու միջեւ, որպէսզի մենք վարանինք ճանչնալ այն ծամածուռ էակը որ կը յայտնուի մեր առջեւ՝ սալաքարերուն վրայ սողոսկուն: Կարելի է անշուշտ ուրանալ զայն կամ թէ վաճառքի հանել, ինչպէս փորձեց վաճառել Շամբսօ: Փորձը ձախողեցաւ սակայն: Անմեկնելի է այն խորհուրդը որ չունչ եւ ոգի կը պարգեւէ Թուղթին, ա՛յն Թուղթին որ կը թեւածէ, որ կը ժժգունի ու կը մեռնի: Եւ երբ ամէն ինչ կորսուած է առյաւէտ եւ հողակոյտն ալ կքած՝ արտասուաթոր երկնքին տակ, Համլէթ դուրս կը հանէ գանկը: Ո՞վ է ան որ ի յայտ կու գայ: Բարեկա՞մ թէ ինչ:

Ես կը խօսիմ իմ մասիս: Միշտ անբաղձալի նկատած եմ այսօրինակ ամէն յայտնութիւն որ յետադարձ ակնարկ մը ընել կու տայ ինծի, զիս փոխադրելով դէպի անցեալը, ըսել կ'ուզեմ՝ դէպի անցեալի իմ բորբոքուն այլ եւ չառայլ վէրքը: Գիտեմ թէ կան սիգաճեմ զրագէտներ որ իրենց գիրքերը կը կրճեն նման չքանչաներու, եւ դեռ կան ուրիշներ, աւելի զօրովոտ եւ աւելի մտերիմ, որ իրենց ստեղծագործութիւններուն վրայ կը հակին որպէս հոգեհատորներու: Ես՝ երբե՛ք: Մտածումն իսկ թէ պէտք է դիմեմ գիրքերէս մէկուն ճշդումի մը ի խնդիր, ինծի կը պատճառէ ներքին ընկրկում մը: Ուրացումը տեղ չունի այս ընկրկումին մէջ եւ ոչ ալ աւելորդ համեստութիւնը: Կը ճանչնամ լաւը որ երբեմն իմս եղաւ: Եւ եթէ ունիմ յստակ ճանաչումը այն ամէն ինչին որ գրիչս տակ գտաւ իր ճչգրիտ արտայայտութիւնը, ունիմ նաեւ յոռի միտումը գրութեանս թերիները տեսնելու եւ անոնց թողած աւերը նախընտրաբար մեծցընելու: Ներքին ընկրկումը իր բացատրութիւնը կը գտնէ իրմէ դուրս:

Հակառակ ոմանց ենթադրութեան, գրականութիւնը չէ որ կը կազմէ գրադէտներու խօսակցութեան առանցքը: Անոր հետ իրենց ունեցած մտերմութիւնը չատ մեծ է որպէսզի խօսակցութիւնը ըլլայ ուրի՛շ բան քան աւելորդաբանութիւն: Անոնք զիրար կը հակնան պարմանագրական փոքրիկ նշաններով, նման թղթախաղի մոլեռանդ մեղսակիցներու, նշաններ՝ որ միշտ կը մնան կիսաւարտ: Գրական վերլուծումը եւ մեկնաբանութիւնը աւելորդ բաներ են, ծանօթութեան որոշ մակարդակէ մը անդին: Լէոն-Փօլ Ֆարկ կ'ըսէր, իր չինացիի աչքերը զթթելով.. «Ըսելիք բան չկայ բանաստեղծութեան վրայ: Պանիրի պէս է: Ան հոտը կու տայ...»: Ըսելիք չատ բան չկայ ընդդէմ կատարելատիպ երկին, որ տեսակ մը հրաշք է, այնքան անմեկնելի որքան վերջնական: Ան վերջաւորութիւն մըն է իր ներքութեան մէջն իսկ: Աւելի ձգողական ուժ մը կայ մանրակի ձախողութեան մէջ, ուր գրադէտը լինքն իսկ սայթաքելու վտանգութիւնը ճանչցաւ, աւելի յաճախ՝ քան ինչ որ կը խոստովանի: Ձախողանքը աւելի հրահանգիչ է, չըսելու համար՝ ներչնչման աղբիւր: Բացատրութիւնը պարզ է: Ձենք գիտեր թէ ի՛նչ է գրականութիւնը: Բայց գիտենք թէ ինչ չէ՛: Ան ոչ անճառելի բերկրութիւն է եւ ոչ ալ սպառիչ զոհաբերութիւն այն մարդուն համար, որ բանաստեղծութիւնը կ'ապրի որպէս առանձնական գինովութիւն, տեղւոյն վրայ եւ վայրկեանին մէջ, բայց կը թերանայ իր ապրումը թուղթին յանձնելէ: Այս ինքնապահպանութիւնը, որ տեսակ մը ըզգայական գիլոթինն է, անչուշտ արդարանալի՝ ինքն իր մէջ, անհատը զերծ կը պահէ սերնդագործման պարտաւորութիւններէն, այսինքն բառերու հետ իգութեան հետ զօտեմարտելէ եւ զանոնք բռնադատելէ: Ան զերծ կը պահէ տակաւին ինքնացուցադրումի ամօթէն եւ իր մտերիմ էութիւնը մատնած ըլլալու զիղջէն: Բանաստեղծն իր երգով կ'արդարացընէ այս զիղջը, չմոռնալով զայն կոչել իր բո՛ւն անունով - զիղջ:

Ես երբեմն թուղթին յանձնեցի ինչ որ ապրեցայ: Ես աւելի յաճախ ապրումս կորսուի երազային պահուն, ո՛չ զերբնական պահուն, ամէն մարդու պէս: Ես մէկ թէ միւս պարագային՝ իմ երգս մնաց անկատար եւ վաղանցուկ: Ամէն մարդու պէս յիշողութիւնս գոյ պատառատուն այնքան՝ որ վերականգնումի փորձն իսկ ինծի թուեցաւ սին պատրանք, նման մը-տածումիս որ չի դադրիր դառնալէ չուրջանակի առանց երբեք թափանցելու իր կեդրոնական կարծր միջուկին, առանց երբեք տիրանալու ինքն իրեն: Եւ ամէն մարդու պէս համակերպեցայ անյեղլի իրականութեան որ խաբէութիւն մըն է, քանի որ ինչ որ իմս ըլլալու սահմանուած կը թուէր, իմս չեղաւ իր լրութիւնը մէջ: Եւ ես մնացի ձեռնունայն: Եւ սակայն...

Եւ սակայն կայ բան մը որ կեանքիս կ'ուղեկցի ի սկզբանէ անտի: Բառ մըն է ան, վաղը: Ներքին ձայն մըն է ան որուն տէրը չեմ ես եւ որ կ'ըսէ՝ վաղը: Անսպասելի պահու մը լեզու կ'ելլայ այսպէս՝ վաղը: Ան կը գտնուի կուրծքիս տակ տեղ մը դէպի ձախին եւ չունի ոչ մէկ փայլ: Միշտ անտարբեր՝ իմ վայրկեանի մտածումիս, ան կ'ըսէ միօրինակ ձայնով՝ վաղը: Ան յեղաշրջումն իսկ է ներքին ընկերումին, տեսակ մը յառաջընթաց դէպի ապագան, սրտի թռիչք թէ ըզձանք՝ վաղը: Միշտ վաղը եւ այսքան միայն:

Ձիս կը հասկնայ այն մարդը որ երբ նայի իր եռին, տեսնէ նո՛յն բանը: Փոս մը:

1970 Ապրիլ

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ՀԻՍԱՐԻ Ս. Սանդուխտ եկեղեցւոյ անուան տօնախմբութիւնը եւ մատաղօրհնութիւնը տեղի ունեցած են Յուլիս 25ին: Կրօնական արարողութեան հետեւած են սիրոյ սեղանները: Օրուան պատարագը մատուցանած է Մխիթարն Բհնյ. Այվազեան, նախագահած է Մեսրոպ Պատրիարք, որ նաեւ քարոզած է: Ապա, թաղմութիւնը համախմբուած է եկեղեցւոյ պարտէզին մէջ: Ողջոյնի խօսք արտասանած է Պարոյր Քէպապճեան, որմէ ետք Թաղային խորհուրդի ատենապետը՝ Նուրիձա Եասայլքոլ բարի գալուստ մաղթած է ներկաներուն: Պ. Քէպապճեան Թաղային խորհուրդի տեղեկագիրը կարդալով, բացատրած է որ այդ անչքացած Թաղին մէջ, Թաղային խորհուրդը ամէն ճիգ կը վատնէ որպէսզի եկեղեցին պահէ իր մաքրամաքուր վիճակին մէջ: Կոմիտաս երգչախումբին անունով արտասանած է Գէորգ Թիւթիւնեան եւ ցանկութիւն յայտնած որ Պատրիարքարանը այնպիսի կարգադրութիւն մը ընէր, որ աւելի յաճախակի կերպով պատարագ մատուցուէր Ս. Սանդուխտ եկեղեցւոյ մէջ:

մօր ու քրոջ յիշեւից: Վերջիններս, բնականաբար, այլ ամէնի մասին չէին եւ ամբողջ ճանապարհի ընթացքում չէին խօսում՝ ինչէ՞ս պահեն իրենց՝ տխրե՞ն, որ Թելմանը իրենց հետ չէ, թէ ուրախանան, որ նա ազատութեան մէջ է, չէ՞ որ յայտնի չէր, թէ ի՞նչ էր մեզ սպասում:

Գնացքը կանգ առաւ: Վակոնի դռները բացուեցին: Դրան առջեւ կանգնած էր մեր վակոնին ուղեկցող սերժանտը: Նա յայտարարեց, որ բոլորին թոյլատրւում է իջնել՝ բնական կարիքները հոգալու համար:

. Բայց ո՞րտեղ, - բացագանչեցին մի քանիսը:

. Հէնց այստեղ ձեր վակոնի մօտ եւ հինգ քայլից ոչ աւելի հեռաւորութեամբ, . հանդիմատ պատասխանեց սերժանտը:

. Խորհուրդ եմ տալիս ի զուր ժամանակ չվատնել: Ձեզ յատկացուած է մի քանի րոպէ, աշխատէք դրա մէջ տեղաւորուել:

Խորհուրդը ազդեց: Ողջոյնին արագօրէն ցած իջեցնել կանանց եւ երեխաներին, յետոյ կ'իջնեն տղամարդիկ: Բայց ինչո՞ւ սկզբում կանայք, յետոյ տղամարդիկ... Պէտք էր տեսնել մարդկանց վիճակը այդ հարկադրուած խայտառակութեան պահին: Բոլորին ճնշում էր ամօթի, խայտառակութեան, նեսմացած լինելու զգացումը: Մարդիկ չէին համարձակւում նայել միմեանց: Իւրաքանչիւրն իրեն մեղաւոր էր համարում կատարուածի համար:

Լարուածութիւնը թուլացրեց Քեռի Արամը:

. Սիրելինե՛րս, - ասաց նա, - պէտք չէ, որ մենք ամաչենք միմեանցից, թող ամաչեն նրանք, ովքեր մեզ դա պարտադրեցին: Եկէք այսուհետ մեզ համարենք մէկ ընտանիքի անդամներ, այսուհետ մենք քոյրեր եւ եղբայրներ ենք: Եւ փոքր ընդմիջումից յետոյ աւելացրեց, - այլ կերպ չենք դիմանայ:

Գնացքը կանգ առաւ ինչ-որ կայարանում: Մեր վակոնը ուղեկցող սերժանտը եւ ուազ Նիկոլը բերեցին մեր վակոնի ուտելիքը: Այդ ընթացքում Քեռի Արամը դիմեց վակոնում գտնուողներին.

. Եթէ ոեւէ մէկի մօտ կայ չեփած միս կամ հաւ, դուրս բերէք, փորձենք մշակել, վաղը արդէն ուշ կը լինի:

Գտնուեց երկու հաւ, որոնք արդէն բուրում էին: Քեռի Արամը հոտ քաշեց եւ որոշեց, որ դրանք վերջնական չեն փճացել: Նա, Նիկոլը եւ Միխայէլը հաւերը քրջկին եռացրած ջրով, լուացին արեան մնացորդները եւ մսերին եռացած ջրով լի դոյլի մէջ: Իսկ մի քանի րոպէ յետոյ Քեռի Արամը հիւրասիրում էր վակոնում գտնուողներին: Հրաժարուողներին հանդիմատացնում էր.

. Հանդիսատ կերէք, ոչ մի վատ բան չի լինի, փորձուած մեթոտ է: Եթէ դրանից մեռնէին, ես արդէն մի քանի անգամ մեռած կը լինէի:

Աւարտւում էր վակոնային կեանքի առաջին չարաթը: Սովորականի պէս դադարը կանգ առաւ ինչ-որ անմարդաբնակ վայրում, որպէսզի ուղեւորները հոգային բնական կարիքները: Մարդիկ արագ ցած էին իջնում վակոնից եւ նոյնքան արագ վերադառնում: Ես նկատեցի, որ վակոնում գտնուողները ինչ-որ բանից անհանդստացած էին: Սերժանտը ներքեւում էր: Վակոնի բաց դրան մօտ կանգնած էր Միխայէլը: Նա յաճախակի անհանդիստ նայում էր մերթ հարթակին, որտեղ նրա երեխաները էին, մերթ ներքեւ: Երբ նա հերթական անգամ հայեացքն ուղղեց դէպի երեխաները, մայրս ասաց.

. Միխայէլ ջան, նրանց համար մի անհանգստանայ, ես կը հետեւեմ:

Ես նկատեցի, որ մայրս դիմում է Միխայէլին այնպէս, ինչպէս դիմում են մի մարդու, որի դժբախտութեանը խորապէս կարեկցում են: Մայրս հազիւ էր աւարտել խօսքը, երբ լսուեց չոգեկառքի սուլոցը, իսկ յետոյ մեռաղի եւ վակոնների դղրդոցը: Մեռաղի դղրդոցի հետ հընչեց մեծահասակների ճիչը: Միխայէլը թռաւ ներքեւ: Շուտով նրանք սերժանտի հետ վակոնի տակից դուրս բերեցին Միխայէլի կնոջը՝ Ոսկիին, որը եւ բոլորի անհանդստութեան պատճառն էր: Նրան բարձրացրին վակոն, հարթակի վրայ: Կանայք անհանդստացած մօտեցան նրան: Ցանկարծ Ոսկին ծիծաղեց երկար, դրընդուն, անվմաստ ծիծաղով: Ցետոյ նոյնպէս յանկարծակի դադարեց ծիծաղել, վախուորած նայեց չուրջը եւ սկսեց յարմար տեղաւորուել տեղում: Մի քանի վայրկեան անց նա նորից խօսեց.

. Տեսէք, տեսէք, - ծիծաղելով ասում էր նա մատնացոյց անելով վակոնի մերթ մէկ, մերթ միւս «պատուհանները»:

. Ա՛յ այնտեղից,, այնտեղից ներս մըտաւ ամենաերեւի ճառագայթը, իսկ այնտեղից դուրս թռաւ:

Բոլորը չփոթուած էին: Միխայէլը կանգնած էր դլխիկոր: Քրտինքի կաթիլներն առատօրէն գլորւում էին նրա դէմքից: Տղամարդիկ մօտեցան նրան:

. Դիմացիր, - ասում էին նրանք, - դիմացիր, դու ուրիշ ելք չունես, ոչ էլ թուլանալու իրաւունք, երեխաները փոքր են:

Կանայք լաց էին լինում:

. Ուրեմն հաստատուեց այն, ինչ կասկածում էինք: Դէ, ի հարկէ, այսպիսի կեանքից դժուար չէ խելքը կորցնելը: Բոլորիս էլ նոյնն է սպասում: Աստուած հեռու պահի, - խօսում էին նրանք իրար մէջ:

Աւելի ուշ ես հասկացայ, որ առաջին զոհի վկան եմ եղել...

«ԵՐԿԻՐ», Յունիս 11/17

ԴՈՂՈՒԹԵՆ ԴՈՂՈՒԹ

ՊՈՒՐՃ ՀԱՄՈՒՏԻ ազգային դերեզմանատան մէջ, Յուլիս 26ին, ԼԵՄ-ականները Լիբանանի Պատանեկան Միութիւնները անդամները մոմեր վառած են ու ծաղիկներ զետեղած Լիզպոնի հինգ նահատակներու շիրմներուն (Արա Գըրճալեան, Վաչէ Տաղլեան, Սիմոն Եահնիեան, Սեդրակ Ա.ճէմեան եւ Սարգիս Աբրահամեան): Օրուան բանախօսը՝ Քրիստ Լիպարեան չեշտած է.- «Արան, Սիմոնը, Սեդրակը, Վաչէն եւ Սագօն դեռ կենդանի են: Անոնք կ'աշխատին ե՛ւ մեզի հետ ե՛ւ հայ չաստուածներուն հետ, սպառելով մեր աշակերթեան հայրենիքի ամբողջական փրկութեան համար»:

*
**

ՊԼՅՐՈՒԹԻ Հայկազեան Համալսարանի հանդիսասրահին մէջ, Յուլիս 15ին, կազմակերպութեամբ Համալսարանի Հայագիտական ամպիոնին, ներկայացուած է հետաքրքրական նիւթ մը՝ «Աբխազիոյ հայկական գաղութը այսօր»: Բացումը կատարելով Հայագիտական ամպիոնի վարիչը՝ Արա Սանճեան ներկայացուցած է օրուան դասախօսը՝ Գեմպրիճի համալսարանի դասախօս՝ Հրաչ Չիլինկիրեան, նշելով նաեւ թէ ցարդ հայերէն չատ քիչ հրապարակումներ կան Աբխազիոյ մասին, հակառակ անոր որ Աբխազիոյ տադնապը բազմաթիւ նմանութիւններ ունի Լեռնային Ղարաբաղի տադնապին հետ: Դասախօսը իր խօսքին սկիզբը յայտնած է որ հակառակ անոր որ նիւթը բաւական ընդարձակ է, Սփիւռքի մէջ համապատասխան բաւարար տեղեկութիւններ չկան անոր մասին: Այսպէս, Հ. Չիլինկիրեան կատարած է Աբխազիոյ հակիրճ պատմականը: Խորհրդային ժամանակաշրջանին Աբխազիա Վրաստանի կազմին մէջ ինքնավար Հանրապետութիւն մըն էր եւ կը նկատուէր Վրաստանի մէկ ենթաշրջանը: Աբխազիա, հարիւրաւոր տարիներ եղած է օսմանեան տիրապետութեան տակ եւ կրօնափոխուած եղած է Ռուսերու եւ Թուրքերու միջեւ: Կային բազմաթիւ հարցեր, որոնցմէ մէկն էր Վրաստանի վարած վիրակնատման քաղաքականութիւնը: Դեռ վերջերս Աբխազիա գտնուած, Հ. Չիլինկիրեան նշած է որ Հայերը աբխազեւրացման բախտումներու ընթացքին հիմնական դերակատարութիւն ունեցած են: 1500 հոգի հաշուող երկու դումարտակներով կարեւոր դեր խաղացած են աբխազեան կողմի յաղթանակին մէջ: Դասախօսը, ապա, անդրադարձած է հայկական հոծ բազմութիւն ունեցող աբխազեան չրջաններ, գլխաւորաբար՝ Սոխում, Կակրա, Կուտաութա եւ այլ բնակավայրեր: Հայերու գաղթը սկսած է 1870-80 թուականներէն, երկրորդ հոսանք մը տեղի ունեցած է 1915էն ետք: Դասախօսը դիտել տուած է որ ներկայիս Աբխազիոյ մէջ կան չուրջ քառասուն հայկական գպրոցներ, որոնք կը դեկավարուին «Կուռնկ» եւ «Մաշտոց» հանրային կազմակերպութիւններու կողմէ: Դասագիրքերը Հայաստանէն կը ղրկուին, բայց պաշտօնական մակարդակի վրայ յարաբերութիւն չկայ Հայաստանի հետ: Մշակութային դեռնի վրայ Սոխումի մէջ կան «Մովսէսեան» երգի-պարի համոյթը եւ «Համչէն» թերթը: Խորհրդարանի երեսուն անդամներուն վրայ կան երեք հայ երեսփոխաններ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՈՒ ԱԲԽԱԶԻՈՑ ՀԱՅԿ. ԴՊՐՈՑՆԵՐՈՒՆ ԹԻՒԸ ԿԸ ՆՈՒԱԶԻ

Կրթութեան եւ դիտութեան նախարարութեան Սփիւռքի հետ կապերու բաժնին պատասխանատուն Թամարա Զարինեան յայտնած է թէ Վրաստանի ու Աբխազիոյ հայկական դպրոցներուն նաեւ աշակերտութեան թիւերը տարուէ տարի կը նուազին: Վրաստանի մէջ 2002ին կար 156 հայկական դպրոց, 27 հազար աշակերտներով. յառաջիկայ դասաշրջանին այդ թիւերը պիտի ըլլան 150 եւ 22 հազար: Իսկ Աբխազիոյ մէջ 2001ին կային 41 հայկական դպրոց ու 4500 աշակերտ, 2004-2005 տարեշրջանին պիտի ըլլայ միայն մօտ երեք հազար աշակերտ: Նշուած դպրոցները կը կիսարկեն Հայաստանի ուսումնական ծրագիրը եւ դասագիրքերը կ'ուղարկուին Երեւանէն: Միայն երկրին լեզուին, դրականութեան, պատմութեան դասագիրքերը կը տրամադրուին վրացական ու աբխազական նախարարութիւններուն կողմէ:

Բարձրագոյն ուսումի, յատկապէս հայագիտական ճիւղերու հետեւելու համար ամէն տարի Վրաստանէն չուրջ երեք հարիւր ուսանող կը դիմէ Երեւան: Կառավարութիւնը ձրի ուսանելու տեղեր կը յատկացնէ անոնց բանասիրութեան, պատմութեան ֆաքիւլթէներուն, երաժշտանոցին, Գեղարուեստից ակադեմիային մէջ: Ներկայիս Հայաստանի մէջ ձրի ուսում կը ստանան 1200 վիրահայ երիտասարդներ, մինչ Աբխազիայէն եկածներու թիւը միայն 6 է: Թ. Զարինեանի կարծիքով վերջինները աւելի հակում կ'ունենան Ռուսաստանի մէջ բարձրագոյն ուսում ստանալու:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻՒԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

4

Ահա մօտեցաւ: Զիաւորը կը ծռի ու մէկ թեւովը էօժէնին կը գրկէ: Երկու ոտքերով կը խթանէ ձին ու ապուռ թռիչքով մը կը հեռանան ճերմակ ճամբուն վրայէն:

Պաթիստ կոպիտ կերպով, քնացողները կսկծոտելով կը վազէ, կը հասնի դրան: Երկու զինուած պահապաններ, որոնք կը վայելին զրահներով ու գունաւոր զգեստներով՝ ետ կը հրեն Պաթիստը: Ան կը մնայ դրան առջեւ ու կը նայի ճիւաւոր հրեշտակապետին, որ կը հեռանայ, կը հեռանայ ու յանկարծ կը մտնէ լոյսէ գետին մէջ եւ կը քարձրանայ վեր, կը քարձրանայ՝ ու կ'անհետանայ:

Պաթիստ ճիչ մը կ'արձակէ, գետին կ'իյնայ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Տիկին Նուարդ երբ Պոլիս վերադարձաւ՝ մեծ փոփոխութիւն մը գտաւ:

«Ազատութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն, արդարութիւն»:

.Հիւրիյէք...

Օսմ. Սահմանադրութիւնը հռչակուած էր: Պայծառ էր Համիտեան բռնակալութիւնը, խորտակելով... ամբարտաւանները, չղթաներ, կապեր, սանձեր եւ կոճակներ:

. Եաշասըն հիւրրիյէք, ատալէք, միւսավվաք, եաշասըն Միլլէթ...

Ահա օրուան երգը: Ու Հայերը կ'երգեն նաեւ ուրիշ մը, մէկ երկու օրուան մէջ ծայրագոյն ժողովրդականութիւն գտած.

. Ազատութեան սիրոյն համար չատ ատրիւններ թափուեցան...

Ու թափօրները, ճառերը, արտասանութիւններ, «կեցցէ»ները, բամմութիւններ, համբոյրներ, խանդավառ, անոյշ, ու պինովի խօսքեր, նուագախմբեր, պինուորներ, դպրոցականներ, դրօշակներ, լապտերներ, ծաղիկներ, լաթէրնաներ, օղի, աղանդերներ, էնվէր պէյի, Նիյազի պէյի պատկերներ, ծաղրանկարներ, նոր թերթեր, կրակոտ յօդուածներ, յեղափոխական վէպեր, երգարաններ, թերթօններ, յեղափոխականներ, երկար մազեր, սեւ գլխարկներ, սեւ փողկապներ, Դաշնակցական, Հնչակեան, Դրօշակ, Հնչակ, հերոս, բանաստեղծ, ֆեսայի, Զէյթուն, Սասուն, Վան, «Զայն մը հնչեց էրզրումի Հայոց լեռներէն», թատերախումբեր, Նամըք Քէմալ, Միհտաթ փաշա, Սապահէտտին, աքսորականները, չոգենաւեր, լուսանկարներ, պատգիարքներ, Իզմիրլեան, Արիմեան, Ներսէս Պատրիարք, Նարպէյ, Դուրեանի հայրենադուձ տաղեր ու թատերդութիւններ, Մկրտիչ Պէշիկթաշլեան, «Եղբայր ենք մենք», Արշակ Բ., Կոռնակ, Վարդան, Վասպուրականի հերոսները, բեմ, Վահրամ Փափազեան, Օթէլլո, Զարդը, Դանիէլ Վարուժան, Սիամանթօ, Աբէլեան, Արմէնեան, «սիրում եմ», «զալիս ես», «ապրեմ եմ», «հոսհոս», «գիթօ», «եաշասուն», «քարտաշ», «վաթան», «լիպէրթէ, եկալիթէ, ֆրաթէռնիթէ, ժիւսթիս»... պատրիարքարան, Մինաս Չերազ յածանուս, Ակնունի: Ճանկիւլեան, Սապահ-Գիւլ, «Սոցիալ Դեմոկրատ», «ընկեր Շահազատ», Համայեակ Արամեանց, թերթե՛ր, հանդէսներ ու անմահն Փիրայր, Մնակեան, Ալիքսանեան, Պինեճեանց, Շահինեան, Զօպանեան, տիկին Քնար, տիկին Ալիքսանեան, օրիորդ Էլիզ Պինեճեան, Ենովք Շահէն, Աչոտ Մատաթեանց, Շահին, «Ազատ բեմ», «Արքայն զբօսնու», ռուսահայերէնը, «Պատուի համար», «Աւազակներ», «Առաւփախաւ փեսացուն», «Շերլոք Հոլմս», «Ուրիէլ Ակոստա», Զարիֆեան, տիկին Սիրանոյշ, «Արցունքի հովիտ», Ահարոնեան, «դու լաց մի լինիր ես չատ եմ լացել»:

Ու ազատութեան ոգին կը գառնար Պոլսոյ մէջ բերելով նորութիւններ, ներաժելով չահեկան ու անչահ ահագին ապրանքներ: Եւ հայկական գաղութները իրենց ինքնատիպ բոլոր արտադրութիւնները, բերքերը, պտուղներն ու ծաղիկները կը լեցնէին չոգենաւերու եւ չոգեկառքերու մէջ, դրկելով Պոլիս: Ու, քարտիը միչտ լեցուն կ'ըլլար:

Վէպերու տեղատարափ: Մինաք Գոչունեան ու Սմբատ Բիւրատ: Ընկեր Աւօ: «Բիզնէս բանո», «Ելլոզլէ Սասուն», Նորբէն, դարձեալ ու միչտ երգարաններ, «Ազգայն Ասատուած», «Անի քաղաք նստեր կուլայ», «Մայր Աթաքի», Պաղտկանեան, Նալպանտեան, Րաֆֆի, Թումանեան, Իսահակեան, Շերենց, Ծատուրեան, Մանուէլեան, Շուշանիկ Կուրղինեան, «Աստ Նեկրի», Վիքթոր Հիւկօ, «Թչուառներ», «Ինսուունվէց», Շէյքսփիր, Սարտու, Շիլլէր, Հաուպտման, Զուտէրման, Թոլսթոյ, Կորքի, Սմբատով, Լերմոնտով, Պուչկին, Անդրիէֆ, Կոլկաս, Հայաստա՛ն, Հայաստա՛ն...

«Ազատութիւն, եղբայրութիւն, հաւասարութիւն, արդարութիւն»:

. Եաշասըն հիւրրիյէք...

Ու տօներ, հանդէսներ, պատարագներ, հաւաքոյթներ, ժողովներ, սրահ, եկեղեցի, ակումբ, դերեզմանատուն...

Ու խառնիխուռն կը գառնար անիւը ազատութեան...

Նահատակներ, բանտարկեալներ, չէֆթեր, մարտիկներ, գործիչներ, բեմբասացներ, հրապարակագիրներ, գրողնե՛ր, գրողնե՛ր...

Մխրճատ Հայկազն, հովանոց, Աղբ. ժողով, երեսփոխաններ, Տոքթ. Սեդրոեան, ասլան, գլուխ, արիւն, Գրիգոր Անդրիաս, պռատ, պռատ...

Օրմանեան, Օրմանեան, Օրմանեան: Վար, վեր, աջ, ձախ: Դիւանագէտ, դաւանան: Խելացի, գարգացած: Խելքը չափին, գարգացումը ի վնաս ապչին: Անկայ՛, «Ասչ հան դրա»: Մա՛հ: «Վեզարաւոր Սատանայ»:

. Ազատութի՛ւն... հուռա՛... զիթօ՛ էլէֆտէրիա:

. Եաշասուն հուրրիյէ՛ք...

. Վիվ լա լիպէրթէ...

. Համբարձում, նաղաքան կոխէ՛...

. Հայուէ՛ հօրլէս...

. Եասաս Արմէնիէի...

. Եասաս Սթավրի...

. Եասաս փեռնիա...

(Շար. 98)

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼ.- Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան Վարչութիւնը խոր ցաւակցութիւն կը յայտնէ Տիկին Աստղիկ Պօղոսեանին, Տիկին Սօնիա Պօղոսեանին եւ Պ. Մարք Գիւլվային եւ զաւակներուն, Տէր եւ Տիկին Գրիգոր Եաւերեանին եւ զաւակներուն, Տէր եւ Տիկին Ալպէր Պօղոսեանին եւ զաւակներուն, Տէր եւ Տիկին Տարօն Պօղոսեանին եւ զաւակներուն եւ ընտանեկան պարագաներուն իրենց ամուսնոյն, հօր, մեծ հօր, եղբօր եւ ազգականին՝ ժագ-Թորգոմ Պօղոսեանի մահուան առթիւ:

Rentrée des classes

Les inscriptions pour l'année 2004/05 à l'école hebdomadaire «Siamanto» de Bagneux auront lieu :

le mercredi 15 septembre à 15 heures

à l'école Henri Wallon,
2 avenue de Stalingrand à Bagneux

Au cours de ces inscriptions, une réunion conviviale aura lieu, comme chaque année, sur le déroulement de la nouvelle année scolaire.

Les cours commenceront le mercredi suivant -22 septembre : le matin pour les plus jeunes enfants -environ 5 à 10 ans-, et l'après-midi pour les adolescents jusqu'au baccalauréat et les enfants au dessus de 10 ans.

Pour tout renseignement :
— Mme Lucie Dossikian: 01 45 46 10 11
— Mme Elisabeth Davidian: 01 46 65 81 53

Ս. ԹԱԴԷԻ ՎԱՆՔԻ ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ 50-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

Այս տարի, Յուլիսին ամբողջանում էր Ս. Թադէոս Առաքեալի Վանքի Ուխտագնացութեան 50-ամեակը:

Առըպատականի Հայոց Թեմի Թեմական Խորհուրդը նախաձեռնել է հրատարակել Վանքի 50ամեայ ուխտագնացութեան նուիրուած պատկերազարդ ալբոմ, պատմական, ճարտարապետական ու գիտական տեղեկութիւններով, մանրապետական յօդուածներով, երեք լեզուներով, հայերէն, պարսկերէն ու անգլերէն:

Կոչ ենք ուղղում այն բոլոր անձանց որոնք իրենց մօտ ունեն ուխտագնացութեան մասին յուշեր, պատկերներ եւ տպաւորութիւններ, բարի գտնուեն դրանց օրինակները ուղարկել Թաւրիզ, Ազգային Առաջնորդարան, հեռաւեալ հասցէներին՝-

E-mail : archtab@itm.co.ir

Add. Armenian Prelacy
P.O. Box 4455
Tabriz - IRAN

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

CHAVILLE

Eglise St Grégoire l'Illuminateur

6 rue Père Komitas

Pendant la saison d'été, il n'y aura pas de messe les dimanches 1er août, 8 août, et 22 août.

Les offices reprendront normalement à partir du dimanche 29 août.

●

ECOLE «LEVON CHANTH»

Les cours de l'Ecole hebdomadaire «Lévon Chanth» de Chaville reprendront le **mercredi 8 septembre à 9 heures,** dans la salle de l'église.

Inscriptions sur place.

6 rue Père Komitas
92370 CHAVILLE
Tél. : 01. 47. 09. 23. 18

CHENE

Date à retenir

Grande Braderie de Chene

les 4 et 5 décembre

CHENE FRANCE

«ՅԱՌԱՋ»Ի ընթացիկ ազդեու սակագինը

	€	
Մահազդ	140	(167,44)
Հոգեհանգիստ	125	(149,50)
Շնորհակալիք	125	(149,50)
Հարսնիք–Նշանտուք	125	(149,50)
Ծնունդ	125	(149,50)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թ.Վ.Ա. (տե՛ս. վահազդի մէջ ընդհ. գումարը):

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8–րդ (12–13 տող) մեայգեաներին:

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վաճառութեան:

les Coupons d'Alsace

21, av. d'Helvétie
25203 MONTBÉLIARD
Tél. 03 81 94 36 10

Z.I. Les Arbletiers
25400 AUDINCOURT
Tél. 03 81 35 51 93

65, avenue Jean Jaures
90000 BELFORT
Tél. 03 84 21 62 66

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— **PARIS**
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19

— **ARNOUVILLE**
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73

— **ISSY-LES-MOULINEAUX**
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25 (le soir)

— **SEVRAN**
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76

— **VALENCE**
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99 (l'après-midi)
MCA : 04 75 55 12 49

— **DECINES**
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97

— **GRENOBLE**
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43

— **ST MAURICE DE BEYNOST**
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07

— **VIENNE**
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80

— **MARSEILLE-VILLE**
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66 (le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեզի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն:

*
**

ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին
17 rue Pleyel 93210 Saint-Denis - Մեթրօ Գառնէ
Մանկապարտէզ 4 տարեկանէն սկսեալ
(*կը խնդրուի արագօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ*).
+ CPէն մինչեւ Պաֆալօրէա, նաեւ չափահասներու դասարան:
Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, երգ, Թատրոն, Պար:
Հեռաձայնել Օգոստոսին՝
- Արաֆսի Գարանֆիլեան՝
01·39·83·71·19

*
**

La Section «Lola Sassouni»
de Marseille
organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— Restaurant tous les soirs et piqueniques assurés.
— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).

Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne tout compris, visa inclus hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Pensez à nous réserver votre journée du DIMANCHE 12 SEPTEMBRE

pour participer à notre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchetre SPITAK

qui se déroulera dans les jardins
du Dr et Mme KEGHIAN
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel
(en cas de pluie, la fête se déroulera dans la salle paroissiale d'Arnouville-lès-Gonesse, 69 avenue Henri Barbusse 95400 Arnouville)

Programme : Divine Liturgie à 11 heures
Repas à partir de 13 heures
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage des deux **Tombolas** (Enfants et Aduites)

Participation aux frais de la journée : Adultes 20 Euros
Enfants 12 Euros

Réservation par tél. : 01 44 59 23 50 (Paroisse de Paris)
01 40 51 11 90 (Centre Culturel)

ՇԱԲԱԹ - ԿԻՐԱԿԻ
ՕԳՈՍՏՈՍ 21-22
SAMEDI - DIMANCHE
21-22 AOUT
2004

LE NUMERO: 1 €

ՀԱՅՐԱՍՏԱՆ

ԾՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 230 եւրօ — Վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար· 270 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
247 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

ՏՕՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·007 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 80e ANNEE — N° 21·007

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Նաճաճի վրայ ամբակոծութիւնները կը շարունակուէին Օգոստոս 20ին, մինչ Մոքթատա ալ-Սատր կոչ ըրած է հոն ապաստանած իր զինուորականներուն, որ ժամ առաջ չքի բարձրադոյն իշխանութեան յանձնեն վայրը ուր կը գտնուին: Իրաքի վարչապետն ալ՝ Իյատ Ա-լաուի վերջին կոչ մը ըրած է ալ-Սատրի որ իր ուժերը պարպէն քաղաքը: Յայտարարած է «զերադոյն կոչ մըն է որպէսզի զինքերը վար դնեն, հեռանան սրբազան վայրէն եւ մասնակցին քաղաքական գործընթացին, նկատի առնելով երկրին շահը»:

ՊԱՂՏԱՏԻ Ապու Ղրայիպ բանտին մէջ ամերիկացի զինուորները իրաքցի երկու բանտարկեալ սպաննած են, քան ամերիկեան բանակի հրապարակած հաղորդագրութեան: Այդ բանտը, արդէն, դայթակղութեան կեդրոնավայր մը եղած է, հոն կիրարկուած չարչարանքներուն հետեւանքով: Մինչ կողմէ, քրիստոնական բժշկական պարբերականը՝ «Թհը Լանսէթ», ամերիկացի բժիշկի մը ստորագրութեան տակ յօդուած մը հրատարակած է, ուր հանդիսաւոր կոչ կ'ընէր զինուորական պրպտութեան, որպէսզի ճշդուին պատասխանատուութիւնները բանտին բժիշկներուն, որոնք արատաւորած են բժշկական բարոյական սկզբունքը, անդիտացած մարդկային իրաւունքը եւ մեդակից դարձած իրաքցի բանտարկեալներու վրայ կիրարկուած չարչարանքներուն:

ՖՐԱՆՍԱՑԻ Թղթատարի ցանկին նախատեսուած բարեւորոգումները կը մըտահոգեն սենիքանները (Սէ.Ժի.Թի. եւ Միւա - Փի.Թի.Թի.) քանի կը ծրագրուի 300 դրասենեակներու փակումը 12 հազարի վրայ: Սիւա - Փի. Թի. Թի.-ի բանբերը դիտել կու տայ որ «եթէ թղթատարը միայն չունի փակելու դրասենեակները, զրկուի դրասենեակներու վերածումը մերձաւոր դրասենեակի դրութեան կը նշանակէ բացման ժամերու նուազումը յաճախորդներուն համար եւ նաեւ պաշտօնէութեան»:

ՖՐԱՆՍԱՑԻ մէջ, ապաստանի իրաւունքը երկու հրովարտակներով փոփոխութիւններ կը կրէ, ինչպէս կը յայտնուի Ներքին եւ Արտաքին նախարարութիւններու հրապարակած օրէնքներով: Առաջին հրովարտակը կը վերաբերի ՕՖՓՐԱ-յի (Ապաստանեալներու եւ Անհայրենիքներու Պաշտպանութեան Ֆրանսական Գրասենեակ) քան որուն ապաստանի իրաւունքի դիմում մը մէկ ամիսէն 21 օրուան կ'իջնէ առժամեայ կեցութեան արտօնութենէն եւք: Հրովարտակը կը նախատեսէ նաեւ ՕՖՓՐԱ-յի ընդհ. տնօրէնի մը նշանակումը երեք տարուան համար, նորոգելի: Ան միայն խորհրդակցական ձայն պիտի ունենայ եւ ոչ՝ վճռական, վարչական մարմինէն ներս: Երկրորդ հրովարտակը, Ներքին նախարարութեան, կը պարտադրէ այն ընկերակցութիւններուն, որոնք բնակութիւն կ'ապահովեն, որ նախապէս վաւերացուին նահանգապետարաններու կողմէ: Այս կարգադրութիւնները, որոնք հետեւանք են 2003 Հոկտ. 23ի օրէնքի գործադրութեան, խիստ կերպով քննադատած են Մարդկային իրաւանց խորհրդակցական ազգային յանձնախումբին կողմէ: Այս մարմինը դատապարտած էր այն խոչընդոտները, որոնք կը պարտադրուին ապաստանի իրաւունք ուզող դիմողներուն:

ՎՐԱՅԱԿԱՆ ՈՒԺԵՐԸ ութ ֆոզաքներ սպաննած են Օգոստոս 17ին, անջատողական Օսէթիներու վրայ յարձակման մը ընթացքին, յայտարարած է Վրաստանի Ներքին նախարարը: Պաշտօնական թիւերու համաձայն, մօտ 650 հազար ֆոզաքներ կ'ապրին Ռուսաստանի հարաւը:

ԶԻԶԷՆ հինգ ապստամբներ սպաննուած են Օգոստոս 19ին, ռուս զինուորներու հետ բախումներու ընթացքին, երբ Ռուսերը «ահաբեկչութեան դէմ գործողութիւն մը կը տանէին հիւսիսային Կովկաս»: Ռուսերու զեկոյցը չի ճշդեր ռուսական կորուստները: Եօթանասուն հազար ռուս զինուորներ Չէչէնիա կը մնան:

ՔԱՐԻԼԻ դինը կը շարունակէ յաւելումներ կրել եւ Օգոստոս 19ին, Նիւ Եորքի մէջ, տակառը 48 տոլարն իսկ անցած էր:

ԷԼՄԻՐ ՊԻՐՆԶԹԱՅՆ, ֆիլմերու երաժշտութեան հեղինակը (աւելի քան 250) մեռած է իր քունին մէջ, 82 տարեկանին, Սանթա Պարպարայի մօտ գտնուող իր բնակարանը:

ՌԱՖԱԼԷՆ յետքայլ ըրաւ եւ հաստատեց որ նուազագոյն աշխատավարձը (ՄՄԻՔ) երկու տարուան վրայ չէ որ յաւելում պիտի կրէ, այլ 2005էն իսկ, ինչպէս նախատեսած էր «Ֆիլոն օրէնքը»:

ԺԸՆԵԻԻ մէջ լարուած մթնոլորտ մը տիրած է Օգոստոս 19ին, երբ տեղի կ'ունենար Պաղտատի ՄԱԿ-ի գրասենեակին դէմ գործուած անճնասպանական արարքին տարելիցի հանդիսութիւնը, վերապրողներու եւ զոհերու ընտանիքներուն մասնակցութեամբ: Շատ հարցումներ կ'ուղղեն ընել Քոֆի Անանի: Ֆրանսացի մխակ զոհին այրին ըսած է. «Կ'ուզենք խօսիլ իրեն այն դժոխային կեանքին մասին զոր բոլորս ապրեցանք: Եւ հարցումներուս հետ, կը խօսինք նաեւ ՄԱԿ-ի թերիներուն մասին: Պէտք է ըսել, որ ՄԱԿ-ը իր մարդոցմով չի հետաքրքրուիր»:

ՊԱՂԵՍՏԻՆՑԻԻ ԱՄՆ-ու դիմած են որպէսզի ստիպեն Իսրայէլի վերջ տալ Ա.յսըրյորդանանի մէջ Հրեաներու տեղաւորումին: Շարոն ծրագրած է 1,000 լնակարան եւս հաստատել չորս մեծ չրջաններու մէջ, ինչ որ բոլորովին դէմ է միջազգային վերջին ծրագրին, որ «ճամբու ուղեղիծ» մըկըրտուած էր:

ԳՈԼՈՄՊԻՈՑ կառավարութիւնը յայտարարած է Օգոստոս 18ին, որ տրամադիր է ազատ արձակելու Գոլոմպիոյ «ճեզափոխական պինեալ ուժեր»ու (ՖԱՐՔ, մարքսիստ) 50 կեռիլլաներ, կարգ մը պատանդներու հետ փոխարինելու համար, որոնց կարգին նախագահական նախկին թեկնածու Ինկրիտ Պէթանքուրը, քառասուն զինուորներ եւ երեք Ամերիկացի: Նախագահական պալատին հաղորդագրութեան մէջ կ'ըսուի թէ երկու կարեւորութիւններ առալարկուած են կեռիլլաներուն որոնք ազատ կ'արձակուին՝ «արտաքսման երթալ կամ Գոլոմպիա մնալ կառավարութեան վերադաստիարակութեան ծրագրին մէջ»:

ԵԻՐՈՊԱԿԱՆ Միութիւնը, Օգոստոս 18ին դիմած է Հնդկաստանի որպէսզի ջնջէ մահապատիժը: Եւրոպական Միութեան հովանաւորական նախագահութիւնը կը հրաւիրէ Հնդկաստանը որ դադրեցնէ մահապատիժներու գործադրութիւնը եւ վերջ տայ մահապատիժներու:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 19/20)

«ՄԷԿ Ա.ԶԳ., ՄԷԿ ՄՇԱԿՈՑԹ» ՓԱՌԱՏՕՆԸ

Գիւմրին ալ մասնակցած է համահայկական փառատօնին, Օգոստոս 17ին քաղաքին Պետրոս Ադամեան թատրոնին մէջ տեղի ունեցած Գուրգէն Խանջեանի «Աւերակներուն պահակը» ներկայացումով: Յաջորդ օրն ալ քաղաքին Տրամաթիկական թատրոնին մէջ Պէյրութի Վ. Փափազեան խումբը բեմադրած է Ճ. Փաթրիքի «Խաղաղ մենաստան» թատերգութիւնը, նոյն երեկոյեան հանդէս եկած է Մարսէյլի Արաքս-Սասուն պարախումբը:

«Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնին վանաձորեան օրը Իրանէն, Ռուսաստանէն, ԱՄՆ-էն թատերախումբեր, երաժշտական խումբեր գանազան ներկայացումներ տուած են: Յովհաննէս Աբէլեան թատրոնին մէջ Լոս Անճըլըսի Ֆրունզէ Մկրտչեան թատերախումբը ներկայացուցած է «Մի՛ կրակիր, ես մեռած եմ» թատերգութիւնը:

Նոյն օրը Աչտարակի մշակոյթի տան մէջ համերգ մը տրուած է, մասնակցութեամբ գանազան գաղութներու աւելի քան տասը խումբի: Բեմադրուած է Պերճ Զէյթունցեանի «Ոտքի դատարանն է դասին» թատերգութիւնը:

Օգոստ. 19ի իրիկունը, Երեւանի Օփերայի մեծ սրահին մէջ աւելի քան 1200 հանդիսականներու ներկայութեան որոնց մէջ գտնուած է նախագահ Ռ. Քոչարեան տօնական համերգ մը տրուած է. յայտագիրը բացած է Ֆրանսայէն «Արաքս-Սասուն» պարախումբը որուն յաջորդած են ժողովրդական, գուսանական, ազգային-հայրենասիրական երգերու, պարերու տասնեակ խումբեր ու մենակատարներ ԱՄՆ-էն, Եւրոպայէն, ասիական երկիրներէ:

ՕՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

Օգոստոս 19ին, Ֆրանսա կրցաւ ոսկի մետալ մը եւս ձեռք ձգել սուաերամարտի մէջ: Ընդհանուր դասաւորումին ալ փոփոխութիւն կրեց, Չինաստան իր առաջին դիրքը զիջեցաւ ԱՄՆ-ու, որոնք զլուխն են 35 մետալով (14 ոսկի): Կը հետեւի Չինաստան 29 մետալով: Եօթներորդ դիրքի վրայ է Ֆրանսա 11 մետալով (չորսը ոսկի):

ՊԱՂՏԱՏ հաւաքուած ազգային համագումարի 1300 պատգամաւորները համաձայնութեան եկած էին, որ փոխանցման չրջանի ազգային խորհուրդ մը հաստատուի, որ հակակշռէ կառավարութիւնը եւ պատրաստէ 2005 Յունուարի ընտրութիւնները: Վիճաբանութիւններ եղած են կազմին չուրջ, ի վերջոյ հաւանութեան արժանացած է մեծ կուսակցութիւններու ցանկը:

ԱՄՆ-ու նախագահութեան դեմոկրատ թեկնածուն Ճոն Քէրրի, իր կարգին խօսեցաւ օտար պատերազմներու վեթերաններու միութեան առջեւ, Սինսինաթի եւ քննադատեց նոյն հասարակութեան առջեւ, Պուշի ելոյթը, որու ընթացքին յայտարարած էր որ 70 հազար ամերիկացի զինուոր պիտի քաշուին Եւրոպայէն եւ Ասիայէն: Ան չեշտած է «ոչ ոք մեզի չափ, որոնք կռուած են արտասահման, կրնայ ուզել որ մեր զօրքերը տուն վերադառնան: Բայց, այդ կարելի կ'ըլլայ ճիշդ պահուն եւ իմաստուն ձեւով: Ոչ տեսնն է, ոչ ալ ձեւը»:

ՃԷՔ ԼԱՆԿԻ մէկ նոր հատորը լոյս կը տեսնէ Սեպտեմբեր 2ին: Խորագիրն է «Քաղաքական նոր վարչակարգ մը Ֆրանսայի համար» եւ հոն կ'առաջարկէ հիմնարկներու բարեկորոգում մը: Քաղաքական դէմքի եւ իրաւագիտութեան փրոֆէսէօրի իր կրկնակ հանգամանքով, Ֆրանսական ձեւի նախագահական վարչակարգ մը կ'ուզէ: Իրեն համար, ամերիկեանին մօտ, այդ վարչակարգը լաւագոյն

ԹՈՒՐՔ ՄԱՄՈՒԼ

ԱՆԳԱՐԱ ԲՈՂՈՔԱԳԻՐ ՏՈՒԱԾ ՖՐԱՆՍԱՑԻ ԹՈՒՐՔ ՀԻՒՊԱՏՈՍԻՆ ԴԷՄ ՀԱՑԵՐՈՒ ԴԱՏԻՆ ՊԱՏՃԱՌՈՎ

Ծանօթ է որ Հայ Դատի Յանձնախումբը դատարան դիմած է Փարիզի Թուրք Հիւպատոս Այսըն Սէզկինի դէմ, զինք ամբաստանելով հայկական ցեղասպանութեան ուրացումով: Դատը ընդունելի գտնուած է ու հիւպատոսը հրաւէր ստացած ներկայ գտնուելու Հոկտեմբեր 9ի առաջին նիստին որ տեղի կ'ունենայ Փարիզի Արդարադատութեան տաճարին առջեւ:

Նիւթին անդրադարձած է Սէվիլ Քիւչիւքքոչում «Թէրճիման»ի Օգոստոս 18ի թիւին մէջ: Հայ Դատի նախաձեռնութիւնը կը նկատէ ԱՍԱԼԱ-յի արարքներուն նորօրեայ չարունակութիւնը: Ըստ իր համոզումին, հիւպատոսին դէմ դատ բանալով Հայերը կը հետապնդեն Թուրքերը վախցնելու, լռեցնելու նպատակը:

Լրագրողուհին հետաքրքրական կը գտնէ այն որ Ֆրանսական դատարանը ընդունելի նկատած է դատի դիմումը հիւպատոսի մը հանդէպ. մէկուն որ դիւանագիտական անձեռնմխելիութիւն ունի եւ որ Ֆրանսական օրէնքներով չի կրնար դատուիլ: Թուրքիոյ Արտաքին գործերու նախարարութիւնը դատավարութեան կոչնագիրը վերադարձուցած է, անոր կցելով բողոքագիր մը ուր ըսուած է «Օտարերկրեայ դիւանագէտներու անձեռնմխելիութեան պարագան անտեսելով ուղղակի արդարադատութեան նախաձեռնութիւն առնել կը նշանակէ դրժել ստորագրուած միջազգային համաձայնագրերը»:

Ս. Քիւչիւքքոչում ապա կը յիշեցնէ թէ 2001ին Ֆրանսայի Ներկրդարանը ընդունած էր «կարծեցեալ հայկական ցեղասպանութիւն»ը: Սակայն անկէ ի վեր վէճի նիւթ է ժխտողական արտայայտութիւնները օրէնքով պատժելու հարցը, քանի որ կէսոյի օրէնքը չընդգրկեր հայկական պարագան: Ասոր հետ լրագրողուհին կ'անդրադառնայ Պ. Լէուիսի դատավարութեան ալ, գրելով թէ հայկական ցեղասպանութեան ժխտումը պատժող օրէնք չգտնուելով հանդերձ պատմաբանը դատապարտուած էր:

(Շար·ը Դ· էջ)

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՊԱՐԱԿԻՆ ԱՐՁԱՆԸ ՄԻՇՏ ԱՅԺՄԷԱԿԱՆ ԹԵՄԱ Է

Դատելով հայաստանեան մամուլի էջերէն այնպէս կը թուի թէ Երեւանեան այժմէականութեան մնայուն նիւթերէն է քաղաքին ղեկաւար հրապարակին վրայ արձան դեռեղել-չդեռեղելու հարցը: Որքա՛ն մեծ հոսեցաւ թեր ու դէմ կարծիքներ, նախընտրութիւններ ներկայացնելու համար ու տակաւին սպառած չէ նիւթը: Երեւանի երկրորդ Լենինի, այսօրուան Հանրապետութեան հրապարակին վրայ համայնավարութեան ղեկաւար ղէմքին արձանին վար առնուելէն եռք հարցը կը ծեծուի առանց յոգնեցնելու: Երեւոյթին դիտաւոր պատճառը եթէ երեւանցիին իր քաղաքով փայփայած հպարտութիւնն է, կայ վստահաբար այդ նոյն հրապարակին վրայ վերջին չորեքին զետեղուած հսկայական պատառին ազդեցութիւնն ալ. ծանուցումներու այդ պաստառը որ արեւմրեան նորոյթները առանց նուազագոյն մտահ անցընելու որդեգրելու, իւրացնելու ընթացքին հետեւանք է, արդար դժգոհութեան աղբիւր է չատ չատերու համար: Մանաւանդ անոնց որոնք չեն կորսընցուցած զեղեցիկի ըմբռնումը, նոյնիսկ յաճախ ամէնէն անխորհուրդ կերպով կատարուած նորարարութեան ներկայի չորեքեցնող հոլովոյթին մէջ:

«Երկիր» չաբաթաթերթը «Եթէ ես լինէի...» խորագրուած չարքի մը ձեռնարկած է, հայելի ըլլալու համար երեւանցիներու տեսակէտներուն, իրենց քաղաքին վերաբերող հարցերու մասին: Ցուլիսի թիւերէն մէկուն այդ էջին «Հերոս»ը հրապարակին արձանն է. ան զետեղուի՞ հոն, այո՞, ո՞չ, եթէ այո՝ ո՞րո՞ւն, ի՞նչ բանի արձանը կանգնի մայրաքաղաքին ամէնէն աչքառու վայրին մէջ: Հարցախոյզը որուն 32 երեւանցի պատասխանած է, հետաքրքրական չափանիշ կ'ըլլայ նոյն ատեն մարդոց ազգային նախընտրութիւններուն, ճաշակներուն, իրապաշտութեան եւ երեւակայելու տրամադրութեան որմէ անպակաս է դառնութեան, պարսաւելու երանգը:

Պատասխանողներու մօտ կէսը անհրաժեշտ չի նկատեր որ հրապարակը արձանով մը օժտուած ըլլայ: Այս խումբին մէջ կան կարգ մը ենթաբաժանումներ. կայ երեւանցի որ վկայութեան կը կանչէ Թամանեանի նախագիծը ուր ոչ մէկ արձան նախատեսուած է հրապարակին համար: Ուրիշ մը որ բաւական թիւով համախոհներ ունի, կը նախընտրէ թարեկարգ հրապարակ մը, խնամուած մարգագետինով, նստարաններով, յարմար լուսաւորումով, եւլն.: Կայ խմբակ մըն ալ որ չատ տեղին մտահոգուում մը կ'ընէ. նիւթ ընելէ առաջ հրապարակին վրայ արձան զետեղել-չզետեղելու հարցը, հարկ է խնամք տանիլ մայրաքաղաքին ու մարզերուն մէջ արդէն գոյութիւն ունեցող արձաններուն, պատմականմշակութային կոթողներուն: Արձանի զաղափարին դէմ արտայայտուղներու մէկ քանին ալ իրենց կեցուածքը կը բացատրեն ընտրութեան անկարելիութեամբ, կամ ընտրանքի բացակայութեամբ:

Արձանի դէմ արտայայտուղներուն յաջորդող խմբակը կ'ուզէ որ ծանուցումներու պաստառը վերցուի: Ան տզեղ է, հրապարակին անյարիր:

Շատ մը ենթաբաժիններ ունի հրապարակին վրայ արձանի մը զետեղումը նախընտրողներու խումբն ալ: Կայ նախ ամէնէն դիւրին ենթադրելին որ 'կ'ուզէ մեծ մը արձանը տեսնել. տրուած երեք գլխաւոր անուններն են Տիգրան Մեծն, Սասունցի Դաւիթն ու Մեսրոպ Մաշտոցը: Առաջինը Հայաստանի մեծութեան խորհրդանիշ կը ներկայանայ, երկրորդը բոլոր ժամանակներու մեր անխախտ մնացած արժէքը: Աստնց քով տրուած են նաեւ Վահան Մամիկոնեանի, Նելսոն Ստեփանեանի, Նժդեհի անունները: Աւելի անորոշ պատասխանողներ կ'ուզեն «ազգային հերոս» մը, կամ Հայաստանի խորհրդանշական նուիրուած կոթող մը ունենալ կեդրոնական վայրին մէջ:

Նշուած այս խմբակներէն զատ որոնք սա կամ նա ձեւով սպասելի պատասխաններ տուած են հարցումին, կայ անակընկալներու փոքր բաժինը: Անոր տէրերը երեւանցիներ են, յոգնած՝ կաղապարատիպ միտքերէ, ամէն օր ծամծմուած կարծիքներէ: Այս երեւանցիները կ'ուզեն արձան մը ունենալ հրապարակին վրայ: Բայց ան ո՛չ Մաշտոցինը, ո՛չ Տիգրան Մեծինը, ո՛չ ալ Սասունցի Դաւիթինը պէտք է ըլլայ: Իրենց նախընտրութիւնները կ'ամփոփեն ինքնատիպը, քննադատական, պախարակման չատ զգալի դիծերով:

Այս փոքր խմբակը որ ընդհանուրին հազիւ տասնէն մէկը կը ներկայացնէ, դժգոհներէ կազմուած է: Դժգոհ են ընդհանուր ընթացքէն, մօտեցումներէ, արժէքներու դասաւորումէն: Անոնցմէ մէկը տանտիկնին մըն է, մէկը բանասէր մը, մէկն ալ «Ամէնթէյլ»ի աշխատակից: Այս վերջինը որ միակ այրն է, Լենինի արձանն ին բաց մնացած տեղը մեծ պաստառ մը կ'ուզէ տեսնել. բայց ո՛չ ներկայի ծանուցումի պաստառը: Պաստառ մը «որր կոչ է անում ի վերջոյ ձերբազատուել սեփական կեանքի հանդէպ ունեցած անտարբերութիւնից», «բանի որ այսպէս հեռուն գնալ չենք կարող...»:

Բանասէր տիկինը աւելի գործնական մօտեցումի տէր է. «Եթէ Հանրապետութեան հրապարակը պէտք է շարունակի հինովնիկների համար ծառայել որպէս ատոմմեբեեանների կայանատեղի, ապա թերեւս արժէ կանգնեցնել ատոմմեբեեանի մի հսկայ արձան»...:

Ամէնէն իրապաշտը, ցնցողը տանտիկնոջ պատասխանն է սակայն: Ան կ'ըսէ. «Իմ արձանը թող կանգնեցնեն, որ դիմացդ եմ խաւարին, սովին ու ցուրտ տան մէջ նորածին են պահել»:

Իրենց տեղը ձգելով հարցախոյզին տալիքով յիշուած ու չյիշուած բոլոր մեծերը, մեծութիւնները, անոնց նկատմամբ սէրը, յարգանքը, հայութեան երթին որպէս խորհրդանիշ, ներկայէն կարելի՞ է աւելի յարմար տարբերակ գտնել: Անշուշտ պայմանաւ որ խաւարին, սովին, ցուրտին մէջ նորածին պահած Հայուհիին արձանը պատրաստելու գործը չդառնայ պատեհապաշտութեան յաւելեալ առիթ ու աշխարհացրիւ մեր տափակութիւններուն, անճաշակութիւններուն կարգին նորագոյն մըն ալ չաւելնայ Երեւանի Հանրապետութեան հրապարակին վրայ:

ԱՐՓԻ ԹՈՓՈՑԵԱՆ

ՍՏԱՑԱՆՔ

ԶԱՐԹԻՐ

(Հայկական տօնական օրեր)

ՁԵԶԻ ՄԵԶԻ ՄԵԾ ԱՒԵՏԻՍ

(հեղինակ՝ Սիլվա Լ. Տէր-Ստեփանեան)

ՀՐԱՇԱԼԻՔ

(խօսք Սիլվա Լ. Տէր-Ստեփանեան, երաժշտութիւն Կոմիտաս Գէորգեան)

ԿԱՐ ՈՒ ՉԿԱՐ

(խմբագիր՝ Սիլվա Լ. Տէր-Ստեփանեան)

Առաջնորդութիւն Հայոց Ամերիկայի Արեւելեան Թեմի
630 Second Avenue, New York, NY 10016

ՕՐՈՒԱՆ ԴԷՄՔԵՐ

2004-Ի ՕԼԻՄՊԻԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԵՐԵՔ ԿԻՆԵՐՈՒ ԿԱՐԵՒՈՐ ԴԵՐԸ

*Ա*թէնքի Օլիմպիականները մրցանիշերու, նշելի դէմքերու, միջադէպերու կարգին պիտի յիշուին նաեւ երեք կիներու կազմակերպչական կարեւոր գործունէութեամբ. առանց անոր չատ հաւանական էր որ պատրաստութիւնները փափաքելի ձեւով աւարտած չըլլային Օգոստոս 13ի բացման հանդիսաւորութեան:

Այդ կիներէն առաջինը Աթէնքի քաղաքապետուհին է. Տորա Պաքոեաննիս որ այդ պաշտօնը կը վարէ 2002էն ի վեր: Երկրորդը Մշակոյթի նախարարուհի Ֆանի Փալի-Փեթրալիան է, նախագահուհին այն խմբակին որուն պաշտօնն էր հսկել պատրաստութիւններուն: Իսկ երրորդը Օլիմպիականներու կազմակերպիչ մարմնին նախագահուհին ձիանննա Անճելոփուլոսն է որ այդ պաշտօնը ստանձնած է 2000 թուականին: Այս երեք կարեւոր դիրքերուն վրայ երեք կիներու մէկտեղումը ինքնին յեղափոխութիւն մը կը նշանակտուի:

Մինչդեռ 1896ին երբ արդի ժամանակներու առաջին Օլիմպիականները կը կազմակերպուէին, ո՛չ կազմակերպիչ մարմնին, ոչ ալ մարզիկներուն մէջ կնոջական ներկայութեան առիթ տրուած էր: Այդի Օլիմպիականներուն հիմնադիրը Փիէր տը Գուպէրթէն ներշնչուած էր նախապատմական դարերու խաղերէն որոնց արգիլուած էր կնոջական որեւէ մասնակցութիւն: Ոչ միայն իգական սեռի մարզիկներու մասնակցութիւնը խնդրոյ առարկայ չէր, այլեւ նոյնիսկ մասնակից մարզիկներու մայրերը արտօնութիւն չունէին խաղերուն ներկայ գտնուելու: Այսօր պատկերը չորեքած է. կիները թէ՛ աւելի մօտէն հետաքրքրուած են մարզականով, թէ՛ անոնք են որ իրենց ընտանիքը կը մղեն դէպի մարզադաշտերն ու մարզասրահները:

Իսկ Աթէնքի Օլիմպիականներուն առաջին մասնայատկութիւնը այն է որ առաջին անգամ ըլլալով մասնակիցներու մէջ դերակշիռ թիւ կը ներկայացնէ իգական սեռը:

Տ. Պաքոեաննիս կարեւոր դեր կատարած է Աթէնքը հաճելի, այլեւ հրաւիրող քաղաքի մը վերածելու աշխատանքին մէջ: Բացի նոր կանանչ գօտիներու ստեղծումէն եւ չէնքերու ճակատներուն մաքրութենէն, ան ձեռնարկած է փոխադրութեան ենթակառոյցները հիմնապէս բարելաւելու աշխատանքին, արժեւորելով մայրաքաղաքին մշակութային եւ հնագիտական ժառանգութիւնը:

Ճ. Անճելոփուլոս իր կարգին կազմակերպիչ մարմնին նախագահութիւնը ստանձնելէն ի վեր ուժը գտած է տակալու բոլոր քննադատութիւններուն որոնք յաճախ չատ անդուր չէնք մը ունեցան Ցունաստանի հանդէպ, մինչեւ խաղերու ելևիզը:

Իսկ Ֆ. Փեթրալիա մէկն է որ չատ լաւ կը ճանչնայ բոլոր թղթածրարները: Երբեք ալ առաջին օրէն պիտակից էին թէ իրենց ձեռնարկած գործին մէջ մեծագոյն դերը ունի հաղորդակցութիւնը եւ թէ հիմնականը կը կազմէ երկրէն դրական պատկեր մը տալու արարքը:

2004ի Օլիմպիականներուն կազմակերպութեան ու յաջողութեան մէջ կարեւոր դերակատարութիւնը կը մատնէ նաեւ յունական ընկերութեան ընկերային մէկ դիծը: Անոնցմէ ո՛չ մէկը միմիայն իր կարողութեան չնորհիւ տեղ հասած մըն է. Աթէնքի քաղաքապետուհին նախկին մարշական Գ. Միլոթաքիսին զաւակն է, միւս երկուքը կիներն են մեծահարուստներու դասէն երկու երեւելի դէմքերու: Այս մատնանչումը կը յանգի այն եզրակացութեան թէ Ցունաստանի մէջ տակաւին դժուար է այդքան կարեւոր դիրքի տիրանալ, առանց «մէկ»ուն զաւակը, կամ կինը ըլլալու:

ՔԱՂՀԱՆ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ՀԱՅԿ. ԿԵԱՆՔԸ ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ՄԷՋ

ՅՈՒՇԱՀԱՆԴԷՍ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՀԱՄԵՐԳ

*Կ*լենտէյլի Ս. Սաուածածին եկեղեցւոյ մէջ, Ցուլիս 14ին, տեղի ունեցած է յուշահանդէս եւ հոգեւոր համերգ մը, նուիրուած Ազգային առաջնորդարանի քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքին, նուիրուած՝ Սահակ Արք. Այվազեանի, Մեսրոպ Արք. Աշճեանի եւ Զարեհ Արք. Ազնաւուրեանի յիշատակին: Յայտագրի առաջին բաժնին բանախօսած է Կարօ Պետրոսեան, ներկայացնելով վախճանեալ հոգեւորականներուն վաստակն ու դիմաստուերը: Երկրորդ բաժնին հոգեւոր երգերու մեկնաբանութեամբ հանդէս եկած է լիբանանահայ երգչուհի Սալբի Քէլէչեան: Օրհնութեան խօսք արտասանած է առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան:

***

ՍԱԼԲԻ ՔԷԼԷՉԵԱՆԻ ԵՐԳԱՀԱՆԴԷՍԸ ՍԱՆ ՖՐԱՆՍԻՍԿՈՅԻ ՄԷՋ

*Սա*ն Ֆրանսիսքոյի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, Ցուլիս 19ին տեղի ունեցած է Սալբի Քէլէչեանի երգահանդէսը, կազմակերպութեամբ հոգաբարձութեան: Լիբանանահայ արուեստագէտուհին ներկայացուցած է հոգեւոր եւ ազգային - հայրենասիրական երգերու փունջ մը: Գնահատանքի խօսքով հանդէս եկած է առաջնորդ Մուշեղ Արք. Մարտիրոսեան, յիշատակի նուէր մը յանձնելով երգչուհիին:

***

ԻՐԱՆԱՀԱՅ ՏԱՐԱԶՆԵՐՈՒ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ

*Կ*լենտէյլի «Ալեքս» թատերասրահին մէջ Ցուլիս 18ին տեղի ունեցած է իրանահայ տարազներու ցուցադրութիւն մը: Բացման խօսքով հանդէս եկած է Րաֆֆի Սարեան: Ցուցադրուած են Պարսկաստանի հայաբնակ գաւառներէ եւ քաղաքներէ աւելի քան 35 տարազներ, խօսքի եւ երաժշտութեան առընթեր, ուղեկցութեամբ նաեւ իւրաքանչիւր տարազի բնոյթն ու նկարագիրը եւ չրջանի պատմութիւնը: Ձեռնարկը բեմադրած է Մակի Քասապեան:

***

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ ԽԱՂԵՐՈՒ ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ ԵՐԵԿՈՅԹԸ

*Կ*լենտէյլի «Գարուսէլ» ճաշարանին մէջ, Ցուլիս 21ին տեղի ունեցած է Հ.Մ.Ը.Մ.ի Նաւասարդեան 29րդ մարզախաղերու կազմակերպական աշխատանքներուն մասնակցած կամաւորներու գնահատանքի եւ երեկոյթը: Հանդիսութիւնը վարած է Րաֆֆի Իսբէնճեան: Հ.Մ.Ը.Մ.ի Շրջ. Դաստիարակչական Ցանձնախումբի ատենապետ Գրիգոր Մկրեան յայտարարած է Հ.Մ.Ը.Մ.ի կրթաթոչակներուն արժանացած այս տարուան քոյր-եղբայրներուն անունները: Շրջ. Վարչութեան խօսքը փոխանցած է ատենապետը՝ Վիգէն Դաւութեան: Խօսք առնելով Շրջ. Վարչութեան մօտ մարզական ներկայացուցիչ Վիգէն Աբելեան, յայտնած է թէ այս տարի մարզական խաղերուն մասնակցած են 270 խումբեր, տեղի ունեցած են 750 մըրցումներ, աւելի քան երեք հազար մարզիկ-մարզիկուհիներու մասնակցութեամբ: Ցունէրներ յանձնուած են մասնաճիւղերուն, իբրեւ գնահատանք:

***

ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ ԱՑՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԼՈՍ ԱՆՃԵԼԷՍ

Հայաստանի «Արդարութիւն դաչինք»ի

ՕՐԱԻԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՏ

ԹՈՒՐՔԻՈՑ ՕՏԱՐ ԿԱԼՈՒԱԾԱՏԷՐԸ

2003 Յուլիս 19ին Թուրքիոյ մէջ կիրակութեան դրուեցաւ օրէնք մը որ կը պիւրայնէր օտարահպատակներու կալուած վնելը երկրին 68 քաղաքներուն մէջ: Այդ թուականէն ի վեր 44 հազար 740 օտարականի կողմէ 273 միլիոն 408 հազար 392 քառ. մեթր տարածութեամբ կալուած գնուած է 68 երկրի քաղաքացիներուն կողմէ: Ատոր մէջ աւելի քան 269 հազար քառ. մեթր կը կազմեն առանձ չէնքի տարածքները:

Այս տուեալները կու գան կալուածագրութիւններու եւ քաղաստրի ընդհ. տնօրէնութեան օտարականներու բաժինէն: Վիճակագրութիւնը կը կրէ 2004 Յուլիս 14 թուականը: Նիւթը տեղ գտած է «Միլլիյէթ»ի Օգոստոս 16ի թիւին մէջ:

Հոն թուումը եղած է այն երկիրներուն որոնց քաղաքացիները հողեր գնած են Թուրքիայէն: Այդ երկիրներն են ԱՄՆ, Գերմանիան, Աւստրիան, Ադրբեջանը, Պելճիան, Դանիան, Ֆրանսան, Անգլիան, Իսրայէլը, Իրանը, Յունաստանը, Յորդանանը, եւլն.: Ուշագրաւ է որ ցանկին մէջ տեղ գտած են նախկին խորհ. շրջանակէն բազմաթիւ երկիրներ, ինչպէս՝ Ռուսաստան, Ղազախստան, Վրաստան, ապա՝ Ռումանիա, Չեխիա, Ալպանիա, Թիւրքմէնիստան:

Օտար կալուածատէրերու գլխաւոր խումբը կը կազմեն Յոյները, 33% համեմատութեամբ: 14 հազար 418 Յոյն այսօր Թուրքոյ մէջ տէր է 12 հազար 535 կալուածի: Այդ կալուածները գլխաւորաբար Պոլիս, Իզմիր, Պուրսա կը գտնուին: Իրենց կը յաջորդեն Գերմանացիները որոնք 11 հազար 27 կալուած գնած են: Աւտնցմէ ետք կու գան Սուրիան, Անգլիան, Աւստրիան, Հոլանտան, Ֆրանսան, Պելճիան, Իտալիան եւ Կիպրոսի Թրքական բաժինը:

Նիւթին ընկերացած է թուանշաններով ցուցակ մըն ալ. ցանկը կայ 68 Թրքական քաղաքի ուր օտարհպատակները կալուածատէր են: Նախընտրութեան մէջ առաջին գիրքը կը գրաւէ Պոլիսը ուր 9583 կալուած օտարականներու կը պատկանի: Ատոնց ընդհանուր մակերեսը կ'ընէ աւելի քան հինգ միլիոն քառ. մեթր: Յաջորդ նախընտրելին Անթալիա քաղաքն է, չատ հասկնալի այն պատճառով որ միջերկրականեան ծանօթ զբօսավայր է: Այս մէկին ալ ունի 7293 օտար կալուածատէր: Իսկ երրորդ դիրքի վրայ կու գայ Պուրսան, ապա Իզմիրը: Յոյները կալուած գնած են 26 քաղաքի մէջ: Կ'ըսուի թէ անոնց մեծ մասը ծագումով Թուրքեր են:


Անշուշտ աւելորդ է տրուած ցանկին մէջ Հայաստանի քաղաքացիներ փնտռել: Զարմանալի կերպով օտար կալուածատէրերու ընտրած 68 Թրքական քաղաքներու ցանկէն ալ բացակայ են Մուշը, Վանը: Կարսը ունի 12 օտար կալուածատէր, Արտահանը մէկ, Իգդիրը 6, եւլն.:

ՆՈՑԵԱՆ ՍԱՌՆԱՐԱՆԸ

Երկրագունտին վրայ տպրող միլիոնաւոր կենդանական տեսակներէն ամէն չաբաթ հարիւրաւորներ կ'անհետանան: Այս հոլովոյթին արագացումէն մտահոգ գիտնականներ Նոյեան տապանին ներշնչուելով Նոյեան սառնարանի մը գաղափարը յղացած են: Ծրագիրը կը նախատեսէ կենդանական սպառող տեսակներուն ձիւները եւ հիւակէնները պահ տալ այդ սառնարանին ու սառեցնելու միջոցով պահպանել անհետանալու վտանգին ենթակայ տեսակները համասերելու կարելիութիւնը:

Նախաձեռնարկ գիտնականները մաս կը կազմեն Լոնտոնի բնութեան պատմութեան թանգարանին, կենդանաբանական միութեան, Նոթինկհամի համալսարանին: Առաջին նկատի առնուածները աւելի քան հազար ստնաւորներու տեսակներ են, նոյնքան մըն ալ թռչնապղինձներ, սողուններ, միջատներ: Նոյեան սառնարանին չնորհիւ այդ բոլորին սառած վիճակով պահուելիք ձիւները, հիւակէնները մարդկութեան կարելիութիւն պիտի տան օր մը համասերումի ճամբով վերստեղծելու այդ կենդանիներուն նմոյշները: Սառնարան դրուելու նախապատուութիւն պիտի տրուի այն տեսակներուն որոնց անհետացման սպառնալիքը խնդրոյ առարկայ է յառաջիկայ հինգ տարուան ընթացքին:

«Սառուցեալ տապան» անուանուած կոմիտէին նախագահը ըսած է թէ եթէ Նոյ նահապետը տեղեակ ըլլար իրենց ծրագրին, հպարտութիւն կը զգար:



ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏԻ ՑՈՒՑԱԴՐՈՒԹԻՒՆ ԼՈՆՏՈՆԻ(*) ՄԷՋ

Հայկական ձեռագիրներու, գիրքերու, փայտի փորագրութեան, սրբանկարներու ցուցադրութիւն մը տեղի պիտի ունենայ Լոնտոնի մէջ, Սեպտեմբեր 23 - Հոկտեմբեր 15: Ցուցադրելի նմոյշները կը պատկանին Ժբ. - Ժը. դարերուն: Բացումը կը կատարուի Հայաստանի անկախութեան տարեդարձին օրը, դեսպան Վահէ Գաբրիէլեանի ներկայութեան: Նախաձեռնարկն է Սամ Ֆոկ ընկերութիւնը:

(*) 15d Clifford st., London W1S4JZ

ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ

ՊԻՒՖԱՑԱՅԻ (Անթիլիաս) Սուրբ Աստուածածնի վանքի ուխտի օրուան առթիւ Օգոստոս 13ին հոգեւոր երգերու համերգ մը տեղի ունեցած է. մասնակցած են Շաքէ Պաղտասարեան, Մանուկ Մինասեան եւ Սալբի Քէլէչեան: Նոյն օրուան առթիւ կաթողիկոսարանի երիտասարդական բաժանմունքն ալ կազմակերպած է ուխտադնացութիւն - քայլարշաւ մը Անթիլիասէն Պիքֆայա:

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ

ԹՈՓԻՍ

■

Մայրը նամակ է գրում ուսանող որդուն.

«Թանկագին տղաս: Ծրարի մէջ դնում եմ 2000 դրամ, ինչպէս խնդրել էիր: Ի դէպ, մէկընդմիշտ յիշիր, որ 2000ը գրւում է երեք զրոյով, այլ ոչ թէ չորսով»:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԻԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԼԸՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

·ՀԷՅ վաք-անտաշլար... էվէք, պու կիւն միլլէթիմիզ վէ վաք-անըմըզ... հիւրիյէթին կիւնէշին ալքընտա... Մուհասապար պիր կիւն տիր... Եաշասըն կազիլեր... էրնէնի վաք-անտաշլար... չօք եաշասըն...

·Քարափօճի անքի էէ միա պիռա...

·Միչօ, միչօ...

·Ամէսոս...

·Տիւզիէօ...

·էֆտաֆսէ... հօքլէս...

·Համբարձում, նաղարան...

·ԷՀԷՀԷՀ՛՛՛ աթէշտան ճան բուրքարան էյրմէնի քաքրիհիանէլի հէ՛յ...

Ու պինեասուններ, լաթէրնա... Նոր նշանակներ: Լաթէրնաներըը զարդարուած են կարմիր ու ճերմակ ժապաւէններով, ծաղիկներով, փետուրներով, պատկերով, «օձաքօն», գունաւոր թիթեղ, ոսկի գլխիներ, թաւիչ, կապոյտ ուլունք, տանթէլ, «քարէ բօսթալ»: Ու տեղացիներ, օղի, օղի, օղի: Գինուվներ: Երկայնահասակ լաթէրնաճի մը, կարճահասակ լաթէրնաճի մը: Գինով մը կը կանչէ զանոնք: Մէյ մէկ օղի: Անոնց ափին մէջ դրամ:

·Մինչեւ Թաքսիմ...

Ու երկայնահասակը կը չարկէ լաթէրնան: Կարճահասակը կը դարձնէ: Եղաւ նակը՝ «Եաշասըն հիւրիյէթ»: Ճամբայ կէն բազմաթիւ երկիրներ, ինչպէս՝ Ռուսաստան, Ղազախստան, Վրաստան, ապա՝ Ռումանիա, Չեխիա, Ալպանիա, Թիւրքմէնիստան:

Օտար կալուածատէրերու գլխաւոր խումբը կը կազմեն Յոյները, 33% համեմատութեամբ: 14 հազար 418 Յոյն այսօր Թուրքոյ մէջ տէր է 12 հազար 535 կալուածի: Այդ կալուածները գլխաւորաբար Պոլիս, Իզմիր, Պուրսա կը գտնուին: Իրենց կը յաջորդեն Գերմանացիները որոնք 11 հազար 27 կալուած գնած են: Աւտնցմէ ետք կու գան Սուրիան, Անգլիան, Աւստրիան, Հոլանտան, Ֆրանսան, Պելճիան, Իտալիան եւ Կիպրոսի Թրքական բաժինը:

Նիւթին ընկերացած է թուանշաններով ցուցակ մըն ալ. ցանկը կայ 68 Թրքական քաղաքի ուր օտարհպատակները կալուածատէր են: Նախընտրութեան մէջ առաջին գիրքը կը գրաւէ Պոլիսը ուր 9583 կալուած օտարականներու կը պատկանի: Ատոնց ընդհանուր մակերեսը կ'ընէ աւելի քան հինգ միլիոն քառ. մեթր: Յաջորդ նախընտրելին Անթալիա քաղաքն է, չատ հասկնալի այն պատճառով որ միջերկրականեան ծանօթ զբօսավայր է: Այս մէկին ալ ունի 7293 օտար կալուածատէր: Իսկ երրորդ դիրքի վրայ կու գայ Պուրսան, ապա Իզմիրը: Յոյները կալուած գնած են 26 քաղաքի մէջ: Կ'ըսուի թէ անոնց մեծ մասը ծագումով Թուրքեր են:

Անշուշտ աւելորդ է տրուած ցանկին մէջ Հայաստանի քաղաքացիներ փնտռել: Զարմանալի կերպով օտար կալուածատէրերու ընտրած 68 Թրքական քաղաքներու ցանկէն ալ բացակայ են Մուշը, Վանը: Կարսը ունի 12 օտար կալուածատէր, Արտահանը մէկ, Իգդիրը 6, եւլն.:

ՆՈՑԵԱՆ ՍԱՌՆԱՐԱՆԸ

Երկրագունտին վրայ տպրող միլիոնաւոր կենդանական տեսակներէն ամէն չաբաթ հարիւրաւորներ կ'անհետանան: Այս հոլովոյթին արագացումէն մտահոգ գիտնականներ Նոյեան տապանին ներշնչուելով Նոյեան սառնարանի մը գաղափարը յղացած են: Ծրագիրը կը նախատեսէ կենդանական սպառող տեսակներուն ձիւները եւ հիւակէնները պահ տալ այդ սառնարանին ու սառեցնելու միջոցով պահպանել անհետանալու վտանգին ենթակայ տեսակները համասերելու կարելիութիւնը:

Նախաձեռնարկ գիտնականները մաս կը կազմեն Լոնտոնի բնութեան պատմութեան թանգարանին, կենդանաբանական միութեան, Նոթինկհամի համալսարանին: Առաջին նկատի առնուածները աւելի քան հազար ստնաւորներու տեսակներ են, նոյնքան մըն ալ թռչնապղինձներ, սողուններ, միջատներ: Նոյեան սառնարանին չնորհիւ այդ բոլորին սառած վիճակով պահուելիք ձիւները, հիւակէնները մարդկութեան կարելիութիւն պիտի տան օր մը համասերումի ճամբով վերստեղծելու այդ կենդանիներուն նմոյշները: Սառնարան դրուելու նախապատուութիւն պիտի տրուի այն տեսակներուն որոնց անհետացման սպառնալիքը խնդրոյ առարկայ է յառաջիկայ հինգ տարուան ընթացքին:

«Սառուցեալ տապան» անուանուած կոմիտէին նախագահը ըսած է թէ եթէ Նոյ նահապետը տեղեակ ըլլար իրենց ծրագրին, հպարտութիւն կը զգար:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԻԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԼԸՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

·ՀԷՅ վաք-անտաշլար... էվէք, պու կիւն միլլէթիմիզ վէ վաք-անըմըզ... հիւրիյէթին կիւնէշին ալքընտա... Մուհասապար պիր կիւն տիր... Եաշասըն կազիլեր... էրնէնի վաք-անտաշլար... չօք եաշասըն...

·Քարափօճի անքի էէ միա պիռա...

·Միչօ, միչօ...

·Ամէսոս...

·Տիւզիէօ...

·էֆտաֆսէ... հօքլէս...

·Համբարձում, նաղարան...

·ԷՀԷՀԷՀ՛՛՛ աթէշտան ճան բուրքարան էյրմէնի քաքրիհիանէլի հէ՛յ...

Ու պինեասուններ, լաթէրնա... Նոր նշանակներ: Լաթէրնաներըը զարդարուած են կարմիր ու ճերմակ ժապաւէններով, ծաղիկներով, փետուրներով, պատկերով, «օձաքօն», գունաւոր թիթեղ, ոսկի գլխիներ, թաւիչ, կապոյտ ուլունք, տանթէլ, «քարէ բօսթալ»: Ու տեղացիներ, օղի, օղի, օղի: Գինուվներ: Երկայնահասակ լաթէրնաճի մը, կարճահասակ լաթէրնաճի մը: Գինով մը կը կանչէ զանոնք: Մէյ մէկ օղի: Անոնց ափին մէջ դրամ:

·Մինչեւ Թաքսիմ...

Ու երկայնահասակը կը չարկէ լաթէրնան: Կարճահասակը կը դարձնէ: Եղաւ նակը՝ «Եաշասըն հիւրիյէթ»: Ճամբայ

ղեկավար Ստեփան Դեմիրճեան այցելած է Լոս Անճըլըս, ուր Յուլիս 20ին մամուլի ասուլիս մը տուած է «Հիլթըն» պանդոկին մէջ: Ներկայ եղած են հայկական եւ ամերիկեան մամուլի բազմաթիւ ներկայացուցիչներ: Բացումը կատարած է «Արդարութիւն դաշինք»ի Լոս Անճըլըսի գրասենեակի պատասխանատուներէն Զօրայր Ղազարեան: Ստեփան Դեմիրճեան չնորհակալութիւն յայտնած է բոլոր անոնց, որոնք 2003ի նախագահական ընտրութիւններուն իրենց ձայները տուած էին իրեն: Ապա պատասխանած է բազմաթիւ հարցումներու՝ Հայաստանի մէջ տիրող կառավարութեան, Դեմիրճեան-Գեղամեան յարաբերութիւններուն, Սահմանադրութեան վերանայման, երկքաղաքացիութեան, Հայաստան-Սփիւռք յարաբերութիւններուն վերաբերեալ:

***

ԹՈՂՈՎՐԴԱՑԻՆ ՀԱԽԱՌՈՑԹ
Ի ՊԱՏԻՒ ՍՏԵՓԱՆ ԴԵՄԻՐՃԵԱՆԻ

Կլէնտէյլի «Վէրտուկօ Գլասթ»ի մէջ, Յուլիս 21ին տեղի ունեցած է ժողովրդային հաւաքոյթ մը, ի պատիւ Ստեփան Դեմիրճեանի: Ներկայ եղած են աւելի քան 500 հոգի: Հայրենի հիւրը խօսած է Հայաստանի խաղաղ ցոյցերու մասին, որոնց ընթացքին իշխանութիւնները բռնարարքներ գործադրեցին եւ ձերբակալութիւններ կատարեցին: Ապա, ան պատասխանած է բազմաթիւ հարցումներու:

Նոյն օրը, երեկոյեան, Ս. Դ. Հ. Կուսակցութիւնը Փասատինայի իր կեդրոնին մէջ ընդունելութիւն մը տուած է ի պատիւ Ստեփան Դեմիրճեանի: Բացման իր խօսքին մէջ Գաբրիէլ Մոլոյեան չեշտած է, որ «թէեւ Ստեփան Դեմիրճեան յաղթած էր նախագահական ընտրութեանց մէջ, սակայն, մենք այսօր կ'ընդունինք յաջորդ նախագահը»:

ԼՐԱՏՈՒ

ԾԱՌԱՁ

Մաղաքեան այս իրադարձման եւ ուրախութեան մէջ կորսնցուց իր երկրորդ աղջիկը:

Տունը մտաւ խորունկ տուժերու մէջ: Մաղաքեան կորսնցուցած էր ինքզինքը: Տիկ. Մաղաքեան կմախացած էր իր վիշտէն ու տառապանքներէն: Տիկ. Նուարդ չէր կրնար, այս պայմաններուն մէջ, խօսիլ Մաղաքեանին հետ՝ էօժէնիին ու Պաթիատին համար: Գրիգորն էր որ կը վարէր Մաղաքեանի ամբողջ գործը:

Ձմեռը անկողին ինկաւ տիկ. Մաղաքեան: Իրիկուն մը անկողնին մէջէն լսեց բուի մը ձայնը: Ճչաց իր մահուան գիտակցութիւնով: Հազիւ ամիս մը անցած մեռաւ: Մաղաքեան բոլորովին ինկաւ ֆիզիքապէս: Աղէտ մը կը չրջէր այս դերդաստանին մէջ: Ու կրկնակ տուժերու մէջ, հեռագիր մը ստացան «Քօրու»էն: «Էօժէնի ծանր հիւանդ է, պէտք է որ գաք»: Անտոն վազեց, խենթեցած, յուզումներու մէջ խեղդուած:

Էօժէնի թաղուած էր: Ան մեռած էր հիւծախտէ: Անտոն ետ դարձաւ, գրեթէ կիսախելագար վիճակի մէջ: Տիկ. Նուարդ ամէն օ արցունք թափեց, ողբաց ու տղայ իր սիրելիներուն համար: Գրիգոր աստղը երթալով կը փայլէր: Ան չքեղութեան, հաճոյքի մէջ էր, գրեթէ անզգայ իր չուրջը կատարուող տրամներուն:

Քիչ յետոյ հիւանդացաւ նաեւ Մաղաքեան: Յարմար դատուեցաւ գինը հիւանդանոց դնել: Մահը գոյն ալ գարկաւ:

Գործատունը մնաց Մաղաքեանի գաւկին ու Գրիգորին: Ընկեր եղան: Ու Գրիգոր սկսաւ անխղճօրէն կողոպտել: Շահայրութիւններ, մսխումներ, մեծ ծախսեր, օգափոխութիւններ: Ու երբեք չխորհեցաւ նոյնիսկ պզտիկ չափով մը օգնութեան հասնիլ հօրը՝ Անտոնին որ կը տուայտէր ձախորդութիւններու մէջ:

Գրիգոր իր վերելքին մէջ բոլորը մոռցաւ, բոլորը ուրացաւ: Իր եաը գլխած կանգնած էր, չատ անգամ նոյնիսկ խօսք մը, բարեւ մը ղլանալով իր նախկին բարեկամներու, որոնք իր անկումի օրերուն իսկ չէին լքած գինը: Պարտականութեան ո՛չ մէկ պզտիկ գործ իր մէջ հանդիսաւ իր եղբայրներուն, իր մայրիկին, ընկերներուն: Իրմէ դուրս ամէն բան պզտիկ, անտաչ, ծիծաղելի, խեղճ, ցաւագար դատաւ Ջաւակ մը ունեցաւ: Կարծեց որ անիկա պիտի ըլլայ Հայոց Թագաւորը:

Աչխարհի վրայ ինք կար ու իր գաւակը: Իր մէջ հին, քնացած ոգին արթնցաւ: Անիկա արհամարհեց իր ազգը, անոր ուրախութիւնները, տառապանքները: Ոչ մէկ կերպով հաղորդուեցաւ: Օտար, բարձր դասու ընտանիքներու մէջ մտաւ ու ստիպեց իր կինը որ հետեւի իր օրինակին:

(Շար. 99)

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՄԱՐՍԷՅԼ. - Թագ-Թորգոմ Պօղոսեանի յիշատակին «Յառաջ»ին կը նուիրեն.. Տիկին Աստղիկ Պօղոսեան 1000 Եւրօ, Տէր եւ Տիկին Տարօն Պօղոսեան եւ Laboratoire A.C.I. 500ական Եւրօ, Տէր եւ Տիկին Ա. Տէր Պօղոսեան եւ Մարսէյլի Հայ Մշակոյթի Տան Վարչութիւն 200ական Եւրօ, Տէր եւ Տիկին Կարօ Յովսէփեան 50 Եւրօ, Օր. Մարի Պէրպէրեան 30 Եւրօ:

(Շար. Ա. էջէն)

ճամբան է հաչտեցնելու համար հանրաքուէով ընտրուած նախագահի մը գոյութիւնը եւ կարեւոր իրաւասութիւններ ունեցող Խորհրդարան մը:

ՓԵՐՈՒԻ մէջ, Ապրիլէն ի վեր, 73 երախաներ ցուրտէն մեռած են, աւելի քան 4000 մեթր բարձրութեան վրայ, ուր ասիճանը զերոյէն վար 25 էր:

VOLS DIRECTS
ARMÉNIE
• SÉJOUR À LA CARTE
• VOYAGES ORGANISÉS
Paris→Erevan→Paris
3 Vols Hebdos Juillet
4 Vols Hebdos Août
3 Vols Hebdos Septembre
SABERATOURS
→ 11, RUE DES PYRAMIDES 75001 PARIS
TEL 01 42 96 10 10 - FAX 01 42 96 18 77
saberatours@selectour.com
SEVAN VOYAGES
→ 48, COURS DE LA LIBERTÉ 69003 LYON
TEL 04 78 60 13 66 - FAX 04 78 60 92 26
sevan@selectour.com
WASTEELS VOYAGES
→ 67, LA CANNEBIÈRE 13001 MARSEILLE
TEL 04 95 09 30 60 - FAX 04 95 09 30 61
marseille@wasteels.fr
EREVAN
→ 32-38, RUE HANRABEDOUTIAN EREVAN
TEL 52 55 55 - FAX 56 40 30
sabera@arminco.com
CARGO 3 VOLS HEBDOS
EN COLLABORATION AVEC LA NOUVELLE COMPAGNIE AÉRIENNE ARMENIAN INTERNATIONAL AIRWAYS
ÉTÉ 2004

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ՇԱՒԻԼ ՍԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Պատարագները կանոնաւոր ձեւով կը վերսկսին Կիրակի, Օգոստոս 29ին:

***

Շաւիլի «Վեհն Շանթ» գպրոցի վերաբացումը տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, Սեպտեմբեր 8, ժամը 9ին:

Արձանագրութեան համար դիմել եկեղեցւոյ վարչութեան

Eglise Arménienne
St Grégoire l'Illuminateur
6 rue Père Komitas 92370 CHAVILLE
Tél. : 01. 47. 09. 23. 18.

Rentrée des classes

Les inscriptions pour l'année 2004/05 à l'école hebdomadaire «Siamanto» de Bagneux auront lieu :
le mercredi 15 septembre à 15 heures
à l'école Henri Wallon,
2 avenue de Stalingrad à Bagneux
Au cours de ces inscriptions, une réunion conviviale aura lieu, comme chaque année, sur le déroulement de la nouvelle année scolaire.
Les cours commenceront le mercredi suivant -22 septembre : le matin pour les plus jeunes enfants -environ 5 à 10 ans-, et l'après-midi pour les adolescents jusqu'au baccalauréat et les enfants au dessus de 10 ans.
Pour tout renseignement :
— Mme Lucie Dossikian: 01 45 46 10 11
— Mme Elisabeth Davidian:
01 46 65 81 53



Date à retenir

Grande Braderie de Chene

les 4 et 5 décembre
CHENE FRANCE

100-ԱՄԵԱԿ
Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ

Այս Առթիւ, երախտագէտ ապրումներով կը Տանուցանենք մեր եկեղեցւոյ զաւակներուն թէ՝

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 3-ին
Փարիզի Սուրբ Յովհաննէս - Մկրտիչ Մայր Տաճարին մէջ
Պատարագի մատուցմամբ յատուկ Գոհաբանական Աղօթք պիտի ըլլայ
Մայր Տաճարի եկեղեցաչէն բարերարին՝
ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆԻ ու
ՄԱՆԹԱՇԵԱՆ ԸՆՏԱՆԻՔԻՆ,
Տաճարին Օծումը կատարող՝ Մանչէսթէրի Եւրոպայի Հայրապետական Պատուիրակ
ԳԷՈՐԳ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԻՒԹԻՒՃԵԱՆԻ,
ՎՌԱՄՇԱՊՈՒՀ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԻՊԱՐԵԱՆԻ, *ի Տանէ Արջուվենցի,*
նաեւ կառուցումէն ի վեր
Մայր Տաճարի Բարերարներուն Համար:
Ցաւարտ այս արտայայտութիւններուն,
կը հրաւիրուին ամէնքը մասնակից դառնալ Սիրոյ Սեղանին՝
Մատաղի բաժնեկցութեամբ:

●

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2-ին
նախատեսուած են
ԿԱԼԱ մը եւ Ընդունելութիւն մը
Սալ Կաւոյի Սրահներուն մէջ,
ժամը 16-էն 22·30
կը թելադրուի նախօրօք ապահովել տոմսերը

ՀԱՅՈՑ ԽԱՉ

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— **PARIS**
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19

— **ARNOUVILLE**
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73

— **ISSY-LES-MOULINEAUX**
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25
(le soir)

— **SEVRAN**
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76

— **VALENCE**
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99
(l'après-midi)
MCA : 04 75 55 12 49

— **DECINES**
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97

— **GRENOBLE**
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43

— **ST MAURICE DE BEYNOST**
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07

— **VIENNE**
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80

— **MARSEILLE-VILLE**
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66
(le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեղի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն:

***

ՓԱՐԻԶԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին
17 rue Pleyel 93210 Saint-Denis - Մեթրօ Գատէ
Մանկապարտէզ 4 տարեկանէն սկսեալ
(կը խնդրուի արագօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ).
+ CPEն մինչեւ Պաքալօրէա, նաեւ չափահասներու դասարան:
Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, Երգ, Թատրոն, Պար:
Հեռաձայնել Օդուստոսին՝
- Արաքսի Գասպարեանի՝
01·39·83·71·19

***

La Section «Lola Sassouni»
de Marseille
organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— Restaurant tous les soirs et piqueniques assurés.
— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).
Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne
tout compris, visa inclus
hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐԾ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵԻ ԺԱՄԵՐ 16€

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 13€
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 12€
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 12€
եւ
«ՅԱՌԱՋ - 50»
(Տաղկախաղ 50-ամեայ հաւաքածոյէն) 19€

Գիրքը «ՅԱՌԱՋ»ի:
Թղթատարի ծախքը՝ 6 €, հատոր մը միայն:

ԵՐԵՔՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 24
MARDI
24 AOUT
2004

LE NUMERO: 1 €

ՀԱՅՐԱՍԱՆՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 230 եւրօ — Վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար· 270 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
247 եւրօ (Շաբաթաթերթի առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

80ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·008 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 80e ANNEE — N° 21·008

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐԸ

Ի Ր Ա Կ

ՇՓՈԹ ԿԱՑՈՒԹԻՒՆ ՆԱՃԱՖԻ ՄԷՋ

ՖՐԱՆՍԱՑԻ ԵՐԿՈՒ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ ԱՆՀԵՏԱՑԱԾ

Ֆրանսացի երկու լրագրողները, մէկը ֆիկառոյի Թղթակիցը Ժորժ Մալպրիւնօ, միւսն ալ Ռատիօ-Ֆրանս էնթէրնասիոնալի աշխատակիցը՝ Քրիսթիան Շէնօ անհետացած են Պաղտատէն Նաճաֆ ճամբուն վրայ, Ուրբաթ, Օգոստոս 20էն ի վեր: Երկուքն ալ վաղ առաւօտեան ճամբայ ելած էին իրաքցի վարորդի մը հետ Մոքթատա ալ-Սաարի բերդաքաղաքը երթալու համար: Ամէնէն հաւանական վարկածը առեւանգումի կը վերաբերի: Դիմում եղած է Շիրաքի որպէսզի միջամտէ:

Միւս կողմէ, Նաճաֆի մէջ կացութիւնը ծանրակշիռ է եւ չփոթ: Բուռն բախում ներ ծագած են Կիրակի օր, Օգոստոս 22ին, մզկիթին չուրջ, ամերիկեան ռմբակոծութիւններէն եաք չիմներու դիրքերուն վրայ: Ամերիկացիներու ռումբերը, Օգոստոս 21էն 22ի գիշերը, խնկած են մզկիթին չուրջ: Օգոստոս 23ին ալ թէ ռումբերը կը տեղային, թէ բախումները կը շարունակուէին: Այս բախումները ծագած են երբ Մոքթատա ալ-Սաարի բանբերը յայտարարած է որ կ'առկախուի մզկիթին փոխանցումը մեծ այաթոլա Ալի Սիսթանիի: Ծանօթ է որ չիի դինուորեալներու դրաւած (հինգ ամիս է) մզկիթը պէտք է Սիսթանիի յանձնուէր, բայց առկախման պատճառը կը վերաբերի մզկիթին ինչքերուն արժէքի գնահատման: Փոխանցման չրջանի կառավարութիւնը որէկ ի վեր կը պահանջէ որ դինուորեալները հեռանան եւ զինաթափ ըլլան: Հաւանակ պարագային դինուորական գործողութեան մը սպառնալիքը կայ: Այաթոլա Սիսթանի, որ չիիներու խորհրդանշական դէմքն է, համաձայնած է որ մզկիթը իրեն յանձնուի, բայց նախ կ'ուզէ վստահ ըլլալ որ Մահտիի բանակին դինուորեալները թարանի տուած չըլլան մզկիթը հինգ ամիսներու գրաւման չրջանին:

Պաղտատի հիւսիսն ալ, Պաքուպա, սիննի մեծամասնութեամբ գաւառի մը փոխ կառավարիչը մահափորձէ մը ազատած է: Թակարդ կառքի մը պայթումէն երկու հոգի մեռած է, քսանիքսանէն աւելի մաքուր կ'ըլլայ, երբ այլեւս Հրեայ չըլլայ», «Մա՛հ Հրեաներուն», «Աչխարհ առանց Հրեաներուն աւելի երջանիկ կ'ըլլայ», եւլն., եւլն.: Արձանագրութիւնները ոչ միայն ազգապրական բազմաթիւ սխալներով գրուած են, կան նաեւ կեղ խաչեր: Հրեայ համայնքը վախի մէջ է եւ մեծ ռումբունին՝ Զաֆրան չի ծածկեր իր մտավախութիւնը եւ կը պահանջէ որ վերջ տրուի այս արարքներուն:

ՖՐԱՆՃԻ - ԱՆ - ՊՐԻՍԻ (Սան-է-Լուառ) Վարդի 32րդ տօնին առթիւ, գլխաւոր հիւրը եղած է ձէք Լանկ: Ինք եւ Արնօ Մոնթեբուր համաձայն են որ 2007ին, անհրաժեշտ է վարչակարգի փոփոխութիւն մը եւ երկուքն ալ կը պատրաստուին Երդ Հանրապետութիւնը: Մոնթեբուր իր ելոյթին մէջ խօսքն ուղղելով Լանկի, չեշտած է.- «Զախը քեզի պէտք ունի խռովելու համար անչարժ փիղերուն ճնշող չուրջպարը: Շնորհիւ քեզի, Երդ Հանրապետութեան արդիլուած վիճարկումները կը դադրին արդիլուելէ»: Լանկ դեռ թեկնածու չէ թեկնածութեան, նախ կ'ուզէ քաղաքական ծրագիրը հրապարակել: Իր ելոյթին մէկ երեսփոխանը ինք ալ կը հաստատէ որ որքան կը դժուարացնեն Շրանի կեանքը, այնքան աւելի զօրավիզ են իրեն ԱՄՆ: Դեռ կ'աւելցնէ.- «Գաղթավայրեր կը չինենք, որովհետեւ Երուսաղէմ վարչապետ մը եւ Ռաչինկէքըն նախագահ մը կը պայքարին իրենց քաղաքական վերապրումին համար, բայց ինչ որ Պուշ չի պիտեր, այն է որ ամերիկացի Հրեաներու մեծամասնութիւնը դէմ է այդ գաղթավայրերու քաղաքականութեան»:

ՄՈՆՄՈՐԻՕՆԻ (Վիչնի նահանգ) մէջ է ,որ Ժան-Փիէր Ռաֆարէն յայտարարած է որ թեկնածու է Ծերակուտական ընտրութեան, ճշդելով թէ ընտրութիւնը պարագային ալ միաք չունի Ծերակուտականի աթոռը գրաւելու, քանի կը մնայ նախարարապետ: Ընդդիմութիւնն ալ բաւական հակասական կը գտնէ վարչապետին յայտարարութիւնը, համոզուած մնալով որ Ռաֆարէնի յաղորդութիւնը կը պատրաստուի եւ թէ վերամուտի դիզուած թղթածրարներէն առաջ իր մասին կը մտածէ:

ՕՍԼՕՑԻ Միւնչ թանգարանէն, Օգոստոս 22ի առաւօտուն զողցուած է Միւնչի ամէնէն կարեւոր եւ համբաւաւոր պատառներէն մէկը՝ Սքրիք (Աղաղակը), որ ըստ ոմանց 50 միլիոն Եւրօ կը գնահատուի: Երկու-երեք հոգի, ծպտուած եւ սեւ հագուած, որոնցմէ մէկը զինուած, թանգարան մտած են բացումէն քիչ եաք, ժամը 11ի չուրջ, սպառնալով պահակներուն եւ այցելուներուն եւ առած տարած

(Շար·ը Դ· էջ)

ՄԱՄՈՒԼ

«ԻՀԹ»

(Օգոստոս 20)

ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆԸ

«Ինքերնիշընըլ Հերըլտ Թրիպիւն» թերթին Օգոստոս 20ի թիւին մէջ ձէյ Պուչինկի «Պատմութեան սրտաբեկիչ իրականութեան դէմ» խորագրով էջ մը ստորագրած է ուր նիւթ կ'ընէ հայկական ցեղասպանութեան Իսրայէլի ու Թուրքիոյ կողմէ ընդունուած չըլլալու պարագան: Կը դրէ թէ 1930ին Ֆ· Վէրֆէլ Երուսաղէմ այցին հայ կօչկակարի մը հանդիպած էր ու այդ հանդիպումը զարմանք պատճառած էր իրեն. Ի՞նչ գործ ունէին Հայերը աշխարհի այդ կողմերը: Ան վերապրող մըն է ու այդ նշումը կը կապուի 1915ին:

Պուչինկի կը յիշէ Հիթլէրի ծանօթ խօսքը թէ «այսօր ո՞վ կը յիշէ Հայերու բնաջնջումը»: Այս հռետորական արտայայտութիւնը որ պաշտօնական բնագիրներու մէջ տեղ չէ գտած, արձանագրուած է Ուաչինկթընի Ողջակէզի յուշակոթողին պատերէն մէկուն վրայ:

Անդրադառնալով Իսրայէլի դիրքին, Պուչինկի կը դրէ թէ այդ երկիրը ժամանակակից առաջնահերթութիւնները յարդելով երկրորդ դիրքի կը ձգէ բարոյական պարտաւորութիւնները, թրքական նրբազգածութիւնները յարգելով կը գծէ արտաքին քաղաքականութեան ուղեծիրը:

Գրութիւնը կ'աւարտի ըսելով որ Հրեաները, սիոնականները եւ անոնց զօրակիցները պէտք է ցաւակից ըլլան Հայերուն, իսկ Թուրքերը ընդունին տուեալները, փոխանակ չարունակելու պնդել թէ նման բան պատահած չէ երբեք:

***

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ՂԱՐԱԲԱՂԻ ՒՐԱՄԻՆ

«Էֆոնմիսթ» շաբաթաթերթը վերջին թիւին մէջ (Օգոստոս 21) դրութեամբ մը նիւթ ըրած է կովկասեան հակամարտութիւնները որոնք սառած վիճակի մէջ են ներկայիս· կը յիշուին Օսէթիոյ, Աբխազիոյ եւ Ղարաբաղի հարցերը: Վերջինին մասին կ'ըսուի թէ ամէնէն մօտիկն է բանակցութեան ընկերութիւն մը ձեւաւորելու յաջողութեան: Յատկապէս 2001էն ի վեր (Սամուէլ Բաբայեանի ձերբակալութենէն) նշմարելի է տեղական քաղաքականութիւն մը եւ խառն անտեսութեան մը կիրարկումը, Սփիւռքէն Հայերու նպատակի ներդրումով: Մայրաքաղաքին՝ Ստեփանակերտի մէջ մթնոլորտը յետխորհրդային բնականոն ընթացք մը ցոյց կու տայ, քաղաքային վիճակ չկայ:

Թերթը անդրադառնալով Հայաստանի մէջ տարուան սկիզբին արձանագրուած զարգացումներուն ալ, կ'ըսէ թէ սանձուած յեղափոխութիւն մըն էր անցած դարձածը: Ընդդիմութիւնը չյաջողեցաւ, քանի որ ինչպէս վրացական օրինակը, չկրցաւ համախմբուիլ միակ դէմքի մը չուրջ: Իրիտանցի մեկնաբանողներուն կարծիքով, ընդդիմութեան գործունէութիւնը նպատակին չհասնելով հանդերձ ակարացուց Ռ· Քոչարեանի դիրքը:

«ԿԻԼԻԿԻԱ»Ն ՀԱՅ ԿՂԶԻՒՆ ՋՈՒՐԵՐՈՒՆ ՎՐԱՅ

«Մարմարա» (Օգոստոս 21) կը տեղեկացնէ թէ «Կիլիկիա» առագաստանաւը նաւարկելով Պոլիս հասած է ու խարբսած Գնալը կղզիին ծովափը, մօտլու համար մինչեւ Օգոստոս 23: Թրքական ջուրերուն վրայ «Կիլիկիա»ն պարզած է հայկական եռագոյնին քով թրքական դրօշակը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ԱՐՄԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 21/23)

Ռ· ՔՈՉԱՐԵԱՆ – Վ.Վ· ՊՈՒՏԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՍՈՉԻԻ ՄԷՋ

Ինչպէս ծանուցուած էր, Օգոստոս 20ին Սոչիի մէջ տեղի ունեցած է Հայաստանի ու Ռուսաստանի նախագահներուն հանդիպումը: Նիւթ եղած են ապրանքի փոխանակումի, հայ ուսանողներու Ռուսաստանի դինուորական բարձրագոյն ուսումնական հաստատութիւններուն մէջ ուսանելու հարցերը, Կովկասի կացութեան բարելաւման համար երկու երկիրներու զուգահեռ ջանք տանելու հեռանկարը, եւլն·:

***

ՀԱՅԵԻԹՐՔԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ՎՐԱՑ ԱՆԱՄՆԱԳՈՂՈՒԹԵԱՆ ՓՈՐՁ

Օգոստոս 19ին Շիրակի Վերին Շէն սահմանային կէտին վրայ սահմանապահները կանխած են անասուններ Հայաստանէն Թուրքիա փոխադրելու փորձը: Ձերբակալուած են երեք Հայաստանցիներ ու յանձնուած Ներքին գործերու մարզային բաժնին: Վերջին տարիներուն Թուրքիոյ մէջ խոշոր եղջերաւոր անասուններուն բարձրացող գիները նման դէպքերու խթան կ'ըլլան: Տարուան սկիզբէն ի վեր 54 սահմանազանց ձերբակալուած եւ մօտ 350 հազար ռուբլի արժէքով մաքսանենգ ապրանք գրաւուած է: Այդ գօտիին մէջ ընդհանուր առմամբ հայ, թուրք եւ քիւրտ խմբակներ կը գրաւին մաքսանենգութեամբ:

***

Մ· ՉԱՐԻՖԵԱՆԻ 110ԱՄԵԱԿԸ

Մաթէոս Չարիֆեանի ծննդեան 110ամեակը նշուած է Օգոստոս 20ին, Չարենց գրականութեան եւ արուեստի թանգարանին մէջ: Ելոյթ ունեցած է Պոլսոյ «Մարմարա» օրաթերթի խմբագիր Ռ· Հատտէճեան որ «Մէկ ազգ, մէկ մշակոյթ» փառատօնին առթիւ երեւան կը գտնուի: Թանգարանին տնօրէնը Հենրիկ Բախչինեան ըսած է թէ Չարիֆեանի ձեռագիր նիւթերէն քանի մը էջ պահուած է իրենց մօտ եւ թէ ստեղծագործութեան ամբողջական մասը ունենալու պարագային պատրաստ են ակադեմական հրատարակութիւն մը կատարելու:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

Շաբաթաւերջին, Ֆրանսա գրալի կերպով բերաւաւեց իր դիրքը :Գլխաւոր յաղթանակը տարաւ դեղարուեստական մարմնամարզի կիներու բաժնի պառ ասիմեթրիֆ վարժութեան մէջ Էմիլի Լը Փէնէք (16 տարեկան): Ընդհանուր դասաւորման մէջ Զինաստան վերստանձնեց իր առաջին դիրքը 46 մետալով (22 ոսկի) ,իր ետին թողլով ԱՄՆ-ը: Ֆրանսա հինգերորդ է 23 մետալով (9 ոսկի):

ԱՐՁԱԿՈՒՐԴԷՆ ԴԱՐՁԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՋՐՈՅՑ ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ ՀԵՏ

Հ՟- Հայաստան այցելողներուն մեծ մասը խանդավառուելու նախապատրաստ հոգեվիճակով միայն վերելք, յառաջդիմութիւն կը նշմարէ· ուրիշ մաս մը լաւագոյնին անհամբերութեամբ թերիներու կը հակազդէ: Դուք այս այցով այդ բեւեռներէն ո՞ր մէկուն մօտ գտաք ձեզ, երկու տարուան բացակայութենէ ետք:

Պ՟- Դժուար հարցում մը, ի հարկէ, որու պատասխանը նոյնքան բարդ է: Երբ մարդիկ 10-15 օրով կ'երթան 4-5 աստղանի պանդոկ մը մնալու (կամ տուն մը վարձելու) եւ զբօսաշրջիկի կեանք ապրելու՝ մէկ տեսարժան վայրէն միւսը, յաճախ հակամէտ են միայն լաւը տեսնելու եւ մնացեալին պարզապէս անցողիկ քնոյթ մը վերագրելու: Իսկ նոյնքան յաճախ կը պատահի, որ ան որ պիտի ակընկալէր լաւին ու լաւագոյնին գերակշիռ ներկայութիւնը, իր յուսախաբութեան որպէս արդիւնք թերին ու թերարժէքը կը սկսի տեսնել: Փորձելով կանխակալ կարծիքներէ հեռու գտնուիլ, կը չարունակեմ մնալ, եթէ կ'ուզէք, ո՛չ յոռետես, ոչ ալ լաւատես, այլ իրատես դիրքի մը վրայ: Անմիջապէս յայտնեմ, որ ըսելիքներս Երեւանի մասին են, քանի որ, Սեւանայ լիճ միւսերայ «փախուստ»է մը զատ, մայրաքաղաքէն դուրս չեղայ: Բայց դիտեմ, թէ մարզերուն վիճակը շատ աւելի ծանր է:

Եթէ համեմատեմ 2002ի ամրան վերջին այցելութեանս հետ (այդ մասին գրած էի 2003 Յունուարի «Յառաջ - Միտք եւ Արուեստ»ին մէջ), այնքան շատ փոփոխութիւններ չեմ տեսած: Բայց երբ մտքիդ մէջ անընդհատ բաղդատութիւններ կ'ընես 1989ի, 1992ի, նոյնիսկ 1996ի կամ 1998ի հետ, անկասկած նշանակալից վերելք մը, յառաջդիմութիւն կը նկատես: Ակնյայտ, երբ Երեւանի ծայրամասերէն մէկը ապրող ազգականներէս կ'իմանամ, որ անցեալ տարի վերջապէս չուրջօրեայ ջուր եւ կազ ունեցած են, աւելի քան 12 տարուան զրկանքէ ետք, կենցաղային կարեւոր փոփոխութիւն մըն է, անուրանալի է: Բայց ամենատարրականն է, որ կարելի է պահանջել, չէ՞: Իմ ապրած տան մէջ երեք օր ջուրը կտրուելով, անճնապէս «վերյիչեցի» (ջուրի պակասիլը ապրած եմ նաեւ Պուէնոս Այրէսի մէջ), թէ ի՞նչ կը նշանակէ ամէն օր տնեցիներուն հետ մօտակայ աղբիւրէն դոյլ ու չիլոով ջուր կրել եւ նախնականօրէն լուացուիլ, լոգանքի մը կարօտով, ամրան կիզիչ օրերուն: Մարդիկ այդպէս ապրեր են, կ'ապրին, մանք թերեւս այդպէս ալ կ'ապրին, տասը տարի, տասներկու տարի...:

Միւս կողմէ, տեսանելի փոփոխութիւնները՝ քաղաքին գեղեցկացումը, ամենատարբեր խանութներու բազմացումը, բարձրասարկութեան բարելաւումը, փողոցներու վերանորոգումը, լաւ չէ, հմմտականին կը պատկանին կեդրոնին՝ «Բարեկամութիւն» մետրոյէն մինչեւ Հանրապետութեան հրապարակ, Մաշտոց պողոտայի փակ չուկայէն մինչեւ համալսարան: Իսկ անկէ դո՞ւրս:

Ամէնէ բաղաճի բարելաւումը իր կեդրոնէն կը սկսի:

Պ՟- Ձեմ ժխտեր: Բայց ծրագիր մը կ'ըլլայ՝ քաղաքի զարգացումին ճեւը եւ ընթացքը պատկերացնելու եւ պարտադրելու համար: Երեւանը ունի՞ նման ծրագիր, Թամանեանի անունով երդում ընելէ եւ Հիւսիսային պողոտայի կառուցման ճեռնարկելէ զատ: Եթէ ըլլար, Օփերայի հրապարակի կանաչապատ գօտին փաստական սեփականաշնորհման չէր ենթարկուեր, նոյնը՝ Օղակաճեւ այգին եւ այլ տեղեր: 1990էն ի վեր, ըստ նոր կարգացած վիճակագրութեան, Երեւանի կանաչութեան 40 առ հարիւրը կորսուեր է, Օփերայի վրայ տանձրհինդ չինուած կամ չինուելիք սրճարաններ կան, Օղակաճեւ այդիին մէջ՝ աւելի քան հարիւր: Արդեօ՞ք չափազանցուած տուեալներ են:

Շատ հաճելի է, անշուշտ, սրճարաններուը նստիլ: Ամերիկեան տափակ արուարձանի տափակ կեանքէն առժամեայ փախուստով, դիչերները նման բացօթեայ վայրերը միշտ ցանկալի տեղեր էին ինծի համար: Ու Օփերայի սրճարանները ժողովուրդով կը վխտային (զբօսաշրջիկներ, բայց մանաւանդ՝ տեղացիներ), երբեմն՝ սեղան չգտնուելու աստիճան: Բայց եթէ մտածես, որ Սպենդիարեանի արձանին ու գերեզմանին քովը աստրզեանեայ պարասրահ մը բացուած է, ակամայ միտքդ կու գայ այն հանրածանօթ պատկերը, թէ գերեզմանին մէջ անոր աճիւնները տապլտկելու են՝ պարային աղմուկէն...:

Հ՟ Հարցը, ի հարկէ, Օփերայով չի սահմանափակուիր:

Պ՟- Ու դեռ չիմօրփրենք, թէ ո՞վքեր են հանրային այդ բոլոր տեղերուն տէրերը՝ Օփերայէն ներս թէ դուրս, կեդրոնէն մինչեւ օղակայանի մերձակայքը, ուրկէ քաղաք մտնողը իսկապէս Լաս Վեկաս մրտնելու տպաւորութեան տակ կը գտնուի՝ քով-քովի խցկուած խաղարաններու չյացուցիչ լոյսերուն տակ: Այդ վայրերուն ճնշիչ մասը ունի իր շինծու եւ իսկական տէրերը՝ քաղաքական ամէն դոյնի, ամէն դաղափարախօսութեան եւ ամէն մակարդակի վրայ: Երբ այդ համոզումը դոյացած է ժողովուրդին մօտ, ինչպէ՞ս կարելի է արմատախիլ ընել զայն: Միայն հակառակը փաստելով: Կարելի՞ է:

Անշուշտ, դրական կէտեր ալ կան: Երբեմն մանրուքներ, ինչպէս այն հաճելի նորութիւնը, որ մարդիկ, ծանօթ ու անծանօթ, սկսած են հարցնել, թէ արդեօք կրնա՞ն ծխել քու ներկայութեանդ...:

Սպասարկութեան, մարդկային վերաբերումի մակարդակը սկսած է դանդաղօրէն բարելաւուիլ: Հանրային պաշտօնեայի հոգեբանութիւնը, որ խորհրդային վարչակարգի անկումէն ետք դեռ երկար կը յամենար, կամաց-կամաց սկսած է տեղի տալ հոգածու, հիւրասիրութեան պատրաստ, բարեկիրթ տիպարին: Ակնյայտ, ինչ որ հայ մարդուն աւանդական տիպարն էր անձնական կեանքին մէջ, սկսած է փոխանցուիլ հանրային կեանքին: Աւիկա չի նշանակեր, որ նման խրնամեալ վերաբերում պիտի գտնես ամէն տեղ անխտիր, ի հարկէ:

Աւոր կողքին, կենցաղայինին ժխտականը· եթէ մէկը քեզի անզգուշօրէն զարնուի, «ներողութիւն» մը պիտի չլսես: Ա՛լ չխօսինք փողոցային եռուզեռին մասին, ուր տեղ-տեղ արեւմտեան մեծ քաղաքներու վայել խճողումներ սկսած են արձանագրուիլ: Հիմա կինեղն ալ վարորդ դարձած են: Բայց այր թէ կին հասասարակէս կը կիսեն այլ վարորդներու եւ մանաւանդ անզորդներու հանդէպ անտարբեր ու նոյնիսկ անարգական կեցուածքը, որ հին ժամանակներէ կու գայ...

Հ՟- Ի՞նչպէս էր ժողովուրդին ընդհանուր տրամադրութիւնը:

Պ՟- Ամառ էր, ու դէմքերուն վրայ ողջունելի ուրախութիւն մը, անհոգութիւն նկատելի էին: Անցեալի «մութ» տարիներէն ժառանգուած մռայլ դէմքերը եթէ տակաւին չեն կրնար ի սպառ անյայտանալ, առհասարակ տեղի տուած են աւելի պայծառ հայեացքի մը: Եւ լա՛ւ է, որ այդպէս ըլլայ: Մանաւանդ՝ երիտասարդներու պարագային: Ի վերջոյ, Երեւանը ապահով քաղաք մըն է դեռ, ուր աղջիկները կրնան չրջիլ առանց վտանգի, նոյնիսկ ուշ ժամերու, իսկ երախաները կրնան թաղերուն մէջ թէ այլուր առանց մասնաւոր հսկողութեան խաղալ: Այդ բոլորը, երբ կը բաղդատես, ըսենք, ամերիկեան այլանդակ բարքերու հետ, կը մնայ չեզոք բարենիչ մը: Զրկանքի, բարոյական անկումի, հոգեկան տուայտանքի այս բոլոր տարիներուն, նման կենցաղի պահպանումը ուղղակի հրաչալի է:

Բայց եւ այնպէս, ինչպէս ինծի սրընդհակից ընկեր մը դիտել կու տար, «հին» Երեւանը, այսինքն, իր մանկութեան քաղաքը, անդարձ կորսուած է, մնացած է միայն... Ռուբէն Հախվերդեանի երգերուն մէջ: Ու որքան որ ընդունինք, թէ ժամանակի անողոք անցումը փոփոխութեան այնքա՛ն ալիքներ բերած է, կարելի չէ չափազանցել, որ քաղաքը նոյնքան արագ ու անփոյթ կերպով այլափոխուած է՝ խորհրդային չրջանի իր ոճրագործ դիմագիծը լքած ու ամերիկեանը իբրեւ թէ ընդգրկած, որուն բարիքն ալ շատ յատակօրէն չերեւիր, դոնէ իմ աչքիս:

Հ՟- «Համաշխարհայնացում» կոչուածին հետեւանքները:

Պ՟- Առարկութիւն չունիմ: Բայց ազգային վերաբերեալ այնքան կուրծք ծեծող ու զանազան խորհրդանիշներ հոս ու հոն յեցնող ժողովուրդի մը համար, ինչպէս մերն է, երբեմն օտարի հանդէպ այդ սորկամիտ, բնաւ չմտածուած կեցուածքը աչք կը ծակէ: Ինչպէ՞ս կը մեկնաբանուի, օրինակ, որ քաղաքի ծայրամասային թաղամասերէն մէկուն մէջ խանութ մը իր ճակատին վրայ կը գրէ «Մթերք - Foods»: Ո՞ր անգլիախօսը հոն կ'երթայ, եթէ ոչ ապրելու, նոյնիսկ չրջելու: Ժամանակին կ'երեւի թէ նոյն խանութը հայերէն ու ռուսերէն գրած պէտք է ըլլար իր անունը: Պետական պարտադրանք էր: Հիմա յանկարծ ռուսերէն գիտցող երեւանցին դարձած է անգլիախօ՞ս:

Ու դեռ չխօսինք ցուցանակներու, ճաշարաններու, յայտագիրներու եւ հազար ուրիշ տեղերու մէջ երեւցող անգլերէն թարգմանութեան երբեմն անհարկի փորձերուն մասին, որոնք եթէ բնականաբար կրնան թերութիւններ ունենալ (մենք ալ բնիկ անգլիախօս չենք), յաճախ կը հասնին ծիծաղելիին աստիճանին: Միւս կողմէ ալ, այդ նոյն ճաշարաններուն եւ այլ տեղերուն մէջ նշմարելի է հայերէն նորաբանութիւններու եւ ընդհանրապէս լեզուն գործածելու որոշ նախանձախնդրութիւն մը:

Այլ հարց է այն լեզուն, զոր կը լսես առօրեային մէջ եւ որ յաճախ կապ չունի այն արեւելահայերէնին հետ, զոր վարժուած ես կարդալու: Ի հարկէ, երեւոյթ մըն է, որ այսօր նշմարելի է արեւմտեան տարբեր լեզուներու գործածութեան մէջ եւս՝ անգլերէնին մինչեւ սպաներէն ու ֆրանսերէնը: Բայց խօսակցական թափթփածութիւնը ո՛չ մէկ մտահոգիչ բնոյթ պիտի ունենար, եթէ անգրագիտութեան բացայայտ նշան չդառնար: Ինչպէս երիտասարդ գրագիտուհի մը կ'ըսէր ինծի, «այսօր խօսում են մի ուրիչ լեզուով, որը քո իմացած արեւելահայերէնի հետ կապ չունի, չորրորդ հայերէնի պէս մի բան է»:

Լեզուի հարցը սուր է, այլապէս քաղաքի մէկ պողոտային վրայ մեծակակ գովազդ մը պիտի չգդարարէր (որքա՞ն օգուտով, արդեօք), թէ «Հայաստանի պետական լեզուն հայերէնն է»: Կ'արժէ ասիկա յիչեցնել համայանցային սրճարաններուն, ուր հայատառ կայքէջեր կարդալու կամ հայագիր ըլլալու կարելիութիւնը (այսինքն, համապատասխան տառատեսակներու ներկայութիւնը) յաճախ կը փայլի... իր բացակայութեամբ:

Հ՟- Քանի որ «պետական» ըսիք, գանք պետականօրէն ու պետականութեան անուանով չարչրկուած ուրիշ հարցի մը՝ ուղղագրութեան: Անոր սայլը խրած տեղէն դուրս գալու տրամադրութիւն նկատեցի՞ք:

Պ՟- Ոչ, թէեւ զրոյցներու ընթացքին նիւթը զրեթէ չբացուեցաւ: Առհասարակ, ուղղագրութիւնը ժողովուրդին մօտ մրտահոգութեան նիւթ չէ: Ինդիրը այն է, որ այլեւս խօսուելիք ալ չէ: Թեր ու դէմ փաստարկները այնքան հրկնուած են, որ այլեւս համը փախած է: Եթէ Հայաստանը պետականօրէն պատրաստ չէ բանի մը նախաձեռնելու (ու անձնապէս կը կարծեմ, որ հետաքրքրուած ալ չէ), ընեւլիք ալ չունինք, բացի սատարելէ, որ մրտահոգութիւնը կանգուն մնայ: Զմոռնանք, որ ամէն ինչ հոն վերէն վար չարժումով տեղի կ'ունենայ եւ ոչ թէ՝ վարէն վեր: Սփիւռքի մէջ կրնանք մեր ուզածին չափ խօսիլ, առաջարկներ բերել, հակաճառել այնտեղէն լսուող խոպոտ կամ հիմնադուրկ ձայներուն, գործնական աշխատանքներու օգնել, բայց տա պահուն պահանջ դնել ու պատասխանի սպասել զուր գործ կը թուի:

Դասական ուղղագրութիւնը կը չարունակէ մնալ սփիւռքահայ գրագէտներու կամ դասականով վերատպուող գործերու առանձին կալուածը: Արեւելահայերէնը՝ «սովետահայ»ին, արեւմտահայերէնը՝ «դասական»ին, ասիկա կը թուի նչանակութիւնը: Չէ՞ որ իբրեւ թէ «արեւմտահայերէն»ի ուղղագրութիւն կայ· այդ կեղծ սկզբունքով ան կը յարգուի, ինչ որ խորհրդային օրերուն չէր պատահեր:

Ժպիտ յառաջացնող օրինակ մը· վերջերս Գիտութիւններու Ակադեմիան լոյս ընծայած է եռահատոր հայ գաղթավայրերու պատմութեան մը առաջին երկու հատորները: Զանազան տեսակ Պատմութեան Հիմնարկի նոր հրատարակութիւններու ցուցափեղկին վրայ: Երկու համազոյն ու համաչափ հատորներ, որոնցմէ առաջինը տպուած է Եգիպտոս՝ «Հայ գաղթավայրերի պատմութիւն», երկրորդը՝ Երեւան, «Հայ գաղթավայրերի պատմութիւն» վերնագրով: Առաջինէն օրինակներ դեռ տրամադրելի չէին, ուստի չկրցայ տեսնել թէ բովանդակութիւնը դասականով չարուած է, բայց կրնաք երեւակայել պատկերը:

Հ՟- Արդէն մտնելով այս կալուածին մէջ, ծանօթ է, որ գիրքերու, գրողներու, գիտնականներու աշխարհը ձեր գլխաւոր թիրախն է Հայաստանի մէջ: Ինչ լուր այդ կողմերէն:

Պ՟- Կարծեմ Մարք Թուէյնն էր, որ առիթով մը ըսած էր, թէ «մահուանս լուրերը մեծապէս չափազանցուած են»: Հակառակ պետական օժանդակութեան չդոյութեան կամ մինչեւ իսկ խափանարարութեան (յիշենք Հայկական Հանրագիտարանի չէնքին վաճառքը, Գրողներու Միութեան հիւանդանոցին սեփականաշրկումի ընթացիկ փորձը, Ակադեմիայի Լեզուի Հիմնարկի չէնքին յանձնումի որոշումը՝ երեւանեան երկրորդ վեհարանի մը հաչւոյն, Մխիթարեանների յուշարձանի տարածքին վրայ հողային յատկացումներու փորձերը...), գիտական-մշակութային հաստատութիւնները կան ու կը չարունակեն արտադրել, սպասարկել, անհատական բարերարութեան չնորհիւ կամաց-կամաց նորոգուիլ: Բոլորն ալ՝ Գրականութեան եւ Արուեստի Թանգարանէն մինչեւ Ազգային Արխիւներն ու Ցեղասպանութեան Թանգարանը, Ազգային Գրադարանէն մինչեւ Գիտութիւններու Ակադեմիան ու Հայկական Հանրագիտարանը (միայն այցելածներս կը թուարկեմ), կը չարունակեն գործել, արդէն գիտենք նիւթական ի՞նչ սեղմ պայմաններու մէջ: Երբեմն կը մտածեմ, որ եթէ անհատ բարերարներ եկեղեցւոյնութեան կամ վերաչինութեան վրայ քանի մը միլիոն պակաս ծախսէին եւ այդ գումարները յատկացուէին անոնց չարաունութեան, մեր հաւատքը պիտի չտուժէր, բայց մեր մշակոյթը պիտի չհեր: Նոյնը կարելի է ըսել հրատարակչական մարզին մասին: Գրախանութները քիչ են, ծիծաղելիօրէն քիչ (բայց նոյնը չէ՞ ըլլ. փիւռքի պատկերը) ու տպաքանակները արդէն Սփիւռքի չափերուն կը հասնին (անկախութեան նախօրեակի 90·000ին դէմ, «Գարուն»ը այսօր 700 օրինակով կը տպուի), բայց դիրքերը կան ու լոյս կը տեսնեն՝ նիւթական խոչընդոտները պարամարհելով:

Անշուշտ, ամէն տեսակի որակ կայ նաեւ կը հանդիպինք արժանաւոր անհատներու եւ... անարժան տպագիրներու: Շուկայի օրէնքով, ով որ դրամ կը հարթագէ, կը տպէ, եւ հակառակը եւս նկատելի ճիշդ է: Երբեմն, դիրքերը չեն երեւիր դրախանութներուն մէջ, տարբեր պատճառներով, եւ եթէ բախտով դիտես, թէ դիրքը հրատարակուեր է, մնացեալին համար պիտի ապաւինիս բարեկամներու ցանցիդ: Թէեւ երբեմն մենք կ'իմանանք տուեալ դիրքի մը հրատարակութիւնը, իսկ իրենք՝ ոչ: Օրինակ, այսպէս եղաւ Շահէ Արք· Ազէմեանի կողմէ վերատպուած Կոմտան Զարեանի «Գիրք դիւցազներու Թեանց»ի պարագային, որու «առաջնեք»ը տեսած էի «Յառաջ»ի մէջ: Բայց դիրքը ո՛չ գրադարաններուն եւ ոչ ալ գրախանութներուն մէջ դտայ: Մարդ չէր լսած նուիրներուն մէջ գտայ: Մարդ չէր լսած անոր մասին, կարծէք: Ի վերջոյ, Աստուածաբանական Ֆաքիւլթէթ կարճ այցելութիւն մը լուծեց խնդիրը...:

Հ՟- Ի՞նչ նոր հրատարակութիւններ պիտի մատնանշէիք:

Պ՟- Նախ եւ առաջ, պէտք է չեչտել, որ վերջին տարիներուն երեւանեան տպագրութիւնը աներեւակայելիօրէն լաւացած է: Խորհրդային որակը լիովին տեղի տրուած է արեւմտեան մակարդակին հետ: Հաչտ քալող հրատարակութիւններու: «Սարգիս Խաչենց»ը կամ «Փրինթինֆօ»ն, առանց անտեսելու ուրիշներ, ճեւի եւ բովանդակութեան չատ գեղեցիկ նմոյշներ տուած են մեզի:

Անունները՞: Հայկական Հանրագիտարանի հրատարակած «Հայ Սփիւռք» հանրագիտարանը, որ հակառակ կռահելի թերիներու (դժբախտաբար, Սփիւռքի ամէն օր փոխուող իրականութեան մասին անթերի հրատարակութիւն մը ընելը ոչ ոքի տրուած է, կ'երեւի), ըստ իս տեղեկատուութեան բաւական արժանահաւատ աղ-

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀՔԱՆՉԱՆՈՎ ՊԱՐԳԵՒԱՏՐԵՑ ԱՐՈՒԵՍՏԱԳԻՏՈՒՀԻ ԻՆԿՐԻՏ ԵԿԱՒԵԱՆԸ

ԱՆԹԻԼԻԱՍ - Օգոստոս 17, ժամը 18·30-ին, լրնթացս հայ եկեղեցւոյ համալսարանական ուսանողներու միութեան (ՀԵՀՈՄ) կողմէ կազմակերպուած գեղանկարչական ցուցահանդէսին, Անթիլիասի «Կիլիկիա» բանդարանի «Կիւլպէնկեան սրահ»ին մէջ Ամէ Ա. Կաթողիկոս, Մեծի Տանն Կիլիկիոյ «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգեւատրեց արուեստագիտուհի Ինկրիտ Զամքերթէն Եկաւեանը:

Բացման հանդիսութեան ներկայ գտնուեցան արուեստագիտուհիին ամուսինը՝ Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութեան հայկական բաժնի տնօրէն տօքթ. Զաւէն Եկաւեան, միւսյան հայրեր, պետական եւ քաղաքական, ազգային բարերարներ, լիբանանահայ կրթական, մշակութային եւ ընկերային հիմնարկներու պատասխանատուներ եւ մշակութասէր հոծ բազմութիւն մը: Բացման խօսքէն ետք Պ. Ժիրայր Դանիէլեան ներկայացուց ակր եւ արիւն Զաւէն եւ Ինկրիտ Եկաւեանի մշակութային ներդրումը, եւ գեղեցկօրէն ընդգծեց տարիներու ընթացքին Եկաւեան զոյգին կատարած ներդրումը հայ մշակոյթի գանձանակին:

Հայրապետը իր բարձր գնահատանքը արտայայտելով անցնող աւելի քան 30 տարիներու ընթացքին Ինկրիտ Եկաւեանի մշակութանուէր գործունէութեան, վեր առաւ անոր արուեստին իւրայատկութիւնը եւ զայն միաձուլուած տեսաւ արուեստագիտուհիին անձին: Պարզութիւնը, բիւրեղութիւնը եւ բնական համեստութիւնը իբրեւ նկարներէն ցայտող ճշմարտութիւններ, միաժամանակ ընդելուզուած տեսաւ Ինկրիտ Եկաւեանի անձին ու նուաճարհին: Ան յիշատակեց առիթով անդրադարձաւ նաեւ Եկաւեան ամոլի ազգասիրական ոգիին ու անոնց նուիրեալ ծառայութեան եւ վաստակին: Ապա Հայրապետը տիկին Եկաւեանին չնորհեց «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանը եւ ըսաւ. «Տիկին Եկաւեանը արժանի է կոչուելու Ս. Մեսրոպ Մաշտոցի աշակերտուհին, որովհետեւ աւելի քան երեսուն տարիներէ ի վեր, օտար երկիրներու տակ իր արուեստին ճամբով հայ մշակոյթը ներկայացուց ան Զուիցերլանդիոյ մինչեւ Ֆրանսա ու Լիզպոն: Իր մաքի սլացքով, իր հոգիի թրթռիչքով, իր վրձինի նուրբ հարուածով ու Հայու իր սրտի զարկով հայ մշակոյթի առաքեալը դարձաւ ան "օտար ամայի ճամբեքի վրայ"» ըսաւ Հայրապետը:

Ցուցադրուած նկարները ընդհանրապէս կը ներկայացնէին բնանկարներ, լճափի խոնարհ բնակարաններու հարազատ պատկերներ, ալեկոծ եւ հանդարտ ծովեր ճեղքող սլացիկ առագաստանաւերու պատկերներ ու այլ գեղանկարներ՝ ջրաներկի հանդարտեցուցիչ գոյներով իրագործուած: Բոլոր պատկերներուն մէջէն արտացոլացող գոյներու ներդաշնակութիւնը, արտայայտութիւնն էր արուեստագիտուհիին ազնիւ հոգիին ու անոր ներաշխարհին ներդաշնակ համադրութեան: Ամէնէն ալեկոծ ծովանկարն իսկ գոյներու կախարդանքով դարձած էր հանդարտեցուցիչ բնանկար...

Ինկրիտ Զամքերթէն Եկաւեան ծնած է Պրիւսէլ, 1965ին փիլիսոփայական դիտութիւններու մագիստրոսի վկայական ստացած է տեղւոյն Ճիսուսեան համալսարանէն: 1967ին վկայուած է տեղւոյն Գեղարուեստից վարժարանէն, 1970ին Լօզանի արուեստից եւ արհեստից վարժարանէն (Զուիցերիա), 1977ին Լուվրի Գեղարուեստից վարժարանէն (Փարիզ), 1988ին Լիզպոնի Մարթինո Գորսիա Գեղարուեստից ակադեմիայէն (Փորթուկալ):

Նշենք, որ Ինկրիտ Եկաւեան ցարդ անհատական չարք մը ցուցահանդէսներով (բրուտագործութիւն, գեղանկարչութիւն եւայլն) ծանօթ է արուեստի աշխարհին ու մշակութասէր հանրութեան: Այսպէս, 1975ին եւ 1978ին բրուտագործութեան երկու ցուցահանդէսներ՝ Փարիզի մէջ: 1989ին սկսեալ տարեկան գարնանային ցուցահանդէս Լիզպոնի Վանթուրա պալատին մէջ: Տարեկան ցուցահանդէս կազմակերպուած Ռումանիոյ դեսպանատան կողմէ: 1998ին Փէօժօ ընկերութեան սրահներուն մէջ Լիզպոն: Դարձեալ 1998ին Սալոմանիա գեղարուեստից կեդրոնին մէջ: 2002ին Սարեան ակադեմիայի մէջ, Հալէպ:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԻՆԱՐԷՆ

Ամէնքը Եւրոպայի միակ մայրաքաղաքն է որ այդ անունին արժանի մզկիթ չունի: Թէեւ ծրագիրը մը գոյութիւն ունի 70ական թուականներէն ի վեր: Միւս կողմէ, քաղաքին մէջ այդ նպատակին ծառայող բազմաթիւ անպաշտօն կառոյցներ կան. անոնք յաճախ կը գտնուին աղքատ թաղերու գետնայարկերուն, կամ բնակարաններուն մէջ: Ինչ կը վերաբերի երկրին հիւսիսային շրջանին ուր թուրք փոքրամասնութիւն մը կ'ապրի հակառակ եկու երկիրներու միջեւ հակամարտութիւններու եւ բնակչութիւններու տեղաշարժերուն, մինչեւ 300ի կը հասնի հոս-հոն կառուցուած մզկիթներուն թիւը:

Ցունաստան կը գտնուի քրիստոնեայ Եւրոպային եւ մահմետական Ասիոյ խաչմերուկին վրայ: Բայց մահմետական աշխարհին հետ հինէն եկող յարաբերութիւնները աւելի պատճառ եղած են կեցուածքները կարծրացնելու, քան՝ անոնց ճկուն ընոյթ տալու: Պաշտօնական տուեալներով երկիրը 98% քրիստոնեայ օրթոտոքս բնակչութեան տէր է եւ կղերը ինքզինք կը նկատէ արդի Ցունաստանի պահապանը: Այդ եկեղեցին 1821ին զէնուորած է Օսմանեան կայսրութեան դէմ յեղափոխութիւնը եւ անքակտելի կապեր ունի պետութեան հետ. արդէն յունական դրօշակին վրայ տեղ գտած խաչը ատոր լաւագոյն խորհրդանիշն է:

Այսօր, հակառակ վերջին տարիներուն Թուրքիոյ հետ որոշ չափով բարելաւուած յարաբերութիւններու, 70 միլիոն մահմետական բնակիչով այդ երկրին տոթած վախն ու ղղուշաւորութիւնը բոլորովին անյայտացած չեն: Այդ մթնոլորտին մէջ բնական է որ պաշտօնական մզկիթի մը ծրագիրը վախերը կը հրահրէ: Հակառակորդներու ճակատին դէկավարը որ ծանօթ վիրաւորժ մըն է, ահազանգ կը հնչեցնէ թէ յունական ինքնութիւնը կորսուելու վտանգին տակ է եւ իրենց գոյութիւնը սպառնալիքի ենթակայ: Անոր կարծիքով երկիրը դէմ յանդիման է նոր տեսակի ներխուժումի մը: Իսկ երբ կառավարութիւնը Աթէնքէն 20 քմ. հեռաւորութեան վրայ երեք հեկտարնոց հող մը տրամադրած է մզկիթի շինութեան, շրջակայ բնակչութիւնը բուռն բողոք յայտնած է, չեչտելով որ շրջանին մէկ միակ մահմետական մը իսկ չկայ: Քօղարկուած նեցուկը վայելելով եկեղեցիին որ թէեւ յանձնառու եղած է չէզոք մնալու, անոնք 7,5 մեթր բարձրութեամբ խոչ մը կանգնած են այդ դետնին վրայ, պահանջելով որ ծրագիրը չեղեալ համարուի:

Եպիսկոպոսութեան բաներէն ալ մխացած է բողոքարկուներուն, յայտարարելով որ նախատեսուած 65 մեթրնոց մինարէն Աթէնքի նոր օդակայանը հասնող օտարականներուն ուշադրութիւնը գրաւող առաջին բանը պիտի ըլլայ: Անցեալ ամառ հակառակ բողոքներուն, արաբական զանազան երկիրներու դեսպաններուն եւ յունական կառավարութեան մէջ երեսուն տարիէ ի վեր տարուած բանակցութիւնները եզրակացութեան յանգելու մօտ էին. բայց նոր, կեդրոնական ձախակողմեան կառավարութիւնը կասեցուց ծրագիրը: Այսօր հաւանական կը նկատուի որ պաշտօնական ազօթատեղիի մը բացակայութեան, ազօթասրահներէն ոմանք օրինականացուին, մնացեալներն ալ փակուին: Իսկ նման որոշում պիտի բարդացնէ հարցը:

Ազարական համայնքի ծանօթ դէմքերէն սուտանցի Մ. Ապտրասուլ յայտարարած է թէ եթէ ազօթասրահներուն մէկ մասը միայն օրինականացուի, ատոնք պիտի ըլլան ամէնէն հինները եւ ամէնէն ծանօթները: Մինչդեռ իրենք օրինաւոր - ապօրինիի խաղին մէջ չեն ուզեր խլնալ. բոլորն ալ պէտք է օրինականացուին: Այնպէս կը թուի թէ որքան կառավարութիւնը անդիտանայ մահմետական համայնքը, այնքան ալ վերջինը հակումը պիտի ունենայ իր հիմնարկները հեռու պահելու պետութեան աչքէն: Այլ խօսքով, եթէ կեդրոնական մզկիթի մը հարցը տեղացյլի վիճակին մէջ պահել կարելի եղած է 70ական թուականներէն ի վեր, մահմետական համայնքը յառաջդիմած է եւ անհամբերութեան նշանները ցոյց տալ սկսած:

ՓԱՂԱՆ

ՍՏԱՑԱՆՔ

ՀԱՄԱՍՏԵՂ
Նամականի

Խմբագիրներ՝
Լ. Գ. ՄՈՒՐԱՏԵԱՆ,
Վ. Գ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ

Հրատարակութիւն Կարպիս Լ. Նազարեանի
Հիմնադրամի (Թիւ 6)

«Մուղնի» Հրատարակչութիւն,
2003 Երեւան

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻՒԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Մարիան չատ տառապեցաւ: Գրիգոր կը դաւաճանէր իր կնոջ: Մարիայի մէջ նախանձը ու տառապանքը սկսած էին անչէջ հուրերով բռնկիլ: Գրիգոր հարստացած էր: Իր հարստութիւնով փոխած էր իր մարմնութիւնը, իր լեզուն, իր քալուածքը, իր վերաբերումը հանդէպ իր ծանօթներուն: Ու անիկա ֆիլիքով կը կատարեալ գործուէր: Դէպի լիացած ու նուրբ գեղեցկութիւն մը կ'երթար: Իր վախուկ ու աղուոր մազերուն ներքեւ սպիտակ ու նրբօրէն փինտած ճակատ մը: Սեւ աչքեր ոնքը դիմաւոր ու մահացու ակնարկներով: Դէմքին գիծերը առնականի ներբուծիչով էին: Բարեձեւ քիթ մը ու փոքր շրթունքներ, բարակ, սիրուն պեխերով: Եւ իր սլացիկ, գեղեցիկ մարդու հասակը, պարմանալի համաչափութիւնով: Ու տակաւին իր հագուստները, որոնք կուգային իր մարմինը արժեցնել: Իր ձեւերը, խօսելու, համբերու կերպերը:

Ու չատ մը կիներ ինկան Գրիգորի գըրկին մէջ, ինքնամոռացումով, ամբողջական յանձնումով, նուէրի նման տալով իրենց ամբողջ մխերը ու հոգին: Մարիա իր նախանձի մէջ կը դալարէր: Ամէն անգամ որ առնէին բացակայ կ'ըլլար Գրիգոր՝ Մարիա իրական ու անիրական հազար կասկածներով կը տառապէր: Իր երեւակայութիւնը թռնատուրեան էր: Ցարաժամ Գրիգորը կ'երեւակայէր կնոջ մը թեւերուն մէջ: Եթէ կարելի ըլլար, պիտի չդաժնուէր իր ամուսինէն: Ու նախանձի տեսարաններ չատախ սկսան պատահիլ տունը: Մարիա որքան աւելի կը նախանձէր՝ նոյնքան Գրիգոր կը պաղէր իրմէ: Եւ որովհետեւ դուքը կը բացակայէր Գրիգորի զգացումներուն մէջ, ան ըսած էր սիրոյ անյայտացումին մէջ անկըսած էր սիրոյ անյայտացումին մէջ անխիղճ ըլլալ: Շատ անգամ նոյնիսկ իր կնոջ ներկայութեան կը սիրաբանէր կիներու հետ:

Մարիա հոգեկան հիւանդութիւն ունեցաւ: Անոր համար Գրիգորի ամէն մէկ չարժումը կը նշանակէր դաւաճանութիւն: Երբ փողկապ, օձիք, չապիկ, հագուստ փոխէր՝ Մարիա կը կասկածէր: Երբ առաւօտուն չուտ նախաճաշէր, կը կասկածէր: Դանդաղ նախաճաշէր, կրկին կը կասկածէր: Գրիգորի բացակայութեան ժամանակ կեանքը ամբողջովին անտանելի կը դառնար: Անոր ներկայութիւնը սակայն տանելի չէր դարձներ կեանքը:

Մարիա կը խորհէր որ Գրիգոր անպայման կը մտածէր իր սիրուհիներու վրայ: Մարիա կը խօսէր այս մասին: Զգացումը եւ մտածումը անդրպելի եղած էր, սանձերը բռնկած էին: Ու Գրիգոր կ'ըսէր.

- Կ'ատեմ քու սա վիճակդ... Նախանձող կիները կ'ատեմ... Կը հասկնա՞ս, կ'ատեմ... ոչինչ կը չահիս նախանձով... աւելի գէշ կ'ընես ինքզինքդ համար... Դուն մարդ մըն ես այսօր. ամէն բանէ առաջ պզտիկը լաւ նայէ: Կ'ատեմ քեզ երբ նախանձիս...

Ու Մարիա կու լար եւ կ'ըսէր.

- Ես քու կլո՞նդ եմ թէ չեմ...

- Հարկաւ կիներս ես, հասկցանք, հակառակը ըսող կա՞յ... Եթէ կիներս չըլլայիր, ի՞նչ գործ ունէիր իրարու քով... Կիներս ես, բայց այդքան... չափը անցընելու չէ: Ոչ դուն իմ գէրիս ես եւ ոչ ալ ես քու գերիդ եմ: Այդքան վրաս մի՛ խլնար, մի՛ ճնշեր զիս... վերջը... վերջը...

- Վերջը ի՞նչ, ըսէ՛...

- Վերջը կ'ըլլայ... հիւրիւթէթ...

- Դուն տառնկ չէիր, Գրիգոր: Երանի թէ այս գործին, այս դրամին տէր չըլլայիր:

- Կին չէ՞ք... ամէնդդ ալ կատուի պէս ապերախտ էք... Մարդս եթէ տասը մատը մամ ընէ՝ անօգուտ է, անօգուտ:

- Այո՛, Գրիգոր, դրամ չահեցար, սակայն մարդ չեղար: Ամէն բանէ առաջ մարդ պէտք է սիրտ ունենայ, հոգի ունենայ, զգացում ունենայ:

- Ըսել է՝ ես մարդ չե՞մ... Ո՞վ է մարդը:

- Եթէ մարդ ըլլայի՛ր...

- Այո՛, եթէ մարդ ըլլայի...

- Ես իմ մասիս չեմ ուզեր խօսիլ, որովհետեւ դուն տակաւին չես ուզեր: Ատիկա կրնայ եսասիրութիւն համարուիլ քու կողմդէ: Ես ասկէն չատ մը ապացոյցներ ունիմ քու մարդ...

- Այո՛, այո՛, չարունակէ...

- Եթէ մարդ ըլլայիր, Գրիգոր, հայրիկդ ու մայրիկդ այդ նեղութեան մէջ չէին թողուր: Ըսէ՛, հիմակ, ապերախտութիւնը որո՞ն քովն է: Քու մայրիկդ տեսած անցուցած կինն է: Անոր համար աղքատութիւնը սոսկալի է: Բայց անիկա ազնուական ու սուրբ կնկան մը պէս ամէն բան կը տանի: Օ մը թերանը չբացաւ: Մէ՛դ, որ այդ կնոջ հոգիին հարստութենէն բան մը չես ժառանգած:

- Մարիա՛, բաւական է: Քեզի չվերաբերող գործերու մէջ մի՛ մաներ:

- Իսկ ինծի վերաբերող գործերու մէջ երբ կը մանեմ, ինչո՞ւ...

- Բաւական է, կ'ըսեմ... Ես էրիկ մարդ եմ, դուն կնիկ ես: Կին մը իր չափը պէտք է ճանչնայ: Կը հասկնա՞ս...

- Բայց դուն կինը ինչի՞ տեղ ես դրած: Գերի՞ կը կարծես: Կինը հոգի չէ՞: Կինը միտք չունի՞: Միտք ու հոգի ունեցող եւ սիրել գիտցող կին մը ինչպէ՞ս կ'ուզես որ հանդուրժէ խայտառակութիւններու...

- Խայտառակութիւն չկայ: Կիներուն աչքի ու մտքի հիւանդութիւնն է ան: Ամէն բանի մէջ խայտառակութիւն կը տեսնեն: Խայտառակութիւնը կնոջ համար կայ, էրիկ մարդոց համար չէ ան: Էրիկ մարդը տունին տէրն ու տիրականն է, ան ընտանիքին թագաւորն է: Սակայ հասկնալ չուզող կինը ըմբոստ մըն է: Չկարծես որ «ազատութիւնը, հաւասարութիւն»ը կիներուն համար եղաւ: Թող որ առտնը էրիկ մարդոց համար ալ խո՛սք են տակաւին: Էրիկ մարդը պէտք է էրիկ մարդութիւնը ընէ եւ կինը իր գործին նայի:

(Շար. 100)

(Շար. Ա. էջէն)

են Միւնչի երկու դործերը (Աղաղակէն զատ, նաեւ Մատոնան) ու մեկնած։ 1893ի դործը (Լը Գրի) նկարչութեան հիմնական ստեղծագործութիւններէն կը նկատւի, որ կը կանխէ արտայայտչականութիւնը։ Առաջին անդամ մը դաղցուած էր արդէն 1994ին, թայց քանի մը օրէն յայտնաբերուած։

ԶԷԶԻՆԻԱ այցելելով, Պուտին գովքը հիւսած է չրջանին «բնականոնացման», նախագահական ընտրութենէն չաթաթ մը առաջ։ Պուտին այցելած է նաեւ խորհրդանչական վայրը մը՝ Յենտրոյ, որ կազիրոյի ընտանիքին բերդն է, Զէչէնիոյ հարաւ-արեւելքը եւ ծաղկեպսակ մը դրած կազիրովի չիրիմին վրայ (սպաննուած Մայիսին, ռճրափորձի մը առեն)։ Իրեն կ'ընկերանար կազիրովի տղան, որ այսօր փոխ վարչապետ է։ Այս առթիւ, Պուտին յայտարարած է.- «քաջ, տաղանդաւոր եւ բացառապէս պարկեչտ անձ մը կորսընդունք։ Ուրիչ նպատակ չունէր կեանքին մէջ, քան իր երկրին ծառայել»։

ՊԱՆԿԱՏԻՇԻ մէջ, հինդ ձեռնարումբեր որոնց թիրախը նախկին վարչապետուհին էր, Օդոստոս 21ին 18 հոդիի մահուան եւ 150 ուրիչներու ալ վիրաւորութեան պատճառ եղած են։ Ընդդիմութեան նախկին վարչապետը ձեռքէն վիրաւորուած է, թիկնապահներէն մէկն ալ մեռած։

ՆԱԽԱԳԱՀ Վլ. Պուտին Սեպտեմբեր 1-2ին Անգարա կ'այցելէ։ Թուրքիոյ դեկավարութեան հետ տեսակցութիւններու ամէնէն խնդրայարոյց նիւթերը պիտի ըլլան նեղուցներէն քարիւղատար նաւերու անցքը, չէչէնական խնդիրը, քիւրտ դինեալ խմբաւորումները։

CHAVILLE

Eglise St Grégoire l'Illuminateur

6 rue Père Komitas

Les offices reprendront normalement à partir du dimanche 29 août.

●

ECOLE «LEVON CHANTH»

Les cours de l'Ecole hebdomadaire «Lévon Chanth» de Chaville reprendront le **mercredi 8 septembre à 9 heures,** dans la salle de l'église.

Inscriptions sur place.

6 rue Père Komitas
92370 CHAVILLE
Tél. : 01. 47. 09. 23. 18

Rentrée des classes

Les inscriptions pour l'année 2004/05 à l'école hebdomadaire «Siamanto» de Bagneux auront lieu :

le mercredi 15 septembre à 15 heures
à l'école Henri Wallon,
2 avenue de Stalingrad à Bagneux

Au cours de ces inscriptions, une réunion conviviale aura lieu, comme chaque année, sur le déroulement de la nouvelle année scolaire.

Les cours commenceront le mercredi suivant -22 septembre : le matin pour les plus jeunes enfants -environ 5 à 10 ans-, et l'après-midi pour les adolescents jusqu'au baccalauréat et les enfants au dessus de **10 ans.**

Pour tout renseignement :
— Mme Lucie Dossikian: 01 45 46 10 11
— Mme Elisabeth Davidian:
01 46 65 81 53

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— PARIS
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19

— ARNOUVILLE
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guamdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73

— ISSY-LES-MOULINEAUX
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25
(le soir)

— SEVRAN
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76

— VALENCE
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99
(l'après-midi)
MCA : 04 75 55 12 49

— DECINES
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97

— GRENOBLE
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43

— ST MAURICE DE BEYNOST
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07

— VIENNE
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80

— MARSEILLE-VILLE
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66
(le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ պարծունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեզի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն։

*
**

ՓԱՐԻԶԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

Դասընթացքները կը սկսին ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14-30ին 17 ռիւ Պլէօ 9րդ թաղամաս - Մեթրօ Գասթ Մանկապարտէզ 4 տարեկաններ սկսնալ (կը խնդրուի արտօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ)։

+ CPէն միւնչեւ Պաբալօրէա, նաեւ չափահասներու դասարան։

Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, Երգ, Թատրոն, Պար։

Հեռաձայնել Օգոստոսին՝
- Արաքսի Գարաւիֆիլեան՝
01 · 39 · 83 · 71 · 19

*
**

La Section «Lola Sassouni»
de Marseille
organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.

Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...

— Restaurant tous les soirs et piqueniques assurés.

— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).

Départ de Marseille

Prix : 1595 Euros par personne tout compris, visa inclus hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84078

100-ԱՄԵԱԿ
Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2
ԿԱԼԱ՝ ժամը 16էն 18·30 եւ Ընդունելութիւն ժամը 19էն 22·30
Սալ Կաւոյի եւ անոր սալոններուն մէջ·
Յայտագիրը կը վարէ ժերալտ ՓԱՓԱՋԵԱՆ
Տեղերը ապահովելու համար դիմել Փարիզի, Ալֆորվիլի, Արնուվիլըլէ-Կոնէսի, Շաւիլի եւ Իսի-լէ-Մուլինոյի Առաքելական եկեղեցիներու դրասենեակներուն։
Նկատի ունենալ որ Հոկտեմբեր 2ի օրը, տեղւոյն վրայ առմսի վաճառք պիտի չըլլայ։

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2
ժամը 23էն կէս-գիչեր ՀՍԿՈՒՄ
Սուրբ ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ Մայր Տաճարին մէջ

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 3
- ժամը 8էն, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ,
- ժամը 10էն, ԴՈՒՆԲԱՑԷՔ,
- ժամը 10·30էն ՊԱՏԱՐԱԳ որուն ընթացքին
Գոհաբանական Մաղթանք պիտի ըլլայ Ս. Յովհաննէս-Մկրտիչ Մայր Տաճարի եկեղեցաշէն քարերար ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆՑի
եւ անոր ընտանիքի անդամներուն,
Նաեւ Տաճարիս օծումը կատարող Եւրոպայի Հայրապետական Պատուիրակին՝
ԳԷՈՐԳ Աբգ. ԻՒԹԻՒՃԵԱՆԻ,
Տաճարիս առաջին Առաջնորդին՝
ՎՐԱՄՇԱՊՈՒՀ Աբգ. ՔԻՊԱՐԵԱՆԻ, ի Տանէ Արջուկենց
եւ եկեղեցւոյ բոլոր բարերարներուն յիշատակին։

Արարողութիւններու աւարտին, հաւատացեալները հրաւիրուած են բաժնեկից դառնալու աւանդական ՄԱՏԱՂԻՆ,
Եկեղեցւոյ շրջափակին եւ «Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ։

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Pensez à nous réserver votre journée du DIMANCHE 12 SEPTEMBRE

pour participer à notre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchetre SPITAK

qui se déroulera dans les jardins
du Dr et Mme KEGHIAN
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel
(en cas de pluie, la fête se déroulera dans la salle paroissiale d'Arnouville-lès-Gonesse, 69 avenue Henri Barbusse 95400 Arnouville)

Programme : Divine Liturgie à 11 heures
Repas à partir de 13 heures
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage des deux **Tombolas** (Enfants et Adultes)

Participation aux frais de la journée : Adultes 20 Euros
Enfants 12 Euros

Réservation par tél. : 01 44 59 23 50 (Paroisse de Paris)
01 40 51 11 90 (Centre Culturel)

les Coupons d'Alsace

21, av. d'Helvétie
25203 MONTBÉLIARD
Tél. 03 81 94 38 10

Z.I. Les Arbletiers
25400 AUDINCOURT
Tél. 03 81 35 51 93

65, avenue Jean Jaures
90000 BELFORT
Tél. 03 84 21 62 66

ՀԱՅՐԱՏԻ

ՕՐԵԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

ՀԱՅՐԱՏ

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS

TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70

COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա : Տար. 230 եւրօ — վեցամսեայ : 122 եւրօ

Արտասահման : Տար. 270 եւրօ (Ամէնօրեայ առաքում) 247 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1 եւրօ

C.C.P. PARIS 15069-82 E

ՀԱՅՐԱՏ - ՕՐԵԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

ՀԱՅՐԱՏ

ԱՐՁԱԿՈՒՐԴԷՆ ԴԱՐՁԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՁՐՈՅՑ ՎԱՐԴԱՆ ՄԱՏԹԷՈՍԵԱՆԻ ՀԵՏ

(Բ. եւ Վերջին Մաս)

Հ.- Ձեր այցելութիւնը զուգադիպած էր գրողներու համահայկական Բ. համաժողովի օրերուն: Ի՞նչ արձագանգներ ունեցաք:

Պ.- Նախ ճշդեմ, որ Երեւան հասայ համաժողովի փակումէն երկու օր եառ: Ժամանակս չներեց, որ կարդ մը գրական ձեռնարկներու (շնորհանդէսներ, հաւաքոյթներ, եւայլն) ներկայ գտնուէի, որոնք թերեւս չահեկան հանդիպումներու առիթ ըլլային: Ամէն պարագայի, առիթը ունեցայ հանդիպելու կամ նոր ծանօթանալու համաժողովարին մասնակցած քանի մը սփիւռքահայ գրողներու, որոնց համաձայն անոր ընթացքը չատ յուսադրիչ չէր եղած: Հայրենի կարգ մը գրողներու եւ գրականագէտներու վերաբերմունքը տարբեր չէր: Թէ ինչո՞ւ, ի վիճակի չեմ մանրամասնելու: Հայրենի երիտասարդ գրողները հրաւիրուած չէին, ըստ ինծի: Սփիւռքի անունց ներկայիցներուն բացակայութիւնն ալ գրեթէ համաւարած էր (ասոնց մասին ալ գրեթէ անդրադարձ չէ եղած, որքան գիտեմ):

Շատերը կը չեշտէին, որ համաժողովը լաւ էր՝ փոխադարձ ծանօթութեան իմաստով: Մինչ մէկ կողմէ Երեւանը զարճած է Սփիւռքահայերու ժամադրավայր, պէտք չկայ կրկնելու, թէ որքա՛ն կարեւոր է, որ Սփիւռքի եւ Հայաստանի մտաւորականները հանդիպին, գիրար ճանչնան, փորձեն փոխըմբռնումի եզրեր գտնել: Բայց ընկերային գործօնէն անդին, ի՞նչ կրնանք ակնկալել նման համաժողովներէ: Որոշ զեկուցումներ «Գրական Թերթ»ի մէջ կարդացի: Դատելով տեղեկատուութենէն, աւելի չատ խօսուեր է հանրային-քաղաքական, կրթական-մշակութային հարցերու, քան գրականութեան մասին: Գրադէտը փղոսկրեայ աչտարակի մէջ չի կրնար ապրիլ, հասկցանք: Բայց գրականութիւնը չի՞ կրնար գերակայ դարձնել մէկ հատիկ մայրի մէջ: Քննարկում-վէճարկումը ի՞նչ մակարդակի էր արդեօք: Կարգալով Սփիւռքի մամուլիցներուն ցուցակը, օրինակ, որքանո՞վ կարելի եղած էր լուրջ, տեղ մը հասնող, 21րդ դարասկիզբի մակարդակով երկխօսութիւն մը ապահովել:

Հարցումներ կը դնեմ, քննադատութիւն չեմ ըներ: Բայց կազմակերպական ու նիւթական ներդրումին դիմաց, յաջորդիւ թերեւս աւելի արդիւնաւէտ կ'ըլլար ընտրանիի մը ներկայութիւնը՝ մարդոց ակընկալած որակը գտնելու համար:

Հ.- Ինչպէ՞ս տեսաք այսօրուան գրական համայնապատկերը:

Պ.- Առիթներ եղան հեռակայ ծանօթներու հետ անձնական կապեր հաստատելու, չատ հին ծանօթներու հետ կապեր նորոգելու եւ բոլորովին նոր ծանօթութիւններ կատարելու: Անոնք ընդհանրապէս կը պատկանին երբեմն հաստատութիւններու մէջ, յաճախ՝ անոնց լուսանցքին գտնուող արժէքաւոր գրագէտներու, բանասէրներու եւ գրականագէտներու այն խումբին, որ ո՛չ միայն տարբեր ձեւերով կը փորձէ հին կաղապարները թօթափել, այլեւ աշխարհի հետ նոր յարաբերութիւն մը մշակել, ու այդ ընթացքին մէջ՝ երբեմն Սփիւռքի այսօրուան գրական ընթացքին հետ կապը սերտացնել: Մեր հասարակաց եզրերը չատ աւելի էին, քան մեր բնական տարբերութիւնները: Ու հոս կ'ուզեմ կրկնել ժամանակին ըսածս, թէ «Յառաջ»ը կարեւոր դեր մը կը խաղայ Երեւանի մէջ չորյան ընդդէմ իր քանի մը տասնեակ օրինակներով: Այդ չորյանառութեան հետեւանքներէն մէկ քանին երբեմն անակընկալներու առջեւ դրին զիս:

Գրական աշխարհը տակաւին անցումի մէջ է. հինը իր մեռած ծանրութեան բաժինով կը չարունակէ ճնշել, նորը ամենատարբեր ձեւերով եւ ուղղութիւններով կը փորձէ ծլարձակիլ՝ անհասկացողութեան, վէճերու, պահպանողականութեան ու տրակարծութիւններու յորձանքին մէջ: Սակայն, այդպէս չէ՞, որ գրական հոլովոյթը անընդհատ կը ձեւաւորուի ու կը նորոգուի:

Հ.- Երիտասարդ, ոչ-տիտղոսաւոր գրողներէ ի՞նչ էին ձեր տպաւորութիւնները:

Պ.- Ինչպէս գիտէք, «երիտասարդ» հասկացողութիւնը չատ առաձգական է մեր մօտ: Սփիւռքի կամ Հայաստանի մէջ քառասուն տարեկան կրնաս ըլլալ ու «խոտրմնալից երիտասարդ», «ապագայի յոյս» կամ նման բաներ նկատուիլ (բարեկամներուս կատակով կ'ըսէի, թէ երբ յիսուն տարեկան դառնամ ոտանաւորներու հատոր մը պիտի տպեմ, որ «երիտասարդ գրող» սեպուիմ): Բայց քանի որ կը պատկանիմ իրենց մազերը դեռ չճերմակցածներու կուսակցութեան, բնականաբար միշտ չահեկան է տարեկից կամ սերնդակից անձերու հանդիպիլ ու ծանօթանալ:

Անձնական ծանօթութիւններու կողքին, այդպիսի պատեհութիւն մը տուաւ, թէեւ թռուցիկ, «Գրական Թերթ»ի Յուլիս 16ի թիւին մէջ լոյս տեսած «Պատուհան» երիտասարդական բաժնի Ա. թիւին բաց քննարկումը, որ տեղի ունեցաւ քանի մը օր եառ: Գացի, հետաքրքրուած, թէ ո՞վ կ'ըլլար, ի՞նչ կը խօսուէր: Աւագ սերունդէն Յովհաննէս Գրիգորեանի եւ Գուրգէն Խանջեանի կողքին, 10 - 12 երիտասարդներ ներկայ էին: Այդ երկու էջերուն «փընչ» հարուածայնութիւն կը պակսէր, ու այդպէս ալ յայտնեցի քննարկումի ժամանակ: Շատերը նոյն կարծիքն էին, մանաւանդ, որ նման հրատարակութիւն մը եղած է առաւելագոյնը, որ երիտասարդները կրցած էին «կորզել» աւագներէն՝ անցեալ Մայիսին Ծաղկաձորի մէջ տեղի ունեցած խորհրդաժողովէն եառ: Ճիշդ է, «Սերունդ» համացանցային պարբերականը կայ, բայց որքանո՞վ նման պարբերականներ տպագիրին հետ կրնան մրցիլ այսօր: Թէեւ ճիշդ է նաեւ, որ համացանցային «Բնագիր»ը, իր տպագիր 99 օրինակներով եւ այլընտրանքային միակ գրական մամուլ ըլլալու հանգամանքով, բաւականաչափ աղմուկ յառաջացուցած է, բայց այդ ալ, կը կարծեմ, լովանդակութեան բնոյթին եւ ո՛չ թէ որակին պէտք է վերագրել:

Ինչ որ է, քննարկումին հետաքրքրականն էր լսել տեղին ու անտեղի դժգոհութիւններու, լուրջ ու անլուրջ կեցուածքներու, չինիչ կամ ոչ-չինիչ քննադատութիւններու չարան մը, որոնք երբեմն բուն գրականութեան հետ չատ աղերս չունէին, բայց յանուն գրականութեան անկեղծ մտահոգութիւն մը կը մատնէին: Ուրտումներ կան, թէեւ յստակ պատկերացումները չկան, թէ ի՞նչ է ուզուածը: Գրականութեան տարբեր ըմբռնումներու՝ փողոցայինէն մինչեւ բարոյախօսականը, պատճէնահանումէն մինչեւ այլաբանականը, ատանդապաշտէն մինչեւ յառաջապահը, բոլորին բախումի չրջանն է հիմա: Բնական չրջան մըն է, որ ժամանակի ընթացքին պիտի հունաւորուի: Թարգմանական աչխատանքը, սփիւռքահայ կամ արեւմտեան գրական փորձառութիւններու ծանօթացումն ալ պիտի օգնեն, որ ատիկա տեղի ունենայ:

Հ.- Գրականութենէն դուրս գալով, պահ մը վերադառնանք առօրեային, քաղաքական կեանքին: Լսելի՞ են ընդդիմութեան ցայցերուն արձագանգները:

Պ.- Կեցութեանս ընթացքին թէեւ ցոյցեր չեղան, բայց քանի մը անգամ գրոյցի ընթացքին արծարծուեցան Ապրիլ 12-13ի դէպքերը: Այն տպաւորութիւնը ունեցայ, ընդհանուր առմամբ, որ մարդիկ եթէ ներկայ իշխանութիւններէն դժգոհ են, ընդդիմութեան հանդէպ ալ չեչտուած վերապահութիւն մը կայ: Ոմանք, որոնք նախագահին նկատմամբ մասնաւոր համակրանք չեն տածեր, Սեբաստպուրկի մէջ Ղարաբաղի հարցին առիթով անոր վճռական դիրքորոշումէն տպաւորուած էին, խոստովանելով, որ «ինձ թուաց, որ այդ մարդու մօտ ինչ-որ բան դեռ պահպանուել է»: Անշուշտ, հակառակը պընդողներ ալ եղան:

Բայց ամէնէն աղմկալից արձագանգը, յարակարծօրէն, գրական ոլորտին կը պատկանի: Գրողներու համաժողովարին, բանաստեղծ Արտեմ Յարութիւնեան չատ բիրտ կերպով յարձակած է Սիլվա Կապուտիկեանի վրայ Ապրիլ 12-13էն եառ «Մեսրոպ Մաչտոց» մետալը վերադարձնելու յայտնի դէպքին կապակցութեամբ: Յարձակումն ալ չարունակուած է մամուլով ու հեռատեսիլային հաղորդում-բանավէճի մը ընթացքին, իսկ Ս. Կապուտիկեանն ալ պատասխանած է «Գրական Թերթ»ի էջերէն: Արդ, մարդ կրնայ համաձայն ըլլալ կամ ոչ անոր ըրածին, քաղաքական հին ու նոր հայեացքներուն կամ գրական արժանիքներուն, սակայն, բոլոր խօսակիցներս համաձայն կ'երեւէին, որ 85 տարեկան կնոջ հանդէպ նման անարգական կեցուածք մը պատչաճ չէր: Միւս կողմէ, ընթացիկ մեկնաբանութիւնը այն էր, թէ Ա. Յարութիւնեան, որ այս տարի պետական մրցանակ ստացած է, քաղաքական պատուէր գործադրած է կամ անձնական չահեր հետապնդած: Թէ այդպէս է կամ ոչ, ի հարկէ միայն ինքը կրնայ գիտնալ:

Հ.- Ինչ կարելի է ըսել տեղական ընդհանուր տրամադրութեան մասին:

***Պ.- Որ տեսակ մը համակերպում ցոյց կու տայ, ձեռնթափութիւն, «ոչ մի բան չի փոխուելու»ի ճակատագրապաչտ կեցուածքը:** Ի հարկէ, ճիշդ չէ այս յուսահատութիւնը, այս անտարբերութիւնը, բայց դաս տալու բարոյական իրաւունքը չեմ կրնար ունենալ:*

Տարեկից ընկերուհի մը, նախորդ կառավարութեան ակնարկելով կ'ըսէր, թէ «ես չեմ ներում, որ նրանք ժողովրդի ոգին կոտրեցին»: Այդ քանդումը առկայ է՝ «ազգային արժէքներու վերադարձ»ի բոլոր հռետորական յայտարարութիւններէն անդին: Երբ ականատես կ'ըլլաս այսպէս կոչուած «վերին խաւ»ի ցուցամոլութեան՝ պերճաչուք տուներու կամ ինքնաչարժներու, օրինքէն վեր համարելու, եւ դիտես, որ իր քրտինքին արդիւնք վաստակով ոեւէ պաչտօնատար (կամ իր զաւակը) չի՛ կրնար Մերսեդէս մը ունենալ, ի՞նչ «ոգի» կրնաս պահել... Երբ օրապահիկը (եթէ գործ ունենալու բախտը ունիս) հազիւ կը բաւէ բնտանիքի մը տարրական կարիքները հայթայթելու:

«Ծոյլ բախտաղը» ասենք: Քանի մը չաբաթէն տարադրամի փոխարժէքը 560էն 495 դրամի իջաւ (ես դրպանիս մէջ կրեցի 530էն 495ի նուազումին հետեւանքները՝ Յուլիս 7-22ին), իսկ մէկ օրուան մէջ՝ Յուլիս 23ին, տոլարի սակը 495էն կրկին անցաւ 520 դրամի, ու այդպէս ալ կը մընայ մինչեւ այսօր: Աչխարհի ամէն կողմ անչարժ տոլարը ինչպէ՞ս նման վերիվայրումներ կ'ունենայ: Տնտեսագիտութենէ բան մը կը հասկնանք, ու ասիկա պահանջարկի եւ առաջարկի օրէնքին արդիւնքը չէր...: Շուկային մէջ տոլարներու մեծ դումար մը մտեր ու ելեր է, ուրիչ բացատրութիւն չկայ: Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ: Որո՞ւ չահերուն է նպաստ: Ամէն պարագայի, ո՛չ այն պարզ քաղաքացիին, օրինակ, որու արտասահմանէն ստացած 100 տոլարին փոխարժէքին 10 առ հարիւրը «կերեր են» այս ձեռնախաղով, որուն իեղթի պատկող ո՛չ մէկ պաչտօնական բացատրութեան հանդիպեցայ:

Մարդիկ ամէն օր ականատես են, թէ ինչպէ՞ս կայչնիկները (եռուզեռի ոստիկանները) որեւէ պատրուակով ըստ բախտի ընտրուած ինքնաչարժ մը կը կեցնեն՝ «Զարենցը տո՛ւր»ի պահանջով (այսինքն, հազար դրամի պարտադիր «տուրք»ը), խախտում գործադրուած ըլլայ թէ, սուտ՝ վորպարտ ո՛չ: Օդակայանէն դէպի քաղաք առաւօտեան ժամը 2ին պացող մէկ ինքնաչարժը Երեւան չմտած կեցուցին եւ «օրինաւոր» կողոպուտը գործադրուեցաւ՝ ո՛չ մէկ պատճառով: Եթէ անտեղեակ զբօսաչրջիկ մը ըլլայ, հոյակապ «ընդունելութիւն» մը կ'ըլլար, չէ՞ք կարծեր, հայաստանեան «հիւրասիրութեան» առաջին ճաչակ մը...:

Ու նկատեցէք, որ կը մեկնիմ զուտ ընկերա-տնտեսական երեւոյթներէ, առանց մտնելու քաղաքական ծանօթ խնդիրներուն մէջ: Մտածեցէք եթէ այսքանը չի՞ բաւեր, որ մարդիկ օրէնքի գործադրութեան, արդարութեան կայացումին, իրաւահասարութեան զգացումին հանդիպ վերապահ, յուսախաբ, նոյնիսկ անտարբեր ըլլան:

Հ.- Իսկ դո՞ւք:

Պ.- Տասներեք տարիներէ ի վեր այս կամ այն ձայնը կը կրկնէ, թէ այս բոլորը բնական է, թէ նման նորանկախ երկիր մը, իր բոլոր դիմագրաւած հարցերով, նմանօրինակ նեղութիւններէ պիտի անցնի եւ թէ մարդիկ թերահաւատ պիտի ըլլան բարւոք ելքի մը մասին: Նաեւ, թէ բոլոր քննադատելի կողմերը կարելի է գտնել արեւմտեան որեւէ երկրի մէջ: Ընկերային անհաւասարութենէն մինչեւ կաչառակերութիւնը, փտախտէն մինչեւ անարդարութիւնը, գործազրկութենէն մինչեւ բռնութիւնը: Բայց նման բաներու առաջքը առնելու նպատակով, այդ երկիրները սովորաբար ազդու քաղաքականութիւններ կ'որդեգրեն, որոնց հետեւանքով մարդիկ չեն ձգեր-չեն երթար ուր որ հովը փչէ: Իսկ Հայաստանը ըստ էութեան ի՞նչ կ'ընէ՝ երեւութական «laissez faire, laissez passer»էն անդին:

Այս ժամանակաչրջանը այնքան չարափոփոխ եղած է, որ բոլոր եզրակացութիւնները ժամանակաւոր են: Սակայն, ընկերային չերտաւորումի հետզհետէ խորացող վիհը քնաւ լաւ նչան մը չէ ապագայի հաչուոյն: Բաժակը նախ լեցնելու եւ ապա յորդած չուրը չունեցողներուն վրայ սրսկելու անառեսական քաղաքականութիւնը աչխարհի ո՛չ մէկ երկրին մէջ չաջողած է, ինչպէս փաստած է ոչ այլ ոք, քան Համաչխարհային Դրամատունը: Պրազիլը աչխարհի ութերորդ անտեսութիւնն է, բայց 170 միլիոն բնակիչները քանի՛ տասնամեակէ ի վեր կը «վայելեն» ընկերային բեւեռացումի աննախանձելի իրավիճակ մը,

Քանի որ յորդած բաժակին խօսքը ըրի, ընթերցողը կրնայ ինծի յիչեցնել կիսով չափ լեցո՞ւն, թէ կիսով չափ պարապ դատաթ մը չուրին նոյնքան չանչի պատկերը: Ինծի կը թուի, որ Հայաստանի դատաթը եթէ մէկ կողմէ դանդաղօրէն կը լեցուի, սակայն միւս կողմէ դատաթին պատռատութեան որակը չատ բարձր չէ, ինչ որ պատճառ կը դառնայ, որ ապակիին ճեղքերէն չուրը թափանցէ ու կորսուի: Եւ ուրեմն, հարցականները կը չարունակեն դիզուիլ: Որքա՞ն ժամանակ երկիրը կրնայ թոյլ տալ, որ իր հիմնական ներուժը՝ մարդկային տարրը, յուսալքութեան, միչտ «վերջը լաւ կը լինի»ի տեսլականով: Կեանքը միայն մէկ է, եւ ամէն մարդ իրաւունք ունի այդ միակ կեանքը լաւագոյնս ապրելու...:

Հարցազրոյցը վարեց՝
ԱՐՓԻ ԹՈՓՈՒԶԵԱՆ

ՊԱՐԻ ՄԱՍԻՆ ՅԱՒԻՍԻՐՏ ՁՐՈՅՑ ՊԱՐՈՒՈՒՈՅՑ ՎԱՆՈՒՇ ԽԱՆԱՄԻՐԵԱՆԻ ՀԵՏ

Վ. Խանամիրեան Հայաստանի մէջ հայկական պարի հեղինակաւոր դէմք է: Վերջերս իր անունով կոչուած ազգային փառատօն մը կազմակերպուած էր, որուն ընթացքին պարգեւատրուած էին հայկական ժողովրդական պարերով հանդէս եկած խումբերը: Նոյն առթիւ իրեն հետ կատարուած հարցազրոյց մը կը բանայ այսօր «հայկական պար» անունով ներկայացող խառնիճաղանճին թղթածրարը:

***

Հ.- Պ. Խանամիրեան, մեր մշակոյթի շատ գործիչներ դժգոհում են, որ արեստի շատ ճիւղեր՝ թատրոնը, գրականու-

այդ մարդու մօտ ինչ-որ բան դեռ պահպանուել է»: Անշուշտ, հակառակը պընդողներ ալ եղան:

Բայց ամէնէն աղմկալից արձագանգը, յարակարծօրէն, գրական ոլորտին կը պատկանի: Գրողներու համաժողովարին, բանաստեղծ Արտեմ Յարութիւնեան չատ բիրտ կերպով յարձակած է Սիլվա Կապուտիկեանի վրայ Ապրիլ 12-13էն եառ «Մեսրոպ Մաչտոց» մետալը վերադարձնելու յայտնի դէպքին կապակցութեամբ: Յարձակումն ալ չարունակուած է մամուլով ու հեռատեսիլային հաղորդում-բանավէճի մը ընթացքին, իսկ Ս. Կապուտիկեանն ալ պատասխանած է «Գրական Թերթ»ի էջերէն: Արդ, մարդ կրնայ համաձայն ըլլալ կամ ոչ անոր ըրածին, քաղաքական հին ու նոր հայեացքներուն կամ գրական արժանիքներուն, սակայն, բոլոր խօսակիցներս համաձայն կ'երեւէին, որ 85 տարեկան կնոջ հանդէպ նման անարգական կեցուածք մը պատչաճ չէր: Միւս կողմէ, ընթացիկ մեկնաբանութիւնը այն էր, թէ Ա. Յարութիւնեան, որ այս տարի պետական մրցանակ ստացած է, քաղաքական պատուէր գործադրած է կամ անձնական չահեր հետապնդած: Թէ այդպէս է կամ ոչ, ի հարկէ միայն ինքը կրնայ գիտնալ:

Հ.- Ինչ կարելի է ըսել տեղական ընդհանուր տրամադրութեան մասին:

***Պ.- Որ տեսակ մը համակերպում ցոյց կու տայ, ձեռնթափութիւն, «ոչ մի բան չի փոխուելու»ի ճակատագրապաչտ կեցուածքը:** Ի հարկէ, ճիշդ չէ այս յուսահատութիւնը, այս անտարբերութիւնը, բայց դաս տալու բարոյական իրաւունքը չեմ կրնար ունենալ:*

Տարեկից ընկերուհի մը, նախորդ կառավարութեան ակնարկելով կ'ըսէր, թէ «ես չեմ ներում, որ նրանք ժողովրդի ոգին կոտրեցին»: Այդ քանդումը առկայ է՝ «ազգային արժէքներու վերադարձ»ի բոլոր հռետորական յայտարարութիւններէն անդին: Երբ ականատես կ'ըլլաս այսպէս կոչուած «վերին խաւ»ի ցուցամոլութեան՝ պերճաչուք տուներու կամ ինքնաչարժներու, օրինքէն վեր համարելու, եւ դիտես, որ իր քրտինքին արդիւնք վաստակով ոեւէ պաչտօնատար (կամ իր զաւակը) չի՛ կրնար Մերսեդէս մը ունենալ, ի՞նչ «ոգի» կրնաս պահել... Երբ օրապահիկը (եթէ գործ ունենալու բախտը ունիս) հազիւ կը բաւէ բնտանիքի մը տարրական կարիքները հայթայթելու:

«Ծոյլ բախտաղը» ասենք: Քանի մը չաբաթէն տարադրամի փոխարժէքը 560էն 495 դրամի իջաւ (ես դրպանիս մէջ կրեցի 530էն 495ի նուազումին հետեւանքները՝ Յուլիս 7-22ին), իսկ մէկ օրուան մէջ՝ Յուլիս 23ին, տոլարի սակը 495էն կրկին անցաւ 520 դրամի, ու այդպէս ալ կը մընայ մինչեւ այսօր: Աչխարհի ամէն կողմ անչարժ տոլարը ինչպէ՞ս նման վերիվայրումներ կ'ունենայ: Տնտեսագիտութենէ բան մը կը հասկնանք, ու ասիկա պահանջարկի եւ առաջարկի օրէնքին արդիւնքը չէր...: Շուկային մէջ տոլարներու մեծ դումար մը մտեր ու ելեր է, ուրիչ բացատրութիւն չկայ: Ինչպէ՞ս եւ ինչո՞ւ: Որո՞ւ չահերուն է նպաստ: Ամէն պարագայի, ո՛չ այն պարզ քաղաքացիին, օրինակ, որու արտասահմանէն ստացած 100 տոլարին փոխարժէքին 10 առ հարիւրը «կերեր են» այս ձեռնախաղով, որուն իեղթի պատկող ո՛չ մէկ պաչտօնական բացատրութեան հանդիպեցայ:

Մարդիկ ամէն օր ականատես են, թէ ինչպէ՞ս կայչնիկները (եռուզեռի ոստիկանները) որեւէ պատրուակով ըստ բախ-

ժողովրդական: Շատ քչերն են այսօր կարողանում օգտուել մեր մաքուր ու զուլալ պարի եւ երաժշտութեան ակունքներից: Այս ի՞նչ պարեր են պարում օտար չարժամներով: Հէ՛յ ազգերը մէկ քայլ տեղաշարժում են, զգում եմ, որ դա հայկական չէ: Թող չթուայ թէ դէմ եմ ազատութեանն ու անկախութեանը, ընդհակառակը, ժամանակակից պարեր չատ եմ սիրում, բայց չեմ ընդունում էժան ճապաստիկ ձեռք բերուածը: Հիմա խայտառակ ձեւով մեր պարարուեստով մօտաէ ոտքի մատների վրայ պարելը, ծնկների վրայ թռչելը, օդի մէջ ու գետնի վրայ պատուելը... այդ բոլոր չարժումները մերը չեն, դրանք օտարամոլ են, մեր հարեւաններինն են, մեզ հետ բնաւ կապ չունեն: Մեր դրեթէ բոլորը պարերը զանազան կատած են՝ բացառութեամբ «Վերմերի»ի: Երբ ուշադիր նայում ես մեր ազգային պարերին, տեսնում ես, որ միտք ու թեմա կայ:

Հ.- կը մեկնաբանէ՞ք մի քանի պարերի «միտքն ու թեման»ն:

Պ.- Մենք ունենք Սասնայ «12 Ոտ» պարը, որը կը մեկնաբանեմ այսպէս. գորենի կալի չուրջ եղները պտտուում են, որ գորենը կալսեն, իսկ կողմը մարդիկ չուրջպար են բռնում եւ իրենց պարով եղներին ուժ են տալիս:

Ունենք երէքյարկանի «Բերդ» պարը, որը ոչ թէ պար է, այլ ազգային նկարագիր. պինուրները նատած են խոր փոսի մէջ, փոքր-ինչ հեռուում կանգնած են թուրքերը: Հայ պինուրներից մէկը, դիմելով միւսին, հարցնում է, թէ արդեօք թշնամին չի՞ երեւում: Վերջինս նայում է ու ասում, որ ջոյը չի հասնում հեռուն տեսնելու համար: Մի քանիսին ուսերի վրայ են բարձրացնում եւ կազմում երկրորդ յարկը: Դարձեալ ոչինչ չտեսնելով՝ կազմում են երրորդ յարկը եւ նոր միայն տեսնում թշնամուն:

Սասունցիները ունեն «Մափպար» (աւելի տարածուած է Թուրքերէն «Երբխուշա» անունը), դա մարտական ցնծութեան պար է: Ոնց էլ նայենք, միեւնոյն է, այդ պարը մարտից առաջ նախապատրաստուել է նշանակում: Պարողները, ծափ զարկելով, ուժ են հաւաքում: Թալինի չրջանի Աչնակ գիւղում 2 եղբայրներ կային, ովքեր էլ հիմնեցին Աչնակի պարի խումբը: Այդ ո՞նց էին պարում այդ պարը: Ես որ գնացել էի նրանց պարերը բեմադրելու, ստացուեց այնպէս, որ չատ բաներ նրանցից սովորեցի: Երբ փորձում էի աչնակցիների հետ պարել, իմ պարը չէր ստացւում: Նրանք զարմանալիօրէն իրենց ամբողջ մարմինը, նոյնիսկ ոսկորները էլ են չարժում: Ուրիշ ձեւի են պարում, ուրիշ արիւն կայ էդ սասունցիների մէջ:

Հ.- Դժգոհում էք, որ օտարամոլ շարժումներ կան մեր պարի խմբերում, իսկ ի՞նչ է անում այդ ուղղութեամբ պարարուեստի գործիչների միութիւնը, որի նախագահը Դուք էք:

Պ.- Մեր միութիւնը ստեղծել ենք մէկ նպատակով՝ փորձել ճշդրիտ ճանապարհի վրայ կանգնեցնել մեր պարի խմբերի ղեկավարներին, որ իրենց սաներին սովորեցնեն հայկական պարեր: Երբեմն ամաչում եմ ե՛ւ պարողների, ե՛ւ պարողների ծնողների փոխարէն: Չեմ հասկանում՝ ի՞նչ են մտածում, որ իրենց երեխաներին տանում ու սովորեցնում են պորտապար պարել. Հայը որտե՞ղ, պորտապարը՝ որտե՞ղ: Մենք այնքա՜ն հարուստ ենք ազգային պարով: Աչխարհում ոչ մի երկիր այնքան պար չունի, որքան մենք: Բա ի՞նչ տարապներ ունենք... Ո՛վ հասնում, տարապի էսքիզներ է նկարում, ա՛խր, դրա համար յատուկ նկարիչներ կան: Ամէն մարդ պէտք է իր գործով զբաղուի: Եթէ ես փորձեմ կարտոֆիլ աճեցնել, չի ստացուի, որովհետեւ ես կարող եմ միայն պար բեմադրել:

Ես միշտ ասում եմ՝ օգտուէք ակունքներից: Ջուրն էլ եթէ փորձես ակունքներից խմել, կը տեսնես տարբերութիւնը: Ես չեմ ասում, թէ պէտք է պարենք այնպէս, ինչպէս մեր մեծերը: Մեր ծերունիները չեն կարողացել ազատ չարժուել, ձեռքերը վեր բարձրացնել՝ զուտ տարիքի հետ կապուած: Մեր չատ պարի ղեկավարներ ասում են, թէ ձեռքերը ներքեւում պարելը ճիշդ է: Դա ճիշդ չէ, ձեռքերը պէտք է վերեւ լինեն: Մենք պէտք է օգտուենք ակունքներից, մեր պարերի բոլոր տարրերը վերցնենք եւ աչխարհի ռիթմից յետ չընկնենք: Աչխարհի պարը առաջ է գնում, մենք չպէտք է ուշանանք: Անհրաժեշտ է, որ ժամանակի հետ քայլենք, քայց, կրկնում եմ, պէտք է ակունքներից օգտուենք: Մենք ունենք պար, որի կատարումը ժամեր է տեւում: Դա այսօր ժամանակի մէջ չի տեղաւորւում, ժողովուրդը դա չի նայում: Պէտք է այդ տարրը վերցնել եւ ժամանակի ընթով օգտագործել, այլ ոչ թէ պորտապար բեմադրել:

Հ.- Երբ ամբողջ օրը լսում ես ժամանակակից ,յատկապէս արաբական երաժշտութիւն, շարժումներդ, բնականաբար, հայկական չեն լինում: Ուրեմն՝ նախ պէտք է լուծել երաժշտութեան խնդիրը:

Պ.- Մենք իրօք այնքա՞ն չատ ենք լսում ժամանակակից երաժշտութիւն: Պարի խմբերի ղեկավարներ կան, որ լսում են ժամանակակից երաժշտութիւն՝ առանց հասկանալու, թէ ինչ բառեր են երգի մէջ, եւ սկսում են պար ուսուցանել: Լինում է, երբ երգի մէջ հայհոյանք է հնչում, բայց պարի ղեկավարը չի հասկանում: Բայց չէ՞ որ մենք ժողովրդական մաքուր ու զուլալ երգեր չատ ունենք:

Հ.- Այդ «մաքուր ու զուլալ» երաժշտութիւնը գրեթէ չի մատուցւում:

Պ.- Այո՛: Եւ դա է ամբողջ խնդիրը: Հեռուստատեսութեան եւ ռատիոյի եթերը առաւօտից մինչեւ երեկոյ ողողուած է այլազգի երաժշտութեամբ: Այս խեղճ ժողովուրդը չփոթուել է, չի կարողանում կողմնորոշուել: Մէկ էլ տեսար՝ հայ կատարողի երգում հնչում է արաբական երաժշտութիւն՝ հայկական բառերով... Մենք դրա դէմ պայքարում ենք, բայց չատ դժուարութեամբ ենք առաջ գնում: Ես երջանիկ եմ, որ չատ պարերի բեմադրիչները իմ խօսքն ընդունում են: Թէկուզ հէնց իմ անուան փառատօնում ոչ մի ժամանակակից պար չպարեցին: Ես հօ չե՞մ ասում, թէ ժամանակակից չպարենք: Պարենք, բայց հայկական երաժշտութեան տակ: Մենք այնպիսի լաւ էստրադային երաժշտութիւն ունենք, որ եթէ պարենք մեր երգերի տակ, կը ստացուի ե՛ւ գեղեցիկ, ե՛ւ մեզ հարազատ: Թէ չէ, երբ անգլիական երաժշտութեան տակ է Հայը պարում, Անգլիացին կը նայի ու կը մտածի, թէ ծաղրում ենք իրենց պարերը: Իսկ եթէ մեր երաժշտութեան տակ պարենք, ինչ չարժում էլ անենք, հայկական կը ստացուի: Այդ ուղղութեամբ մեր միութիւնը չատ քայլեր է ձեռնարկում: Վերջերս ստեղծեցինք վետերանների մի խումբ, կարել տուեցինք չատ գեղեցիկ տարազներ (ի հարկէ, ոչ մի պետական աջակցութիւն չեղաւ) եւ Օփերայի 70ամեակին նուիրուած միջոցառման ժամանակ պարեցինք: Ու տեսանք, թէ ժողովուրդը ինչպէս էր կարօտել ե՛ւ հայկական պարին, ե՛ւ ազգային տարազին, ե՛ւ զուռնա-տոհոլին:

Զրուցեց՝
ԱՐԳԻՆԷ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԸ

«Իրաւունք», Օգոստոս 6/12

ՍՏԱՑԱՆՔ

ԾՆՆԴԵԱՆ 100ԱՄԵԱԿ
1903 - 2003
ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐԻ

ԱՆԴՐԱՆԻԿ Լ. ՓՈՂԱՏԵԱՆ

Հրատարակութիւն
Թէֆէեան Մշակութային Միութեան
Նիւ Եորք - Նիւ Ճըրզի մասնաճիւղին

Տպագրութիւն
«Սիսիան» Հրատարակչատուն
Պէյրութ - Լիբանան

ԹԷՆ ՋՈՒՐ ՁՈՒՆԻՔ...

Ջուրի համաչխարհային երրորդ ֆորումին որ տեղի ունեցաւ 2003 Մարտին Ճափոնի Քիոթօ քաղաքին մէջ, յաճախ գործածուեցաւ «զօրութենական (վիրքիւէլ) Ջուր» արտայայտութիւնը: Այդ յղացքը որ վերջին տասնամեակներուն պտուղն է, նոր տարածք մը կը բերէ երկրագունտի ջրային պաշարներուն մատակարարութեան վիճարկումներուն: Բնորոչումը կը մղէ դիտակցելու թէ աչխարհը Ջուրի ծանր տագնապի մը դէմ յանդիման է եւ պէտք է տարբեր մօտեցում ցոյց տալ անոնցմէ ներու եւ Ջուրի թեմաներուն:

«Զօրութենական Ջուր» արտայայտութիւնը ստեղծուած է 80ական տարիներուն խորացէլացի տնտեսագէտներու կողմէ, որոնք նկատած են թէ տնտեսագէս չատ անհեթեթ բան է իրենց երկրին մէջ այնքան քիչ գոնուող Ջուրը արտածելու քաղաքականութիւնը: «Ջուրը արտածել» կը նկատեն անոնք Խորացէլի չոր ու ցամաք հողին վրայ ոռոգումի արտակարգ թէքնիքներով հասցուած նարինջները, ափիկատները այլ երկիրներու վաճառելու գործը:

«Զօրութենական Ջուր»ը այն Ջուրն է որ գործածուած է անոնցմէ ներու մչակոմին ընթացքին: Օրինակ, քիլօ մը ցորեն հասցնելու համար անհրաժեչտ է հազար լիթր Ջուր: Քիլօ մը մխին համար այդ քանակութիւնը հինգէն տասն անգամ աւելին է: Այլ խօսքով, երբ երկիր մը ցորեն, կամ մխ կ'արտածէ, արտածած կ'ըլլայ նաեւ իր Ջուրի պաչարները: Մանաւանդ երբ արտածուած ապրանքը մեծ քանակութեամբ Ջուրի պահանջ ներկայացնող մչակումի արդասիք է: Ըսուածը ա՛լ աւելի մեծ նչանակութիւն կը ստանայ Ջուրի աղքատիկ պաչարներու տէր երկիրներու համար: Այդ երկիրները յետագային ամէնէն առաջ դէմ յանդիման պիտի մնան Ջուրի լուրջ նեղութեան:

Ջուրի խնայողութեան նպատակով զօրութենական Ջուր պարունակող հացահատիկներ ներածելու քաղաքականութիւնը կը մղէ փոփոխութեան ենթարկելու երկրի մը արտադրական կառոյցները: Հնդկաստանի Փէնճապի չրջանին կառավարութիւնը մօտ 230 միլիոն Եւրոյի յատկացում ուզած է, մղելու համար գիւղացիները որ փոխանակ մեծ քանակութեամբ Ջուր պահանջող բրինձ ու ցորեն մչակելու, նախընտրեն նուազ Ջուրի կարօտ մչակումները: Թելադրութեան հետեւողները կը վարձատրուին: Այդ նպատակով նկատի առնուած տարածութիւնը մէկ միլիոն հեկտար է:

Այսպէս, հակառակ անկատարութիւններուն, զօրութենական Ջուրի գաղափարը նոր հեռանկար մը բացած է Ջուրի մատակարարման եւ Ջուրին, անդադարութեան եւ առեւտրական փոխյարաբերութիւններու վիճարկումներուն մէջ:

ՔԱՂՀԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻՒԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

- Ո՞րն է քու կարծիքովդ կնոջ գործը:

- Ամէն բանէ առաջ հլու հնազանդութիւն, համաձայն իր ուխտին եւ երդումին, սրբագործուած պսակով, կրօնքին ու օրէնքին ուժով: Այո՛, ամէն բանէ առաջ հլու հնազանդութիւն: Էրիկ մարդը կինայ նոյնիսկ սխալիլ: Այո՛, նոյնիսկ կամաւ սխալի մէջ իյնալ: Կինը, ճշմարիտ կինը պարտի տանիլ ամէն բան: Եւ տանիլ զոհունակութիւնով, առանց նոյնիսկ վչտալի նայուածքի մը: Եթէ կիներն ալ մեզի նման ըլլան, այն ժամանակ աչխարհի մեծագոյն ազէտը կը պատահի: Արդէն մեզի հաւասար չըլլալով ամէն բան մասի վրայ էք առեր, ուր մնաց եթէ առաջ ըլլաք... Մարդոց բոլոր քաշածը կիներուն ձեռքէն է: Մեզի առանակի պէս կապեր էք ու տակաւին կ'ուզէք ախոռ խօթել: Ազատութիւնը մեզի համար է:

- Դրիզոր, ալ չեմ խօսիր: Պատասխանի արժանի չես:

- Այդպէ՞ս... Երբ պատասխան չունիս տալիք՝ կը նահանջես: Այս ալ այսէս է: Կամ հնազանդութիւն եւ կամ...

- Եւ կամ ի՞նչ...

- Եւ կամ ես ազատ եմ...

- Արդէն ազատ ես, արդէն ամէն բան կ'ընես: Գիչերէ գիչեր իբրեւ պանդոկ ուսնդ կը նատիս: Իբրեւ պանդոկ ու ճաչարան: Ատ ալ կրնաս դադրեցնել: Այս է եղեր իմ ճակատագիրս... Մէ՛դ եղաւ ինծի: Կ'արժէ՞ր որ ես քեզի պէս մէկուն համար այդքան խենթութիւններ ընէի: Այդքան խենթութիւննե՞ր... Երկու անգամ խայտառակ եղայ...

Ու արցունքները, քէն, կսկիծ, լռութիւն, տխրութիւններ ու կռնակ կռնակի պառկիլ:

***

Դեռ կը չարունակէր Ազատութեան մեծ հանդէսը:

Ազատութեան սիրոյ համար շատ արիւններ թափուեցան,
Անմեղ հայրեր ու զաւակներ եկան այսսեղ պառկեցան:

Այո՛, Ազատութիւն, ելլէֆտէրլիա, հիւբրիտ՛թ, լիպէրթէ... Ազատութի՛ւն...

Կարմիր ու ճերմակ հագած հրեչտակ մը իջաւ երկինքէն ու Պոլոյ վրայ կեցաւ:

Երկինքէն գինի կը տեղար: Ամէնէն խելօքներն անգամ արբեցած էին:

Ճառ, ճառ, ճառ: Ծրագիր-կանոնագիր: Ժընեւ, Թիֆլիս, Փարիզ, Լոնտոն, Սելանիկ, Ստանպոր, Տալուորիկ, պարսկական ահմանն, ռուսական ահմանն, անահմանն ազատութիւն: Ազգային, ընկերվարական, գործադուլ, ընկեր Կոզիկեան, Վերակազմեալ Շնչակներ, Լեւոն Լարենց, Զապէլ Եսայեան, «Դրախտի երգեր», «Ապրած Քրնար մը Բինկհեամի մոխիրներուն վրայ», Խաճանեան, Աւետեան վրդ., Սիւրմէեան, Ճիշատակարան, «Գազազ Արթին Ամիրա», Քիւչիւկեան, Ազգ. Ժողով, երեսփոխաններ, Երուանդ Օտեան, Վահան Թէքէեան, «Շիրակ», Արփիարեան, «Կարմիր Ժամուց», Արշակ Զօպանեան, «Նահապետ Քուչակ», «Անահիտ», «Թուղթի փառք», «Դուն նատեր ես ճամբաներուն անկիւնը», կոմսարարական, Բաչալեան, Բիւզանդ Քէչեան, պահպանողական, կըղերական, աղայական, Թալիֆայական, իմամական, ամիրայական: «Ապատամարտ», բացառիկ թիւ, Ռուբէն Զարդարեան, Շահրիկեան, «Դիւցազնօրէն»:

Քրիստափոր, Ռոստոմ:

Զաւարեան:

Ու խոմբեր, խոմբեր, խոմբեր: Շարքեր, կնկերներ, համակիրներ:

Գրիգոր Զօհրապ, Պետրոս Հալաճեան, Փաստրմաճեան եւ Վարդգէս:

- Բերինք, ամէն գինով, Ազատութիւնը բերինք, հայ ժողովուրդ...

Ծերունի գինով մը անկիւնէ մը կը պոռայ Թրթռուն յուզումով.

- Ապրիք, աու ինչ աղուոր, անոյչ բան է եղեր Ազատութիւնը: Դոնէ չատ բերէիք, չա՛տ, չհատնէր...

- Սո՛ւս, փո՛ւս, լռութիւն...

- Լռութիւնա ո՞րն է... ինչ փսել է...

- Հարկաւ, մարդուն սիրտը վառած է բռնակալութենէն...

- Ալքոլով վառած է անոր սիրտը...

- Կը բողոքեմ...

- Ասոր կ'ուզեմ... Ազատութիւն կայ...

- Այո՛, յարգենք խօսքի Ազատութիւնը...

- Առաջ անցին, Սարգիս աղա...

Ու Սարգիս աղա կը ճեղքէ բազմութիւնը: Իրեն կ'օգնեն: Բեմ կը բարձրանայ հապճեպով:

Ահա թեմին վրայ է Սարգիս աղան: Կը լուէ սակայն: Աչք յօնք կ'ընեն որ խօսի: Սարգիս աղա ճիպ մը կ'ընէ, կը ցցէ կուրծքը ու կը պոռայ իր բոլոր ձայնովը:

- Շատ ապրիք ամէնքդ ալ... Երանի՛ երիտասարդներուն՝ օրը անոնք պիտի տեսնան... չատ ապրիք... Դո՛ւք, յեղափոխականներ, Աստուած ձեր կեանքը պահէ... հազար ապրիք... կեցցէ՛ յեղափոխութիւնը, կեցցէ՛ մեր ազգը, կեցցէ՛, կեցցէ՛ մեր անուչիկ Հայաստանը...

Ծափահարութիւններու ուրկան: Սարգիս աղա խոնարհութիւն կ'ընէ: Աչքերուն մէջ արցունք կը տեսնուի: Դեռ թեմին վրայ է: Անգամ մը եւս կը խօսի.

- Մեր անուչիկ Հայաստանին համար ծափ զարնելով չըլլար, տուէն հայ վաբա տալու է: Ես, հա, չորս մէճիտիէ ունիմ, հէլալ ըլլայ... Առէ՛ք... առէ՛ք... տալու է ,մեր անուչիկ Հայաստանին մէջ եղող աղքատ աղբարներուն համար է...

Ու Սարգիս աղա բեմ/բատացին սեղանին վրայ կը դնէ չորս մէճիտիէ:

Ծափահարութիւն:

Երգիչ խոմբը կ'երգէ.

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք գետին տեղ չավատ,
Սուրբ աւուդ պիտի յիշուի անդադար,
Հսկայ լերինք եզ ապաստան, Անդրանիկ:

(Շար. 101)

(Շար. Ա. Էջէն)

գահի օգնական Վ. Սարգսեան ըսած թէ ան կը կրկնուի երկու, կամ չորս տարին անգամ մը։

ԼՂԵ

ԵԴՈՒԱՐԴ ԱՂԱԲԷԿԵԱՆ ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Օգոստոս 22ին, քաղաքապետական ընտրութեան Բ. փուլին Ստեփանակերտի քաղաքապետ ընտրուած է Ե. Աղաբէկեան. ան ընդդիմութեան թեկնածուն էր, Ազգ. Ժողովի ընկերային հարցերու մնայուն յանձնաժողովին նախագահը։ Իր մրցակիցը եղած է Պաւէլ Նալբանեան որ պաշտօնական դիրքի տէր չէ, միայն 1990ական թուականներուն կարճ տեւողութեամբ եղած է Ստեփանակերտի փոխ քաղաքապետ։

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

Ա. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՄԷԿ ՈՒԹԵՐՈՐԴ ԵԶՐԱՓԱԿԻՉԻՆ ՅԱՂԹԱԿԱՆ

Կոլամարտիկ Ալեքսանդր Նալպանտեան մէկ ուժերորդ եզրափակիչէն մրցած է Իրաքցի Նաճաֆ Ալիի հետ. այս վերջինը նկատի առած հայ մարզիկին վնասուած շրթունքը, ծանրացած է այդ տկար կէտին վրայ, առով հանդերձ չէ յաջողած պարտութեան մատնել Ա. Նալպանտեանը։ Մրցումը աւարտած է 24-11 արդիւնքով։

ՄՈՍԿՈՒԱՑԷՆ ԿԱՐԻՆԷ Ա.ԶՆԱՒՈՒՐԵԱՆ ՈՍԿԻ ՄԵՏԱԼԻ ՏԷՐ

Սուսերամարտիկ կարինէ Ազնաւուրեան որ Ռուսաստանի հաւաքականին մաս կը կազմէր, ոսկի մետալի տիրացած է։

***

Ընդհանուր դասաւորման մէջ ԱՄՆ կըրկին գլուխն անցան 66 մետալով (23 ոսկի)։ Ֆրանսա 5րդ է 25 մետալով (9 ոսկի)։ Մասնակցող պետութիւններէն 65ը դասաւորման մէջ են, թէկուզ մէկ կամ երկու պրոնզեայ մետալով, ինչպէս Ադրբեջան որ 58րդ դիրքը կը գրաւէ երկու պրոնզեայ մետալով, Վրաստան 23րդ է 2 ոսկի եւ մէկ արծաթ մետալով։

Pèlerinage à Tallard

A L'OCCASION
DU 1600e ANNIVERSAIRE
DE LA MORT DE SAINT GREGOIRE

sous l'égide
de l'**Eglise Apostolique Arménienne**
avec le concours
de l'**Association Cultuelle**
des Arméniens de Gap
et des Hautes Alpes

DIMANCHE
19 SEPTEMBRE à 10h30

La messe sera célébrée
par le **Révérend Père Zadik AVEDIKIAN**
Recteur de la Cathédrale Apostolique Arménienne de Marseille et Vicaire du Délégué pour l'Europe du Catholicossat de tous les Arméniens pour le Midi de la France

avec la participation
de la Chorale **Sahak-Mesrop**
sous la direction de
M. Khatchig YILMAZIAN

Renseignements et réservaitons :

— Cathédrale Apostolique Arménienne : Tél. 04 91 77 84 70;
— Association Cultuelle des Arméniens de Gap : Tél. 04 92 51 71 80 / 04 92 51 00 87

Inscriptions S.V.P. avant le 11 septembre

Participation aux frais :
- Aller-retour seul : 20 Euros;
- Aller-retour avec repas : 40 Euros.

ՇԱԻԻԼ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Շաւիլի «Լեւոն Շանթ» դպրոցի վերաբացումը տեղի կ'ունենայ Չորեքշաբթի, Սեպտեմբեր 8, ժամը 9ին։

Աբեղանագրութեան համար դիմել եկեղեցւոյ վարչութեան

Eglise Arménienne
St Grégoire l'Illuminateur
6 rue Père Komitas 92370 CHAVILLE
Tél. : 01. 47. 09. 23. 18.

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Pensez à nous réserver votre journée du DIMANCHE 12 SEPTEMBRE

pour participer à notre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchetre S P I T A K

qui se déroulera dans les jardins
du Dr et Mme KEGHIAN
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel

(en cas de pluie, la fête se déroulera dans la salle paroissiale d'Arnouville-lès-Gonesse, 69 avenue Henri Barbusse 95400 Arnouville)

Programme : Divine Liturgie à 11 heures
Repas à partir de 13 heures
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage des deux **Tombolas** (Enfants et Adultes)

Participation aux frais de la journée : Adultes 20 Euros
Enfants 12 Euros

Réservation par tél. : 01 44 59 23 50 (Paroisse de Paris)
01 40 51 11 90 (Centre Culturel)

100-ԱՄԵԱԿ Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2
ԿԱԼԱ՝ ժամը 16էն 18·30 եւ Ընդունելութիւն ժամը 19էն 22·30
Սալ Կաւոյի եւ անոր սալոններուն մէջ.
Ցայտագիրը կը վարէ ժէրալտ ՓԱՓԱԶԵԱՆ
Տեղերը ապահովելու համար դիմել Փարիզի, Ալֆորվիլի, Արնուվիլըլէ-Կոնէսի, Շաւիլի եւ Իսի-լէ-Մուլինոյի Առաքելական եկեղեցիներու դրասեղանիկներուն։
Նկատի ունենալ որ Հոկտեմբեր 2ի օրը, տեղւոյն վրայ տոմսի վաճառք պիտի չըլլայ։

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2
ժամը 23էն կէս-գիշեր ՀՄԿՈՒՄ
Սուրբ ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ Մայր Տաճարին մէջ

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 3
- *ժամը 8ին, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ,*
- *ժամը 10ին, ԴՈՒՆԲԱՑԷՔ,*
- *ժամը 10·30ին ՊԱՏԱՐԱԳ որուն ընթացքին*

Գոհաբանական Մաղթանք պիտի ըլլայ Ս. Յովհաննէս-Մկրտիչ Մայր Տաճարի
ԵԿԵՂԵՑԱՇԷՆ ԲԱՐԵԲԱՐ ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆՑ
եւ անոր ընտանիքի անդամներուն,
Նաեւ Տաճարիս օծումը կատարող Եւրոպայի Հայրապետական Պատուիրակին՝
ԳԷՈՐԳ Արք. ԻՒԹԻՒՃԵԱՆԻ,
Տաճարիս առաջին Առաջնորդին՝
ՎՌԱՄՇԱՊՈՒՀ Արք. ՔԻՊԱՐԵԱՆԻ, *ի Տանէ Արջուկենց*
եւ եկեղեցւոյ բոլոր բարեբարներուն յիշատակին։

Արարողութիւններու աւարտին, հաւատացեալները հրաւիրուած են բաժնեկից դառնալու աւանդական ՄԱՏՈՒԱԼԻՆ, եկեղեցւոյ շրջափակին եւ «Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— **PARIS**
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19

— **ARNOUVILLE**
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73

— **ISSY-LES-MOULINEAUX**
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25 (le soir)

— **SEVRAN**
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76

— **VALENCE**
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99 (l'après-midi)
MCA : 04 75 55 12 49

— **DECINES**
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97

— **GRENOBLE**
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43

— **ST MAURICE DE BEYNOST**
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07

— **VIENNE**
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80

— **MARSEILLE-VILLE**
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66 (le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեզի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն։

***

ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին
17 rue Պէօ 9րդ թաղամաս - Մեթրօ Գոռ
Մանկապարտէզ 4 տարեկաններէն սկսեալ
(*կը խնդրուի արագօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ*).
+ CPէն մինչեւ Պաֆալօրէա, նաեւ չափահասներու դասարան։
Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, երգ, թատրոն, Պար։
Հեռաձայնել Օգոստոսին՝
- Արաքսի Գարաճֆիլեան՝
01·39·83·71·19

***

La Section «Lola Sassouni» de Marseille organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— **Hôtel. Tourisme en car air conditionné.**
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— **Restaurant tous les soirs et piqueniques assurés.**
— **3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).**
Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne tout compris, visa inclus hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

ՀԻՆԳՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 26
JEUDI
26 AOUT
2004

LE NUMERO : 1 €

ՀԱՅՐԱՔ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 230 եւրօ — Վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար· 270 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
247 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

80ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·010

Fondateur SCHAVARCH MISSAKIAN

80e ANNEE — N° 21·010

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԻՐԱՔ

ՆԱՃԱՖԻ ԿՌԻԻԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻ

Ամերիկեան եւ իրաքեան ուժերը խռնուած են Նաճաֆի հին թաղամասին առջեւ եւ հրահանգ ստացած էին Օգոստոս 24-ին, որ ողջ կամ մեռած ձեռք ղնեն Մոքթատա ալ-Սատրի վրայ, եթէ ինքնաբերաբար չյանձնուի։

Գիշերը (Օգոստոս 23էն 24) կռիւները բուռն բնոյթ առած են եւ բազմաթիւ պայթումներ լսուած են իմամ Ալիի մզկիթին չուրջ, ուր ապաստան գտած են մահուի բանակին անդամները։ Կռիւներ ծագած են նաեւ Ամարա, ուր բրիտանական զօրքը եւ չիի ուժերը հակամարտութեան մէջ են եւ 12 Իրաքցիներ մեռած են։

Նաճաֆի մէջ առաջին անգամն է որ Իրաքցիներ կը կռուին Իրաքցիներու դէմ, ստիկանութենէն զատ որ մնայուն թիւրախ է։ Սկիզբը արդէն իրաքցի զինուորները չեն ուզած զօրանոցէն դուրս ելլել, ինչ որ վրդոված էր Ամերիկացիք, որովհետեւ չէին ուզեր սպաննել «իրենց հայրենակիցները»։ Խոստում տրուած է սակայն Պաղտատի կառավարութեան կողմէ, որ ոչ-ռմահմետական ուժեր սկիզբ չըմտնեն Ալիի սրբավայրը։ Ապստամբները քանիցս կրկնած են, որ իրենց համար մտհիզները «քրիստոնեաններ եւ հրեաներ են, ուրեմն անհատաններ» եւ եթէ մզկիթը փորձեն մտնել, ասպարէզ կարդացած կ'ըլլան ամբողջ չիի համայնքին։

Օգոստոս 25ին, չիի ապստամբութիւնը նաճաֆ չէր սահմանափակուած, երկրին տարբեր բազմաթիւ քաղաքներ Մոքթատա ալ-Սատրի մարդոց ձեռքն են։

Օգոստոս 23էն 24ի գիշերը ամերիկեան ուժերն նետած ռումբերը մզկիթին չուրջ եւ վերեզմանատան վրայ, սկիզբը կը նկատուէին մեծ ծաւալ ունեցող յարձակումի մը։

***

Ոչ մէկ լուր կար, Օգոստոս 25ին, Ֆրանսացի երկու լրագրողներէն (Ֆիկարոյի եւ էՒ·էՖ·Ի թղթակիցները)։ Օգոստոս 24ին, իսլամական խմբակ մը՝ «Իրաքի իսլամական բանակ», տէր եղած էր իսալացի լրագրողի մը՝ Էնձօ Պալտոնիի առեւանգումին, «Ալ-Ճեզիրա» կայանէն սփռուած տեսերիզի մը միջոցաւ։ Խմբակը 48 ժամ պայմանաժամ տուած է Հռոմի իշխանութիւններուն որ քաշեն Իրաքի իրենց 3000 զինուորները, ապա թէ ոչ, չեն երաշխաւորեր Իտալացիին կեանքն ու ապահովութիւնը։ Դատապարտած է նաեւ Պերլիւսքոնին Իսլամի դէմ իր թշնամանքին համար եւ յամառութեան՝ պատերազմին մասնակցելու։ Հոմ, անմիջապէս մերժած է վերջնագիրը, կրկնելով որ պիտի պահպանէ Իրաքի իր զինուրական եւ ոչ-զինուորական ներկայութիւնը։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՌՈՒՍԱԿԱՆ երկու Տուպոլեւ օդանաւեր գրեթէ միեւժամանակ, Օգոստոս 24, ժամը 23ի չուրջ (տեղւոյն ժամով) «արկած» ունեցած են եւ բոլոր ճամբորդներն ալ (90) մեռած։ Մէկ օդանաւը չախչախուած է Մոսկուայէն 180 քմ· հարաւ՝ Տուլա, 44 ճամբորդներով, միւսն ալ 46 ճամբորդներով։ Պուտին անմիջական քննութիւն պահանջած է, քանի ահաբեկչական ա-

տեանքն մինչեւ 18 տարի բանտարկութեան դատապարտումներ ըրած է Օգոստոս 24ին 18 ամբաստանեալներու համար, որոնք Մարաին մասնակցած էին ոճրափորձերու չարքի մը, որմով հետեւանքով 47 մեռեալ կար։ Առաւելագոյն պատիժը կրող երկու ամբաստանեալները Թամօա խումբին կը պատկանին, որ կապ ունի Ալ-Քաիտայի հետ։

ԲԱՔՈՒԻ մէջ տեղի կ'ունենան «Ցաւերժութիւն - 04» կոչուած ռազմափորձեր, մասնակցութեամբ Ադրբեջանի, Վրաստանի ու Թուրքիոյ ցամաքային ուժերուն։ Ռազմափորձերը պաշտօնապէս որակուած են «խաղաղարար» եւ «մարդասիրական» միաւնական գործողութիւններ։ Կը տեւեն մինչեւ Օգոստոս 27։

ՄՈՍԿՈՒԱՅի հիւսիսային Թաղամասին Մէչեանկի դատարանին առջեւ կը շարունակուի քարիւղի Եուկոս ընկերութեան դատավարութիւնը։ Երկու ամիս է արդէն որ տեղի կ'ունենայ գլխաւոր ամբաստանեալին՝ Խոդորովսկիի հարցաքննութիւնը։ Այն համոզումը կը տիրէ որ այս ամբողջին եռին է կրեմլինը, որու կրկնակ նպատակն է ձեռք առնել քարիւղի ընկերութիւնը եւ կղզիացնել անոր գլխաւոր տէրը, որ քաղաքական հեռանկարներ ունէր։ Եուկոս դատապարտուած է տուրքերու խարդախութեան համար եւ սնանկութեան դուռն է։ Այդ սնանկութիւնը կրնայ հրապարակուիլ դալ չաբթու։ Վերջին պարտքին պայմանաժամն է Օգոստոս 31։ Իր պաշտպանութեան համար Խոդորովսկի կարճ յայտարարութիւն մը կարդացած է։ Փաստաբաններէն մէկն ալ յայտարարած է որ վճիռը դատարանին մէջ պիտի չորոշուի այլ՝ Կրեմլին։

ԼԻԲԱՆԱՆի նախագահութիւնը, այս անգամ ալ, Դամասկոս կը պատրաստուի, քանի Նոյեմբեր 24ին կը լրանայ Էմիլ Լահուտի շրջանը։ Անկարելի չէ որ վերընտրուի, քանի եթէ առաջին պայմանն այն է որ մարոնի պարտի ըլլալ, գլխաւոր պայմանն է նաեւ որ հաւատարիմ անձ մը ըլլայ Սուրիոյ, որ «բուն ընտրողն է»։ Այդ առընչութեամբ արդէն բազմաթիւ պատասխանատուներ Դամասկոսի ճամբան բռնած են։ Լահուտ անտարակելի կերպով հաւատարիմ է սուրիական դիւանագիտութեան, որու գլխաւոր մտահոգութիւնն է նաեւ իր եւ Լիբանանի ճակատագիրը իրարու կապել, որովհետեւ եթէ Լիբանան անջատ խաղաղութիւն մը ստորագրէ Իսրայէլի հետ, բոլորովին կ'առանձնանայ Սուրիան, որ արդէն լքուած է եգիպտոսէն եւ Յորդանանէն։

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

Ա· ՆԱԼՊԱՆՏԵԱՆ ՊԱՐՏՈՒԱԾ

Հայաստանի մարզիկներէն առաջինը որ մեռալի յոյս կը ներշնչէր, կռիւմարտիկ Ալեքսանդր Նալպանտեանն էր։ 48 քկ· դասակարգին մէջ երկու փուլ անցած ու հասած էր քառորդ աւարտականին. բայց չէ կրցած յաղթել չինացի Ժ· Շիմինկի։ Առաջին երեք ռաունտին Չինացին յաղթած է 4-1, 5-2, 6-3, չորրորդին 6-5 թեթեւ առաւելութիւն մը ապահոված է Ա· Նալպանտեան, բայց ստիկա չէ փոխած ընդհանուր ընթացքը։ Չինացի մարզիկը յաղթած է 20-12 եւ ապահոված առնուազն պրոնզէ մեռալը։

***

Ընդհանուր դասաւորման գլուխն են կրկին ԱՄՆ 72 մեռալով (25 ոսկի), Ֆրանսա 7րդ տեղը կը գրաւէ 25 մեռալով (9 ոսկի)։

ՀԱՅԿԱԿԱՆ ՁԱԿԱՏ

ԱՐՄԷՆՓՐԷՍ,

(Օգոստոս 24/25)

ԿԻՆԷԱՑԻ ՄԷՋ ՀԱՅԵՐ ԿԸ ԴԱՏՈՒԻՆ

Հասարակածային Կինէայի մէջ անցեալ Մարտին աւելի քան տասնեակ մը հոգի ձերբակալուած էր· օտարականներ ալ կային խումբին մէջ։ Ձերբակալութեան շարժառիթը այն ամբաստանութիւնն էր թէ անոնք մտադիր էին գահընկէց ընելու երկրին նախագահը։ Ամբաստանուողներուն մաս կը կազմէին վեց Հայաստանցիներ ալ։ Անոնք Աֆրիկեցիներու հետ բանտարկուած էին Մալապօ քաղաքի «Սեւ ծովախի» կոչուած տխրահռչակ բանտին մէջ։

Օգոստ· 23ին սկսած է խումբին դատավարութիւնը։ Հայաստանցիներուն պաշտպան փաստաբանը առաջինէն խնդրած է իր պաշտպանեալները անպարտ հռչակել եւ ազատ արձակել դանոնք։

***

ՀԱՅԵԽՌՈՒՍԱԿԱՆ ՌԱԶՄԱՓՈՐՁԵՐ

Հայաստանի Բաղրամեան զինուորական վարժարանին մէջ Օգոստոս 24ին սկսած են հայեւռուսական ծրագրուած միաւնական ռազմափորձերը։ Ռուսական կողմէն անոնց կը մասնակցի Գիւմրիի 102րդ զօրամասը։ Անցեալ տարի եւս նոյն ռազմափորձերը տեղի ունեցած էին ու «յաջող ու դրական» նկատուած։

***

ՆԱԽԻՋԵՒԱՆԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԷՔՆԵՐԸ

Պատրաստութեան մէջ է Նախիջեւանի պատմամշակութային արժէքներուն մասին հատոր մը որ լոյս կը տեսնէ 2005 Յունուարին, Հայ Օգնութեան Ֆոնտին յատկացումով։ Հոն ներկայացուած կ'ըլլան Նախիջեւանի բոլոր դիւղերուն պատմութիւնը, ճարտարապետական կառոյցները, նաեւ այլ ազգերու ստեղծած մշակութային արժէքները։ Հատորը բազկացած կ'ըլլայ չուրջ 600 էջերէ։

ԱՐԱՄ Ա· ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ՀԱՐԱԻԱՅԻՆ ԳՈՐԾԱՅԻ ՄԷՋ

Մեծի Տանն Կիլիկիոյ Արամ Ա· Կաթողիկոսը Օգոստոս 23ին բացած է Հարաւային Գործայի եկեղեցիներու խորհուրդին հիմնադրութեան 80ամեակին առթիւ կազմակերպուած համագումարը։ Անոր կը մասնակցին պետական դէմքեր, աստուածաբաններ, եկեղեցիներու համաշխարհային խորհուրդին գործադիր վարչութիւնը, Չինաստանի եկեղեցիներուն պատասխանատուները։

ԵՒԱՄԵԾԱՐ ՎԵՀԱՓԱՌԸ

ԱՅԼԱՆԴԱԿ ԱՆՈՒՆՈՎ ԿԱՐԵՒՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

ԱՐՓԻ ԹՈՒԹՈՑԵԱՆ

Օգոստոս 18ին լրացաւ Ամենայն Հայոց Վազգէն Ա. Կաթողիկոսին վախճանման տասնամեակը: Տասը տարի է արդէն որ Վեհափառը Փիլիքսակս Հապրիր չապրիր իր զաւակներուն հետ, բայց իր պայծառ յիշատակը միշտ վառ պիտի մնայ բոլոր անոնց սիրտերուն մէջ, որոնք զոնէ մէկ անգամ առիթը ունեցան զինք տեսնելու եւ իր հայրական տպաւորիչ ձայնը լսելու: Անոր զահակալութեան 39 երկար տարիները ոսկի տառերով արձանագրուած պիտի մընան Ամենայն Հայոց Հայրապետներու զաւազանագրքի տարեգրութեանց մէջ:

Տասնեօթը դարերու վրայ երկարող, Գրիգոր Լուսաւորչէն սկսած երկար շղթային 130րդ օղակն էր Վազգէն Կաթողիկոս: Արդ երկար շարքէն քիչերն են որ մեծութիւններ եղած են. ոչ թերեւս ոմանք զուրկ էին ընորհներէ. այլ պարզապէս որովհետեւ անոնց հայրապետութեան տարիները կամ կարճ եղած են ,կամ ալ ժամանակներն անյարմար՝ յիշատակի կամ ընդարձակ գործունէութեան մը համար: Իսկ կաթողիկոսական աթոռ բարձրանալէ առաջ անուն ու համբաւի տիրացողները խիստ սակաւ: Անոնց մէջ կան վերջին երկու դարերուն Ներսէս Ե. Աշտարակեցին ու Մկրտիչ Ա. Խրիմեանը, որ վաղուց տիրացած էր Հայոց Հայրիկի տիտղոսին: Նախախնամութիւնը այդ երկու պայմաններն ալ ընորհեց Վազգէն Կաթողիկոսին: Բայց քանքարչատ Հայրապետին մասին գրել չրնակելէ առաջ, հարկ է պահիկ մը յիշուն տարիով ետ վերադառնալ եւ բնաւ մտքէ չհանել որ եթէ հայ ժողովուրդը Բ. Աշխարհամարտէն արիւնաքամ դուրս կու գար, Հայաստանեայց Եկեղեցին Հայաստանի եւ Մօրհ. Միութեան մէջ աւերակոյտի վերածուած էր համայնավար վարչակարգին կողմէ, իսկ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը այդ աւերակոյտը քօղարկող հողմարգելի մը: Գէորգ Զ. Զէօրէքճեան կաթողիկոս (1945-1954) բոլորովին առանձին ջանացեր էր տարեց ու այրիացած քահանաներէ միաբանութիւն մը կազմել, հոգեւոր - կմախքային - ճեմարան մը վերթարանալ. իսկ գաղտնիք չէ բնաւ թէ «Էջմիածին» ամսագիրը կը խմբագրէին համայնավար վարչակարգի գրաքննիչներ...: Աջքողջ Միութեան մէջ կային 15-20 «գործող» եկեղեցիներ, մինչ նիւթական ու բարոյական միջոցներէ բոլորովին զուրկ Մայր Աթոռի չէնքերն ու կալուածները պետութեան կողմէ բռնագրաւուած էին: Առանց մոռնալու թէ 1700ամեայ Մայր Տաճարին լուրջ վտանգներ կը սպառնային երկրաշարժի ու անխնամութեան հետեւանքով: Կրնանք այսքանով համառօտել այն «ժառանգութիւնը» զոր Գէորգ Զ. կը թողուր իր ապագայ յաջորդին: «Հանճարափայլ առաջնորդ»ին Ստալինի մահուան յաջորդող «ձիւնհալի» տարիներն էին. բայց Խրուշչով կը չարունակէր հակակրօն հալածանքը, թէեւ աւելի ծածուկ ու սմսեղուկ միջոցներով: Այդ պայմաններուն տակ է որ կը դուրս գար 1955ի Սեպտեմբերին Ազգային - Եկեղեցական Ժողովը: Գէորգ Զ. կատարած տեղապահութիւնը ձգած էր երուսաղէմի պատրիարքական տեղապահ Եղիշէ Արք. Տէրտէրեանին որ ոչ գացած էր այդ պաշտօնը ստանձնելու, ոչ ալ Ազգային - Եկեղեցական Ժողովին ներկայ կ'ըլլար: Ու յանկարծ հայ մամուլէն կը տեղեկանայինք որ քուէներու չափչափիչ մեծամասնութեամբ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընտրուեր է Ռուսանիոյ եւ Պուլկարիոյ թեմերու երիտասարդ առաջնորդը՝ Վազգէն Եպիսկ. Պալճեան, հազիւ 47 տարեկան: Կարելի է անվտան յայտարարել որ նորընտիր Կաթողիկոսը «մեծ անծանօթ» մըն էր դրեթէ համայն հայութեան համար, ի Հայաստան, թէ ի Սփիւռս աշխարհի: Տիրող միջազգային անյարմար պայմաններու պատճառաւ, ան իր պաշտօնավարած երկիրներէն բնաւ դուրս չէր ելած, բացառելով դէպի Հայաստան կատարած երկու-երեք ճամբորդութիւնները: Վանական չէր Վազգէն Կաթողիկոս, եւ ո՞վ կրնար մարգարէանալ որ մինչեւ 35 տարեկանը աշխարհական ուսուցիչ կարապետ Պալճեան օր մը պիտի դառնայ Ամենայն Հայոց Կաթողիկոս: Մեծ համբերութեամբ ու դիւանագիտութեամբ, նաեւ անսահման հաւատքով Աստուծոյ նեցուկին վրայ, ան պիտի ջանար իր առաքելութեան առջեւ ցցուող անհամար արգելքները յաղթահարել: Եւ անոնք շատ ու շատ էին (յետ մահու թերթիս մէջ հրատարակուեցան Վեհափառին խորհրդային իշխանութիւններուն ուղարկած նամակներէն մի քանին որոնք մնացին անպատասխան. կամ ալ իբր պատասխան, խնդրոյ առարկայ եկեղեցի մը փոխանակ վերաբացուելու... պարզապէս քանդուեցաւ): Բայց Վեհափառը չյուսալքուեցաւ բնա՛ւ: Խորհրդային Հայաստանի իշխանաւորներէն ոմանք որքան որ համայնավար, հայ էին խորքով եւ Վեհափառը գիտցաւ անոնց հետ լեզու գտնել. նոյնիսկ Անաստաս Միկոյեան հանդիպումի մը առարտին այնքա՜ն տպաւորուեր էր Վեհափառէն որ ըսեր էր. «չպիտի թէ էդքան կրթուած մարդ է»: Ու նիւթական գետնի վրայ գահակալութեան առաջին տասնամեակն իսկ չաւարտած, չքեղօրէն պայծառազարդուած Մայր Տաճարին վերանորոգութիւնը հասաւ իր աւարտին, եւ առնուեցաւ նոր վէհարանը, որ նոյնպէս վայելչապէս բարեզարդուեցաւ: Մայր Աթոռը օժտուեցաւ արդիական տպարանով մը, հոգեւոր ճեմարանի հունձքերով լրացան միաբանութեան շարքերը: Դժուար է յօդուածի մը պարունակին մէջ թուել անոր իրագործումները, նպատակէս ալ բոլորովին դուրս:

Ինչ որ կ'առընչուի նիւթականին, իրագործուեցաւ ընորհիւ այն բազմաթիւ ըսփիւռքահայ բարերարներուն առատաձեռնութեան, զորս Վեհափառը «ճարե՛ր» էր իր հովուապետական այցելութիւններուն ընթացքին: Գահակալութեան առաջին տարիներուն իսկ Վազգէն Կաթողիկոս չահեր էր շինարար մակդիրը:

Բայց Վեհափառին մեծ արժանիքը պիտի դառնար Հայոց հոգեւոր չինութիւնը, մասնաւորաբար Հայաստանի սահմաններուն մէջ: Վեհափառին համար, չորս տասնամեակներու կարմիր վարչակարգէն «սարսափելու աստիճան խաթարուած էր Հայուն ազգային ոգին»: 1965. Եղեռնի յիսնամեակ. պատեհ, լաւագոյն առիթը զգօնութեան զանգերը հնչեցնելու: 1964 Օգոստոս 17 թուակիր շրջաբերական կոնդակով՝ ուղղուած ողջ հայութեան, ան կոչ կ'ուղղէր «արժանավայել գիտակցութեամբ ոգեկոչելու մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն խնկելի յիշատակը»: Եթէ 1965 Ապրիլ 24ին Երեւանի փողոցները ողողուեցան «Մե՛ր հողե՛րը» պոռացող տասնեակ հազարաւորներու բազմութեամբ, այդ եղաւ շնորհիւ Վեհափառին բռնկեցուցած կայծին. ինք նոյն օրը Էջմիածնի մայրավանքին շրջաբակին մէջ օծումը կատարեց հայրենի հողին վրայ բարձրացած առաջին Նահատակաց յուշարձանին, որուն տակ իր ձեռքով ալ թաղեց Տէր-Զօրէն բերել տուած ոսկորները:

Վազգէն Վեհափառին մէկ այլ մեծ արժանիքն է Հայաստանի մտաւորականութեան մէկ կարեւոր մասը իր շուրջ կարենալ հաւաքելը: Մարդիկ որոնք բոլորն ալ կացութեան ստիպումով կարմիր քարտ ունէին դրպաններնին: Տարիներու ու տասնամեակներու հոլովոյթով արդէն Հայոց հայր դարձած Վեհափառը օր մըն ալ յանդգներ էր անոնց «ինչո՞ւ կուսակցական դարձաք» հարցնել: Ու թերեւս մտերմաբար ուղղուած այս հարցումը այն տպաւորութիւնը ձգեր է որ անոնցմէ մին ըզգացեր էր երեսին զարնուած չառաչուն ապտակ մը:

Վազգէն Ա. Կաթողիկոսի երկար գահակալութեան պայծառ տարիները մթագնեցան 1988 Դեկտեմբեր 7ի ահաւոր երկրաշարժով, Սումգայիթի եւ Բաքուի ջարդերով ու Արցախեան պատերազմով: Բայց ան երբեք չկորնչցուց իր կորովն ու լաւատեսութիւնը: Մխիթարութիւնն ունեցաւ տեսնելու երկրին անկախացումը եւ Արեւելահայ հնչիւնաբանութեամբ դրուած «էկոզլոբ» անունը առաջին ակնարկով քանի՞ հոգիի բան մը կ'ըսէ, մանաւանդ Հայաստանէն դուրս: Թէեւ հաւանօրէն սխալ է կարծել որ հոն ալ անոր հանդիպողներու բոլորին թափանցիկ անուն է: Շատ չէ, երեք հանգրուանի ջանք կը բաւէ հասնելու համար միջուկին ու հասկնալու թէ բանն ինչո՛ւմն է:

Նախ տառադարձութիւնը հարկ է վերածել էֆօկլոպի, ապա հոն զանազանել էֆօն եւ կլոպը. վերջին փուլով այդ երկու օտար բառերը թարգմանել հայերէնի, տեսնելու համար թէ անուանումը կը պատկանի բնապահական ոլորտին յատուկ մարմնի մը, կամ գործունէութեան մը: Բնապահութիւն եւ երկրաբանութ, աշխարհ բառերով չինուած ու հայաստանեան չրջանակին մէջ գործածութեան դրուած «Էկոզլոբ»ը այն կազմակերպութիւնն է որ բնապահական գիւղատնտեսութեան խնդիրներով կը զբաղի: Այսինքն, գործունէութեան զուգահեռ մը կը տանի Արեւմուտքի մէջ վերջին տարիներուն հետզհետէ աւելի հետաքրքրութիւն արթնցնող մշակումի ձեւին, պայմաններուն հետ: Այդ առումով ալ նախկին խորհրդային տարածքին միակ օրինակն է: Ծնունդ առած է 2002 թուականին, եւ ինչպէս կ'ըսուի անոր անդրադարձող Կարինէ Դանիէլեանի զրուցեան («Ազգ», Յուլիս 29) մէջ, արդէն յաջողած է բաւական գործ տեսնել:

Այսօր անոր կը գործակցին Արմաւիրի, Արագածոտնի, Կոտայքի մարզերէն վեց անտեսութիւններ: Անոնք բանջարեղէն, պտուղ, մեղր, կաթնամթերք արտադրողներ եւ անասնաբոյծներ են: Կ'ըսուի թէ բաւական հետաքրքրութիւն կայ մաքուր, բնապահական կանոնները յարգող հողագործութեան նկատմամբ ու կ'աւելցայ կազմակերպութեան դիմողներու թիւը:

Նոյն ձեւի կազմակերպութեան փորձեր եղած են Ռուսաստանի, Ուկրանիոյ, Վրաստանի, Ադրբեջանի մէջ ալ, սակայն ոչ մէկը յարատեւած, յաջողած է:

Այս ամփոփ տեղեկատուութենէն եաք, Կ. Դանիէլեան տեղ կու տայ հայաստանեան նախընթացին գլխաւոր անօրէն Նուն Դարբինեանի բացատրութիւններուն: Ան գիւղատնտեսական գիտութիւններու թեկնածու է:

Հայաստանի մէջ բնապահական արտադրութեան համար նկատի պէտք է առնել 2-3 տարուան անցքի չրջան մը:

1991 Սեպտեմբերին օրհնեց «Անկախութեան Միւռոն»ը, չրջապատուած Հայց. Եկեղեցւոյ բոլոր նուիրապետական աթոռներու գահակալներէն, Եռագոյնով զրօսազարդուած Մայր Տաճարին առջեւ, ի ներկայութեան երկրին նոր աւագանիին: Ու իր կեանքի վերջին օրերուն ալ տեսաւ Շուշիի ազատագրումը եւ Ղարաբաղեան յաղթական աւարտով կնքուած հրադադարը:

Վազգէն Կաթողիկոսի սիրտը խոցող վէրքը եղաւ անտարակոյս, 1956էն յառաջացած Հայ Եկեղեցւոյ պառակտումը: Ո՛չ եղեռն տեսած հայ ժողովուրդը, ո՛չ ալ իր բազմաչարչար եկեղեցին պէտք ունէին այդ տագնապին որ 1958ին Պէյրութի մէջ տարաբաժինեց եղբայրասպանութեան: Զլամարտի արհաւիրքը թափեր էր հայութեան ալ վրայ: Ոմանց համար կրեմլին կ'ուզէր Հայ Եկեղեցին արտասահմանի մէջ իր նպատակներուն համար դործածել. ուրիշներու համար ալ ամերիկեան սպասարկութիւններն էին որ հայ ժողովուրդն ու Եկեղեցին կը գործածէին հակա-սովետական արշաւին իբրեւ զէնք: Ցիսուն տարի առաջ աւելորդ ժամավաճառութիւն է պատասխանատու փնտռել...: Ինչ որ ալ փորձեն ըսել մարդիկ, տուժողը միայն Հայը եղաւ: Վեհափառը ջանաց միշտ բարձրէն նայիլ մարդոց եւ իր սիրոյ ու եղբայրութեան հայրական յորդորը երբեք չդադրեցուց:

Կարծէք ստեղծուած կացութեան անմբախիթար բնոյթը ամէնէն չատ հասկցողը եղաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Գարեգին Բ. Կաթողիկոսը, որ 1985 Ապրիլ 24ին Պուրճ Համուտի մարզադաշտին մէջ ճառախօսած ատեն «եօթը ողջոյն» ուղարկեց իր «աւագ եղբօր՝ Վազգէն Կաթողիկոսին»: Ատոր ալ կը սպասէր ան: Ցաջորդող տարիներուն, Էջմիածնի մէջ թէ այլուր, երկու հայրապետները քանիցս հանդիպեցան իրարու եւ մտերմացան այնքան որ միասին օծեցին Պրիւսէլի եկեղեցին: Վազգէն Կաթողիկոսին մտասեւեռումներուն մէջ կարեւոր տեղ կը գրաւէր մօտեցող 2001 թուականը, Հայոց դարձին 1700ամեակը:

Վեհափառը գիտէր որ տարիներու ծանր բեռը իրեն թոյլ պիտի չտայ այդ օրը տեսնել: Եւ Վեհափառը Պրիւսէլի մէջ այդ յոբելեանին անդրադառնալով ըսեր էր. «Այդ թուականին ես այս աշխարհը չեմ ըլլար, բայց կ'ուզեմ որ իմ տեղս Գարեգին Վեհափառը հոն ըլլայ»: Տեսակ մը գարոյական կտակ որ իրականացաւ կիսով մասին: Պատմութեան մէջ առջին անգամ ըլլալով, Կիլիկիոյ Կաթողիկոս մը գնաց Մայր Աթոռին վրայ բազմելու: Բայց նախախնամութիւնը չկամեցաւ որ Գարեգին Ա. դարձած Գարեգին Բ. նախագահէր 1700ամեակի հանդիսութեանց: Զլաց «չնորհեացես մեզ ընդ երկայն աւուրս ուղիղ վարդապետութեան» մեր աղօթքը: Երեք տարի միայն գահակալեց Էջմիածնի մէջ Գարեգին Ա., չհաւելով վերջին տարին երբ անողոք հիւանդութիւնը հեռու պահեց զինք եւ լուռ թեան մատնեց ոսկեբերան հայրապետը:

Կիլիկիոյ Գարեգին Կաթողիկոսին փոխադրութիւնով Մայր Տաճար, չատեր յուսացին որ վերջ կը տրուէր Հայ Եկեղեցւոյ 40 տարուան տագնապին: Գարեգին Ա.ի հմայքը, խարիզմը բաւ պիտի ըլլա՞ր արդեօք լուծումի մը, եթէ ան այսօր ապրէր: Եթէ Ամերիկայի զուգահեռ թեմերու խնդիրը աւելի բարդ էր, զոնէ Ցունաստանի եւ Պարսկաստանի թեմերը կը վերադառնայի՞ն Էջմիածնի հովանիին տակ, քանի այլեւս ո՛չ համայնավար իր խանութիւն կար Հայաստանի մէջ, ո՛չ ալ Ջլամարտ: Ո՞վ կրնայ պատասխանել այս հարցումներուն:

Ամէն օր կը լսուին «Մէկ ազգ, մէկ ժողովուրդ, մէկ հայրենիք» կարգախօսները. նաեւ՝ «Մէկ մշակոյթ, մէկ ուղղագրութիւնով»: Ու ըսուելէն, լսուելէն կարծէք աժանցած բերնի ծամոց դարձած են, քանի գործը խօսքին չի հետեւիր: Վերջին 10-15 տարիներուն ալ, չատ խօսեցաւ Հայ Եկեղեցւոյ Միութեան մասին, բայց հարկ է հաստատել, թէ սրտաչարի խօսքերէ անդին ոչինչ եղաւ:

Այսօր մեր Եկեղեցին ոչ թէ դէպի միութիւն կ'ընթանայ, այլ բաժանարար որդը զինք տակաւին կը կրծէ, ինչպէս կը հաստատեն անցնող ամիսներուն Գանատայի խմորումները: Վստահաբար, իրենց երկնաւոր օթեւանին մէջ, Վազգէն եւ Գարեգին Կաթողիկոսներուն բարի հոգիները խռոված են ի տես նման երեւոյթներու: Կարելի՞ է տակաւին երազել որ բարի օր մը մենք խսկապէս Մէկ Եկեղեցի դառնանք, Մէկ կաթողիկոսութիւնով: Այս ալ էր թերեւս մեր հանգուցեալ վէրջին երկու Հայրապետներուն թաքուն երազը, որոնց անթառամ յիշատակին այս տողերը կը թողլան փունջ մը անուշահոտ մանուշակ:

ՍՏԵՓԱՆ ՍՐԿ. ՊՕՂՈՍԵԱՆ

Մարսէյլ, Օգոստոս 19

ՕՂԻՄՊԻԱԿԱՆ

ՅՈՑՆԵՐՈՒ ԹՈՒՆԱՒՈՐՈՒԱԾ ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆԸ

Ցոյն ժողովուրդը խանդավառ ու մասնակից հպարտ ըլլալու արդար պատճառներ ունէր Ողիմպիական խաղերու բացումէն որ կ'անդրադարձնէր ամիսներէ ի վեր ուղղուած քննադատութիւնները, թերահաւատութիւնները թէ Ծունաստան պիտի չկարենայ առնին պատրաստուիլ միջազգային նման ձեռնարկի մը: Ամէն ոք կարդին էր, ինչպէս հարկը կը պահանջէր. ամենայն ապահովութեամբ կըրկնային սկսիլ խաղերը:

Սակայն անակնկալ ժխական մը եկաւ ապտուորելու յոյն ժողովուրդին խանդավառութիւնն ու հպարտութիւնը: Ամէնէն ծանօթ, ամէնէն սիրուած երկու մարզիկները՝ Քէնթէրիս եւ Թանու խթանիչներ գործածելու կասկածով հետապնդուեցան ու հարցը փակուեցաւ շատ անաղմուկ ձեւով: Մինչդեռ կազմակերպիչները պատարած էին թէ Ողիմպիական 28րդ խաղերը ամէնէն մաքուրները պիտի ըլլան, զերծ՝ ամէն արատէ: Երկու մարզիկներուն ընթացքը լրջօրէն ստուերեց դէպի ձգտումը, ամօթի ալիք մը տարածեց երկրին մէջ: Ու ժողովուրդը որ խանդավառ էր իրենց բնիկ օրրանը վերադարձի ուրախութիւնը կ'ուզէր ապրիլ, այդ վերադարձով արդիական Ծունաստանի պատկերով տպաւորելով աշխարհը ոչ միայն յուսախաբ է, այլեւ կը կրէ այդ ամօթին ծանր բեռը:

Միջադէպը ծանօթ է. խաղերու պաշտօնական բացումէն քանի մը ժամ առաջ, Ողիմպիականներու միջազգային կոմիտէն պահանջած էր որ երկու մարզիկները բացատրեն թէ ինչո՛ւ բացակայած էին խըթանիչներու գործածութեան քննութենէն: Անոնց բացատրութիւնը ոչ ոքի գոհացում տուաւ. ըսին թէ չէին կրցած քննութեան ներկայանալ, պատճառաբանելով երթեւեկի արկած մը: Ու ստնախըմբութիւնը վերածուեցաւ թունաւոր բանի մը:

Եւ ըսել որ այդ նոյն երկու մարզիկները ուշադրաւ յաղթանակներ արձանագրած էին նախորդ, Սիտնիի Ողիմպիականներուն, դրաւելով ամբողջ ժողովուրդին սէրը: Անոնց չնորհիւ Ցոյները անդրադարձած էին թէ պասքէթէն եւ ֆութպոլէն տարբեր մարզաձեւեր ալ կային: Փաստը այն է որ Օգոստոս 18-23ի վազքի մրցումներուն որոնց պէտք է մասնակցէին Քէնթէրիս եւ Թանու, բոլոր տոմսերը քանի մը ժամուան մէջ ծախուած էին: Նոյնիսկ ֆութպոլը երկրորդական դարձած էր այդ առթիւ: Իսկ իրենց անխորհուրդ ընթացքով անոնք կորնցուցին իրենց ամէնէն արժէքաւոր մետալը որ ժողովրդական նեցուկն ու համակրանքն էին: Ու ճիշդ ինչպէս նախապատմական շրջանին կը պատահէր, կամ յունական ողբերգութիւններու մէջ, մարզարաններու հանդիսականները այսօր անարգանքի, թուքի, մուրի թիրախ կ'ընեն երկու հերոսները զորս երէկ կը պաշտէին: Մամուլը հարց կու տայ թէ մինչ վերջապէս յապաղումի ամբաստանութիւնները, թերահաւատութիւնները լրած էին ու Ցոյները իրենք իրենց վրայ վստահութիւն ունենալու հըրաշալի առիթ ձեռք ձգած, ինչո՛ւ նոր խաղերը այնքան սրտաբեկում պատճառէին, արժելով ալ աւելի քան տասը միլիառ Եւրօ:

Նոյն մամուլը կը գրէ թէ նոյնիսկ երկու մարզիկներու վտարումէն ետք անոնց պատճառած ամօթը երկար առեն պիտի մնայ: Անոնք նոյնիսկ չեն մտածած պատիւը փրկել երկրին որ իրենց այնքան բան տուած է: Հանրութեան կրած ցնցումը այնքան մեծ է որ մարզիկ բառ չեն գտներ արտայայտելու իրենց զայրոյթը, տխրութիւնն ու ամօթը:

Այդ զգացումները ցոյց մարզիկներէն ետք թիրախ կ'առնեն անոնց հովանաւորներն ու մարզիչները: Լրագրող մը կը գրէ թէ աւելի քան երեք տարիէ ի վեր օտար մամուլին մէջ պարբերաբար նիւթ եղած են գոնէ Քէնթէրիսի խթանիչ գործածելու պնդումները. մինչդեռ ո՛չ յունական մամուլը, ո՛չ ալ մարզական դաշնակցութիւնը համարձակութիւնը ունեցած է լրջօրէն ձեռք առնելու հարցը, քանի մը մետալի ու յաղթանակի սիրոյն որոնք ձեռք ձգուած են հոս-հոն: Ու ներկայի խայտառակութեան իսկական պատասխանատուները կը նկատուին անոնք որոնք իրենց արդիլուած ապրանքը ամենայն անփութութեամբ հրապարակ հանած են: Նոյնիսկ յոյն այլ մարզիկներու տիրանալիք մետալները բաւարար չէին նկատուեր Քէնթէրիսի ու Թանուի ընթացքին պատճառած սրտաբեկումը, ամօթը ջնջելու:

ՔԱՂՀԱՆ

ՍՏԱՑԱՆՔ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻԻ
«Մեկնութիւն երգոց երգոյն Սողոմոնի»
գիրքին մեկնագիտութիւնը

ԴԱՒՆԻԿ Ք. Գ.

Մոնրէալ, 2004

ԳՈՂՈՒԹԻ ԳՈՂՈՒԹ

ՊԷՅՔՕԶ թաղամասի նախկին քնակիչներն ու Պէյքօզի Ս. Նիկողայոս եկեղեցւոյ համակիրները յիշատակի օր մը ապրած են Օգոստոս 8ին, ներկայ գտնուելով 228 տարիներու անցեալէ մինչեւ այսօր հասնող եկեղեցիին անուան տօնախմբութեան եւ մատաղօրհնութեան: Աւարտողութենէն ետք, սիրոյ տեղանին վրայ, «Մարմարա»յի խմբագրապետ Ռ. Հատտէճեան դիտել տուած է. «իւրաքանչիւր հաւատացեալ քննիչ մըն է որ ամէն տարի կը քննէ թէ եկեղեցին որքան մաքուր եւ խնամեալ պահուած է այն թաղային խորհուրդին կողմէ, որուն յանձնուած է ազգային հարստութեան պատասխանատուութիւնը: Եւ լաւ է որ ամէն անգամ քննիչները կը տեսնեն որ եկեղեցին կը գտնուի փայլուն վիճակի մէջ»: Բազմաթիւ ուղերձներ եղած են եւ բոլորին ընթացքին ալ յիշուած է Շահան Արք.ի քահանայութեան ձեռնադրութեան յիսնամեակը: Ան էր արդէն, որ նախագահած էր եկեղեցական արարողութեան եւ քարոզած: Գործադրուած է գեղարուեստական յայտագիր մը: Կարապետ Քհնյ. Չըճորհակալութեան խօսք արտասանած է եկեղեցական իշխանութիւններուն: Հուսկ բանքը ըրած է Շահան Արք.:

ՀԱՑԱՍՏԱՆԵԱՆ ԳՈՒՏ

■

ՕՐԻՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐՈՎ

Ասում են՝ ՀՀ իշխանութիւնները Մինսկի խմբին տեղեկացրել են, որ գրաւեալ տարածքները չեն կարող վերադարձնել, քանի որ Երեւանի բաղաբապետարանը դրանք արդէն յատկացրել է սրճարանների կառուցելու համար:

ԸՆԿ. ՓԱՆՋՈՒՆԻ

***

Ինչո՞վ է տարբերուում սպիրտը օղուց:
- Սպիրտը կարելի է խմել:
- Իսկ օղի՞ն:
- Օղին անհրաժեշտ է խմել:

***

Կինը՝ հարբած ամուսնուն.
- Որտե՞ղ էիր քարշ տալիս: Արդէն գիշերուայ ժամը երեքն է:
- Իսկ ի՞նչ է, եթէ տանը սթափ նստած լինէի, ժամը տասներկո՞ւսը կը լինէր:

ՀԱՅԿԱԿԱՆ ՔԻՉԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԼՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Անդրանի՛կ, Անդրանի՛կ, հերոս, ֆեդայի, ղեւոգաղան: Աղբիւր Սերոբ, Գէորգ Նուշ, ժիլպայր: Անհաւասար կռիւ, տանջ, լեռներ: «Հով արէք սարեր Ջան», Նազանեան, հայկական զինանշան, Հայրապետեանց, Արշակունեաց, Բագրատունեան, Բուրինեանց, Լեւոն Զ., Ներսէս Աշտարակեցի, Մրմրեան, հայթայթարական կռիւ, ձիրք, ամբոխ, Վռամեան, Գեւոնեան, Ներսէս երիտասարդութիւն, Գոմ-Գաբու, Սարան, Սամաթիա, Սկիւտար, հանդէս, ասպետութիւն: Ու ծաղրանկարներ (խաֆիէներ) ու պատկերներ (հերոսներ, պատերազմներ, դործիչներ, դրագէտներ): Դրչմաթուղթեր: Վենետիկ, Վիեննա: Ազգային:

Ազգայր ենք մենք որ մորկաւ էինք գատուած...

Մարտ 31: Ռէֆաքսիոն:

Եղբայրդ, Համիտ, պինուորներ, ճառ:
- «Շէրիաթ իստէրուխ», «Շէրիաթ իսդէրուխ», «Շէրիաթ», «Շէրիաթ»...

Համիտեան զինուորներ, փողոցներու մէջ, հրացանաձգութիւններ, օդին մէջ, գետին մէջ.
- Ո՛ւմ, պո՛ւմ, պո՛ւմ...

Ազատութեան հրեշտակը լեղապատառ կը թռչի: Ազատութեան ռազմակառքին անիւները ետ կը դառնան: Ցետադիմութիւն:

Շերիա՛թ...

Տուները, սենեակները, ծակերը, թաքստոցները:

Ու չարքերը... ամբողջ գիշերը կը հըսկեն: Կը հսկեն զինուած: Ցետադիմական քանակ, պաշտպանողական քանակ:

Ու յեղափոխական, ազատութեան բանակ: Կը քալէ: Մահմուտ Շէվքէթ փաշա, ալպանացիներ: Դէպի Պոլիս, Պոլիս:

Կռիւ, քաղաքային պատերազմ, զօրանոցներ, ոստիկանատուններ, Եըլտըզ Քէօշկ:

Պաշարում, ճակատամարտ, յաղթանակ:

Սարգիս աղա պարկ մը ծխախոտ, պարկ մը ուտելիք չալկած՝ մտած է Ազատութեան բանակի զինուորներուն մէջ ու կը բաժնէ, կը բաշխէ.. «Առէք, ծխեցէ՛ք, առէ՛ք, կերէ՛ք»...

Գնդակները կը սուրան: Վիրաւորներ: Հիւանդանոց:

Սարգիս աղա կը վիրաւորուի սրունքէն: Ծխախոտ կը ղնեն վէրքին վրայ:

Սարգիս աղա՝ հերոս:

Վերջացած է Շէրիաթը:

Պայքար, երիտասարդ Դաշնակցան մը-տաւորականութիւն, պայքար: Ու համակիրներ:

Նոր հանդէս, նոր յաղթանակ, նոր թերթեր, նոր զինուժութիւն: Նոր օրէնսուններ: Աբեւելեան նուագ: Նիյազի պէյ, Էնվէր պէյ, Մահմուտ Շէվքէթ փաշա:

Նոր նահատակներ, նոր հափեր, նոր ճառեր ու նոր ծափեր:

Փողոցներէն կ'անցնին մարտիկները, զինուորները, հերոսները, նուագախումբ:

Երկտողը կը պարպուի: Գրաւուած է: Խաֆիէներու կարաւան: Ամբոխ: Ազատութեան ոստիկանները կը հետեւին: Ժողովուրդը.
- Թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ, թո՛ւ...

Թուք: Հայհոյութիւն: Ծաղրանք: Ցարձակման փորձ: Բանտ, կախաղան, աքսոր:

Համիտ կը քշուի, Ուրուական: Խրտուիլակ:

Ու դարձեալ «Ազատութեան Մառչը»:

Հանդէս ու ազահանդէս:

Մեռելոյց: Շիլիլի հայոց դերեզմանատուն... դրան առջեւ.
- Տէսթաւնե՛ր... Ազատութեան տէսթաւնը, Ազատութեան բանակի երգը, բռնակալութեան տապալումը, երդվա՞ն...
- Հայկական սիմֆիք...
- Հայկական ջուր...
- Հայկական օշարակ...
- Հայկական է, պատուական է...
- Մարտ 31-ի տէսթաւնը...
- Պատկերնե՛ր... հերոսի, հերոսի...
- Պատրիարքի պատկերներ...
- Գրքե՛ր... «Ազատութեան ճանապարհին», «Դիւցազնօրէն», «Հայորդիներ», «Հոգեվարքի եւ յոյսի ջահեր»...
- Խաֆիէներու պատկերը...
- Ֆրնտըխ, ֆրնտըխ... հայկական...

Ու դերեզմանատան դրան դիմացը զարեջրատուները լիքն են երկսեռ բիւզանդացիներով: Օղի, գարեջուր, կերակուր, աղանդեր: Ու կանանչ, կարմիր, դեղին պալօնները: Հատ մը անխուսափելիօրէն կը թռի: Հարիւր հոգի վեր կը նային՝ դէպի երկինք: Կը թռի, կը բարձրանայ: Պտոյտ-ցաւ, անհետացաւ: Հարիւրաւոր աչքեր վար կ'իջնեն: Դերեզմանատունը լեցուն է, լեցուն: Իրար կը հրեն, կը հրմըշտակեն քալելու համար:

Անկիւնները խումբեր կան: Օղիներու չիչեր տապանաքարերու վրայ: Թուղթերու մէջ ձուկեր, սարտինիներ, ապուխտ, պանիր, ձկնկիթ, հաւկիթ ու հաց:
- Կենացդ...
- Անոյշ անմահութիւն:
- «Նահատակաց յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան եւ արժանի անոնց հոգին՝ երկնից սուրբ արքայութեան»:

Մէկը դերեզմանաքարի մը վրայ ցատկած ճառ մը կը խօսի: Նախ հազիւ տասներկու հոգի իր չուրջը: Երկու վայրկեանի մէջ ունկնդրութիւնը կը հասնի հինգ հարիւրի: Ուրիշ մը քիչ մը անդին տապանաքարի մը վրայ կը ցատկէ: Երկու հոգի իր առջեւ: Կը սկսի արտասանել չափազանցուած խանդավառութիւնով, մեծ շարժումներով, կրակով.
- Հրամանը չուտ...

Ֆարոզին մէջ պիլալի...

Ու հազար հոգի իր չուրջը կը խռնուին: Ծափահարութիւններ: Համբաւ, անուն, ժողովրդականութիւն:

- Եըլտըզ Քէօշկի անկիւններուն մէջ ապնած՝

Սուլթանական գանկէ դուրս՝
Որջին թերանը ապառող գայլի պէս...
Արցունքներ: Դերասանը կը պատռտուի:
- Լա՛ց, Հայաստան...

Ու անդին երգիչ մը.
- Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, լնճ առա,
Թռչում ես այդպէս արագ:

(Շար. 102)

AIX-EN-PROVENCE — MARSEILLE — AUBAGNE.-

Monsieur Franck Piligian et Madame, née Christiane Auger, et leur fils Alexandre,

Monsieur Jean Piligian et Madame, née Marie Yelkovanian et leur famille,

Madame Rose-Marie Auger et sa famille,

Parents et alliés

ont la douleur de vous faire part du décès de

LAURENT PILIGIAN

survenu le samedi 21 août 2004, à l'âge de 22 ans.

Les obsèques auront lieu au Cimetière Saint-Jean de Puyricard, jeudi 25 août 2004 à 15 heures 30.

IN MEMORIAM

A la mémoire de **Stéphane (Varoujan) Papazian** M. et Mme Michel Perret offrent 50 Euros à «Haratch».

ԳՈՐԾ ԿԸ ՓՆՏՌԷ

Հայ կին մը աշխատանք կը փնտռէ (ե-րախայ, տարեց անձ խնամել կամ խոհա-րարուհի ընել)։

Դիմել Տիկին Նուարդի

Հեռ.- 06· 67· 61· 93· 92

Pèlerinage à Tallard

A L'OCCASION
DU 1600e ANNIVERSAIRE
DE LA MORT DE SAINT GREGOIRE
sous l'égide
de l'**Eglise Apostolique Arménienne**
avec le concours
de l'**Association Cultuelle**
des Arméniens de Gap
et des Hautes Alpes

DIMANCHE
19 SEPTEMBRE à 10h30

La messe sera célébrée
par le **Révérend Père Zadik AVEDIKIAN**
Recteur de la Cathédrale Apostolique Arménienne de Marseille
et Vicaire du Délégué pour l'Europe du Catholicossat de tous les Arméniens pour le Midi de la France
avec la participation
de la Chorale **Sahak-Mesrop**
sous la direction de
M. Khatchig YILMAZIAN

Renseignements et réservaitons :

— Cathédrale Apostolique Arménienne : Tél. 04 91 77 84 70;
— Association Cultuelle des Arméniens de Gap : Tél. 04 92 51 71 80 / 04 92 51 00 87

Inscriptions S.V.P. avant le 11 septembre

Participation aux frais :
- Aller-retour seul : 20 Euros;
- Aller-retour avec repas : 40 Euros.

100-ԱՄԵԱԿ
Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2
ԿԱԼԱ՝ ժամը 16ին 18·30 եւ Ընդունելութիւն ժամը 19ին 22·30
Սալ կաւոյի եւ անոր սալոններուն մէջ.
Ցայտագիրը կը վարէ ժէրալտ ՓԱՓԱԶԵԱՆ
Տեղերը ապահովելու համար դիմել Փարիզի, Ալֆորվիլի, Արնուվիլըլէ-Կոնէսի, Շաւիլի եւ Իսի-լէ-Մուլինոյի Առաքելական եկեղեցիներու գրասենեակնե-րուն։
Նկատի ունենալ որ Հոկտեմբեր 2ի օրը, տեղւոյն վրայ տոմսի վաճառք պիտի չըլլայ։

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2
ժամը 23ին կէս-գիշեր ՀՄԿՈՒՄ
Սուրբ ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ Մայր Տաճարին մէջ

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 3
- *ժամը 8ին, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ,*
- *ժամը 10ին, ԴՈՆԲԱՅԼԷ,*
- *ժամը 10·30ին ՊԱՏԱՐԱԳ որուն ընթացքին*

Գոհաբանական Մաղթանք պիտի ըլլայ Ս. Յովհաննէս-Մկրտիչ Մայր Տաճարի
եկեղեցաշէն քարերար ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆՑ
եւ անոր ընտանիքի անդամներուն,
նաեւ Տաճարիս օծումը կատարող Եւրոպայի Հայրապետական Պատուիրակին՝
ԳԷՈՐԳ Ա.Բ. ԻՒԹԻՒՃԵԱՆԻ,
Տաճարիս առաջին Առաջնորդին՝
ՎՌԱՄՇԱՊՈՒՀ Ա.Բ. ՔԻՊԱՐԵԱՆԻ, ի Տանէ Արջուկենց
եւ եկեղեցւոյ բոլոր բարերարներուն յիշատակին։

Արարողութիւններու ատարին, հաւատացեալները հրաւիրուած են բաժնեկից դառնալու ատենդական ՄԱՏՈՒՑԻՆ,
եկեղեցւոյ շրջափակին եւ «Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ։

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— **PARIS**
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19

— **ARNOUVILLE**
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73

— **ISSY-LES-MOULINEAUX**
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25 (le soir)

— **SEVRAN**
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76

— **VALENCE**
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99 (l'après-midi)
MCA : 04 75 55 12 49

— **DECINES**
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97

— **GRENOBLE**
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43

— **ST MAURICE DE BEYNOST**
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07

— **VIENNE**
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80

— **MARSEILLE-VILLE**
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66 (le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւն-ներու համար հեռաձայնել ձեղի մօտ մաս-նաճիւղի պատասխանատուներուն։

*
**

ՓԱՐԻԶԻ ՄԱՄՆԱՃԻՒՂ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին 17 ռիւ Պլէօ 9րդ թաղամաս - Մեթրօ Գատէ
Մանկապարտէզ 4 տարեկաներէն սկսեալ
(կը խնդրուի սրտագրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ).
+ CPէն մինչեւ Պաբալօրէա, նաեւ չափա-հասներու դասարան։
Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, երգ, Թատրոն, Պար։
Հեռաձայնել Օգոստոսին՝
- Արաբսի Գարաճփիլեան՝
01· 39· 83· 71· 19

*
**

La Section «Lola Sassouni» de Marseille organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— Restaurant tous les soirs et piqueniques assurés.
— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).

Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne
tout compris, visa inclus
hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

les Coupons d'Alsace
21, av. d'Helvétie
25208 MONTBÉLIARD
Tél. 03 81 94 38 10
Z.I. Les Arbletiers
25400 AUDINCOURT
Tél. 03 81 35 51 93
65, avenue Jean Jaures
90000 BELFORT
Tél. 03 84 21 62 66



Fabriqué & Distribué par CEPOVETT S.A
150, ancienne route de Beaujeu - GLEIZÉ BP 421
69653 VILLEFRANCHE / SAÔNE CEDEX
Tél : 04 74 62 47 00 - Fax : 04 74 68 20 09 - Em@il : stk@stk.fr

ՈՒՐԲԱԹ
ՕԳՈՍՏՈՍ 27
VENDREDI
27 AOUT
2004

LE NUMERO: 1 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 230 եւրօ — Վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար· 270 եւրօ (Ամէնօդեայ առաքում)
247 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

80ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·011 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 80e ANNEE — N° 21·011

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

60-ԱՄԵԱԿ ՓԱՐԻԶԻ ԱԶԱՏԱԳՐՄԱՆ

Օգոստոս 25ին, Փարիզ արտասովոր եռեւոյթ մը ունէր, քանի հանդիսաւոր շուքով եւ նշանակոր յայտագրով կը տօնուէր Փարիզի ազատագրման 60ամեակը: Հակառակ երթեմն տեղատարափ անձրեւին, բազմութիւնը հովանոցներով հաւաքուած էր ուր որ բացօթեայ տօնակատարութիւններ կային: Ամբողջ օրը արտօղութիւնները, շուարեր, չքնաղանի տուչութիւններ, ֆիլմեր, ոգեկոչումներ իրարու յաջորդեցին:

Ամէն ինչ սկսած էր հրշէջներու կողմէ, որոնք վազ առաւօտեան, 60 տարի եառ, ճակտին դրօշակը ծածանել տուին Էյֆէլի աշխատարանին վրայ: Ապա, մեծ-մեծ հանդիսութիւն մը տեղի կ'ունենար ինվալիտ, զօր· Լըքլէրքի շիրիմին դիմաց, ցերեկուան մօտ, այլ հանդիսութիւն մը Գոնդորսի հրապարակը, ուր հաւաքուած էին Շիրաք եւ 28 նախարարները, հատկ ամէնէն կարեւոր հանդիսութիւնը տեղի կ'ունենար Լիւքսէմպուրգ մօտ Օթէլ տը Վիլի հրապարակը, 6000 հրաւիրեալներու ներկայութեամբ: Հոն է որ Տը Կոլ արտասանած էր իր պատմական ելոյթը՝ Փարիզ նահատակուած, Փարիզ ազատագրուած: Հոն եղան արտասանութիւնները մանուկներու կողմէ, Ֆ· Հիւթէքը նամակներ կարդաց, Լիւսեցաւ Մ· Մանուչեանը, փորձեց երգել Միրէյլ Մաթիէօն, բայց չկրցաւ մինչեւ ծայրը երթալ: Ճառեր արտասանեցին քաղաքապետը՝ Պ· Տըլանոյէ, նախագահ Ժակ Շիրաք, մինչ անձրեւը կը չարունակէր տեղալ: Շիրաք ոգեկոչեց անցեալը, զոր կոլը մանաւանդ, կոչ ըրաւ որ դիմադրութեան ոգին յաւերժ մնայ, հրաւիրեց բոլորը որ արգելք հանդիսանան արհամարհանքին, միւսին հանդէպ ատելութեան:

Պիչերը, Ժերոմ Սավարի պարահանդէս եւ հրապարակային հանդիսութիւններ կազմակերպած էր Պաթիլլի հրապարակին: Այն ատենուան զգեստաւորումներով եւ երգերով ու պարերով (աուիճկ) ուղղանգիներ եւ խրախճանքներ եղան:

Այլ արարողութիւններ եղան նաեւ Օգոստոս 26ին:

*
**

Ընդհանուր ձեւով միայն լաւը, ազատութիւնը, փրկութիւնը ոգեկոչուեցան: Հեռատեսիլի Ա· կայանը էր որ անդրադարձաւ նաեւ ազատագրական օրերուն եւ անոր անունով գործուած այսպիսի այլ արարքներու, ինչպէս կիներու հրապարակային ցուցադրութիւնը գլուխները ածիլուած, տեղի - անտեղի մատնութիւններ եւ այլ արարքներ:

ՔԱՆԻ ՄԸ ՏՕՂՕՎ

ԱՅԱԹՈՒԼԱ ՍԻՄԹԱՆԻ, երեք չաբաթ Մոնթրէալ մնալէ ետք, իրաք վերադարձաւ եւ Օգոստոս 26ին Պասրայէն մեկնեցաւ դէպի Նաճաֆ, ուր պիտի փորձէր մէջնորդել եւ լուծում մը գտնել: Սկոթանի, 73 տարեկան, չիներու բարձրագոյն ատենանի կրօնաւորն է եւ ծրագիր մը ունի որ կը նախատեսէ ամերիկացի զինուորներու քաշուիլը, պէնքերու արգիլումը քաղաքին մէջ եւ Մեհտիի բանակին զինաթափումը: Օգոստոս 26ի առաւօտուն ալ երկու հրթիռներ ինկած են Քուֆայի մզկիթին վրայ, 25 մեռեալ կար եւ աւելի քան 60 վիրաւոր:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐԸ, որ փարիզ էր, հարցազրոյց մը տուած է Ֆիկարոյի (Օգոստոս 26): Կ'ըսէ թէ աւելի խիստ օրէնքներ հարկաւոր են Ֆրանսայի մէջ հակահրէութեան դէմ պայքարելու համար: Եւ ոմն կ'ընդունի Ֆրանսայի Հրեաներուն այն առարկութիւնը, որ հարցը իրենց կը վերաբերի, բայց կը խորհի որ հարցը միայն Ֆրանսայի չի պատկանիր եւ հարկ է աշխարհի ամէն կողմ պայքարիլ, որովհետեւ այն է որ կեր կու տայ ահաբեկչութեան: Պաղեստինցիներու հետ հակամարտութեան մէջ, Եւրոպացիք կրնան աւելի կարեւոր դեր խաղալ, բայց եթէ կ'ուզեն միջնորդել, պէտք է աւելի հաւասարակշռուած դիրք բռնել: Կողմնակից չէ որ այցելութիւն տրուի Արաֆաթի (ինչպէս ըրաւ Ք· Պարնիէ): Ան խոչընդոտ մըն է, կ'ըսէ, խաղաղութեան համար, ուրեմն երբ Պարնիէ Հոկտեմբերին երուսաղէմ երթայ, չի կըրնար Շարոնի հանդիպիլ, բայց ով որ Քոբէյիի հետ կը տեսնուի, կրնայ:

ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՕԴԱՆԱՒԵՐՈՒ արկածները միաժամանակ պատահած են Օգոստոս 24ի գիշերը· կրնան իսկապէս արկած ըլլալ, ահաբեկչական վարկածը բացառուած է առաջին քննութիւններէ ետք: Օդանաւերը 21 եւ 27 տարեսան էին, բայց եւ այնպէս հարցականներ կը մնան: Օգոստոս 26ը պզտիկ սուգի օր հռչակուած էր ամբողջ Ռուսաստանի մէջ, 89 մեռեալներու յիշատակին:

ՊԱԹԻՄԹի խորհրդաւոր նամակով մը իր պատասխաններուն կը հաստատէ որ չէ փախած, միշտ Ֆրանսա կը գտնուի եւ կը բացատրէ որ լուսաբանութիւններ կ'ուզէ տալ եւ ըսել թէ ինչու չէ ներկայացած դատական հակահէին: Ֆրանսան կը նշանակէ իր երկիրը եւ թէ վերադարձին տեսնը համաձայն ըլլալով իր յանձնումին, պինք դատապարտած է ցկեանս բանտարկութեան Իտալիոյ մէջ:

ՓԱՔՐԻՔ ՏԻՎԻԷՅԵՆ, ճարտարարուեստի պատուիրակ նախարարը, հարցազրոյցի մը մէջ (Ֆիկարօ, Օգոստոս 26) կ'ըսէ թէ կառավարութիւնը «յարձակողական ԻԽ· ԷՄ· ՓԷ·Լ» մը պէտք ունի, որովհետեւ կ'ուզէ որ ան առաջնորդի դեր ունենայ: Իրեն համար Սարքոզի կոչումն ունի ԻԽ· ԷՄ· ՓԷ·Լ ոգին մարմնաւորելու: Ինչ կը վերաբերի այս վերջինին եղած արձագելքին երկու պաշտօն վարելու, Շիրաքի կողմէ, Տէվիճեան յստակ է·· «Նախադահին կողմէ նշանակուած նախարար եմ: Կ'ընդունիմ անշուշտ իրաւարարի իր վճիռը»: Թղթատարի մասին ապահովութիւն կու տայ որ 6000 դրասենեակ ջնջելու հարց չկայ, նպատակն է բարելաւել կացութիւնը:

ՄԵԾՆ ԲՐԻՏԱՆԻՈՑ նախկին վարչապետին՝ տիկին Թաչէրի զաւակը Մարք Թաչէր, 51 տարեկան, ձերբակալուած է Հարաւի Ափրիկէի Գափի արուարձանի Գոնոթանթիայի իր բնակարանը, հասարակածային կինէայի դատավարութեան կապակցութեամբ: Ամբաստանութիւնն այն է որ պատասխանատու է փուչի փորձին ֆինանսաւորման:

ՊՈԼԻՍ

ՅՈՒՆԱԿԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ ՎԵՐԱԲԱՁՈՒՄԻ ՀԱՐՑԸ

Թուրքիոյ Եւրոպայի անդամակցութեան պայմաններէն է փոքրամասնութիւններու կրօնական, կրթական ազատութեան երաշխաւորումը: Այս մարզին դէխաւոր տեղը կը պահեն վաղքինները եւ Հէյպէլի կղզիի յունական դպրեվանքին վերաբացումի խնդիրը:

Թուրքիոյ Ազգային ապահովութեան խորհուրդը որուն ղեկավարութիւնը զինուորականներէ կազմուած էր, վերջերս Եւրոպայի հրահանգներով աչխարհականով մը փոխարինեց ընդհանուր քարտուղարը: Օգոստոս 25ին խորհուրդը վերջին անգամ ըլլալով գումարուած է նախկին կազմով ու օրակարգի վրայ ունեցած Հէյպէլիի դպրեվանքին նիւթը: Այդ մասին քննարկումի առարկայ եղած են կառավարութեան կողմէ պատրաստուած երեք ընտրանքները· առաջինով կը նախատեսի վարժարանը վերաբանալ որպէս Կրթութեան նախարարութեան ենթակայ հաստատութիւն· երկրորդը կը վերաբերի դպրեվանքին բարձրագոյն ուսումի հաստատութեան հանդամանք տալու: Երրորդ տեսակէտ մը կ'առաջարկէ վարժարանը որպէս բարոյական անձնաւորութիւն, վաղքի մը չրջանակին մէջ դեռեղել:

Մամուլը այս տեղեկութիւնները տալով հանդերձ չի նշեր թէ ինչ եղած է քննարկումներուն արդիւնքը: Սակայն այնպէս կը թուի թէ սա կամ նա ձեւով, դպրեվանքին վերաբացումը դիւրին պիտի չըլլայ: Մանաւանդ որ Պոլսոյ Ցունաց տիեզերական պատրիարքին վերջերս ըրած յայտարարութիւնները Թուրքիոյ առպարէզ կարզալու ընդմէջ կ'ընկալուին ու ամէն առիթով կ'առնչուին դպրեվանքի հարցին:

Բարթուղիմէոս պատրիարքը Օգոստոս 8ին «Ռէօյթըր» գործակալութեան յայտարարած է թէ յոյն փոքրամասնութիւնը զրկուած է իր եկեղեցիները, գերեզմանատունները, զպրոցները պահող կրօնա-

(Շար·ը Դ· էջ)

ՀԻԹԼԷՐԵԱՆ ՓԱՌԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԹՐՔԱԿԱՆ ԹԵՐԹԻՆ ՄԷՋ ՈՒ ՀՐԷԱԿԱՆ ՀԱԿԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԸ

ԱՄՆ-ու հրէական Սիմոն Ուիզընթալ կեդրոնը Օգոստոս 23ին նամակ մը ղրկած է Թուրքիոյ Արտաքին նախարար Ա· Կիւլի, ամոր ուշադրութեան յանձնելու համար հակահրեայ դրութիւն մը որ լոյս տեսած է Թուրք մամուլին մէջ: Նամակով կը պահանջուի դատապարտել երեւոյթը եւ միջոցներ ձեռք առնել այդ հրատարակութեան դէմ:

Խնդրոյ առարկայ թերթը «Վաքիթ»ն է որուն Օգոստոս 17ի թիւին մէջ Ապտիւրրահիմ Գարագոչ ըսած է թէ «Բ· աշխարհամարտին Գերմանիոյ կողմէ հիմնուած կեդրոնացման ճամբարները ներկայիս կը գտնուին Իսրայէլի մէջ»: Ա· ւելցուցած է թէ հիացում ունի Հիթլէրի հեռատեսութեան· անոր որ «ներկայացած է որպէս ցեղապաշտ մը, անդութ եւ հրէչ մը»: Ըսած է թէ Հիթլէր նախատեսած էր պատահելիքները եւ անոր մահուան պատճառը Հրեաները եղած էին: «Ան գիտէր թէ այս վերջինները ուրոնց ցեղապաշտութիւնը կրօնքի բնոյթ ունի եւ որոնք աչխարհը արեան մէջ թաթխուած կ'ուզեն տեսնել, ծանրագոյն հարց մը կը կազմեն»:

Թուրք լրագրողը տակաւին կը նչէ թէ «ոչ հրեայ բոլոր պետութիւնները վատնդի ենթակայ են, ներառեալ Թուրքիան»: Ու կը կրկնէ· «այնպէս կը թուի թէ Հիթլէր իսկական տեսանողն էր: Երէկ Հիթլէրն էր, այսօր Պէն Լատէնը»:

Ուիզընթալ կեդրոնէն Անգարա ղրկուած նամակին մէջ կը չեշտուի· «Այս յօդուածը ոչ միայն կը բռնաբարէ թրքական օրէնքը, այլ նաեւ կը հակադրուի Եւրոպական Միութեան բոլոր կանոններուն· այն միութեան որուն այնքան կը փափաքի անդամակցիլ Թուրքիա:

ՕՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

ՈՒՐԻՇՆԵՐՈՒՆ ՀԱՅԵՐԸ···

Ցունահռոմէական ըմբշամարտի 84 քկ· դասակարգին մէջ նախկին հայաստանցի, ներկայիս չուէյտաբնակ Սբա Աբրահամեան Օգոստոս 25ին մրցած է թուրք ըմբիշ Համզա Երլիքայայի դէմ: Շնորհիւ իր փորձառութեան ու վարպետութեան, հայ մարզիկը 3 - 0 արդիւնքով յաղթած է Թուրքին որ կը ձգտէր տիրանալ ոսկէ մետալի:

Ցունահռոմէական ըմբիշ Միխթաթ Մանուկեան որ մաս կը կազմէ Ղազախստանի հաւաքականին, պարտուած է թուրք մրցակիցէն Շէրիֆ Էրօղլուէ, նոյն՝ 3 - 0 արդիւնքով: Լատվօյն պարապային կըրնար պրոնզէ մետալի արժանանալ:

*
**

Ընդհանուր դասաւորման մէջ գլուխը կը մնան ԱՄՆ 76 մետալով (25 ոսկի), Ճրանսա թարեալած է իր դիրքը 7րդէն վեցերորդի անցնելով 26 մետալով (10 ոսկի): 26րդ դիրքը կը գրաւէ Վրաստան 3 մետալով (2 ոսկի), 42րդ է Ազրբէյճան 3 մետալով (1 ոսկի): Դասաւորուած 68 պետութեանց մէջ Հայաստան տեղ չունի: Վերջինն է Վենեզուէլա մէկ պրոնզեայ մետալով:

ՄԻ ԿՏՈՐ ԵՐԶԱՆԿՈՒԹԻԻՆ

ԱՐՓԻ ՎԱՆԵԱՆ

Նախկինում բանուորական հանրակացարան էր: Այժմ այստեղ հանգրուանել են Բաքուի, Սումգայիթի ահեղ օրերից մազապուրծ եղած ընտանիքները: Վաղ առաւօտից մինչեւ ուշ երեկոյ վազվզող կիսաքաղց երեխաների, իրար հետ զրուցող, վիճող, սրա-նրա հասցէին հայհոյող կամ իրենց ճակատագիրը անիծող կանանց աղմուկ ու աղաղակ է, կերակուրների հոտեր, ամանեղէնի, աթոռների չխչխկոց, ոչ մի րոպէ չդադարող կատուների մլաւոց ու շների վնգստոց: Եթէ դրանց գումարենք նաեւ փողոցով քայլող մարդկանց, սլացող մեքենաների, աւտոպատուհների ձայները, ամէն ինչ կը կը նմանուի ինչ որ դժոխքային բանի, ինչ որ աներեւակայելի վայրի, ուր մարդ կարող է կորցնել իր խիղճը, հաւասարակշռութիւնը, խելագարուել: Բայց յարմարուելով այս ամէնին ապրում էին մարդիկ, սպասելով իրենց ճակատագրի որեւէ փոփոխութեան: Երէկ դեռ նրանք ապրում էին մեծ քաղաքների իրենց յարմարաւէտ բնակարաններում, ունէին աշխատանք, բարեկեանք: Այսօր, ակայն, դարձել են ամէն ինչից զրկուած, ամէն ինչ լքած, Ազերիների ձեռքից մի կերպ ազատուած փախստականներ: Եւ անդամ երջանիկ են զգում, որ կարողացել են փախչել, փրկել իրենց կեանքը:

Արթուրը, որ մի չաբաթ առաջ էր տեղաւորուել այստեղ, կէսօրին մօտ զգուշօրէն բացեց սենեակի դուռն ու դուրս եկաւ: Անքնութիւնից ու երեկոյեան օգտագործած էժանագին օղուց գլուխը ժժում էր, աչքերի տակ կապտուկները կային, երեսն անթրաչ էր: Գլխում, հոգում ամայութիւն էր· ոչինչ չկար, ո՛չ մի միտք, ոչ մի ձայն, սարսափելի, ահազդու դատարկութիւն...

Միջանցքում վայրենի աղմուկ-աղաղակ էր, քայլեց դէպի դուրս: Մանաւանդ իւրաքանչիւրի համար չինարար է եւ հարիւրաւոր բազմայարկ շէնքեր էր կառուցել այն քաղաքում, որտեղից ինքը մի կերպ պրծաւ իր ազգի «եղբայրների» ձեռքից: Ինքը, բայց ոչ իր սիրելի մարդիկ· կինը, որդին, որ զոհը դարձան ահեղ ոճրագործութեան: Ո՞ւմ է պէտք այսուհետ իր կեանքը, երբ ոչ ոք տանը չի սպասում, երբ ոչինչ տուն չի կանչում: «Ոչինչ»: Մարմինը փչաքաղուեց այս խօսքից· Ամայի՛, կողոպտուա՛ծ կեանք, պատուած անթափանց չղարչով: Իսկ օրերն անցնում են դառնալով չաբաթներ, ամիսներ, տարի: Աչխատանքը, դժուարին կեանքը փորձում են մոռացութեան տալ մխացող վէրքը, սակայն օղու բաժակում անգամ չի խեղդուում վիշտը, լողում, դուրս է գալիս: Ահա եւ իր միակ ընկերը- բակի այս միայնակ նստարանը, որ արդէն քանի օր է կիսում է իր հետ մտքերը, ապրումները, հոգու ու մարմնի ողջ ծանրութիւնը: Նրստեց ու փակեց աչքերը: Արեւն անխնայ այրում էր, նիրհը փորձում էր տիրանալ, երբ յանկարծ սթափուեց երեխայի բարձրաձայն լացից: Շրջուեց· չորս-հինգ տարեկան մի երեխայ ընկել էր, վնասել ար-տը ու լացում էր: Իսկոյն վէր կացաւ տեղից, գրկեց, բարձրացրեց, սրբեց արցունքները, թաչկինակ դրեց վէրքին:

- Լաւ, լաւ անցաւ, ոչինչ չկայ, մի արտասուիր, փոքրիկ:

Երեխան բարձրացրեց արցունքներով լեցուն աչքերը ու նայեց իր դիմացը կանգնած տղամարդու տխուր, յոգնած աչքերին: Արթուրն յանկարծակիի եկաւ· իր որդու աչքերը... այսպիսի աչքեր ունէր իր որդին, ճի՛շդ այսպիսին՝ սեւ ու խոշոր, երկար թեթեւուկներով, նոյն մանկական, վախուորած հայեացքով: Կռացաւ, գրկեց մանկան, ամուր սեղմեց իրեն: Սիրտը թափրտում էր, յուզմունքը եկել ու դէմ էր առել կոկորդին, զսպեց իրեն, որ չհեկեկայ: Փոքրիկը վախեցած ճիդ գործադրեց ազատուել անծանօթ մարդու գրկից:

- Սպասիր, մի գնա: Ինչպէ՞ս է անունդ:

- Կարէն:

- Կարէ՞ն, - անգիտակցաբար կրկնեց փոքրիկի յետեւից:

- Հա, մաման ասաց տնից դուրս չգամ, բայց չյսեցի:

- Ոչինչ, ոչինչ, - չփոթուած սկսեց գըրպանները մտաղել, յետոյ մի կոնֆէտ գըտաւ, մեկնեց երեխային:

- Շնորհակալութիւն, - տղան ագահօրէն վերցրեց կոնֆէտն ու փախաւ:

Վերջին տարուայ մէջ առաջին անգամ տրամադրութեան մէջ փոփոխութիւն նկատեց· փոքրիկն իր հայեացքով կարծես թէ կոտրեց սառոյցը, փոքրիկը, ինքն էլ դա չգիտակցելով, ստիպեց նրան մի քայլ անել դէպի կեանքը, վերադառնալ... Ցաջորդ մի քանի օրը այդ, առաջին հայեացքից, աննշան հանդիպումով էր ապրում, բակում անընդհատ աչքերով փնտռելով իր փրկարարին:

Այդ օրը աչխատանքից չուտ վերադարձաւ: Երկրի քաղաքական կեանքում վերջին ամիսների զարգացող խառնաչփոթ վիճակը մարդկանց հանել էր նորմալ հուզնից: Այժմ բոլորը մի բերան միայն սպասող պատերազմական գործողութիւններին, սարսափելի լուրերի, քաղաքական անց ու դարձի մասին էին խօսում: Ոչ ոք տրամադրութիւն չունէր աչխատելու, նրանց թւում եւ Արթուրը:

Ատիճաններով բարձրանալիս արդէն ականջին հասան միջանցքների աղմուկն ու աղաղակը, յօնքերը կիտեց· հանդստանալու ոչ մի հնարաւորութիւն չկայ: Մի խումբ երեխաներ վազելով գալիս էին ընդառաջ, նրանցից մէկը սայթաքեց եւ ընկաւ ուղիղ իր դիրկը: Բռնեց ձեռքից եւ ուրախութեան ժպիտը լուսաւորեց դէմքը:

- Կարէ՞ն, կրկին դու...

Տղան ծիծաղեց:

- Դու այստեղ ի՞նչ ես անում:

- Ես այստեղ ապրում եմ:

- Ո՞ր յարկում, - Արթուրի սիրտը ուրախութիւնից սկսեց արագ խփել:

- Երկրորդ, ա՛յ այն սենեակում, - ու մատով ցոյց տուեց միջանցքի ծայրի սենեակը:

- Ուրեմն մենք հարեւաններ ենք, պնա՞ք ինձ մօտ, ես լաւ կոնֆէտներ ունեմ:

Կարէնը զարմացած նայեց Արթուրին ու հնազանդօրէն բռնեց նրա մեկնած ձեռքը:

Արթուր բացեց հին ու միակ պահարանը: Փոքրիկը ագահ հայեացքով իսկոյն նկատեց այնտեղի ողջ պարունակութիւնը: Մի քանի չոքոլաթէ կոնֆէտ, մի քանի թխուած-քաբլիթ, մի երկու ճկան պահածոյ, մի չիչ կխաատ օղի: Թուքը դէմ առաւ կոկորդին, ամաչեց կուլ տալ: Արթուրը հանեց կոնֆէտները, մեկնեց տղային: Կարէնը զրեթէ յափշտակեց դրանք, սկսեց արագ-արագ ուտել: Արթուրը ուշադիր ու զննող հայեացքով նայեց նրան:

- Դու այսօր ճաչե՞լ ես:

- Այո, թէյ եմ խմել առաւօտեան:

Մի կերպ զսպեց ժայթքել ցանկացող արցունքները:

- Կարէն, որտե՞ղ է մայրդ:

- Գնաց խանութ:

- Նստիր, ես ու դու այսօր միասին ենք ճաչելու, - ու փոքրիկին տարաւ դէպի սեղանը:

- Չէ, չեմ ուզում, - սակայն անմեղ հայեացքը անկարող էր խաբել, - մաման չուտով կը գայ:

- Ոչինչ: Մենք կը հասցնենք, - ու ժըպտալով չոյեց փոքրիկի մազերը:

Իսկ այդ ժամանակ միջանցքով մէկ մայրը փնտռում էր, հարց ու փորձ անում· ոչ ոք երեխայի տեղը չգիտէր: Վախեցած ու զայրացած սկսեց բարձրաձայն կանչել: Կարէնը իսկոյն սթափուեց, վազեց դէպի միջանցք ու գոռաց·

- Մա՛, այստեղ եմ:

Արթուրը հետեւեց փոքրիկին եւ դրան առաջ դէմ առ դէմ հանդիպեց երիտասարդ կնոջը:

- Ի՞նչ ես անում այստեղ, - կինը յուզած էր, - ինչքան ժամանակ է փնտռում եմ քեզ: - Ու նայելով Արթուրին թեթեւակի ժպտաց, - Զար է, մի րոպէ անդամ հանգիստ չի նստի տանը:

- Աննման տղայ է Կարէնը, տիկի՛ն:

- Օհօ՛, արդէն ծանօթացե՞լ էք:

Արթուրը ժպտաց: Կինը հարցական նայեց նրան ու բռնելով որդու ձեռքը հեռացաւ: Արթուրը մտաւ սենեակ, փուռեց մահճակալին: Ցոգնածութիւնը լրիւ անցել էր, առաւօտուանից տանջող գլխացաւից անգամ հետք չէ մնացել:

Ցաջորդ առաւօտեան Արթուրն ինքը միջանցքի ժխորում, տասնեակ երեխաների մէջ փնտռեց ու գտաւ Կարէնին:

- Գնա՞նք ինձ մօտ:

Տղայի աչքերը ուրախութիւնից չողացին:

- Միայն մամային չասէք, լա՛ւ, որ այստեղ եմ:

- Չեմ ասի, մի անհանգստանայ: Հիմա թէյ կը խմենք, թարմ հաց կ'ուտենք ու կը գնաս խաղալու: - Եւ երկուսով սեղան նստեցին դէմ-դիմաց: Կարէնը ախորժակով ուտում էր, Արթուրը հիացմունքով ու կարօտով նայում նրան:

Դրան թակոցը խախտեց երանելի պահը:

- Մամաՙն է, - Կարէնը վախեցած նայեց դրան կողմը:

- Զգիտեմ, հիմա կ'իմանանք, - պատասխանեց Արթուրն ու բացեց դուռը:

Դրան յետեւում կանգնած էր նոյն երիտասարդ կինը:

- Ներս մտէք, - Արթուրը ժպտաց:

- Ես Կարէնին եմ փնտռում, ոչ մի տեղ չգտայ, մտածեցի որ ձեզ մօտ կը լինի:

- Այո, ինձ մօտ է ներս մտէք:

Կինը երկմտանքի մէջ էր, յետոյ որոշեց մտնել: Տղան վախեցած նայեց մօրը:

- Միայն թէ չբարկանաք Կարէնի վրայ, ես եմ նրան հրաւիրել: Գո՛ւցէ ծանօթանանք, տիկին· ես Արթուրն եմ:

- Վարդուհի, - պատասխանեց կինն ու ձիկնեց:

- Շատ ուրախ եմ, Վարդուհի, - Արթուրի խօսքերում թախիծ կար, - ես ու Կարէնը ընկերացել ենք: Իմ մենակութիւնը նա է փարատում... սարսափելի բան է մենակութիւնը, - վերջին խօսքերը, կարծես թէ, ասաց ինքն իրեն, առանց դիմելու ոչ ոքի:

- Գիտեմ, - կինը հառաչեց, արագ դըրկեց երեխային ու դուրս եկաւ:

Օրերը նոր ընթացք էին ստացել: Կեանքը նորի՛ց խաղաց Արթուրի երակներում: Ամպամած զգացում էր ապրում, ասես թէ վերագտել է կորցրածը· այդ աչքերը՝ խոչոր, սեւ· երկար թեթեւուկներով, այդ անմեղ, մանկական հայեացքը: Հոգու բոլոր թելերով կապուել է դրանց: Հիմա նոյնիսկ աչխատանքից յետոյ չէր ժամանակը չվատնել այստեղ-այնտեղ, տուն էր գալիս, անպայման հանդիպում էր Կարէնին, ու միասին ընթրում էին, զանազան խաղեր կազմակերպում, զրքեր ու ամսագրեր թերթում: Ընտելացել էին իրար, Արթուրը արդէն չէր կարողանում այսուհետ իր կեանքը պատկերացնել առանց այդ փոքրիկ մարդու, առանց հայեացքների, ժպիտների: Վարդուհին հուն հաւ հաւասկերոլուել էր իրադրութեանը եւ արդէն համարձակօրէն էր ծեծում Արթուրի սենեակի դուռը, ներս մտնում, ժպտալով մի քանի խօսք փոխանակում: Մի անգամ նոյնիսկ մի բաժակ սուրճ խմեցին միասին: Արթուրը չէր կարողանում հասկանալ· երեխայի հանդէպ ունեցած իր մեծ սէ՞րն էր պատճառը այն համակրանքի, որ տածում էր նրա երիտասարդ մօր հանդէպ, թէ՞... Սիրտը ճմլուեց վաղուց մոռացուած մի զգացմունքից: Դեռ մի տարի առաջ նա էր կարողանում պատկերացնել, որ այսպիսի յուզմունքով կարող է մտածել մէկ այլ կնոջ մասին: Ինչ որ հարազատ բան կայ այդ կնոջ հայեացքներում, ինչ որ ծանօթ ջերմութիւն, որին սարսափելի սկսել է կարօտել այս վերջերը, եւ առանց որի դատարկ ու սառն է ամէն մի տուն: Ցանկարծակի ծնուած մտքից սարսափեց· ի՞նչ...Կարէնը, Վարդուհին եւ ինքը մի յարմարնով: Բարձրացաւ մահճակալից, բամբիռ պահարանի դռնակը, հանեց օղու շիշը: «Չէ, պէտք է վերջ տալ սրա հետ»· խօսեց քթի տակ ու լցրեց բաժակը:

(Մնացեալը յաջորդով)

ԱՐՄԷՆ ՏԻԳՐԱՆԵԱՆԻ

Ա Ն Ո Յ Շ Ը

ԵՐԵՒԱՆԻ ՕՓԵՐԱՑԻՆ ՄԷՋ

ԲԺԻՇԿ ԼԵՒՈՆ ՄՈՄՃԵԱՆ

Ի վերջոյ Հայաստանի Ազգային Ա. Սպենդարեան Օփերային վերանորոգուած թատրոնին մէջ ներկայ եղայ, 2004 Ցուլիսին, «Անոյշ»ի բեմադրութեան:

«Անոյշ»ը մեր ազգային օփերայի արեւտի խորհրդանիշն է, որ կ'արտացոլէ հայ ազգային ոգին, այսինքն մեր արժանապատուութիւնը եւ հայկական առանդութիւնները:

Այդ օր, ծայրէ ծայր լեցուն էր Օփերայի չքեղ դահլիճը:

Սփիւռքահայու մը յուզուած ու արցունքոտ աչքերով դիտել ու դատել, բաղդատական եւ քննարկումներ ընել, այնքան ալ դիւրին չէ, որքան թնիկ Հայաստանցիի մը համար:

Այս վերջինը կրնայ ամէնուշտ աւելի խստապահանջ եւ սուր աչքերով համեմատել ստեղծագործութեան նրբերանգները, քաջատեղեակ ըլլալով Ա.Ճէմմեանի մը փայլուն բեմադրութեան եւ կամ Տ. Լեւոնեանի մը: Կրնայ նաեւ ըրական կամ բացասական կարծիք ունենալ, չափանիշ առնելով այս կամ այն նուագավարին, մենեղրիչ - մենեղրչուհիին մեկնաբանութիւնը և վերջապէս ներկայացումը վարող ընդհանուր պատասխանատու բեմադիրը:

Սփիւռքահայու մը համար տկար էր «Անոյշ»ի բեմայարդարումը, միօրինակ եւ անփոփոխ տեսարանը, հակառակ դոյներու թարմութեան:

Ներկայ գտնուեցանք հարսանեկան տըկար եւ աղմկալից տեսարանի մը: Սարոյի եւ Մոսիի խաղարկութիւնը այն տըպաւորութիւնը ըրաւ մեզի, որ անոնք վաղեմի թշնամիներ էին արդէն...

Օփերայի համանուագախումբի որակաւոր երիտասարդ նուագավարը բուռն կիրքի տէր, զգայուն եւ նոյնքան խոովիչ կարէն Տուրկարեանն էր:

**Ես դինքը դասած էի Հայաստանի երկու արտահայեաց (էքսբրավերթի) հոգեբանութեամբ եւ մեծամիտ նուագավարներու խմբակին մէջ: Հոս ոչ մէկ նպատակ ունինք նսեմացնելու անոնց հսկական երաժըշտական և իմացական արժէքները, սակայն Արեւմտեան Եւրոպա ապրող Սփիւռքահայու մը համար, որ չըլնականկին մէջ ունի բազմաթիւ երիտասարդ ուժեր, դովելի համեմատութեամբ, ինչպէս են փէհլիվանեաններ, Պաղտասարեաններ, Ալթունեաններ, Փափազեաններ, Սիրաչոր, սեւ· երկար թելթեւուկներով, այդ անմեղ, մանկական հայեացքը: Հոգու բոլոր թելերով կապուել է դրանց: Հիմա նոյնիսկ աչխատանքից յետոյ չէր ժամանակը չվատնել այստեղ-այնտեղ, տուն էր գալիս, անպայման հանդիպում էր Կարէնին, ու միասին ընթրում էին, զանազան խաղեր կազմակերպում, զրքեր ու ամսագրեր թերթում: Ընտելացել էին իրար, Արթուրը արդէն չէր կարողանում այսուհետ իր կեանքը պատկերացնել առանց այդ փոքրիկ մարդու, առանց հայեացքների, ժպիտների: Վարդուհին հուն հաւ հաւասկերոլուել էր իրադրութեանը եւ արդէն համարձակօրէն էր ծեծում Արթուրի սենեակի դուռը, ներս մտնում, ժպտալով մի քանի խօսք փոխանակում: Մի անգամ նոյնիսկ մի բաժակ սուրճ խմեցին միասին: Արթուրը չէր կարողանում հասկանալ· երեխայի հանդէպ ունեցած իր մեծ սէ՞րն էր պատճառը այն համակրանքի, որ տածում էր նրա երիտասարդ մօր հանդէպ, թէ՞... Սիրտը ճմլուեց վաղուց մոռացուած մի զգացմունքից: Դեռ մի տարի առաջ նա էր կարողանում պատկերացնել, որ այսպիսի յուզմունքով կարող է մտածել մէկ այլ կնոջ մասին: Ինչ որ հարազատ բան կայ այդ կնոջ հայեացքներում, ինչ որ ծանօթ ջերմութիւն, որին սարսափելի սկսել է կարօտել այս վերջերը, եւ առանց որի դատարկ ու սառն է ամէն մի տուն: Ցանկարծակի ծնուած մտքից սարսափեց· ի՞նչ...Կարէնը, Վարդուհին եւ ինքը մի յարմարնով: Բարձրացաւ մահճակալից, բամբիռ պահարանի դռնակը, հանեց օղու շիշը: «Չէ, պէտք է վերջ տալ սրա հետ»· խօսեց քթի տակ ու լցրեց բաժակը:

(Մնացեալը յաջորդով)

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ԱՁՆՇԱՐի հայաւանը, Օգոստոս 8ին առնական օր մը ապրած է Ա.ինճարի հիմնադրութեան 65ամեակին առթիւ: Օգոստոս 8էն 11, հիմը դրուած է համամուսալեռցիական լայն տարողութեամբ գործակցութեան մը մասնակցելով տոքթ. Վազգէն Տէր Գալուստեանի նախագահութեամբ համամուսալեռցիական առաջին համագումարին: Այս համագումարին ազգանունը տրուած է Օգոստոս 8ին, երբ Ա.ինճարի Ս. Պօղոս եկեղեցւոյ մէջ յաւարտ պատարագի հոգեհանդիսատ կատարուած է ի յիշատակ Ա.ինճարի հիմնադիր սերունդի ննջեցեալներու յիշատակին: Գիւղի ղեկավարները ծաղկեպսակներ զետեղած են Մուսա Լերան ղեկավարներ՝ վեր. Տիգրան Անդրէասեանի եւ Մովսէս Տէր Գալուստանի կիսանդրիներուն: Համագումարին պաշտօնական բացման հանդիսութիւնը, նախագահութեամբ տոքթ. Վ. Տէր Գալուստեանի, տեղի ունեցած է նոյն օրը, Գայուստ Կիւլպէնկեան հանդիսասրահին մէջ, ներկայութեամբ երեք յարանուանութենց հոգեւոր պետերուն, լիբանահայ ազգային եւ պետական դէմքերու եւ հոծ բազմութեան մը: Բացման խօսքը արտասանած է Ա.ինճարի հիմնադրութեան 65ամեակի մարմնի ատենապետ՝ Վարուժ Զիլինկիրեան: Ան, չեշտելէ ետք թէ այս համագումարը պարզապէս նախաձեռնութիւն կամ ինքնանպատակ ձեռնարկ չէ, այլ իրենց սրտերուն մէջ Մուսա Լեռը կրող հայրենակիցներու մէկտեղում, ըսած է.- «Ա.ինճարը պատմական արժէք կը ներկայացնէ ողջ հայութեան համար, որովհետեւ մեր ժողովուրդի զանգուածային տեղահանութեան եւ ողբերգութեան կենդանի վկան է յաչս աշխարհին»: Եզրակացուցած է որ այս խորհրդաժողովը համամուսալեռցիական է, սակայն ունի համահայկական բնոյթ: Ողջոյնի խօսքով հանդէս եկած է Ա.ինճարի քաղաքապետ Սեպուհ Սգայեան: Ողջոյնի խօսք արտասանած է նաեւ նախագահ տոքթ. Վազգէն Տէր Գալուստեան, որ չնորհակալութիւն յայտնելէ եւք իրեն եղած պատիւին համար, ըսած է.- «Ա.ինճարը չարունակութիւնն է Մուսա Լերան, որ հայ ժողովուրդի խիզախ ոգիին խորհրդանիշը դարձած է ամբողջ Հայութեան համար»: Ապա, ցուցադրուած է ա.ինճարցի, այժմ գանատահրնակ բեմադիր Նորա Գէորգեանի վաւերագրական կարճ ժապաւէնը, որ բաժիններ կը ներկայացնէր տակաւին պատրաստութեան մէջ եղող վաւերագրական «Ա.ինճար» ժապաւէնէն: Ողջոյնի խօսքերով նաեւ հանդէս եկած են յարանուանութենց ներկայացուցիչները: Հայ աւետարանական համայնքի անունով վեր. Սողոմոն Քիլաղպեան, կաթողիկէ համայնքի կողմէ Վարդան Եպիսկոպոս Աշդարեան, Հայոց թեմի առաջնորդ Գեղամ Եպիսկոպոս Մաչէրեան: Հանդիսութեան յաջորդած է պաշտօնական ճաշ:

ԱՆՀԱՒԱՏ ԿՐՕՆԱՒՈՐԸ

Թորքիա Կրոսպոլ Դանիոյ լուտերական եկեղեցիին ժողովրդական մէկ կրօնաւորն է: Անցեալ տարի տուած մէկ հարցազրոյցը իսկական տագնապ մը հրմշտացուցած է իր պատկանած եկեղեցիին մէջ: Պատճառը այն է որ Կրոսպոլ չի հաւատար Աստուծոյ գոյութեան, նման հաւատք հիմնովին պարզամտութիւն համարելով: Ատիկա ժամանակավրէպ բան է ու իրեն ոչինչ կ'ըսէ աղօթքը թէ «Հայր մեր որ յերկինս ես»: Իր համոզումով քիչ չէ նոյն ձեւով մտածող կրօնաւորներու թիւը, բայց անոնք լուռ կը մնան:

«Անկեղծ ըլլանք: Չեմ հաւատար արարիչի, փրկիչի, ոչ ալ յաւիտենական կեանքի: Չէի հաւատար երբ նոյնիսկ անչափահաս էի: Հիմա հասկցած եմ որ յստակութեամբ պէտք է ըսեմ մտածածս, որպէսզի յայտնուի աստուածբութեան իսկական պատկերը եւ տկարանայ, ջնջուի հինը: Երբեմն մտացի հաւատացեալներ կը հարցնեն ինծի թէ ինչո՞ւ հաւատար որ Յիսուս իր մահէն ետք պատերու ընդմէջէն անցաւ. ու ստիպուած ժխտական պատասխան կու տամ», կ'ըսէ ան:

Անհաւատ կրօնաւորը կը հասկնայ մարդոց աղօթելու պահանջը. բայց զայն կը նկատէ ինքնամփոփումի պահ մը որ առիթ կ'ըլլայ կեդրոնանալու կեանքի առաջնային բաներուն վրայ: Իր կարծիքով մարդ մանկապարտէզի տղաքը կրնան հաւատալ նախկին փայլով ու չքեղանքով Աստուծոյ մը գոյութեան: Բայց չափահաս ըլլալէ ետք, անհեթեթ կը գտնէ մանկական հաւատքի մը պահպանումը: Այս գաղափարները հրապարակաւ յայտնած է «Կօշիկին մէջի քարը» հատորով որ փորձագրութիւն մըն է քաղաքակրթութեան եւ քրիստոնէութեան նիւթով:

Կրոսպոլ կրօնաւոր է 25 տարիէ ի վեր: Կը մնայ այդպէս «որովհետեւ քրիստոնէութիւնը ամենազեղեցիկ պատմութիւնն է»: Կը մերժէ տեսակէտը թէ քրիստոնէական պատգամներու մեկնաբան մըն է միայն: Ինքզինք կը սահմանէ որպէս աւանդական բնագիրներու երջանիկ մեկնաբանը: Իր պարտականութիւնն է ամէն չաբաթ նոյն էջերը կարդալ: Բայց ատիկա ընելով այն տպաւորութիւնը կ'ունենայ թէ իր սեփական գոյութեան մէկ արձադանգը կը գտնէ այդ էջերուն մէջ ու ատիկա կը բաւէ երջանիկ ըլլալու:

Այն քրիստոնեաները որոնք իրենց կեանքը կը ձեւեն անցեալ ժամանակի մը օրինակով, իր կարծիքով լաւ քրիստոնեաներ չեն, հակառակ տարածուն կարծիքին: Ուրիշներ ալ կան որոնք կը հեռանան եկեղեցիէն: Մինչդեռ հաւատքին նոր տեսանկիւնէ մօտենալ կրնայ սփոփել քրիստոնէութենէն խոտորածներուն գոնէ մէկ մասը:

Կրոսպոլի հիմնական միտքը այն է որ կաղապարուած մտածումներէ, թելադրանքներէ պէտք է հրաժարիլ ու ինքնաճանաչումի լաւագոյն մակարդակ մը նըւաճել, որպէսզի կարելի ըլլայ անձնական դարտափար մշակել ամենայն դիտակցութեամբ: Կարելի է անշուշտ հաւատալ յարութեան, եթէ ատիկա հաճոյք կը պատճառէ, բայց պէտք է այդ մասին ազատօրէն բանաւիճիլ: Անհաւատ կրօնաւորը չի հաւատար մշտաներկայ, արարիչ Աստուծոյ մը գոյութեան. ո՛չ, երկիրը ստեղծուած չէ անոր ձեռքով. գիտութիւնը ամէն օր աւելի նոր փաստը կու տայ: Այդ մօտեցումով Աստուած կրնայ պատրուակ ծառայել որեւէ բանի: Մինչդեռ իրեն համար Աստուած Հարցումն է: Հրաշալի հարցում մը որ ամէն ոք կրնայ ուղղել իր սեփական կեանքին:

Ունի լեզուական մտահանգումներ ալ. կը նախընտրէ չգործածել «Աստուած»ը, զայն փոխարինել «Աստուծոյ յղացք»ով, կամ «այն որ Աստուած կը կոչենք» տարագով, աւելի յաճախ «Ան»ով, «Այն»ով: Նոյն ատեն կը մերժէ միայն բառային գոյութեան մը վերածել Աստուածը: Չէ, այդպէս չէ. կայ պատմական չրջարկ մը. խաչեալին պատմութեան մէջ ան կը տեսնէ մարդը Աստուծոյ գաղափարին առընչող եւ նմանութիւն մատնանշող վարդապետութիւնը: Ատիկա կ'առաջնորդէ մտածումին թէ մարդն ալ աստուածութեան կրող է: Բայց բոլորիս գլխուն վերեւ Աստուած մը գոյութիւն չունի: Իւրաքանչիւրս առանձին ենք մեր օրակարգը ճշդելու:

Կրոսպոլ իր հատորին հրատարակութենէն ետք պատժուած է իր եպիսկոպոսին կողմէ ու պաշտօնէն առնուած. խիստ հակողութեան տակ կը գտնուի: Բայց միւս կողմէ ուսանասիրութիւն մը ցոյց տուած է թէ դանիացի պատուելիներու 15 առ հարիւրը այն նկատումը ունի որ կարելի է այդ առաքելութիւնը կատարել, առանց յարութեան հաւատալու: Անոնց երեք քառորդն ալ համոզուած է որ կրօնաւոր մը չատ լաւ կրնայ կասկածիլ Աստուծոյ գոյութեան: Այս վիճակը դժուար կացութեան մատնած է Դանիոյ լուտերական եկեղեցին որ արդէն հարց ունի իր հաւատացեալներուն հետ: Պաշտօնապէս Դանիացիներու 85%ը այդ եկեղեցիին անդամ է, բայց հոն յաճախողներու համեմատութիւնը միայն 5% է:

ՔԱՂՀԱՆ

ին վրայ ան անսպասելի եւ հիանալիօրէն թեթեւաչարժ էր:

Երկու արուեստագէտներն ալ ձայնային կալուածին մէջ մեծ վարպետներ էին:

Բացայայտ է, որ Յովհաննէս Թումանեանի բանաստեղծութեան մէջ, Սարօն եւ Ջնոյշը Հայու ղեղչկական հոգեբանութեամբ՝ ամօթխած սիրահարներ են: Այս պատկերները կը բացակայէին խաղարկութեան մէջ: Սակայն չէին պակսեր սիրային երգերով բազմաթիւ արտայայտութիւններ:

Երգչախումբը զոհացուցիչ էր իր մեկնաբանութեամբ, չայող երանդներով, միաձոյլ ու միասնական հնչողութեամբ եւ ներկան խաղարկութեամբ:

Մնծապէս գնահատեցի Ջնոյշի ընկերուհիներէն Թամար Դալոյեանին բացառիկ զգեցկութիւն ունեցող, հզօր, հարուստ և ազդեցիկ մեծծօ-սոփրանօ ձայնը: Կը յուսամ որ անոնք որ ձայնային ուղղութիւններ պիտի տան անոր, սխալ հնչածաւալի ընտրութիւններ չկատարեն:

Գոհ էի եւ յուզումի չատ բարձր պահեր ապրեցայ, ինչպէս որ պիտի ունենար ոեւէ Հայ... «Անոյշ» օփերայի վերջին պատկերին ընթացքին:

Անոյշ կորսնցնելով իր հաւասարակըշռութիւնը եւ հաւատարիմ Սարոյին, իր մեծ սիրոյն, բարձունքէն ինքզինքը կը նետէ, իր վիշտը խառնելով հայրենի խեղճ Դեբեդի ջուրերուն տխուր հեծեծանքներուն, ըստ Թումանեանի թատերագրքոյկին -վիպերթօ-: Սակայն հոս Անոյշը խորհրդանշականօրէն կ'ջոկուի նուրբ տեսքով ուռենիին ձեռքերը լայն տարածած ճիւղերուն փաթթուելու ու «տարտղնուելու»:

Կը մաղթեմ սրտագին որ «Անոյշ» օփերան միշտ ներկայ ըլլայ Հայաստանի Հանրապետութեան օփերայի եւ պալէի ազգային ակադեմական թատրոնին մէջ:

Բ. Լ. Մ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻՒԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Ու սպասուր ծերունի կին մը, որ ինկած է իր տղուն հողակոյտին վրայ ողբերգելով.

- Մէկ հատիկ տղաս, ինչո՞ւ սեւ հողերը առիր պառկեցար, տղաս, ինչո՞ւ ինծի այս վերան աշխարհը ձգեցիր, աղուոր տղաս... Ցրուիս ո՞ր քարերուն զարնեմ, տղաս...

Ու կինը կ'օրօրուի արտասուելով:

Ուժմբ մը կը չրջի, վանդ առնելով «մեծ» մարդոց պերեզմանին առջեւ: Եղիա Տէմիրճիպաշեանի, Ասպետ Ջունթ, Աչըգեան պարբերք:

Եղիա Տէմիրճիպաշեանի պերեզմանին քով կուգան աղօթել զատ զատ՝ Հրանտ Նազարեանց, Լեւոն Խաճանեան, Եղիազար Գօլանճեան եւ անտիպ քերթող Իսպէչեան:

Աղբիւրներուն չուրջ ծաղիկներ: Ու դոյլով ջուր կրողներ: «Տէր պապա» քահանաները պերեզմանէ պերեզման կը վազեն աղօթքներ լալրտելու եւ դրամ դրպանելու համար: Ղարիպ տէրտէրներ կը դեգերին: Գործ կայ: Սպասաւորները կարգի կը սպասեն քահանայ մը ճարելու համար: Ցանկարծ ղարիպ տէրտէրները գործի կը լծուին: Տեղացի քահանաները կ'աղօթեն՝ մոքերնուն քֆրելով: Գերեզմանները կը ջրուին: Ծաղիկները, թաղարները, պսակները: Ա՛խ ու վա՛խ:

Ձամբու եզերքներէն ջուրը կը վազէ: Գինով մը նստած քարի մը վրայ՝ ջուրին նայելով կ'երգէ.

Մայր Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ.
Հին հին դարուց յիշատակ
Ալեաց մէջը փնտռում եմ:

Մէկը կ'անցնի մոլտալով քթին տակէն. Ազատութեան սիրոյն համար շատ արիւններ թափուեցան,
Անմեղ հայրեր ու զաւակներ եկան այստեղ պատկեցան:

Ցիսուն քիլօ կչռող երիտասարդ մը «խօսք կը նետէ» եօթանասուն քիլօ կչռող «աղուոր» աղջկան մը.

- Սիրո՛ւմ եմ... պաշտում եմ... գալիս եմ... կամաց... գալիս եմ...

Ու տղան կ'երթայ աղջկան եռեւէն՝ կրկնելով.

- Աստուած վկայ, սիրում եմ...

Աղջիկը կը չափէ տղան ու կ'ըսէ.

- Վա՛յ գլխուդ...

Տղան կ'ապուշնայ: Աղջիկը եօթանասուն քիլօ յաղթութիւնով կը քալէ, կը հեռանայ:

Աղջկան «եռեւէն կ'իյնան» ուրիշ երիտասարդներ:

Ու անդին, պատին տակ, հանդիսաւոր հոգեհանդիստ: Ահագին բազմութիւն: Պոլսոյ Ջարդին ինկած նահատակներուն համար: Ու հին սոսկալի պատկերներ կուգան մտքերու մէջ:

Կառքե՛ր, կառքե՛ր, որոնք փողոցներու մէջ ինկած Հայու դիակներով բեռնաւոր՝ Շիշլիի գերեզմանատունը կուգան: Շուներ կը հետեւին: Աղբի կառքեր են: Գլուխ մը կառքէն դուրս ինկած, ոտք մը կառքէն դուրս եկած: Ու կառքին մէջ դեռ չունչեր կան, հեծկլտուքներ, հռնդիւններ, հողեվարքներ: Ու հասարակաց մեծ փոսին մէջ կը լեցուին: Ու հող, հող, հող: Ու կը լքուին: Պատին տակ: Ու հիմակ՝

Նահատակաց յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան,
Եւ արժանի անոնց հոգին երկնից սուրբ արքայութեան:

Ահա մշեցիներ, պլիթլիսցիներ, խնուսցիներ, սեբաստացիներ խառնուած բիւզանդացիներուն, կուլան, կը հեկեկան:

Աղբէրս, հէրս, մեծ հայրիկս...

Քիչ մը հեռու կռիւ կայ: Երկու երիտասարդներ իրարու վրայ կը յարձակին: Դէր եւ ուժեղ մէկը մէջ կը մտնէ.

- Տղա՛ք, բաժնուեցէք: Երկուքդ ալ Դաշնակցական էք: Դաշնակցականը Դաշնակցականին չի զարներ:

Տղերքը կը բաժնուին:

Կարմիր փողկապ վզած մէկը կ'ըսէ բարձրաձայն իր քովիններուն.

- Միշտ կռուազան, են, միշտ էլ կռուազան են մնալու...

Ու դէր մարդը.

- Ի՞նչ ըսիր, ի՞նչ ըսիր...

Ու օձիքէ կը բռնէ: Կը հրէ, կը հրէ: Նարմիր փողկապովը ամբողջ ուժով դիմադրել կ'ուզէ: Դէր մարդը թաց փոսի մը մէջ կը նետէ կարմիր փողկապովը:

Հող կը նետեն: Հնչակեաններ կը հասնին: Դաշնակցականներ ալ: Ու Վերակազմեալներ, որոնք սատուկներէ վերջ կը ղեկավարեն կուսակցական ինքնութիւնը, կ'առնեն, կը քալեն՝ «Ձայն Հայրենեաց»» մը բանալով:

Անդին կը պատռեն «Երիտասարդ Հայաստան» մը:

Գինով մը կ'անցնի երգելով.

Հապօ՛ն, արի արանց մանկուներ,
Հայրենավրէժդ հայկազուներ...

Անցնողը Սարգիս աղան է:

Ամէն ոք կը ծափահարէ: Սարգիս աղա իր աջ ձեռքը մէկու մը ուսին վրայ դնելով՝ աղուէսի պէս կը բարձրանայ տապանաքարի մը վրայ ու կը սկսի ճառել.

- Հայրենակիցներ, մեր անուշիկ Հայաստանին անունով կը խօսիմ...

- Կեցցէ՛, պռաւօ՛, պռաւօ՛...

*- Այո՛, եղբայրներ ու քոյրեր, հայ մըննանք, հա՛յ... Նար-Պէյը ըսաւ. «Հայ ապրինք եղբարք մարդկութեան մէջը, հայ կենքեր է մեզ պատմութեան էջը»: Ես հայ եմ: Պապաս ալ հայ օղլու հայ էր: Այո՛, հայ... եւ միշտ հայ: Հայը, հայրենակիցներ, պէտք է մեռնի, բայց իրրեւ հայ մեռնի, պէտք է մեռնի անուշիկ Հայաստանին համար. Ես ալ, այո՛, ես ալ կ'ըսեմ.. կեցցէ՛ անուշիկ Հայաստանը, Մայր Հայաստանը... «Մայր Հայաստանը ձեռքից հանեցիք, հիմա ուժ ունինք դարձեալ եւս կ'առնենք»: Այո՛, կ'առնենք, պէտք է առնենք: Ես կը մեռնիմ, կը մեռնիմ, որովհետեւ «Ամէնայն տեղ մահը մի է, մարդ մի անգամ կը մեռնի, բայց երանի որ իր ազգի ազատութեան կը զոհուի»: Իր ազգին համար մեռնողը անմահ է, հերոս է, նահատակ, սուրբ, հրեշտակ: Ես Դաշնակցական, Չնչակեան չեմ ճանչնար: Ամէնքնիս ալ Հայ ենք: Ամէնն ալ ողջ ըլլան: «Հայ ապրինք եղբարք մարդկութեան մէջ»: Սա պատը կը տեսնէ՞ք, սա պատը...

(Շար. 103)

Այրի Տիկին Արուսեակ Մարտիրոսեան ցաւով կը ծանուցանէ իր ամուսնոյն՝

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆԻ

(ծնած Սոֆիա, 1915ին)

մահը, որ պատահած է Պանեէօ, Օգոստոս 11ին։

Թաղումը կատարուած է Պանեէօյի վերեմանատունը, ընտանեկան մտերիմ շրջանակի մէջ։

34 avenue Henri Barbusse
92220 Bagneux

ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Տարօն Տուրուբերանի Հայր. Միւթիւնը իր խորին ցաւակցութիւնները կը յայտնէ Տիկին Աստղիկին, իր ամուսնոյն Ժագ-Թորգոմ Պօղոսեանի մահուան առթիւ։ Իր յիշատակին 50 Եւրօ կը նուիրէ «Յառաջ»ին։

միայն։ Ինքզինք կը սահմանէ որպէս ութիւնը ամենազեղեցիկ պատմութիւնն

(Շար. Ա. էջէն)

կան վազքփները անօրինելէ. անոնց մեծ մասը պետութիւնը կը ղեկավարէ ու նիւթական տեսակէտէն կը չահագործէ։ Ասպա եզրակացուցած է. «Կը տեսնէք թէ Թուրքիոյ մէջ կրօնքի ազատութիւնը շատ սահմանափակ ու մակերեսային է»։

«Հիւրրիյէթ»ի (Օգոստոս 26) խմբագիր Ո. Էքէի անդրադառնալով դպրեվանքին վերաբացումի խնդրին ու Յոյներու պատրիարքին այս արտայայտութիւններուն, կ'եզրակացնէ թէ դպրեվանքը վերաբանալու եւ տասով Եւրոպայի կրօնական ազատութեան չարիր դիրք ունենալու պարագան կը վերաբերի նաեւ հայկական, ասորական եկեղեցիներուն, Հրեաներուն կրօնական ազատութեան պահանջներուն։ Իսկ այս մասին վճռելու համար հարկ է աչօրուընէ դիտնալ թէ տրուելիք որոշումը ինչ իմաստ պիտի ունենայ երկրին 98-99% մահմետական բնակչութեան համար։

Pèlerinage à Tallard

A L'OCCASION
DU 1600e ANNIVERSAIRE
DE LA MORT DE SAINT GREGOIRE
sous l'égide
de l'**Eglise Apostolique Arménienne**
avec le concours
de l'**Association Cultuelle**
des Arméniens de Gap
et des Hautes Alpes

DIMANCHE
19 SEPTEMBRE à 10h30

La messe sera célébrée
par le **Révérend Père Zadik AVEDIKIAN**
Recteur de la Cathédrale Apostolique Arménienne de Marseille
et Vicaire du Délégué pour l'Europe du Catholicossat de tous les Arméniens pour le Midi de la France
avec la participation
de la Chorale **Sahak-Mesrop**
sous la direction de
M. Khatchig YILMAZIAN

Renseignements et réservaitons :

— Cathédrale Apostolique Arménienne : Tél. 04 91 77 84 70;
— Association Cultuelle des Arméniens de Gap : Tél. 04 92 51 71 80 / 04 92 51 00 87

Inscriptions S.V.P. avant le 11 septembre

Participation aux frais :
- Aller-retour seul : 20 Euros;
- Aller-retour avec repas : 40 Euros.

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE

ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— **PARIS**
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19
— **ARNOUVILLE**
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73
— **ISSY-LES-MOULINEAUX**
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25 (le soir)
— **SEVRAN**
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76
— **VALENCE**
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99 (l'après-midi)
MCA : 04 75 55 12 49
— **DECINES**
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97
— **GRENOBLE**
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43
— **ST MAURICE DE BEYNOST**
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07
— **VIENNE**
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80
— **MARSEILLE-VILLE**
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66 (le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեղի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն։

*
**

ՓԱՐԻԶԻ ՄԱՄՆԱՁԻԿ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին
17 rիւ Պէօ 9րդ թաղամաս - Մեթրօ Գատէ
Մանկապարտէզ 4 տարեկաներէն սկսեալ
(կը խնդրուի արագօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ).
+ CPէն միջեւ Պաֆալօրէա, նաեւ չափահասներու դասարան։
Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, Երգ, Թատրոն, Պար։
Հեռաձայնել Օգոստոսին՝
- Արամոի Գալամքիկեան՝
01·39·83·71·19

*
**

La Section «Lola Sassouni»
de Marseille
organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— Restaurant tous les soirs et piqueniques assurés.
— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).

Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne
tout compris, visa inclus
hors assurance.

Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

Pensez à nous réserver votre journée du DIMANCHE 12 SEPTEMBRE

pour participer à notre

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchetre SPITAK

qui se déroulera dans les jardins
du Dr et Mme KEGHIAN
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel
(en cas de pluie, la fête se déroulera dans la salle paroissiale d'Arnouville-lès-Gonesse, 69 avenue Henri Barbusse 95400 Arnouville)

Programme : Divine Liturgie à 11 heures
Repas à partir de 13 heures
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage des deux **Tombolas** (Enfants et Adultes)

Participation aux frais de la journée : Adultes 20 Euros
Enfants 12 Euros

Réservation par tél. : 01 44 59 23 50 (Paroisse de Paris)
01 40 51 11 90 (Centre Culturel)

Rentrée des classes

Les inscriptions pour l'année 2004/05 à l'école hebdomadaire «Siamanto» de Bagneux auront lieu :
le mercredi 15 septembre à 15 heures

à l'école Henri Wallon,
2 avenue de Stalingrad à Bagneux

Au cours de ces inscriptions, une réunion conviviale aura lieu, comme chaque année, sur le déroulement de la nouvelle année scolaire.

Les cours commenceront le mercredi suivant -22 septembre : le matin pour les plus jeunes enfants -environ 5 à 10 ans-, et l'après-midi pour les adolescents jusqu'au baccalauréat et les enfants au dessus de 10 ans.

Pour tout renseignement :
— Mme Lucie Dossikian: 01 45 46 10 11
— Mme Elisabeth Davidian: 01 46 65 81 53

CHAVILLE

Eglise St Grégoire l'Illuminateur

6 rue Père Komitas

Les offices reprendront normalement à partir du dimanche 29 août.

•

ECOLE «LEVON CHANTH»

Les cours de l'Ecole hebdomadaire «Lévon Chanth» de Chaville reprendront le **mercredi 8 septembre** à 9 heures, dans la salle de l'église.

Inscriptions sur place.

6 rue Père Komitas
92370 CHAVILLE
Tél. : 01. 47. 09. 23. 18

«ՅԱՌԱՋ» ՄԱՏԵՆԱՇԱՐ

ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

ՕՐԵՐ ԵՒ ԺԱՄԵՐ 16€

ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ

ՆԱՀԱՆՋԸ ԱՌԱՆՑ ԵՐԳԻ 13€
ԲԱՑ ՏՈՄԱՐԸ 12€
ԿՐԱԿԸ ԿՈՂՔԻՍ 12€

եւ

«ՅԱՌԱՋ - 50»
(Տաղկախաղ 50-ամեայ հաւատարմագրեալ) 19€

Գիմել՝ «ՅԱՌԱՋ»ի։
Թղթատարի ծախք՝ 6 €ր հատոր պլուս։

ՇԱԲԱԹ – ԿԻՐԱԿԻ
ՕԳՈՍՏՈՍ 28-29
SAMEDI - DIMANCHE
28-29 AOUT
2004

LE NUMERO: 1 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH

LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար· 230 եւրօ — վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար· 270 եւրօ (Ամէնօդեայ առաքում)
247 եւրօ (Շաբաթաթերթի առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

80ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21·012 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 80e ANNEE — N° 21·012

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԻՐԱՔ

ՍԻՍԹԱՆԻ ՆԱՀԱՏ ՀԱՍԱՒ

ԻՏԱԼԱՑԻ ԼՐԱԳՐՈՂԸ՝ ՊԱԼՏՈՆԻ ԳՆԱՀԱԿԱՀԱՐՈՒԵՑԱՒ

Այսթոլա Սիսթանի, որ չիներու կրօնական բարձրագոյն իշխանութիւնը կը ներկայացնէ, Օգոստոս 26ին Նահատ հաստատեց եւ կը թուի որ յաջողած է զսպել Մոքթատա ալ-Սատրը, որ ընդունած է առաջարկուած խազագութեան ծրագիրը:

Պարզուած պահակերը սակայն բանական ողբերգական էր, քանի մինչեւ Սիսթանիի ժամանումը 74 մեռեալ եւ 376 վիրաւորներ կային:

Ծրագիրը կը նախատեսէ որ իրաքեան կառավարութիւնը անցք մը բանայ այն այցելուներուն համար, որոնք կ'ուզեն ալ մդկիթը մտնել, այցելել Մարզարէին եւ ժամը 10էն առաջ մեկնիլ Օգոստոս 27-ին: Մեհտիի բանակին քաղաքագօրքերը պարէին նոյն առաւօտը (Օգոստոս 27) նահատին հեռանալ: Նախատեսուած է նաեւ նահատի եւ Քուֆայի գիւղեալ ուժերու մեկնումը: Իրաքեան ոստիկանութիւնն ալ պէտք է ապահովէ կարգ ու կանոնը երկու քաղաքներուն մէջ եւ ամերիկեան ուժերու մեկնումը այդ քաղաքներէն: Ամբողջին մէկ բանբերին համաձայն իրաքեան իշխանութիւնները յայտնած են որ «քաղաքին վերաշինութեան համար խորհուրդ» մը պիտի հաստատուի Սիսթանիի դիմումին ընդառաջելով:

Այսթոլա Սիսթանի յաղթական մտած է իր քաղաքը, բայց անոնք որոնք կը ճանչնան ենթական, կը խոստովանին որ ան ոչ հափառ կրօնաւոր մըն է, ոչ անոյշ առաքեալ մը: Տասը տարի է չէր հեռացած Նահատէն, երբ յանկարծ բժշկական քննութեան համար Անգլիա գացած է, քանի մը օր յետոյ ամերիկեան բանակը յարձակման անցած է: Երեք չաբաթ տեւած են կռիւները Մեհտիի բանակին անդամներուն եւ ամերիկեան ուժերուն միջեւ եւ յաղթական եղած է Այսթոլա Սիսթանի:

***

Ալ-Ժեզիրա հեռատեսիլի կայանը յայտարարած է որ իսլամական խումբ մը՝ «Իրաքի Իսլամական Բանակ» ստանձնած է իսլացած լրագրող Էնձօ Պալտոնին: Օգոստոս 24ին, ահաբեկչական խմբակը 48 ժամ ժամանակ տուած էր Իտալիոյ վարչապետ Պերլուսքոնիի քաշէ իր զօրքը Իրաքէն, փրկելու համար լրագրողին կեանքը: Իտալիոյ Արտաքին նախարարն ալ յայտարարած էր որ կը քաշէ իր զօրքը, եթէ Իրաք ուղէ: Իտալացին Միլանոյի «Տիարիո»յի թղթակից էր եւ իր գաւակները՝ Կապրինա եւ Կուիտօ (24 եւ 21 տարեկան) կոչ ըրած էին որպէսզի իրենց հայրը ազատ արձակուի: Ֆրանսացի երկու լրագրողներէն (անհետացած Օգոստոս 20էն ի վեր) ոչ մէկ լուր կար Օգոստոս 27ին:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ Առողջապահութեան նախարարը՝ Ֆ· Տուսթ-Պլազի Ֆիկարոյի տուած հարցազրոյցի մը մէջ (Օգոստոս 27) օրինագիծ մը կը ներկայացնէ որ կը վերաքրէի արժանաւորութեամբ մեռնելու պատրաստին: Զի նշանակէր հեչտամահութիւնը (էօթանազի) օրինականացնել, այլ տրտրալէն օրէնքով հաստատել այն պայմանները որոնց մէջ բժիշկները կրնան վերջ տալ կեանքի մը, երբ հիւանդը անբուժելի է, խորհրդակցելէ ետք ընտանիքին հետ: Օրինագիծը, որ հետեւանք է Ժ· Լէոնէթթիի նախագահած խորհրդարանական յանձնախումբին եզրակացութիւններուն, Ազգ· Ժողովին պիտի ներկայացուի մինչեւ տարեվերջ: Ի դէպ, որոշ կեղծաւորութիւն մըն ալ կը տիրէ, քանի Ֆրանսայի մէջ տարին 150 հազար կեանքերու վերջ կը տրուի լռելեայն: Երբ բժիշկ մը կ'որոշէ դադրեցնել անբուժելի հիւանդի մը արուեստական շնչառութեան կիրարկումը, կը դործէ համապատասխան բժշկական բարոյագիտութեան, որ կ'ընդդիմանայ յամառ դարմանումի, բայց ենթակայ կը մնայ պատժական հետապնդումի: Ֆ· Տուսթ-Պլազի Օգոստոս 27ին Անթիպ դացած էր, որու քաղաքացիան է Լէոնէթթի, տեսնուելու համար բժիշկներու հետ, որոնց մասնագիտութիւնն է ընկերանալ անբուժելի հիւանդներու կեանքի վերջալոյսին:

Ջիլլի Գերպոյն առեւանը Օգոստոս 26ին չնչեց 88ամեայ Աուկուսթօ Փինոչէի անձեռնմխելիութիւնը Գոնսոր Ծրագրի ընկերային մէջ, որ կը վերաբերի ընդդիմադիրներու մաքրագործման 70 եւ 80ական թուականներու հարաւ-ամերիկեան մենատիրութիւններու կողմէ:

ՍՈՒՏԱՆ մերժած է ՄԱԿ-ի վերջնագիրը ինչ կը վերաբերի ճանճաւիտ արաբ քաղաքագօրքերու ապագինումին մինչեւ Օգոստոս 30: Ատոնք են որ տարեսկ տարածած են Տարֆուրի բնակչութեան մօտ:

ՑԱՐԶԱԿՈՒՄ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ԽՂԱՃ

Հայաստանի դեկավարները յատկապէս արտասահմանեան այցերուն հպարտօրէն յայտարարած յառաջդիմութեան ապացոյցներէն պէտք է նկատել հաւանօրէն լրագրողներ թիրախ առնող պարբերական բռնութիւնը: Մանաւանդ երբ այդ «թիրախ»ները կ'ընտրուին այն լրագրողներէն որոնք կը մերժեն լռել, իրենք իրենց ու իրենց գործին դաւաճանել: Անկախութեան մօտ մէկուկէս տասնամեակի անցեալը այս մարզին մէջ արդէն ամօթի կարեւոր թղթածրար մը ունի, սպանուած, խոշտանգուած, վիրաւորուած, առնարգուած լրագրողներու պարագաներով:

Նորագոյն էջը հոն աւելցած է Օգոստոս 24ին երբ Ծաղկաձորի մէջ երկու լրագրողներ -Մխիթար Խաչատրեան եւ Անդրա Խաչիկեան- յարձակումի ենթարկուած են. առաջինը «Ֆոթոլուր»ի լուսանկարիչն է, երկրորդը «Առաւօտ»ի լրագրող որուն առաջին փորձառութիւնն այ չէ ծաղկաձորեանը...: Այս տեղեկութեան երբ կ'աւելնայ Հայաստանեան մամուլին նշածը թէ անոնք Ծաղկաձոր գացած էին տեղի անտառին վիճակին ու հոն գղեակները կառուցող պետական պաշտօնատարներու մասին հաղորդում պատրաստելու, ամէն բան յստակ կը դառնայ:

Ու այդ «յստակ»ութենէն մեծ բան չի փոխեր կարդալ նոյն մամուլին էջերէն թէ քրէական հետաքննութիւնը ստուգած է թէ դղեակատէրերու պահապան ճորտը կը կոչուի Գագիկ Ստեփանեան, երեւանցի է, 43 տարեկան, եւլն·: Հայաստանի մէջ ուր կարելի է մարդասպան ըլլալ ու «անպոչ սպանութեան» վճիռով արձակ համարձակ դուրս գալ դատարանէն, երկու լրագրողներու լման քանի մը րոպէ ժամանակ պէտք է որ տրուի հասկնալու համար թէ հայհոյանքները չեն որ պիտի արձենդնեն արդարութեան «պատասխանատու»ներուն գիտակցութիւնը: Մանաւանդ որ նոյն ալբոմէն քանի'ներ, քանի լրագրողներ կը գտնուին «հեղինակը անյայտ» մնացած ոճիրներու զոհերուն ցանկին վրայ:

Ծաղկաձորի պատահարը համատարած ընդվզում ու զայրոյթ պատճառած է մամուլի աշխարհին. Լրագրողներու, Գրողներու մէութիւնները յայտարարութիւններով պախարակած են կատարուածը, չհասկնալով որ «լրագրողի նկատմամբ բռնարարքները եւ նրանց աշխատանքին խոչընդոտելը նախորդ միլադէպերի մեղաւորների չպատժելու հետեւանք են»:

Ծրագրուած էր Օգոստոս 28 Շաբաթ օր բողոքի ցոյց մը կատարել Ծաղկաձորի մէջ, լուսանկարելով տեղի անտառները ոչնչացնողներու եւ ժողովուրդին, սիւ-

«ՔԱՄՔՆԵՓՐԷՍ»

(Օգոստոս 26/27)

ՀԱՅ ՕԴԱՉՈՒՆԵՐՈՒՆ ԴԱՏԸ

Հասարակածային կինէայի մէջ պետական յեղաշրջումի ձգտելու յանցանքով ձերբակալուած հայ օդաչուները առեան ներկայացած են Օգոստոս 25ին: Անոնք ժխտած են նման փորձի իրենց մասնակցութիւնը: Դատին ներկայ գտնուած է Հայաստանի Եկեղեցոյ դեսպանը Սերգէյ Մանասարեան: Վեց հայ օդաչուները իրենց ուղղուած ամբաստանութեան համաձայն, ցմահ բանտարկութեան կամ մահապատիժի սպառնալիքի տակ են: Դատը կը շարունակուի:

***

ՍՏԵՓԱՆ ԱԼԱԶԱՋԵԱՆԻ 80ԱՄԵԱԿԸ

Երեւանի Գրականութեան ու արուեստի թանգարանին մէջ Օգոստոս 26ին նշուած է դրող Ս· Ալաջալեանի ծննդեան 80ամեակը: Ան 1946-47 թուականներու ներդաղթին Սուրիայէն հաստատուած է Հայաստան, եղած Գրողներու Միութեան քարտուղար, Զարենց թանգարանի տնօրէնն ու վարած այլ պաշտօններ: 1990ական թուականներուն փոխադրուած է ԱՄՆ:

Օգոստոս 26ի ձեռնարկը բացած է թանգարանի տնօրէնը Հ· Բախչինեան, որ խորհրդահայ գրականութեան ընտիր էջերէն համարած է յօրելեար գրողին գործերը· առանձնացուցած է յատկապէս «Եղէգները չխռնարհեցին» վէպը:

Ելոյթներ ունեցած են Գրողներու միութեան նախագահ Լ· Անանեան, գրող Պ· Զէյթունցեան, գրողին որդին Զօհրապ Ալաջալեան եւ ուրիշներ: Հանդէսին գրաւէրներուն ներկայացուած են «Եղէգները չխռնարհեցին» վէպին երեւանեան նոր հրատարակութեան օրինակներու:

ԱԴՐԲԵՋԱՆՑԻ ՄԱՐԴԱՍՊԱՆԻՆ ՆԵՑՈՒԿ ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Ադրբեջանական «525րդ» օրաթերթը Օգոստոս 26ի թիւով անդրադարձած է պուատիէչտի մէջ հայ զինուորական ուսանող Գուրգէն Մարգարեանը դաժանօրէն սպանուած Ռամիլ Սաֆարովի դատա-

(Շար·ը Դ· էջ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆ ՈՒԱՇԻՆԿԹՐԼՆԻ ՄԷՋ

ԱՄՆ-ու Ներկայացուցիչներու Ժողովին երկու անդամներ Ճ· Նալբնտէրկ եւ Ֆ· Փալոն միասնական նամակ մը ղրկած են Արտաքին գործերու նախարար Գ· Փաուըլին ու բողոքած՝ Ադրբեջանի պաշտօնական դէմքերու այն յայտարարութիւններուն դէմ ուր կը խօսին Հայաստանը դրաւելու, ամբողջ հայութիւնը Կովկասէն արտաքսելու մասին: Իրենց նամակին օրինակներ ղրկած են նաեւ նախագահի խորհրդական Գ· Ռայսի, եւրասիական հարցերը համակարգող Ս· Մաննին:

Նամակագիրները կը պահանջեն որ ԱՄՆ-ու իշխանութիւնները հրապարակաւ հակադրին Ադրբեջանի «վիճակը աւկայուացնող հայերուն», որովհետեւ հակառակ պարագային լռութիւնը կրնայ սխալ մեկնաբանուիլ Բաքուի կողմէ: Կը չեշտեն նաեւ որ չատ կարեւոր է ռազմական օժանդակութեան հարցին մէջ երկու երկիրներուն միջեւ հաւասարակշռութիւն պահպանելը:

Նալբնտէրկի եւ Փալոնի հակադրեցութեան մեկնակէտ եղած են Հայաստանի պոյութեան տարակոյս յայտնող նախագահ Ալիեւի խօսքերը, նաեւ Ադրբեջանի Պաշտպանութեան նախարարութեան բանբերին արտայայտութիւնը թէ իր երկիրը ամբողջ Հայաստանը կը գրաւէ ու յետագայ 25 տարուան ընթացքին Հայերը կովկասէն կ'արտաքսուին, Հայաստան ալ չի մնար:

ԱՄՆ-ու Հայ Դատի Յանձնախումբը այս ու այս կարգի յայտարարութիւններուն մասին մանրակրկիտ տեղեկութիւններով փաստաթուղթ մը պատրաստած ու ղրկած է Հարիւր Ծերակուտականի, Ներկայացուցիչներու Ժողովին 435 անդամներուն:

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ 2004

ՈՒՐԻՇՆԵՐՈՒ ՀԱՅԵՐԸ...

Ծունահոմէական ըմբշամարտի (55 քիլօ) առարտականներուն, երրորդ տեղը գրաւած է Արտիմ Կիւրեղեան (Ծունահոմ) 3-1 յաղթելով ուկրանացի Վալերի Նիկոյի: 66 քիլօ գաւառարդին մէջ, նոյնպէս առարտականներուն երրորդ տեղը գրաւած է Մխիթար Մանուկեան (Ղազախըստան) 3-1 յաղթելով չուէտացի Սամուէլսոնի: 60 քիլօ գաւառարդին մէջ, Արմէն Նազարեան (Պուլկարիա) եւս պրոնզէ մետալի արժանացած է, երրորդ դիրքը գրաւելով:

Ընդհանուր դասաւորման մէջ, գլուխը կը մնան ԱՄՆ 83 մետալով (28 ոսկի), Ֆրանսա կրկին 7րդ դիրքը կը գրաւէ 27 մետալով (10 ոսկի):

ՄԻ ԿՏՈՐ ԵՐԶԱՆԿՈՒԹԻԻՆ

ԱՐՓԻ ՎԱՆԵԱՆ

(Բ. եւ վերջին Մաս)

Ցաջորդ մի քանի օրը իրեն բռնեց այն բանի վրայ, որ տեղի-անտեղի անցնում է Վարդուհենց դրան մօտով, հետեւում ե-րիտասարդ կնոջ անց ու դարձին, ժպտում նրան, իբր թէ պատահաբար հանդիպե-լուց, իսկ կարէնը իր մշտական հիւրն է, իր ազատ ժամանակը կիսողը, միակ զրու-յակիցը: Սիրտը անհանդիստ էր, սպաս-ման մէջ: Ի՞նչ անել, զո՞ւցէ պէտք է խո-սել, ասել նրան իր զգացմունքների մա-սին, առաջարկել միացնել իրար իրենց բեկուած ճակատագրերը, որ կարէնը նոր-մալ ընտանիք ունենայ, իրենք էլ··· Դու-ռը ծեծեցին: Սիրտը արագ զարկեց: Դան-դաղ բարձրացաւ տեղից, նայեց իրեն հա-յելու մէջ ու բացեց դուռը:

- Ներս մտիր, - լինչ որ խոր տեղից լսեց ինքն իր ձայնը:

- Կարէնը քեզ մօ՞տ է, - հարցրեց կա-նացի քնքոյշ մի ձայն:

- Ներս մտիր Վարդուհի խնդրում եմ, ես խօսելիք ունեմ քեզ հետ, - ասաց ու զարմացաւ իր համարձակութիւնից:

Վարդուհին եւս յուզուած էր: Կանայք սիրոյ հարցերում իսկո՛յն են կողմնորոշ-ւում, աւելի շուտ քան տղամարդը կարող է ինքն իրեն խոստովանել, որ սիրահար-ւած է: Ժպտաց, քնքշօրէն բարձրացրեց գլուխը եւ ներս մտաւ:

Նրանք նստել էին մահճակալի ծայրին ու լռել: Արթուրը ջղաձգօրէն մատքերն էր փորձում հաւաքել, ի մի բերել: Վարդու-հին չփոթուած-չուարած նստած էր:

- Մենք այսքան ժամանակ է իրար ճա-նապարհում ենք, դնում-գալիս ենք, բայց իրար մասին գրեթէ ոչինչ չգիտենք, աւելի ճիշդ ես ոչինչ չգիտեմ ձեր մասին, բացի նրանից, որ դուք կարէնի հետ երկուսով էք ապրում, - սկսեց Արթուրը: - Ո՞վ է քո ամուսինը, որտե՞ղ է նա, ի՞նչ է պատա-հել, կարո՞ղ ես ինձ վստահել քո զաղտ-նիքները, Վարդուհի՛:

- Մենք երկու տարի առաջ ենք բաժան-ւել: Նա իմ առաջին սէրն էր, - Աչքերը փայլեցին արցունքներից, - ես չեմ սիրում խօսել այդ մասին, չեմ ուզում յիշել, այդ տարիների մասին խօսելիս միշտ էլ ցաւ եմ զգում: Առաջին երկու տարին ա-մէն ինչ նորմալ էր, յետոյ նրա չրջապա-տում սկսեցին յայտնուել անծանօթ մար-դիկ, որոնք հէնց սկզբից էլ ինձ դուր չէ-ին գալիս, ես զգում էի, որ այդ ընկերու-թիւնը լաւ բանի չի հասցնի: Կամաց-կա-մաց սկսեց դիչերները ուշ դալ տուն, յե-տոյ արդէն օրերով տուն չէր գալիս: Ներ-մում էր, ինչ որ սեւ գործերով էր զբաղ-ւում: Եւ երբ ես փորձում էի հասկանալ, իմանալ թէ ինչ է կատարւում նրա հետ, երբ ուզում էի զգուշացնել, որ մեր ըն-տանիքը դյորւում է դէպի անդունդը, նա դառնում էր անճանաչելի. բղաւում էր, ձեռք բարձրացնում իմ վրայ, - աչքերից դեռահասների պէս դուրս ժայթքեցին ար-ցունքները:

- Վարդիկ, ես չդիտէի, ներիր ինձ, չէի ուզում քեզ ցաւ պատճառել:

Իսկ Վարդուհին կարծես չէր լսում, կարծես հէնց այդպիսի մի արտասօսա մար-դու էր սպասում, որի առաջ կարողանար բացել տարիներով սրտում կուտակուած ցաւը, վիրաւորանքը:

- Ես օտար լեզուի ուսուցչուհի էի: Ջբ-աղեց դնամ աշխատանքի: Ամբողջ օրե-րով տունը բանտարկուած նստում էի, ըս-պասելով, թէ երբ կը գայ, որ ամէն ինչ սկսուի նորից. գոռոց, վիրաւորական խօսքեր, բռնութիւն···

Ցուզմունքը կլանեց ողջ բանականու-թիւնը, տարիներ ի վեր զսպուած ար-ցունքները, գոռան իրենց հունը: Արթուրը չփոթուել էր, չգիտէր ինչ անէր: Հան-դարտ մօտեցաւ կնոջը, բռնեց ձեռքը, մօ-տեցրեց շուրթերին:

- Ես ուզում եմ, որ դու երջանիկ լի-նես, որ մոռանաս անցեալը: Ես դիտեմ, ինչ է նշանակում լինել կողոպտուած, միայնակ: Եկ միացնենք մեր կեանքերը, որ կարէնը···

Կինը սթափուեց, եւս քաշեց ձեռքը, չրջազգեստի թեւով սրբեց արցունքները.

- Ջէ՛, Արթուր, խնդրում եմ, մի՛ խօսիր այդ մասին: Ինձ ոչինչ կեանքում պէտք չէ, ես ունեմ որդի ու վերջ:

- Դու վախենում ես երկրորդ անգամ սխալուելուց, դու ատում ես բոլոր տղամարդկանց, այդպէ՞ս է, Վարդուհի:

- Աղաչում եմ, մի՛ խօսիր այդ մասին, ես այդպիսի հարուածներին դիմանալու ուժ չունեմ: Նորմոր եմ սկսել ապաքին-ւել այդ վէրքերից: Թէկուզ հիմա էլ իմ մենութիւնից սարսափում եմ, թէկուզ հիմա էլ հոգիս դատարկ է, որտեղ ամէն ձայն արձագանգ է տալիս, - Նա չէր նա-յում Արթուրի կողմը, աչքերը յառել էր գետնին, շուրթերը դողում էին, - Այդ ե՞րբ եմ այսքան ամայացել: Ոչինչ չեմ ուզում, ոչի՛նչ: Այս ամայութիւնը իմ էութիւնն է այսօր ու ինձ թւում է, թէ ես իմ ամբողջ կեանքում հէնց այդպէս էլ ապ-րել եմ՝ ոչինչով, ոչինչի համար, - Մի քանի վայրկեան երկուսն էլ լուռ էին, յետոյ Վարդուհին կրկին խախտեց լռու-թիւնը: - Շա՛տ տարիներ առաջ, երբ ես դեռ աղջնակ էի, փորձում էի հէքեաթներ յօրինել, - Նայեց Արթուրին ու հեգնանքով ժպտաց, - հէքեաթներ առանց վայրի գա-զանների, վհուկների, կախարդների, մե-ծերը չէին հաւանում, մեծերն անխնայ են, դիտես, ասում էին «Առանց դրանց հէքեաթ չի լինում, առանց չարի, տառա-պանքի հէքեաթն հետաքրքիր չէ»: Ես տխրում էի, ջղայնանում, հարցնում բո-լորից. «Առանց վհուկի հէքեաթ ոչ ոք չի՞ գրում»: Ու ես էլ երբեք հէքեաթ չգը-րեցի, այլ միայն սրտի տրոփիւնով ըն-թերցում էի, մլչտ, փնտռելով, սպասելով այն «մէկին». տարիներն անցան, ամէն ինչ փոխուեց, մնացին նոյնը միայն հէք-եաթները, որոնց հետ ես մինչեւ այսօր էլ հաշտուել չեմ կարողանում, ինչպէս չեմ փորձում գրել նաեւ իմ հէքեաթը. եւ դիտե՞ս ինչու. ոչ նրա համար, որ չեն հաւանելու, այլ պարզապէս ես էլ արդէն չեմ հաւատում բարուն, անկեղծութեան-նը, սիրոյն: Չեմ հաւատում, որ մարդիկ կարող են լինել հաւատարիմ, անկեղծ, անշահախնդիր: Պարզապէս ես էլ եմ մը-տածել···, - զարմացած նայեց Արթուրին, - եւ ինչո՞ւ եմ այս ամէնը պատմում քեզ:

- Վարդիկ, բայց չէ՞ որ ամէն ինչ էէ կեանքում վատ, չէ՞ որ կան բաներ, յա-նուն որոնց պէտք է ապրել, փորձել եր-ջանիկ լինել:

- Ջէ, Արթուր, չեմ կարող, հոգեպէս պատրաստ չեմ, հասկանո՞ւմ ես, ներիր ինձ, - ու դանդաղ բարձրացաւ տեղից:

Արթուրը մի ճիգ գործադրեց կանգնեց-նել կնոջը, բայց նա արդէն բացում էր դուռը···

***

Հայրենի երկնակամարում կուտակուե-ցին սեւ ու ահարկու ամպեր. տագնապա-լի, բոթաբեր: Ցաճախակի լսուող տագ-նապի ազդանշաններից միայն կարելի էր կռահել, որ քաղաքում կեանք կայ, որ մարդիկ դեռ չարունակում են այստեղ ապրել՝ թէկուզ նկուղներում, ներքնա-յարկերում, ռմբապաստաններում եւ դա արդէն չորս երկար տարիներ:

Արթուրը միայն դէպքից-դէպք էր լի-նում իր փոքրիկ բնակարանը. այն էլ չոր փոխելու, մի քիչ հանդստանալու, մէկ էլ կարէնին ու նրա մօրը տեսնելու համար: Սրտի խորքում նա դեռ յոյս էր վայելում, թէկուզ Վարդուհին ոչ մի «աւե-լորդ» խօսք ու չարժումով դրա առիթը չէր տալիս: Եւ անգամ այն պահերին, երբ Արթուրը նրան էր մեկնում պոստերից բե-րած իր բաժին սեւ հացն ու չաքարավազը, կինը փորձում էր հրաժարուել: Սակայն երկուսն էլ պարզ գիտակցում էին, որ մեծացող կարէնի համար դա անհրաժեշտ է: Վարդուհին վախենում էր իր մէջ հա-սունացող զգացմունքից եւ յաճախակի էր ինքն իրեն փորձում ապացուցել, որ դա լոկ երախտագիտութեան ու խորը յարգանքի արդիւնք է:

Շաբաթներն անցնում էին իրար յետե-ւից, բայց Արթուրը չէր երեւում: Վար-դուհին արդէն սկսել էլ անհանգստանալ, մինչեւ կարէնը իր հարց ու փորձով լրիւ թեւաթափ էր անում նրան···

***

··· Առաջին պահին թուաց, թէ երեւա-յողը տեսիլք է: Թուաց, թէ ինքն արդէն անցել է մի ւս աշխարհ, ուր յաւ ու տառա-պանք չկայ, իսկ երկարավարս, թախծոտ աչքերով կիսը հրեշտակն է վաղուց լը-սած լեգենդներից, եկել է, որ տանի իրեն ու ահա կտացած իր գլխավերեւը ժպտում եւ անբառ համոզում է: Ցետոյ ձեռքի ջերմ հպումից գիտակցութիւնը կարծես արթնացաւ, սակայն հրեշտակը կանգնած էր նոյն տեղում:

-Ո՞վ ես դու, - չատ հեռուից լսեց դողա-յող մի ձայն, որ չատ նման էր իր ձայ-նին:

- Ես եմ, չճանաչեցի՞ր, - խօսեց հրեշ-տակը:

Հրեշտակը խօսում էր ծանօթ ձայնով, լարեց ողջ ուժերը:

- Արթուր, ինչպէ՞ս ես:

- Դու հրեշտա՞կ ես, - նորից լսեց իր ձայնը:

- Վարդուհին եմ, Արթուր:

- Վարդուհի՛, - հառաչեց ու փակեց աչքերը:

··· Օրերն անցում էին զարմանալի ա-րագութեամբ: Արթուրը արագ էր ապա-քինում, բժիշկն անգամ զարմանքով էր այդ մասին խօսում Վարդուհու հետ: Կա-րէնը միշտ հիւանդանոցում էր, Արթուրի կողքին: Օրուայ վերջում Վարդուհին յոգնածութիւնից չէր կարողանում ոտքե-րի վրայ մնալ: Այդ մի երկու չաբաթը, որ նա անց էր կացրել հիւանդանոցում, վէր-քերի ցաւից տառապող Արթուրի մահճա-կալի կողքին, լսել տասնեակ վիրաւորնե-րի տնքոցներն ու հառաչանքները, նրանց պատմութիւնները պատերազմական դր-ծողութիւնների մասին, իրենց մութ հետքն էին թողել կնոջ հոգում: Օրերով չէր ժպտում, չաճախ էր դիչերներն լու-սացնում անքուն, կարմրած աչքերով: Արթուրը այդ մի քանի չաբաթուայ ըն-թացքում հարազատացել էր իր հոգուն: Աւելի վեհ զգացմունքի մասին չէր փոր-ձում մտածել, թէկուզ պարզորոշ գիտակ-ցում էր, որ չատ մօտ է այն օրը, երբ ին-քը անկարող կը լինի դիմադրել սրտի կամ-քին: Սակայն դրան հակառակուելու ծր-րագրերը վաղուց է սկսել մշակել: Քաղա-քում արդէն խօսում են ժամանակաւոր զինադադար կնքելու մասին: Պէտք է օդ-տագործել պահը···

***

- Արթուր, դա իմ վերջնական որոշումն է, - Վարդուհին տխուր էր:

- Դու այդպէ՞ս ես ուզում:

- Այդպէս ճի՛շդ է:

- Ինչո՞ւ, Վարդուհի՛:

- Կարէնը պէտք է հայր ունենայ, հա-րազատ հայր: Նա ինձ զանգել է, նա ա-սաց, որ տուն-տեղ ունի, աշխատում է: Ես ուզում եմ մէկ անգամ եւս փորձել, ···յանուն Կարէնի:

- Դու հարցրե՞լ ես, թէ ինչ է ուզում Կարէնը:

- Նա երեխայ է:

- Բայց նա եւս հոգի ունի:

- Արթուր, մի՛ ճնշիր ինձ, առանց այդ էլ···

- Առանց այդ էլ՝ ի՞նչ··· Ցօսիր ինձ հետ, կիսիր մտքերդ, դեռ ոչինչ ուշ չէ, ես նոյն Արթուրն եմ, ես···

- Չէ, Արթուր, ուշ է, մի քանի րոպէից յետոյ կը չարժուի աւտոպուսը, դու պի-տես՝ սա իմ վերջին չանսն է, ահա տոմս-երը ձեռքիս են:

- Մենք կարող ենք դրանք պատռել:

- Ոչ: Արի հրաժեշտ տանք բարեկամ-բար, ու այլեւս ոչ մի խօսք չասենք:

- Բայց դա սխալ քայլ է:

- Գո՞ւցէ··· Սակայն արդարացուած է: Արթուրը տխուր ու փչրուած նայեց իր դիմաց կանգնած կնոջը:

- Ուո՞ր է կարէնը, թող գայ, տեսնեմ մի վերջին անգամ:

Վարդուհին բարձրացաւ աւտոպուսը եւ վախեցած ու չփոթուած դուրս եկաւ.

- Նա այստեղ չէ: Դու չէ՞ս տեսել նրան: Արթուր, ո՞ւր է: Մէքենան հիմա կը չար-ժուի, ես ի՞նչ անեմ, Արթուր, մի բան մտածիր: - Շրջուեց, վախեցած նայեց Արթուրին, - Դու ինչո՞ւ ես ժպտում, ի՞նչ-ո՞ւ ես ժպտում, Արթուր:

- Արի դնանք տուն, գո՞ւցէ նա այնտեղ է:

- Չէ, չի կարող պատահել: Մի քիչ էլ սպասեմ, գո՞ւցէ տեղ է գնացել, հիմա կը գայ, անպայման կը գայ: - Վարդուհին չփոթուած այս ու այն կողմ էր նետւում, վարորդին խնդրում մի քանի րոպէ էլ սպասել:

Մեքենան չարժուեց: Երկուսով մնացին կանգնած փողոցի կէնտրոնում: Վարդու-հին արտասուում էր, Արթուրը չանում էր թաքցնել ուրախութիւնը:

···Շփոթ ու չուար հասան ծանօթ հան-րակացարանին, մտան Արթուրի սենեակը ու մնացին կանգնած դռների մէջ. Վար-դուհին զարմացած նայեց Արթուրին, Ար-թուրը բռնեց կնոջ ձեռքն ու քնքշօրէն ձը-գեց իր կողմը: Կինը չդիմադրեց: Մօտե-ցաւ եւ գլուխը քնքշանքով դրեց Արթու-րի ուսին ու երկուսն էլ երջանիկ ժպտով նայեցին բազմոցին՝ այնտեղ խաղաղ ու անվրդով մուչամուչ քնել էր կարէնը, իր ընտրութիւնը վաղուց կատարածի հան-գիստ քնով:

ՌՈՒԲԷՆ ՀԱԽՎԷՐԴԵԱՆԻ ԱՆՎՐԷՊ ՄԱՏՆԱՆՇՈՒՄՆԵՐԸ

Հայաստանը ինչպէս իր ճակատագրա-կից երկիրները, մօտ երկու տասնեակ տա-րիէ ի վեր աննախատեսելի հոլովոյթի մը մէջ կը գտնուին: Վերէն պարտադրուած, բայց ժամանակի ընթացքին աւելի քան որպէս հարազատ իւրացուած բարքեր, հաւատքներ մէկ օրէն միւսը դէմ յանդի-man մնացին տասնամեակներով փակ պահ-ւած աշխարհէն ներխուժող նորութիւննե-րու. ատոնք ակնթարթի չափ կարճ ատեն-ւան մէջ իրենց տիրակալութիւնը հաստա-տեցին ուտելիմել, հագուստ-կապուտակն մինչեւ կարեւորագոյն ոլորտները: Եւ ո-րովհետեւ ստեղծուած քաոսին մէջ ճիչ-դի, իսկականի, հարազատի մտահոգու-թիւնները ունեցողները ոչ իսկ փոքրամաս-նութիւն կազմեցին, իսկ նման բաներ պարտադրել փորձողները անմնացմէ ալ քիչ եղան, ամէնէն լուրջ մարզերն անգամ են-թակայ մնացին փչող հովերուն քմայքին: Այն որ փչեց աջէն, դէպի ձախ քշեց ինչ որ դասաւ, այն որ իյսաւ վերէն, դէպի վար մղեց չունչին տակ ինկածը. ատանդու-թիւն, ճաշակ, զգացում, բարոյական, նիւթական, սկզբունք, անցեալ, ապագայ ու «եւայլն»ներու անյատակ տոպրակը:

Որո՞ն մեղքն է այս նախադրեալներով այսօր ստեղծուած վիճակը որ հայկական Սփիւռքէն եւս հայաստանեան մըն ալ դառնած է ամբողջ աշխարհի ամէն անկիւ-նը, երկրին «բարիք»ներուն վայելքը կեդ-րոնացնելով առանձնաչնորհհաւներու կէս մասնոց «ընտրանի«ին վրայ: Եթէ ճառե-րով ու ինքնախարէութեամբ երկիր զար-դանար, մերինը անվարան կարելի է պըն-դել որ ամէնէն զարգացածը կ'ըլլար ամէ-նէն բարգաւաճներուն: Սակայն «մեղա-ւոր»ներու պարագլուխները նման ման-րուքներով զբաղելու, ժամավաճառ ըլլա-լու ոչ մէկ տրամադրութիւնը ցոյց կու տան. թէ՛ քաղաքական վերնախաւը, թէ՛ մտաւորական դասը մեծամասնութեամբ կը թիավարէ հոսանքն ի վար, սպասելով միայն ծափերու:

Բարեբախտաբար կան քայ խօսք լսելու եւ այդ խօսքը ընելու սովորութիւնը մէկին չձգածներ: Այլ հարց թէ ո՛ւր պէտք է փնտռել ատոր օգուտը: Թերեւս ամէնէն առաջ այն երեւոյթին մէջ որ միչտ ալ կան ինքնագոհութեան, անճաշակու-թեան, խտտորումներու ընդհանուր յոր-ձանքէն դուրս ինկածներ որոնք տեսնե-լու, դատելու, հակազդելու կարողութիւ-նը կորսնցուցած չեն: Այլ խօսքով՝ որ-քան ալ հզօր ըլլայ ակէն հեռացնող, մո-լորեցնող հոսանքը, միչտ պիտի գտնուին օրհնեալ խուլեր որոնք պիտի դիմադրեն այլակերպող ուժերուն, մինչեւ որ ա-ւարտի այս փուլն ալ ու մեր ջուրերը հո-սին իրենց բնական հունէն:

Այսօրուան «բացառութիւն»ներէն է եր-դիչ Ռուբէն Հախվէրդեանը. ան որուն եր-գերէն առնուազն հատուածներ կը մռըն-դայ ան որ բոլորովին կորսնցուցած չէ ըզ-գացումին, բառին, երգին անխաթար ի-մաստը: Այդ բոլորին հետ ներկան արձա-նագրող ինքնատիպ արուեստագէտն է ան որ իր ձեւով կը մասնակցի մեր նորօրեայ ժամանակագրութեան:

Իրեն հետ զրուցելու գացած է «Իրա-ւունք»ի լրագրողներէն Աբգինէ Ցարու-թիւնեան. Թերթին Ցուլիս 27-29ի թիւին մէջ տեղ գտած է այդ զրոյցին արդիւնքը որ աւելի նման է դժգոհ, ցաւոց, այլ ճա-

բահատ մէկուն մեծախօսութեան: Ր. Չամչեդեան որ Ֆրանսայի ու Սփիւռքի մէջ աւելի ծանօթ է որպէս Ռուբէն երեւանցի, կը խօսի ներկային մասին. նեւկայ մշակոյթին որ չատ յաճախ կը չփոթէ ամբիջուկ կազապարներու կրկնութեան հետ, իր քաղաքին՝ Երեւանի որ ինկած է այլանդակումի ու դիւղականացումին մէջ, փառատօներուն որոնք «սովետի ժամանակի» մնացուկները են, ընկերային աչք ծակող անհաւասարութեան, միասեռականութեան, եհովայի վկաներու, եւ այլնի մասին:

Ստորեւ իր դիտածներն ու դատածները, անձնական յայտնումներով.

«ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԵՆՔ

. եկէք չմոռնանք, որ մենք Հայերս, մի երկու դար յետ ենք մնացել ժամանակից բարքերից, որը կոչւում է քաղաքակրթութիւն եւ վառք Աստծոյ, որ յետ ենք մնացել: Այն, ինչ անուանում են քաղաքակրթութիւն, ես համարում եմ հակաքաղաքակրթութիւն եւ համոզուած եմ որ այն իր հետ բերում է էկոլոգիայի աղտոտում ոչ միայն բնութեանը, այլ նաեւ մարդկային յարաբերութիւններին:

ՆՈՐ ՍՏԵՂԾԵԼԻՆԵՐԸ

. Մշակոյթի նախարարներ է, որ փոխում ենք ու չենք հասկանում, որ դրանից, միեւնոյն է, ոչ մի բան էլ չի փոխւի, քանի որ մեր պետութիւնը չունի ընդհանուր ստրատեգիա, եւ այս իրավիճակում մշակոյթի նախարարը իր կարեւորագոյն դերը չի կատարում: Ես համոզուած եմ, որ եթէ այսպէս չարունակւի, մեր երկիրը կը գնայ դէպի կործանում:

Մշակոյթ նշանակում է ապրելակերպ եւ ապրելաոճ, որի մէջ մտնում են արուեստ, սպորտ, հարսանիք, թաղում... Պէտք է մոռանանք, որ մենք չոչքերից նոր ենք դուրս եկել: Այս 2000 տարուայ պատմութիւնը թող աչքս չմտցնեն: Մեր չնքամէկը հարսանիք արեց, եւ մի երկար ժեչից՝ լիմուզինից դուրս եկան ու սկսեցին թուրքական բայաթի երգել: Ճարպելիս, լիմուզին որ նատեցիր, չի նշանակում, թէ դարձար եւրոպացի: Դիւղից դուրս եկած, բայց լրիւ քաղաքացի չդարձած՝ դեղցի ազգ ենք: Ովքեր էլ 70 տարուայ ընթացքում դառել էին քաղաքացիներ, քոչեցին գնացին Հայաստանից: Մի խօսքով, պէտք է ստեղծել նոր մշակոյթ, նոր ապրելաձեւ եւ նոր Երեւան:

ՈՎ ՍՏԵՂԾԷ

. ես անում եմ իմ գործը՝ երգեր եմ գրում: Պետութիւն ստեղծելը իմ գործը չէ: Դրա մասին թող մտածեն հանրապետութեան նախագահը եւ մշակոյթի նախարարը:

ՄՇԱԿՈՑԹԸ ԵՒ ԵՐԵՒԱՆԸ

- Փոքր ազգերի համար մշակոյթի նախարարութիւնը չատ կարեւոր է: Հայաստանի նման փոքր երկրում թէեւ անհրաժեշտութիւնը խիստ զգացւում է, բայց կարծես թէ չեղածի հաչիւ լինի: Եթէ մեր մշակոյթի նախարարի ստորագրութիւնը կարեւոր նշանակութիւն ունենար, նա չէր թողնի, որ մեր քաղաքն այսպէս այլանդակուէր: Աւենք չէր թողնի, որ կառուցէր այս մեծ փորով եւ փոքր գլխով ահեղ չնորհք եկեղեցին: Բայց քանի որ մշակոյթի նախարար լինել-չլինելը մի հաչիւ է, ամէն ճարտարապետ իր օրօք մի բիծ թողնում է: Այսօր Երեւանը յիչեցնում է էկլէկտիկ քաղաք՝ Թամանեանի Երեւանը մնաց անցեալում: Իսկ ամենամեծ կործանարարները նրանք են, ովքեր քաղաքը որոչեցին դարձնել միլիոնանոց: Այդ յանցաւոր նպատակով զիւղացիներին լցրեցին քաղաք, եւ չատ յետ գնացինք: Գիւղացին մեր հողի աչխատաւորն է, եւ ինձ համար ամենակարեւորը նրա բարեկեցութիւնն է: Ցաւօք Երեւանը լցուած է ոարիս քաղքենիներով:

ՓԱՌԱՏՕՆԵՐ, ՓԱՌԱՏՕՆԵՐ...

- Բոլոր այս փառատօները՝ «Կռունկ», «Սայաթ-Նովա»..., որոնք սովետի ժամանակների պարագներն են եւ իրենց ձեւի մէջ էլ ուղղակի գարչելի են: Այսօրւայ մեր «աստղերի» երգերում խօսքը բանաստեղծական իմաստ չունի: Երգիչը պէտք է պոէզիայից տեղեակ լինի: Գոնէ Վահան Տէրեանն պէտք է կարդացած լինի: Եթէ պոէզիայից հեռու են, իրաւունք չունեն երգելու, որովհետեւ երգը հիմնուած է բանաստեղծութեան վրայ, երաժչտութիւնը մեզ հասցնում է խօսքերը:

"ՈՂՔԱՄ ՁՔԵԶ, ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴ..."

- Մեր իչխանաւորների տղաները, որոնք ճիփերով ու մերսէդէսներով են չրջում, իրենց չատ վատ են պահում: Մէկի տղան գնում է Մոսկուայի ռեստորաններից մէկում 1000 տոլարանոց հաց ուտում, միւսի տղան կրակում է ժողովրդի վրայ... Խոսրով Յարութիւնեանն ու իր տղան առերճանակով յարձակում են դործել Մեխակ Գաբրիէլեանի վրայ: Երբ մեր պետական այրերն իրենց երեխաներին եւ իրենց չեն կարողանում պատիարակուած պահել, մենք էլ ի՞նչ կարող ենք ասել մնացած ժողովրդի համար: Այս պարագայում յստակ կարող եմ ասել, որ մեր գիւղացիները չատ աւելի կիրթ են, քան մեր պետական այրերը: Իսկ գիտէ՞ք, որ դա ողբերգութիւն է: Իսկ ի՞նչ բան է ողբերգութիւնը: Ողբերգութիւնը այն է, որ մարմնիդ տարբեր մասեր սխալ տեղերում են տեղադրուած: Աւենք ոտքը գալիս է գլխի տեղը, եւ գլուխը դառնում է ոտք: Այ, դա ազգային ողբերգութիւն է: Իսկ աւելի լաւ, քան Խորենացին, ես չեմ կարող ասել. "Ողջամ զքեզ, հայ ժողովուրդ, քանզի թագաւորդ է մանուկ եւ նախարարներդ են կաչառակերներ":

"ԻՆՉՈ՞Ւ Է ՄԵՐ ՊԵՏՈՒԹԻՒՆԸ ՀԻՒԱՆԴ"

- Հայաստանի բնակչութեան մօտ 60 առ հարիւրը ապրում է ղրկի բարեկամների ուղարկած փողերով: Երբ խօսւում է տնտեսական աճի մասին, որոչ բաներ սկըսում եմ չհասկանալ: Փառք Աստծոյ, մենք մի կերպ ազատուեցինք պարսկական հաւի մսերից սկսած, չատ անորակ սննդամթերքներից: Բայց մենք մի խոր վերլուծաբանի կարիք ունենք, որը կը տայ գնահատական, թէ մեր պետութեան այս հիւանդութեան հետեւանքը ինչ պատճառներից է դուրս գալիս:

"ԱՍՏՈՒԱԾ ՁԱՆԻ ԿԱՍԿԱԾՆԵՐՍ ՀԱՍՏԱՏՈՒԵՆ"

- Ատում եմ սոդոմականութիւնը՝ միասեռականութիւնը: Այդ հարցով ես չատ վէճեր կարող եմ ունենալ Եւրոպա մրտնելու առումով: Ինչ է, թոյլատրենք Ֆրանսիացիների նման մեր տղամարդի՞կ էլ ամուսնանան իրար հետ: Մեր չենքի երրորդ յարկում վեց հատ տղայ իրար հետ են ապրում: Այդ խնդրով ես կասկածներ ունեմ, որոնք եթէ հաստատուեն, չեմ կարծում, թէ նրանց ուրախ կեանք է սպասւում»:

Պատրաստեց
Ա. Թ.

— ԳԱՂՈՒԹԷ ԳԱՂՈՒԹ —

ԹՈՐՈՆԹՈՑԻ «Գոմըր Լոճ» ծերանոցին մէջ, Յունիս 26ին նչուած է վեհամայր Ովաննա Սարգիսեանի ծննդեան 100ամեակը, Սարգիսեան ընտանիքի հարազատներուն եւ բարեկամներու ներկայութեան: Հաւաքոյթին պաշտօնական բացումը կատարած է Բազրատ Եպիսկ. Գալստանեան, որ Պահպանիչով օրհնած է վեհամայրը, ապա յայտարարած որ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը Ս. Ներսէս Շնորհալիի չքանչան կը պարգեւէ Իրեն: Զարեհ Ա. Քհնյ. այս առթիւ կարդացած է Գարեգին Բ.ի կոնդակը, որու տուչութիւնը կատարած է Օգոստոս 8ին Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ: Սեղանին օրհնութիւնը կատարած է Արմէն Ա. Քհնյ. Իչխանեան, որ յայտնած է որ վեհամօր զաւակը՝ Գարեգին Ա. կը նկատէր իր հոգեւոր ծնողքը, ուրեմն նաեւ վեհամօր հարազատ թոռը: Երջանկայիչատակ Գարեգին Ա.ի ընտանիքէն Թալին Սարգիսեան-Մուչեան զուարճալի դրուագներ պատմած է մեծ մօր եւ իր միջեւ պատահած, իսկ զաւակը՝ Զօհրապ Սարգիսեան չնորհակալութեան խօսք արտասանած է:

***

ԱՆԹԻԼԻԱՍԻ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ, Յուլիս 27ին տեղի ունեցած է երեքչաբթի օրերու հոգեւոր դաստիարակութեան լսարաններու եզրափակիչ հանդիպումը, հովանաւորութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Արամ Ա.ի եւ կազմակերպութեամբ քրիստոնէական դաստիարակութեան բաժանմունքին, ներկայութեամբ 175 կիներու: Ինը ամիսներու վրայ երկարած այս աչխատանքը իրրեւ գլխաւոր նիւթ ունեցած է Աստուածաչունչի «Ցայտնութիւն Յովհաննու» գիրքը: Բաժանմունքին վարիչը՝ Մաշտոց Վրդ. Զօպանեան անդրադարձած է գիրքին ընդհմէջէն քրիստոնեայ հաւատացեալին կեանքին եւ անոր առաքելութեան համար տրուող ուղղութիւններուն՝ չեչտելով երեք կէտեր.- ա) արթուն եւ պատրաստ ըլլալ եւ ըստ այնմ ապրիլ մեր քրիստոնէական հաւատքը. բ) գործով արտայայտել եւ մեր մասնակցութիւնը բերել քրիստոնէական հաւատքի ու ծառայական առաքելութեան. գ) Քրիստոսի մնայուն ներկայութիւնը խնդրել իրրեւ առաջնորդ մեր քրիստոնէական կեանքին: Ներկաներուն անունով Մաշտոց Վրդ. երախտագիտութիւն յայտնած է Արամ Կաթողիկոսին, որ այնքան բծախնդրութեամբ հետած է աչխատանքներուն: Շնորհակալութեան խօսք ըսած է նաեւ Պարթեւ Վրդ. Կիւլիմեան, որ անցնող չորս ամիսներու ընթացքին, յանձն առած է սերտողութեան աչխատանքները իրրեւ նիւթ ունենալով եկեղեցի եւ Ընտանիք թեմանները: Հաւաքոյթը վերջ գտած է հիւրասիրութեամբ:

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻՒԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Ու Սարգիս աղա երերալով՝ թեւը երկարեց, ցուցամատը բացաւ ու ցոյց տուաւ դերեզմանատան եռեւի պատը.

- Ատ պատը մէկ տարի վերջ քանդելու է: Ատ պատը փլցնելու է: Պատին մէկալ դին հայ կաթոլիկներու դերեզմանատունն է: Ատ գերեզմանատունները միացնելու է: Այո՛, այո՛, միացնելու է: «Եղբայր ենք մենք որ մըրկաւ էինք զատուած»: Ա՛լ կաթոլիկ, լուսաւորչական չկայ: Ամէնքս ալ հայ ենք, հա՛յ... կեցցէ՛ հայը...

Ծափահարութիւններ: Սարգիս աղա վար իջաւ: Մէկը վազեց Սարգիս աղայի վրայ ու համբուրեց: Թօսեալըն էր: Ուրիչ մէկը Սարգիս աղայի վրան վազեց ու համբուրեց: Տիրացու Տրդատն էր: Երրորդ մը՝ Թօնին էր: Սարգիս աղա սկսաւ լալ: Զորս լընկերները ակսան տաք տաք խօսիլ իրարու հետ:

Թօսեալը ըսաւ.

- Սարգիս աղա, ամէն բան առած ենք, սանկ անկիւն մը երթանք ու գլուխ գլխի ջիչ մը կոնծենք:

Կաթոլիկներու գերեզմանատան պատին կողմը գացին ու տապանաքարի մը չուրջը բոլորուեցան:

- Վա՛յ, Սարգիս աղա, վա՛յ, չնորհքով քարոզիչ ես եղեր, ըսաւ Տիրացու Տրդատ:

- Նաչ վկայ, խօսած ատենդ սիրտս վեր վեր հանեցիր: Աշկ օլսուն: Է՛, անցուկը մոռցուկ: Կենացդ, Սարգիս աղա, ըսաւ Թօսեալը:

- Ձեր կենացը, չատ ապրիք, պատասխանեց Սարգիս աղա:

Թօնի գաւաթը զարկաւ Սարգիս աղայի գաւաթին, դէմքը ծամածռեց ողբերգական խորունկ ու ցաւագին յուզումով մը եւ ըսաւ.

- Սարգիս աղա, Սարգիս աղա, ներողութիւն... Իմ պատճառովս կռիւ եղեր է: Ներողութիւն: Մենք եղբայրներ ենք: Կենացդ:

Սարգիս ու Թօնի գրկուեցան եւ իրարու ատամերու վրայ գրոչմեցին Քրիստոսի նշանը խաչին:

Եղբայրութիւն: «Բախտին ամէն ոխ չարանենդ ի մի համբոյր ցրուին ի բաց»:

- Հարկաւ եղբայր ենք մենք, հարկաւ: Լեցո՛ւր, Տրդատ, նորէն պիտի խմենք: Նորէն պիտի խմենք: Նորէն Սարգիս աղա յին կենացը: Աշկ օլսուն, աշկ օլսուն, անի՛նչ ճառախօսութիւն էր, մարդ Աստուծոյ: Սրտէս խօսեցար: Այո՛, սա պատը փլցնելու է: Գերեզմանատունը մէկ ըլլալու է: Ա՛լ կաթոլիկ, լուսաւորչական չկայ: կենացդ, Սարգիս աղա: Ողսողը Թօսեալըն էր ու խմեցին:

Տիրացու Տրդատ ըսաւ.

- Գաւաթ մըն ալ ես կ'առաջարկեմ Սարգիս աղային կենացը: Անիկա հին Դրօչակեան է եղեր: Անիկա հերոս մըն է: Մենք չէինք ճանչնար Սարգիս աղան: Մարտ 31ին ալ ոտքէն վիրաւորուեր է: Մեզի համար մեծ պատիւ է Սարգիս աղայի բարեկամութիւնը վայելել: Անիկա Ֆէրիդէհլի թաղականութենէն ալ մաս կը կազմէ եւ ծանօթ է իբրեւ ճառախօս: Ազգերնուս պարծանքներէն է, Սարգիս աղան: Իր կենացը խմենք:

Սարգիս աղա Տրդատի առատերուն եւ չափազանցութիւններուն ինքն ալ ակսաւ հաւատալ: Անպատճառ ինք հին Դրօչակեան մըն է եւ սակայն մոռցած է իր կուսակցականութիւնը, իր գործունէութիւնը, իր հերոսութիւնները: Մոռցած է, այո՛: Տրդատ յիչեց: Շատ պարզ է: Տըրդատ իրմէ չատ աւելի նուազ տարիք ունի: Անոր յիչողութիւնը իր յիչողութենէն աւելի լաւ կը բանի: Ֆէրիդհլի «Վարդանանց»եկեղեցիին մէջ ալ ամէն կիրակի սնտակ կը պարտցնէր: Կ'երեւի թաղական ընտրեր են ու լուրը տակաւին չեն հաղորդած իրեն: Աւելի Տրդատը: Լաւ յուչապրող մըն է: Թօնի ապուչցած էր լսելով Սարգիս աղայի մեծութիւնը: Պատկառանքի էր եկած: Թօսեալը կը փափաքէր ամենօրեայ բարեկամութիւն մը հաստատել: Օղի կը խմէին անդադար:

- Սարգիս աղան, մինչեւ հիմակ տասը քան անգամ խօսեր է ժողովուրդին առջեւ: Առջի օր մէկը կ'ըսէր որ չատ խօսողներ մտիկ ըրի, տակաւին Սարգիս աղան ժողովուրդին սրտէն կը խօսի, Սարգիս աղան ժողովուրդը կը լացնէ: Սարգիս աղային կենացը:

Թօսեալը ըսաւ.

- Ողսոքը Սարգիս աղայինն է:

Լռութիւն տիրեց: Ամէն ոք չտապեց խըմել իր գաւաթին մէջ մնացած օղին, աղամղեր մը առնել եւ սիկարէթը ծխելով սպասել պատգամներու: Ազգային ու կուսակցական բարձր նիւթերու պարզացման: Քաղաքական պաղտնիքներու ալ թերեւս:

Սարգիս աղա սկսաւ խօսիլ նախ չամբաձայն, խորհրդաւոր կերպով, իսկ հետզհետէ տաքցաւ, տաքցաւ ու բռնկեցաւ:

- Տարիներո՛վ, տարիներո՛վ աչխատեցաւ այս Ազատութիւնը տալու համար ժողովուրդին: Երբ ուրիչներ կը քնանային իրենց անկողիններուն մէջ՝ անդին մարդիկ կային, որ լեռներու վրայ, հրացան առած կը կռուէին: Ու երեսուն տարի արիւն թափուեցաւ, երեսուն տարի հազարաւոր զոհեր, նահատակներ, հերոսներ լինկան: Տարիներով բանտարկութիւն, աքսոր, կախաղան: Ու տարիներով, ուրիչներ ալ, մահը աչքերնին առած աչխատեցան: Ամէնքն ալ, աւելի կամ պակաս, Ազատութեան համար իրենց հոգին, իրենց կեանքը վտանգի մէջ դրին: Ու այսօր, ահա, Ազատութիւնը ունինք, կ'ապրինք Ազատութեան մէջ: Հիմը դրուած է: Այդ հիմին վրայ փոքրիկ մը պայթեցաւ: Ան ալ անցուցինք: Ակռից վերջը ամէնքնիս ալ զինուորի պէս հսկելու ենք այդ հիմին վրայ ու գործաւորի պէս աչխատելու ենք Ազատութեան տաճարը չինելու համար: Նահատակներու հոգիները մեզի հետ են: Այս գործը գլուխ կ'ելլէ միայն միութիւնով եւ ազգային սահմանադրութիւնով: Ա՛լ պէտք չէ ըլլայ պոլսեցի, դուրսեցի, կաթոլիկ, լուսաւորչական, Դրօչակ, Հընչակ: Մեր անուչիկ Մայր Հայաստանը ասանկ կ'ուզէ: Անմխաբանութիւնը կործանեց մեր ազգը: Հիմակ միաբանութեան աւենն է: Ամէնքնիս ալ միութիւն պէտք է քարոզենք: Միութիւնը զօրութիւն է: Եւ մեր Մայր Հայաստանը ամէն բանէ առաջ զօրանալու պէտք ունի: Կեցցէ՛ մեր ամէնուս հայրենիքը, անուչիկ Մայր Հայաստանը: Ինչալլահ, օր մը հոն կ'երթանք, հոն կ'ապրինք, հոն կը մեռնինք: Կեցցէ՛, կեցցէ՛ մեր անուչիկ Հայաստանը:

(Շար. 104)

(Շար. Ա. էջէն)

վարութեան: Աղբրեջանի դէմ եղրը կը մատնէ եղեր միջազգային կազմակերպութիւններէ պաշտպանութիւն ուզել ոճրագործ գինուորին: Աղբրեջանի ժողովրդավարութեան ու մարդկային իրաւունքներու յանձնաժողովի նախագահը Ճինկիզ Գէնիզատէ դժգոհած է որ Սաֆարովը պաշտպանելու ուղղուած պետական աշխատանքները հարկաւոր մակարդակը չունին: Ինդիրը արդէն մոռցուած է: Դատապարտած է պաշտօնական դէմքերը որոնք մարդասպան ոստիկին պաշտպանութեան լծակները ունին, բայց զործնական ոչ մէկ քայլ կ'առնեն:

Գէնիզատէի գլխաւոր նպատակն է անհրաժեշտ ծանրութիւն ստեղծել, որպէսզի դատին վճիռը արձակուելէ առաջ Ռ. Սաֆարով Աղբրեջանի իշխանութիւններուն յանձնուի:

Pèlerinage à Tallard

A L'OCCASION
DU 1600e ANNIVERSAIRE
DE LA MORT DE SAINT GREGOIRE
sous l'égide
de l'**Eglise Apostolique Arménienne**
avec le concours
de l'**Association Cultuelle**
des Arméniens de Gap
et des Hautes Alpes

DIMANCHE
19 SEPTEMBRE à 10h30

La messe sera célébrée
par le **Révérend Père Zadik AVEDIKIAN**
Recteur de la Cathédrale Apostolique
Arménienne de Marseille
et Vicaire du Délégué pour l'Europe
du Catholicossat de tous les Arméniens
pour le Midi de la France
avec la participation
de la Chorale **Sahak-Mesrop**
sous la direction de
M. Khatchig YILMAZIAN

Renseignements et réservaitons :

— Cathédrale Apostolique
Arménienne : Tél. 04 91 77 84 70;
— Association Cultuelle
des Arméniens de Gap :
Tél. 04 92 51 71 80 / 04 92 51 00 87
Inscriptions S.V.P. avant le 11 septembre

Participation aux frais :
- Aller-retour seul : 20 Euros;
- Aller-retour avec repas : 40 Euros.

VOLS DIRECTS
ARMÉNIE
• SÉJOUR À LA CARTE
• VOYAGES ORGANISÉS
Paris→Erevan→Paris
3 Vols Hebdos Juillet
4 Vols Hebdos Août
3 Vols Hebdos Septembre
SABERATOURS
→ 11, RUE DES PYRAMIDES 75001 PARIS
TEL 01 42 96 10 10 - FAX 01 42 96 18 77
saberatours@selectour.com
SEVAN VOYAGES
→ 48, COURS DE LA LIBERTÉ 69003 LYON
TEL 04 78 60 13 66 - FAX 04 78 60 92 26
sevan@selectour.com
WASTEELS VOYAGES
→ 67, LA CANNEBIÈRE 13001 MARSEILLE
TEL 04 95 09 30 60 - FAX 04 95 09 30 61
marseille@wasteels.fr
EREVAN
→ 32-38, RUE HANRABEDOUTIAN EREVAN
TEL 52 55 55 - FAX 56 40 30
sabera@arminco.com
CARGO 3 Vols Hebdos
EN COLLABORATION AVEC LA NOUVELLE COMPAGNIE AÉRIENNE ARMENIAN INTERNATIONAL AIRWAYS
ETE 2004

Imprimé sur les Presses
du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15
Commission Paritaire : N° 0609 K 84976

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— **PARIS**
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19
— **ARNOUVILLE**
71 avenue Henrie Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73
— **ISSY-LES-MOULINEAUX**
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25
(le soir)
— **SEVRAN**
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76
— **VALENCE**
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99
(l'après-midi)
MCA : 04 75 55 12 49
— **DECINES**
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97
— **GRENOBLE**
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43
— **ST MAURICE DE BEYNOST**
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07
— **VIENNE**
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80
— **MARSEILLE-VILLE**
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66
(le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ դործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեղի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն:

*
**

ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին
17 rue Pierre Brossolette - Métro Gabriel Péri
Մանկապարտէզ 4 տարեկանէն սկսեալ
(կը խնդրուի արդաօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ).
+ CPEն մինչեւ Պաքալորէա, նաեւ չափահասներու դասարան:
Կ'ուսուցանուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, երգ, Թատրոն, Պար:
Հեռաձայնել Օգոստոսին՝
- Արաքսի Գարագիւլեան՝
01·39·83·71·19

*
**

La Section «Lola Sassouni»
de Marseille
organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— Restaurant tous les soirs et piqueniques assurés.
— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).
Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne
tout compris, visa inclus
hors assurance.
Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

100-ԱՄԵԱԿ
Ս. ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՕԾՄԱՆ

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2
ԿԱԼԱՍ՝ ժամը 16էն 18·30 եւ Ընդունելութիւն ժամը 19էն 22·30
Սալ կատոյի եւ անոր սալոններուն մէջ.
Յայտագիրը կը վարէ ժէրալտ ՓՆՓՈՂԵԱՆ

- «ԴՊՐՈՑԱՍԷՐ» վարժարանի երդչախումբ՝ ղեկավարութեամբ Հայկ ՍԱՐԳԻՍԵԱՆի,
- «ՄՇՓՈՂ-ԿՈՄԻՏԱՍ» երդչախումբ՝ ղեկավարութեամբ Կարպիս ԱՓՐԻԿԵԱՆի,
- Աբթիւր ԱՀԱՐՈՆԵԱՆ, դաշնակ,
- Ֆէլիքս ՍԻՄՈՆԵԱՆ եւ Լուսինէ ՍԻՄՈՆԵԱՆ, թաւջութակ եւ դաշնակի երկնուագ,
- Մկրտիչ ՄԿՐՏԻՉԵԱՆ, պարիթոն, ընկերակցութեամբ Աբթիւր ԱՀԱՐՈՆԵԱՆի, դաշնակ,
- Ժէրալտ ՓՆՓՈՂԵԱՆ, ասմունք,
- Սիւզան ՄԻԼՏՈՆԵԱՆ եւ Իրիս ԹՈՐՈՍԵԱՆ, տաւիղի երկնուագ,
- Աբթիւր ԱՀԱՐՈՆԵԱՆ եւ Հայկ ԴԱՒԹԵԱՆ, դաշնակի եւ ջութակի երկնուագ,
- Մկրտիչ ՄԿՐՏԻՉԵԱՆ, պարիթոն եւ Անի ՍԱՐԳՍԵԱՆ, սոփրանօ, դուէթով,
- «ԴՐՈՄԱ» ֆառեակ՝ ղեկավարութեամբ Հայկ ԴԱՒԹԵԱՆի:

Տեղերը ապահովելու համար դիմել Փարիզի, Ալֆորվիլի, Արնուվիլլէ-Կոնէսի, Շաւիլի եւ Իսի-լէ-Մուլինոյի Առաքելական եկեղեցիներու դրասենեակներուն:

Նկատի ունենալով որ Հոկտեմբեր 2ի օրը, տեղւոյն վրայ տոմսի վաճառք պիտի չըլլայ:

ՇԱԲԱԹ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 2
ժամը 23էն կէս-պիշեր ՀՍԿՈՒՄ
Սուրբ ՅՈՎՀԱՆՆԷՍ-ՄԿՐՏԻՉ Մայր Տաճարին մէջ

ԿԻՐԱԿԻ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 3
- *ժամը 8ին, ԱՌԱՒՕՏԵԱՆ ԺԱՄԵՐԳՈՒԹԻԻՆ,*
- *ժամը 10ին, ԴՌՆԲԱՁԷՔ,*
- *ժամը 10·30ին ՊԱՏԱՐԱԳ որուն ընթացքին*

Գոհաբանական Մաղթանք պիտի ըլլայ Ս. Յովհաննէս-Մկրտիչ Մայր Տաճարի
եկեղեցաշէն քարերար ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵՆԱՆՑի
եւ անոր ընտանիքի անդամներուն,
Եւ Տաճարիս օծումը կատարող Եւրոպայի Հայրապետական Պատուիրակին՝
ԳԷՈՐԳ Սրբ. ԻՒԹԻՒՃԵԱՆի,
Տաճարիս առաջին Առաջնորդին՝
ՎՌԱՄՇԱՊՈՒՀ Սրբ. ՔԻՊԱՐԵԱՆի, ի Տանէ Արջուկենց
եւ Եկեղեցւոյ բոլոր բարերարներուն յիշատակին:

Արարողութիւններու ատարին, հաւատացեալները հրաւիրուած են բաժնեկից դառնալու աւանդական ՄԱՏԱՂԻՆ,
Եկեղեցւոյ շրջափակին եւ «Նուրհան Ֆրէնկեան» սրահին մէջ:

Rentrée des classes

Les inscriptions pour l'année 2004/05 à l'école hebdomadaire «Siamanto» de Bagneux auront lieu :
le mercredi 15 septembre à 15 heures

à l'école Henri Wallon,
2 avenue de Stalingrad à Bagneux

Au cours de ces inscriptions, une réunion conviviale aura lieu, comme chaque année, sur le déroulement de la nouvelle année scolaire.

Les cours commenceront le mercredi suivant -22 septembre : le matin pour les plus jeunes enfants -environ 5 à 10 ans-, et l'après-midi pour les adolescents jusqu'au baccalauréat et les enfants au dessus de 10 ans.

Pour tout renseignement :
— Mme Lucie Dossikian: 01 45 46 10 11
— Mme Elisabeth Davidian:
01 46 65 81 53

Association "MACHTOTZ"
Pour la Défense de la Langue Arménienne

Rentrée de l'année scolaire 2004/05

1) Cours intensif d'arménien 1er niveau pour non-arménophones

Ces cours s'adresseront aux débutants de 8 à 70 ans.
Les élèves seront capables de parler, lire et écrire l'arménien
L'enseignement est assuré par Mme **Hilda Kalfayan-Panossian**
avec sa **METHODE AUDIOVISUELLE**
25 SEPTEMBRE 2004 — 22 JANVIER 2005 : STAGE DE 50 HEURES
le samedi matin de 9h à 12h à Paris (**Absentéisme exclu**)

2) cours de 2e, 3e, et 4e niveaux

25 SEPTEMBRE 2004 — FIN JUIN 2005 :
le samedi entre 12h et 15h à Paris
Les nouveaux élèves sont acceptés à ces cours après un test de niveau.

3) Vous pouvez aussi vous procurer votre Manuel d'arménien occidental pour les non-arménophones

Une méthode audiovisuelle utilisable chez soi.
3 volumes en couleur + 1 coffret de 4 cassettes audio
85 Euros + 8 Euros frais d'expédition.

Pour tous ces cours et le manuel :
RENSEIGNEMENTS et INSCRIPTIONS : Dès maintenant
01 47 50 97 51 et 01 39 46 21 66.

ՈՐԲԱԹՇԱԲԹԻ
ՕԳՈՍՏՈՍ 31
MARDI
31 AOUT
2004

LE NUMERO : 1 €

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆԱԴԻՐ՝ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱԿԵԱՆ (1884-1957)

HARATCH
LE PREMIER QUOTIDIEN ARMENIEN EN EUROPE FONDE EN 1925

DIRECTRICE : ARPIK MISSAKIAN

83, RUE D'HAUTEVILLE — 75010 PARIS
TEL. : 01 47 70 86 60 — FAX : 01 48 00 06 70
COURRIEL (E-MAIL) : jharatch@aol.com

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ֆրանսա : Տար. 230 եւրօ — Վեցամսեայ : 122 եւրօ
Արտասահման : Տար. 270 եւրօ (Ամէնօրեայ առաքում)
247 եւրօ (Շաբաթական առաքում) — Հատը : 1 եւրօ
C.C.P. PARIS 15069-82 E

80ՐԴ ՏԱՐԻ - ԹԻՒ 21.013 — Fondateur SCHAVARCH MISSAKIAN — 80e ANNEE — N° 21.013

ՕՐՈՒԱՆ ՄԻՋԱԶԳԱՑԻՆ ԼՈՒՐԵՐԸ

ԻՐԱՔ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ՎԵՐՋՆԱԳԻՐ ԵՐԿՈՒ ՖՐԱՆՍԱՑԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ

ՇԻՐԱՔ ԱԶԱՏ ԱՐՁԱԿՈՒՄԸ ՊԱՀԱՆՋԵՑ

Շաբաթ Լրիկուն, Օգոստոս 28ին, «Իրաքի իսլամական բանակը» ալ-Ժեզիրա հեռատեսիլի կայանէն (Քաթար) տեսերիզով մը յայտնեց թէ իր ձեռքն են Ֆրանսացի երկու լրագրողները՝ Քրիսթիան Շէնո (կամ Ֆ. Ի.) եւ Ժորժ Մալբրունօ (Ֆիկարօ) եւ ներկայացուց իր պայմանները, որոնք ի դէպ ոչ մէկ կապ ունին Իրաքի պատերազմին հետ: Ծանօթ է որ Ֆրանսա որեւէ զօրք չունի Իրաք, քանի դէմ էր այդ պատերազմին, ու այս «Իսլամական բանակը» բոլորովին այլ պահանջ մը կը ներկայացնէ: Ան կ'ուզէ որ Ֆրանսա 48 ժամէն ջնջէ այն օրէնքը որ կը վերաբերի լաւակ կրելու արգելքին հանրային (զբաղեալ աղջիկներ դպրոց) հաստատութիւններու մէջ: Այդ օրէնքը կը նկատուի անարգարութիւն մը եւ յարձակում մը Իսլամի նկատմամբ: Տեսերիզի վերջաւորութեան կը կրկնուի՝ Ալլահ ամենամեծն է, փա՛ռք Աստուծոյ:

Ինչ որ մտահոգիչ է, այն է որ այս Իսլամական բանակը այն է որ պատանդ ունէր իտալացի լրագրողը եւ զնդակահարեց, բայց այս վերջնագիրին մէջ սպանութեան սպառնալիք չկայ:

Ամէն պարագայի մէջ, Ֆրանսական հանրութիւնները զօրակոչի ենթարկուած են Օգոստոս 29ին: Կառավարական մասնակի ժողովներէ դատ, Ժակ Շիրաք «հանդիսաւոր ելոյթով մը» պահանջեց որ երկու լրագրողները ապատ արձակուին, յետեւելով թէ ամէն ջանք կը թափուի գալիք ժամերուն եւ օրերուն որպէսզի այդ ապատ արձակումը ձեռք ձգուի: Նոյն օրը Գահիրէ մեկնեցաւ Արտաքին Նախարարը՝ Միշէլ Պարնիէ: Ճակորդ օրան համար ալ (Օգոստոս 30) զանազան ցոյցեր նախատեսուած էին Փարիզ Թրոքատէրօ, Զայնասփիւռի չէնքին առջեւ, մեծ մզկիթին չուրջ, եւլն., եւլն.: Ֆրանսական իշխանութիւնները, նախագահէն սկսեալ, չատ դոհ են նաեւ որ Ֆրանսայի մահմետական իշխանութիւնները կը դատապարտեն արարքը եւ Ֆրանսայի կողքին են:

*
**

Ժաք Շիրաք յետադէպ Սուչի կատարելիքը այցելութիւնը, ուր պիտի հանդիպէր Պուտինի:

*
**

Թուրք երկու պատանդները ազատ արձակուած են Օգոստոս 29ին, իրենց ձեռնարկութիւնը որոշած ըլլալով հեռանալ Պաղտատէն, ինչպէս պահանջուած էր:

*
**

Սիւննի ուլէմաներու բանբերներէն մէկը՝ Շէյխ Ապտիւլ Սաթթար կոչ ըրած է որ ազատ արձակուին Ֆրանսացի երկու պատանդները, աւելցնելով սակայն՝ «Ֆրանսական կառավարութեան ալ կը դիմենք որ ջնջէ լաչակ կրելու արգելքը»:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Ժ. ՇԻՐԱՔ, Օգոստոս 27ին, ամէն տարան պէս խօսք առաւ Ֆրանսայի դեսպաններու ժողովի աւարտին, անդրադառնալով արտաքին քաղաքականութեան, ակնարկ մը նետեց միայն Իրաքի, չեչեոլով անոր կայունութեան անհրաժեշտութիւնը, Լիբանանի մասին ըսաւ թէ նախագահական ընտրութիւնը պէտք է տեղի ունենայ ըստ Սահմանադրութեան, այլ խօսքով համաձայն չէ Լահուտի վերընտրութեան: Աւելթը օգտագործեց նաեւ կրկնելու համար թէ Թուրքիա պէտք է անդամակցի Եւրոպական Միութեան:

ԼԱ ՌՈՇԵԼԻ մէջ տեղի ունեցաւ ընկերվարական կուսակցութեան ամրան համալսարանը Օգոստոս 28ին եւ 29ին: Լ. Ժոսփէն որ ամառը կ'անցընէ Իլ տը Ռէ, ներկայ եղաւ Օգոստոս 28ի իրիկուան ճաշին, յայտնելով «այնքան մօտ էի, որ չէի կրնար հեռու մնալ»: Ժոսփէն միայն կամուրջ մը ունէր անցնելիք: Կուսակցութեան մէջ տարակարծութիւնը կը մնայ: Գլխաւոր հոսանքը կողմնակից է այո՛ ըսելու Եւրոպայի Սահմանադրութեան, բայց բաւական ձայներ ալ կան որոնք դէմ են (Լօրան Ֆապիուս):

ՄՈՍԿՈՒԱ. կրցաւ իւր նախագահը պարտադրել Չէչէնիա, յանձին Ալու Ալխանովի, որ ընտրուեցաւ Օգոստ. 29ին լայն մեծամասնութեամբ: Մասնակցողներու համեմատութիւնը աւելի քան 72% էր: 47 տարեկան, նոր նախագահը կ'ուզէ նաեւ տնտեսութիւնը վերակազմել:

ՆԻԻ ԵՈՐՔի մէջ, ուր կը ժամանէը Պուշ Օգոստոս 30ին, նախորդ օրը բեմը եղած էր մօտ 200 հազար ցուցարարներու, որոնք իրենց ընդդիմութիւնը կ'արտայայտէին Պուշի: Եղած են նոյնիսկ ձերբակալութիւններ:

ՌՈՒՍԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՕԴԱՆԱՒԵՐՈՒ «արկածները» ոճրափորձեր էին, զոնէ երկուքէն մէկումը, ինչ որ հաստատուեցաւ Օգոստոս 27ին, մինչ սկիզբը արկածի վարկածը աւելի հաւանական կը նկատուէր: Օգանաւերէն մէկուն մէջ պայթուցիկի հետքեր գտնուած են: Տուպոլեւ 154ը չախչախուած է Ռոստովի մօտ, Օգոստոս 24ին 25ի գիշերը, գրեթէ միաժամանակ միւս Տուպոլեւին հետ, որոնք մեկնած էին Մոսկուայի նոյն օդակայանէն: Օգանաւ մտած էին չէչէն երկու կիներ, որոնց մարմինները պահանջող չէ եղած: «Իսլամպուլի ջոկատները» անունով խումբ մը (Սատաթի մարդասպանները էն մէկուն անունով) տէր եղած է արարքին, համայնցի վրայ: Օգանաւին անձնակազմը նուռով) տէր եղած է արարքին, համայնցի վրայ: Օգանաւին անձնակազմը լուր ղրկած էր գաղտնաբար, որ չեղումի փորձ մը կը կատարուի, ինչ որ յետադային հերքուեցաւ, բայց կը թուի որ ճիշդ էր:

ՊՈՒՇ ինքնաքննադատութեան դիմած է, Օգոստոս 27ին, Նիւ Եորք Թայմզի տրուած մէկ հարցազրոյցին մէջ, ընդունելով որ թերագնահատած է Իրաք յետպատերազմեան դժուարութիւնները: Պայմաններու սխալ դնահատում ըրած է «արագ յաղթանակէ» մը եւաք: Առաջին անդամն է որ նման խոստովանութիւն մը կ'ընէ, կրկնելով հանդերձ որ պատերազմի դիմելու որոշումը ճիշդ որոշում էր և թէ Իրաքի իր վարած քաղաքականութիւնը հարկ եղածին չափ «ճկուն» է, դէմ դնելու համար ապստամբութեան, ի մասնաւորի Նաճաֆ:

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱԿԱՏ

«ՇԱՐԺԷՆՓՐԷՍ»

(Օգոստոս 28/30)

Վ. ՕՍԿԱՆԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ - ԹՈՒՐՔԻԱ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

Արտաքին գործերու նախարար Վ. Օսկանեան տեսակցութիւն ունենալէ ետք Դանիոյ իր պաշտօնակից Փէր Ս. Մոլէրի հետ որ Հայաստան կ'այցելէր մամուլի առաւելիսի մը ալ մասնակցած է: Հոն պատասխանելով հարցումի մը ըսած է թէ ՕԹԱՆ-ի անդամ Թուրքիան չրջանին մէջ կարեւոր դեր ունեցող երկիր է, սահմաններ ունի կովկասեան երեք հանրապետութեան հետ ու հետաքրքրական է որ անոնցմէ աւելի կանուխ անդամակցի Եւրոպային: Այդ բոլորը պարտաւոր կ'ընեն դրացիներուն հետ աւելի լաւ յարաբերութիւններ հաստատելու:

«Հայաստան նախապայմաններ չի դնեւում Թուրքիայի հետ յարաբերութիւնների հաստատման առումով՝ միաժամանակ նոյնն էլ ակնկալելով այդ պետութիւնից» ըսած է ան:

*
**

ՆԱԽԱԳԱՀԸ ՉԻ ԿՐՑԱԾ «ԿԻԼԻԿԻԱ» ՄՏՆԵԼ

Ինչպէս նախատեսուած էր, «Կիլիկիա» նաւը Ողիմպիականներու ատարեն առաջ Աթէնք պիտի հասնէր եւ այդ օրերուն հոն գտնուող նախագահ Ռ. Քոչարեան նաւ պիտի բարձրանար: Սակայն խաղերու կազմակերպիչները յայտնած են թէ չեն կրնար երաշխաւորել նախագահին ապահովութիւնը ,հետեւաբար նախատեսուած արարողութիւնը տեղի պիտի չունենայ: Նաւը հասանօրէն Սեպտեմբեր 2ին կրկին ծով կը բացուի ու կ'ուղղուի դէպի Կիլիկիա:

*
**

ԿՐԹԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

Օգոստոս 27ին Ծաղկաձորի մէջ բացուած է Համահայկական կրթական առաջին խորհրդաժողովը որ կը տեւէ մինչեւ Օգոստոս 29: Կը մասնակցին 29 երկրէ 220 ուսուցիչներ: Ձեռնարկը կը վայելէ նախագահ Ռ. Քոչարեանի եւ Գարեգին Բ.ի հովանաւորութիւնը: Ողջոյնի ուղերձներէն, կաթողիկոսական օրհնութենէն ետք զեկուցած է Կրթութեան եւ գիտութեան նախարար Սերգօ Երիցեան: Ան նիւթ ըրած է Սփիւռքի դպրոցներուն հարցերը, ըսած թէ կը մտածուի յաջորդ տարուընէ Հայաստանի մէջ սփիւռքահայ ուսուցիչներու վերապատրաստութեան դպրոց բանալ, «բարձրացնելու սփիւռքահայ դպրոցի եւ կրթութեան մակարդակը»...: Ինչ կը վերաբերի Հայաստանի, նախարարը չեշտած է թէ դպրոցներու զարգացումը անհամաչափ թափով կ'ընթանայ եւ սահմանամերձ, լեռնային, բարձր լեռնային չրջաններու դպրոցները չատ բանով մայրաքաղաքիններէն աւելի ցած մակարդակի վրայ են:

Զեկուցումով հանդէս եկած է նաեւ նոյն նախարարութեան Կրթութեան ազգային հիմնարկի տնօրէնը Վիկտոր Մարտիրոսեան. ան Ռուսաստանի վիճակագրութեան արդիւնքներով արդարացուցած է տասնամեայ կրթութիւնը 12 տարուան բարձրացնելու որոշումը ,ընդունելով հանդերձ թէ տնտեսական պայմանները կը մղեն դպրոցը կարելի չափով չուտ աւարտել:

*
**

ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ ԱՌԱՋԻՆ ԳԻՐՔԸ ՃԱՓՈՆԻ ՄԷՋ

Գորէայի համալսարանի դասախօս Հ. Սեկավայի «1915ի Հայերու ցեղասպանութիւնը» հատորը ներկայացուած է Օգոստոս 27ին Գիտութեան ակադեմիային մէջ, Երեւան: Ճափոնի մէջ տպագրուած հատորը առաջինն է այդ երկրին համար: Հեղինակը քանի տարի առաջ սկսած է հետազբօսել իր նիւթով որուն մասին օգտուած է ամերիկացի եւ դերմանացի դիւանականներու աշխատանքներէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ «ԻՆՔՆԱՏԻՊ» ԱՐԴԻՒՆՔԸ

Հակառակ Պաշտպանութեան նախարար Ս. Սարգսեանի ինքնավստահութեան, Հայաստանի մարզիկները ձեռնունայն կը

(Շար.ը Դ. էջ)

ՓԱՐԻԶԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹԵԱՆ 60-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ ՄԱՆՈՒՇԵԱՆԻ ԽՈՒՄԲԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ

Փարիզի ազատագրումին 60ամեակին նչումներուն չարքին երկու յուշակոթողով տեղ տրուեցաւ Հայերու կատարած դերին: Առաջինը յուշաքար մըն էր որ տեղեւուեցաւ Իսի լէ Մուլինոյի մէկ հրապարակին վրայ, ոգեկոչելու համար Մանուչեանի խումբին վաստակը:

Օգոստոս 29, Կիրակի առաւօտ չրջանի նահանգապետ Շ. Փաքթուայի, քաղաքապետ Ա. Սանթինիի, պաշտօնական այլ դէմքերու, նախկին ռազմիկներու եւ դիմադրականներու եւ կաբեւոր բազմութեան մը ներկայութեան ելոյթ ունենալով Իսիի քաղաքապետը յարգանքի ու երախտագիտութեան տուրք մատուցանեց Փարիզի ազատագրումին երեսուն պայքարով ու կեանքով մատակարարներուն:

Երկրորդ կոթողը խաղաղութիւնը խորհրդանչող պրոնզէ քանդակ մըն էր որ տեղեւուեցաւ Շուազիի լը Ռուայի քաղաքապետարանին պարտէզը, նոյն օրը: Քանդակը գործն է Դաւիթ Երեւանցիի:

Կիրակի իրիկուան լրատուութեան մէջ հեռատեսիլի երրորդ կայանը անդրադարձաւ առաջին արարողութեան, տեսարանները հեռաստեղով Ա. Սանթինիի ելոյթէն:

ՕԼԻՄՊԻԱԿԱՆ 2004

Ողիմպիական մրցումները վերջ գտան Օգոստոս 29ին, հանդիսաւոր եւ ժողովրդական գեղարուեստական բաժինով մը՝ երգ, պար եւլն.:

Ճաղթական էին ԱՄՆ 103 մետալներով (35 ոսկի), Ֆրանսա 7րդ հասաւ 33 մետալով (11 ոսկի): 22րդ է Թուրքիա 10 մետալով (3 ոսկի), 32րդ է Վրաստան 4 մետալով (2 ոսկի), 50րդ է Ադրբէջան 5 մետալով (1 ոսկի):

Փակման արարողութեան վերջաւորութեան ողիմպիական դրօշակը յանձնուեցաւ Փեքինի քաղաքապետին, ուր տեղի կ'ունենան 2008ի խաղերը:

ԲԱՑ ՆԱՄԱԿԱՆԻ

ՅԱՐՄԱՐՈՒՈՂՈՒԹԵԱՆ ԵՒ «ՄՕՏԱԼՈՒՏ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԻ» ՀՈՍԱՆՔՆ Ի ՎԵՐ

ԼԵՒՈՆ ՄԻՐԻՋԱՆԵԱՆ

ԵՐԵՒԱՆ («ՅԱՌԱՋ») ..

Ի՞նչ երանութիւն՝ Օշական ուխտի գը-նալ աշխարհի չորս ծագերից հաւաքուած գրչակիցներիդ քարաւանով:

Յուլիսեան արեւը ոսկի է թափում գըմ-բուխաէ այգիների վրայ, ներս թափան-ցում նաեւ հսկայական, երկյարկ «Իքա-րուս»ի լուսամուտների վարագոյրներից՝ հարկադրելով յաճախակի դիմել ամենա-փրկիչ թաչվինակի օգնութեանը:

Աւտոպուսը կարծես բաժանուած լինի երկու մասի՝ երգողների եւ չերգողնե-րի: Մեր երգող ընկերները, հալալ քըր-տինքի գնով, մի կատարեալ երգչախումբ են կազմել: Նրանց երգն այնպէս ներշըն-չուն, այնպէս յուզումնալի է, որ մի պահ թւում է՝ ոչ թէ սուրում ես ասֆալտա-պատ խճուղով, այլ գնում ես Մայր Գե-տի ափերով, աւանդաբար քայլամոլոր, աւանդաբար փնտռելով, կամ գնում ես ուրիշ-ուրիշ միջօրէականների՝ ցանկա-լով տեսնել այն երկիրը, որ քեզ «նուր արեւ»... Մեքենան սուրում է աջ ու ձախ սփռուած դրախտային ծիրանուտների մի-ջով, եւ երգը փաթսում է կոմիտասեան ծիրանի ծառին...

... Մենք՝ Օշինը եւ ես, չերգողների մասում ենք, կողք-կողքի: Երեսուն տար-ւայ բարեկամներ ենք, խօսելու չատ բան կայ: Հերթը հասնում է ուղղագրութեանը եւ այդ կապակցութեամբ՝ նաեւ իմ յօդ-ւածներին:

- Լոս Անճելըսի թերթերը յօդուածներդ կը տպեն ու կը տպեն «Յառաջ»էն առնե-լով:

- Հակառակ այստեղի թերթերի, - ա-սում եմ:

-- Աո՛ ուրի՛չ հարց: Հոս մթնոլորտը տարբե՛ր է:

- Բայց խնդիրը համազգայի՛ն է:

- Սմէն պարագայի՛ մթնոլորտի հարց ալ կայ:

- Եւ մինչեւ ե՞րբ պիտի լինի այդ «մթնոլորտային հարցը»:

- Ը՛... Կը խորհիմ թէ մինչեւ տասը տարի:

- Լո՞ւրջ ես ասում, - դրեթէ ճչում եմ ես:

- Այո՛, - եւ Օշինի դէմքին յայտնւում է նրան բնորոշ Քէչիչեանական բարի, նե-րողամտութեամբ լի ժպիտը, որ ինքնըստ-ինքեան նշանակում է՝ այդպէ՛ս է, եղ-բա՛յր, ես ի՞նչ կարող եմ անել...

Այնպասեալի պատասխանից ապշահար ու զայրացած՝ չդիտեմ ի՞նչ ասել: Օշինն անցնում է բացատրութեան.

- Քու դրածներդ սմէնն ալ ճիշդ են: Ե՛ս ալ այդ կարծիքին եմ՝ Մեսրոպեան ուղղագրութիւնը պէ՛տք է վերականգնը-ւի: Սակայն այդ խնդիրը Հայաստանի սւ-մէնէն կարեւոր խնդիրներէն չէ: Այսօր Հայաստան աւելի կարեւոր խնդիրներ ու-նի:

- Որո՞նք են այդ խնդիրները:

- Նախ՝ ժողովո՛ւրդը պէտք է պահենք:

- Անշո՛ւշտ՝ ժողովուրդը պիտի պա-հե՛լ: Բայց ժողովուրդը պիտի դրագէ՛տ պահուի:

- Այո՛, բայց ուղղագրութեան խնդիրը ժամանակի՛ պէտք ունի:

- Օշի՛ն, սիրելի՛ս, մենք առանց այն էլ չատ ենք ուշացել: Մեսրոպեան ուղղագը-րութիւնը վաղո՛ւց պիտի վերականգնուած լինէր: Այլեւս սպասել չի կարելի: Այ, մեր դիմացի նստարանին փրոֆ. Սուրէն Դանիէլեանն է. հարցրո՛ւ, եւ նա քեզ կ'ա-սի, թէ Հայաստանում քանի՛-քանի՛ դըպ-րոցների մէջ արդէն ուսուցանւում է ա-րեւմտահայերէնը ,քնականաբար՝ Մես-րոպեա՛ն ուղղագրութեամբ, եւ թէ ինչ-պիսի՛ հաճոյքով են երեխաները սովորում իրենց մայրենի ուղղագրութիւնը:

- Գիտե՛մ, գիտե՛մ, բայց ատոնք մաս-նակի բաներ են: Մթնոլորտը տակաւին պատրաստ չէ:

- Այդ «մասնակիների» թիւը հարիւրնե-րի է հասնում: Եւ եթէ այդքան «մասնա-կի» կայ, ընդհանուրն ինչո՞ւ չլինի:

- Այո՛, բայց չես գիտեր՝ ինչե՛ր կրնան ըլլալ:

- Ինչե՞ր՝ զորօրինակ...

Որպէս պատասխան, Օշին Քէչիչեանը, իր երեսնամեայ անուղղելի բարեկամից սրտնեղած, վեր է կենում եւ գնում առաջ՝ ղրոյցի բռնուելով ուղղագրութեան ցաւից հեռու ղրչակիցների հետ:

...Քրիստոսի նման, Օշականի Սուրբն էլ իրաւունք ունի ասելու.

«Եկա՛յք առ իս, ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք, եւ ես հանդուցից զձեզ»:

Ահա եկել են նրանք՝ Գրի, Գրչութեան եւ Հայ Յօսքի վաստակած ու բեռնաւոր մշակները: Նրանք, հերթով, խոնարհըւում են Մեծ Ուսուցչի չիրմին, երկիւղածօրէն համբուրում սրբալոյս տապա-նաքարը եւ, մէկական մեխակ թողնելով խնկահոտ մարմարին, դիմում դուրս՝ նոր ուժ ու աւիւն առած, նորովի հայացած...

Մէկ ժամ անց, խումբը Մայր Աթոռ Ս. Էջմիածնում է՝ վեհարանում: Գարեգին Բ. Կաթողիկոսը բարի դալուստ է մաղ-թում Գրողների համաժողովի բոլոր մաս-նակիցներին, օրհնութեան խօսքեր ա-սում: Գանձատեղծ Գրի-գոր Հոթոյեանի հարցմանն ի պատաս-խան, Կաթողիկոսն անդրադառնում է նաեւ դասական ուղղագրութեան վերա-կանգնման խնդրին: Նա ասում է, որ Ս. Էջմիածինը միշտ հաւատարիմ է Մես-րոպեան ուղղագրութեանը, եւ ինքը, որ-պէս Ամենայն Հայոց Կաթողիկոս, բնա-կանաբար, ուրախ կը լինի Մեսրոպեանի վերականգնման համար: Իր խօսքը առա-ւել ոգեւորում է բոլոր նրանց ովքեր Մեսրոպեանի վերականգնման կողմնա-կից ու ջատագով են եւ լուրջ յոյսեր են կապում Գրողների ընթացիկ համաժողո-վի հետ:

Համաժողովն սկսւում է մի քանի ժամ անց, Գրողների Տանը:

Ի հարկէ, պաշտօնական-արարողական խօսքերում ու ելոյթներում ուղղագրու-թեան մասին որեւէ խօսք սպասելը միա-մըտութիւն է. մնում է յոյս կապել Հո-թոյեանական ելոյթների հետ: Իսկ այդ-պիսի ելոյթներ, թւում է, պիտի՛ լինեն: Չեն կարող չլինել, քանի որ մանաւանդ Սփիւռքից ժամանած մեր գրչակիցների անձնական զրոյցների հիմնական նիւթը միասնական ուղղագրութեան բացակայու-թեան ցաւն է, չուտափոյթ դարմանումի յոյսը եւ այդ գործում իրենց օգտակար լինելու պատրաստակամութիւնը:

Ահաւասիկ, Գրողների Միութեան նա-խագահը ելոյթի է հրաւիրում սփիւռ-քահայ մի գրչակցի, որն ինձ այսօր բա-րի խօսքեր էր չռայլում՝ «իմ հեռուզրա-կան, համարձակ, ազդօգուտ» եւ այլն ուղղագրական յայտարարի համար, հաւաստիաց-նում, թէ իր ելոյթում ինքը նոյնպէս պէտք է վճռական խօսք ասի «ի շահ Մեսրոպեանի»: Ահա ամպիոնից խօսում է նա այն մասին, թէ չատ կարեւոր է եւ անհրաժեշտ, որպէսզի հայապետական դիտաժողովներ կազմակերպուեն Սփիւռ-քի բոլոր համայնքներում:

Լսում եմ նրան եւ ինքս ինձ ասում. «Հիմա, ուր որ է, կ'անցնի ուղղագրու-թեանը, որը հայապետութեան թիւ մէկ խնդիրն է այսօր: Հայաստանում դա փոր-ձում են անդրադառնալ, բայց Սփիւռքահայն անդրադառնալ չի կարող»:

Աւաղ, ինձ վիճակուած է զարմանք եւ հիասթափութիւն: Սփիւռքահայ գրչեղ-բայրս չատպում է աւարտել իր ելոյթը՝ առանց ուղղագրութեան թնճուկին անդ-րադառնալու:

Ընդմիջմանը մօտենում եմ իրեն.

- Ելոյթդ լաւն էր, հարցադրումդ՝ մի-անգամայն ճի՛շդ, բայց ինչո՞ւ չհօսեցիր ուղղագրութեան մասին:

- Օ՛, մոռցայ... Ի՞նչպէ՞ս մոռցայ, - դէմքն է կնճռոտում «մոռացկոտ» գրչեղ-բայրս:

- Ջմոռցա՛ր, սիրելի՛ս, - ասում եմ ան-կեղծօրէն, - խուսափեցի՛ր, յարմարուե-ցի՛ր:

Գրչեղբայրս պատասխան չունի ...

Պարզւում է, որ ելոյթի հրաւիրուղ միւս սփիւռքահայ գրողներն էլ են «մո-ռացկոտ» ու յարմարուողական:

Ես տուն եմ վերադառնում՝ որոշելով չմասնակցել համաժողովի յաջորդ նիս-տերին, քանի որ ամէն բան պարզ է՝ «մոռացկոտութիւնն» ու յարմարուողակա-նութիւնն ընդհանուր են, եւ, ինչպէս Օ-շինն է ասում, «մթնոլորտը տակաւին պատրաստ չէ»: Ի հարկէ, Օշինի ասածը վերաբերում է հայաստանեան մթնոլոր-տին, սակայն ահա, պարզւում է, որ դրսի մթնոլորտն էլ կայուն եւ չատ յուսալի չէ, քանի որ գրողնե՛րն անգամ «մոռացկոտ» են դարձել եւ ապաքէն զգուշաւոր ու յար-մարուողական են: Աստուած իրենց հետ:

Օրեր յետոյ տեղեկանում եմ, որ համա-ժողովում ուղղագրութեան հարցի վերա-բերեալ գործնական խօսակցութիւն չի ծաւալուել, եղել է միայն մէկ ելոյթ՝ Գրիչ Դաւթեանի ելոյթը: Ամերիկաբնակ մեր յարգարժան գրչեղբայրը երկար-բա-րակ փորձել է համոզել, թէ դասական ուղղագրութիւնը իր գարն ապրել է, եւ նրա մերադարձի մասին այլեւս խօսք լի-նել չի կարող:

Իր ելոյթով քանի՞ հոգու է համոզել Դաւթեանը, չգիտեմ, բայց որ նա, լինե-լով բանիւ եւ գործով արեւմտեանական, անկեղծօրէ՛ն է չարադրել իր մտածածը, դա պէտք է գնահատել: Ի վերջոյ, ո՞վ, եթէ ոչ առաջին հերթին դրա՛ղն է պար-տաւոր անկեղծ վերաբերմունք դրսեւորել մի այնպիսի կենսական հարցի վերաբեր-եալ, որպիսին ուղղագրութիւնն է: Կարծիքի բովանդակութիւնից անկախ՝ կարեւոր է նրա անկեղծ լինելը, որովհե-տեւ որեւէ խօսք, բայց մանաւանդ՝ գրա-ղի՛ խօսքը, արժէք չունի, եթէ չիտակ ու անկեղծ չէ:

Փակաս տաբօրինակ չէ նաեւ յարմար-ւողական լուսաթիւնը: Այն կարող է կար-ծուել համաձայնութեան նշան, ինչը տու-եալ դէպքում ապակողմնորոշիչ է: Ուղ-ղագրութեան խնդիրը ներկայիս համազ-գային ամենաարդիական եւ ամենաայրող խնդիրներից է, ինչպէս ասում են՝ գեր-խնդիրների՛ց, եւ նրա հանդէպ ոչ մէկ սփիւռքահայ հեղինակ, առաւելապէս՝ ե-թէ արեւմտահայ ծնողների զաւակ է, ըստ էութեան անտարբեր չէ, եւ հնարա-ւոր էլ չէ, որ անտարբեր լինի: Ուրեմն, երբ որ հրապարակօրէն արտայայտուելու պատեհ առիթն առկայ է, ինչո՞վ բացատ-րել լռելն ու չարտայայտուելը: Ի՞նչ ա-նուն տալ այսօրինակ լռութեանը, լռու-թեամբ յարմարուելուն: Լռութեամբ յար-մարուելը խօսքով յարմարուելուց ինչո՞վ է տարբեր...

Երկա՞ր պիտի չարունակուի տխուր օ-րերից ժառանգուած այս ան-տանելի յարմարուողականութիւնը, որը մեր օրերի հետ համատեղելի չէ: Ա՛յո, կային ժամանակներ, երբ Սփիւռքահա-յերը, մեզ նման, հարկադրուած էին յար-մարուել, ընդունելի համարել բաներ, որ ընդունելի չէին: Բայց չէ՞ որ այդ ժա-մանակները մնացել են հեռուում: Հիմա՛ ինչո՞ւ յարմարուել: Էլ չենք ասում այն մասին, թէ ինչպիսի բացասական ազդե-ցութիւն է ունենում այսօրինակ յարմար-ւողական վերաբերմունքը յանուն Մես-րոպեան ուղղագրութեան վերահաստատ-ման մեր՝ Հայաստանցիներիս մղած պայ-քարի վրայ: Սփիւռքահայերի այսպիսի ամէն մի յարմարուողական ելոյթ գալիս է առատ ջուր լցնելու աբեղեանականների ջրաղացին եւ ձգելու-ձգձգելու խեղաթիւ-թեան սիրապետութիւնը: Այսպիսի ամէն մի յարմարուողական ելոյթ վնասակար է նաեւ նրանով ,որ ապակողմնորոշող ազ-դեցութիւն է թողնում մանաւանդ իշխա-նութիւնների վրայ:

Սփիւռքի մեր գրչեղբայրները մտա-ծո՞ւմ են այս մասին:

Պէ՛տք է, որ մտածեն:

Եթէ արդէն մտածած լինէին, ապա այս համաժողովում անպայման պիտի սկսուէր ցանկալի ու չհեւկան այն երկ-խօսութիւնը, որը ամպիոններից եւ մա-մուլում, այսինքն՝ պաշտօնականօրէ՛ն, ոչ մի կերպ տեղի չի ունենում սփիւռքահայ եւ հայրենի գրողների միջեւ: Երկու կողմն էլ բաւարարւում է, լաւագոյն դէպ-քում, ոտքի վրայ տեղի ունեցող անհա-տական զրոյցներով: Այդ զրոյցներն էլ մեծ մասամբ աւարտում են հայրենի գը-րողների թերահաւատ կամ ներողամիտ ժպիտներով, երեւոյթ ,որը նոյնպէս պէտք է հասկանալ:

Այսօր հայրենի գրողների չարքերում մտաւորի վրայ կարելի է հաշուել ազ-գային ուղղագրութեամբ ոգեւորուողնե-րին: Սա, որքան ցաւալի, նոյնքան եւ բը-նական է: Բոլորն էլ, չնչին բացառու-թեամբ, ուսանել են աբեղեանական դա-սագրքերով: Իսկ վարժուածութեան, սո-վորութեան ուժը հեչտութեամբ չի յաղ-թահարւում:

Դրանով պէտք է բացատրել այն անհան-դուրժողութիւնը, որով հայաստանցի գը-րողները վերաբերւում են ապրային ուղ-ղագրութեանը՝ մեծ մասամբ առանց խո-րանալու հարցի բուն էութեան մէջ: Այ-լապէս, մի՞թէ, օրինակ, Սիլվա Կապու-տիկեանը կը գրէր, թէ. «Ինչ խօսք, որ ինձ աւելի լեզուն եւ ուղղագրութիւնը մեծապէս կ'օգնէր մեր աշխարհափետ ժողովրդի համախմբմանը: Սակայն պետ է իրատես լինել: Չի կարելի միանգամից վերեւից եկող հրամանով փոխել իրադրու-թիւնը, որը հաստատուել է տասնամեակ-ներով, փոխել՝ առանց մտածելու դրա մա-տակարարուած հետեւանքների մասին» («Ուղղագրութեանը չվերաբերուենք ուղղափառու-թեան», «Գրական Թերթ», 2002 Յունիսի 7): Ուրեմն, եթէ մէկը կամենայ Տիկին Կապուտիկեանի պէս «իրատես լինել», պիտի հաւատայ, թէ «տասնամեակներով հաս-տատուած» խորհրդային ուղղագրութիւ-նը փոխելու համար պէտք է համբերել նոյնքան տասնամեակներ՝ անվերջ «լրջո-րէն մտածելով դրա մատակարարուած հետեւանքների մասին»...

Լա՛ւ է, որ Օշինը բաւարարւում է մէկ տասնամեակով...

Այնուհետեւ, ամէն մարդ ինքն է իր ժա-մանակագոյցի տէրը: Բայց, երբ լրջօրէն խօսւում է «մատակարարուած հետեւանքների մասին», անպայման պէտք է բացատրու-թիւն տրուի եւ ասուի, թէ իրենցից ի՞նչ են ներկայացնում այդ «հետեւանքները», որպէսզի հանրութիւնը որոշակի պատկե-րացում ունենայ դրանց մասին: Մանա-ւանդ՝ եթէ այդ «հետեւանքները» «մա-տակարարուած» են... Տիկին Կապուտիկեանը, սակայն, բացատրութեան մասին չի էլ մտածում: Դա նրա նպատակի մէջ չի մտնում: Նրա բուն նպատակը Մեսրոպ-եան ուղղագրութեան վերադարձի ճա-նապարհը պատնէշելն է, ինչը եւ նա փոր-ձում է անել՝ առանց որեւէ համոզիչ կող-ման ունենալու:

Որքան էլ տաբօրինակ լինի, Սիլվա Կա-պուտիկեանը վրդովուած է այն իրող-թիւնից, որ «իր գերագոյն մաւոր Սփիւռ-քը ընդվզում է ու պահանջում այնպէս փոխել արեւեանական, իր ասելով՝ "քոյ-շեւիկեան, բոլշեւիկական" ուղղագրու-թիւնը, համարելով այն ամենագլխաւոր արգելքը Սփիւռք - Հայրենիք միասնու-թեան մէջ»: Եւ Տիկին Կապուտիկեանը կոչ է անում. «Բայց եկէք սթափ նայենք ի-րականութեանը»:

Յարգարժան Տիկին Կապուտիկեանը հաշուի չի առել, որ ինչքան «սթափ նա-յենք իրականութեանը», այնքան աւելի՛ պիտի համոզուենք, որ աբեղեանական ուղղագրութիւն կոչուածն իրօք «քոյշ-ւիկեան, բոլշեւիկական» է, եւ դա՝ ոչ թէ «իր (Սփիւռքի - Լ.Մ.) ասելով», այլ՝ որպէս պատմական իրողութիւն: Ուրեմն, ինչքա՞ն է արդարանում Սփիւռքին նա-խատինք կարդալը, երբ որ նա՝ Սփիւռքը, աբեղեանական եւ, այո՛, բոլշեւիկեան, բոլշեւիկա՛ն խեղաթիւրման առաջին օրուանից իվեր ընդվզած է եւ, փառք ու պատիւ իրեն, չարունակում է պահանջել իր համազգային իրաւունքը:

Պէտք է ասել, որ մենք՝ հայաստանա-բնակ Մեսրոպեանականներս, Սփիւռքի մեր հայրենակիցների նման, նոյնպէս «սթափ ենք նայում իրականութեանը» եւ, Մեսրոպեան ուղղագրութիւնը վերականգ-նելու դէպքում, ոչ մի տեղնապալի «մօ-տալուտ հետեւանքներ» չենք տեսնում: Ընդհակառակն, մեր պատկերացմամբ, Մեսրոպեան ուղղագրութիւնը կը վերա-կանգնուի Հայաստանի նախագահի հրա-մանագրով, որից անմիջապէս յետոյ պե-տականօրէն կ'որոշուի անցման չորս-մէկ կամ երկու տարուայ չափով, որի ըն-թացքում դասական եւ գործող ուղղագը-րութիւնները կարող են կիրառուել ըստ ցանկութեան: Անցման չրջանում մարդիկ կը ճանաչեն, կը սովորեն իրենց մայրե-նի ուղղագրութիւնը, կ'ընտելանան, կը վարժուեն նրան եւ կը սիրեն: Եւ այլեւս չի լինի ուղղագրութեան այս չարաչէտ խնդիրը, որը Կրեմլի հրամանով պարտա-դրուել է մեզ 1922ին, եւ որն անհրապէշ-ւթ է լուծել ժամ առաջ, որպէսզի անդուն-դները, որքան կարելի է չուտ, հա յ ե-ր ը ն գրելու իրաւունք ստանան, իրա-ւունք, որից զուրկ են ահա 82 տարի...

Այնպէս որ, ոչ մի տագնապալի «մօտա-լուտ հետեւանքներ» չկան, եւ թնական է, որ Օշինն էլ «մօտալուտ հետեւանքնե-ր»ի մասին որոշակի ոչինչ չգիտէ: Նա, պարզապէս, նախապաշարուած է խորա-հրդային «իրատեսութեամբ» եւ ան-տիկեանական «իրատեսութեամբ» եւ ան-կեղծօրէն խոստովանում է՝ «Ջես գիտեր՝ ինչե՛ր կրնան ըլլալ»:

Տիկին Կապուտիկեանի վերոյիշեալ յոդ-ւածին մենք աւելի հանգամանօրէն անդ-

ԼՐԱՏՎԱԿ ԱՐՁԱԹԱԳԻՐ

ԳԱՌԶՈՒ

Գառզուի գործերը, որոնք կը վերաբերին 1930 - 1991 շրջանին կը ցուցադրուին Մանթոնի (Մովային Ալպեաններ) Եւրոպայի Պալատին մէջ, մինչեւ Հոկտ. 18:

ՍՏԱՅԱՆՔ

ՊԱՐՈՆ ՆԻԿՈՂՈՍ
(մանկապատանեկան, պատկերազարդ)

ԱՆԱՀԻՏ ՍԱՐԳՍԻՍԵԱՆ

Երեւան, 2004
(Պատուիրել հեռ. 01-48-50-20-95)

ՅԱԿՈԲ ՏԵՒՈՒՆԵՂԲՕՐ ԴԱԳԱՂԸ, ԱՌԵՂԾՈՒԱԾ ԹԷ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

2002 Հոկտեմբերին «Փիլիփըլ Արքէոլոճի Ռիվիու»ն տեղեկացուց հնագիտական մեծ գիւտի մը մասին: Յայտարարեց թէ յայտնաբերուած է Տեւոնեղբօր Յակոբոսի դագաղը Երուսաղէմի մէջ եւ թէ կը կրէր հետեւեալ արձանագրութիւնը՝ «Յակոբ որդի Յովսէփայ, եղբայր Յիսուսի»:

Թերթը յիշեալ դագաղի արձանագրութեան առումին կարեւոր դործը Ա. դարու երրայերէնի եւ արամերէնի երկու մասնագէտներու յանձնած էր: Այս զոյգ մասնագէտներու քննութեան համաձայն, դագաղին վրայ փորագրուած արձանագրութիւնը կը կրէր առաջին դարու արամերէն տառերու ճիշդ ձեւը եւ բառերու դործածութիւնը: Երկու ուրիշ մասնագէտներ եւ «Ճէրօրճիքըլ Սըրվէյ ափ Իսրայէլ» կազմակերպութենէն, քննարկեցին դագաղը ամէն իր մանրամասնութիւններով:

Դագաղը, ի միջի այլոց, էյայտնաբերուեցաւ հնագիտական պեղումի մը ընթացքին, այլ սոսկ հրեայ հնավաճառի մը կողմէ, որ կը զբաղի նման հնագիտական ապրանքներու առուծախով: Յայտնի չէ դագաղին ուրկէ ըլլալէ եւ կամ անոր ծագումը: Երբ դագաղի յայտնաբերման մասին հնագէտ մասնագէտները սկսան թերու դէմ կարծիքներ յայտնել անոր կեղծ թէ իրական ըլլալուն մասին, 2003 Մարտին, Իսրայէլի Հնութիւններու տնօրէնութիւնը յանձնախումբ կազմեց 14 մասնագէտներէ բաղկացեալ, որպէսզի քննեն այս յայտնաբերումը, ներառեալ արամերէն արձանագրութիւնը: 2003 Յունիս 18-ին նոյն տնօրէնութիւնը յայտարարեց որ «Յակոբ Տեւոնեղբօր դագաղը» կեղծ է:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Յակոբ Տեւոնեղբօր դագաղը կը կոչուի «աճիւններու տուփ»: Առաջին դարու Հրեաներ իրենց մեռելները կը թաղէին ժայռափոր տեղեր մինչեւ դիակին ապականիլը: Մէկ կամ երկու տարի յետոյ, ոսկորները կը փոխադրէին ու կը դետեղէին նման քարէ տուփերու մէջ:

Հնավաճառը, որ Յակոբոս Տեւոնեղբօր դագաղը վաճառեց Անտրէ Լըմէրլին, Օռէտ Կոլան անունով Հրեայ մըն էր: Օռէտ Կոլան յայտնի է Իսրայէլի մէջ որպէս մեծագոյն հնավաճառներէն մէկը: 2003 Մարտ ամսուն, Իսրայէլի ոստիկանութիւնը ձերբակալեց Օռէտ Կոլանը բայց յետոյ ազատ արձակուեցաւ երբ Թէլ Աւիվի անոր կալուածին աշխատանոցին մէջ դտնուեցան հին կնիքներ եւ աշխատցուած արձանագրութիւններ, փորագրութեան գործիքներ եւ այլ հնագիտական պեղումներէ դուրս եկած ապրանքներ: Իսրայէլի ոստիկանութիւնը պիտի չարուներ Օռէտը հարցաքննել:

Իսրայէլի հնութիւններու տնօրէնութեան կողմէ կազմուած 14 մասնագէտներէ բաղկացեալ յանձնախումբը յանձնեց իր վերջնական տեղեկագիրը, որով կը յայտարարուի թէ «Դագաղը իսկական է, սակայն արձանագրութիւնը՝ կեղծ եւ թէ գործն է երկու առանձին անհատներու»:

ՅԱԿՈԲՈՍ ՏԵՒՈՒՆԵՂԲՕՐ ԳԵՐԵԶՄԱՆԸ
ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ

Իսկ ինչ կը վերաբերի Երուսաղէմի առաջին եպիսկոպոս եւ առաքելոց գլուխ՝ Յակոբոս Տեւոնեղբօր առաքեալի դերեզմանին աւանդական տեղին, կը մէջբերենք Սաւարանեանցի «Պատմութիւն Երուսաղէմի» գիրքէն ներքոյիշեալ տեղեկութիւնը իբրեւ փաստ, որ Յակոբոս Տեւոնեղբայր թաղուած է Սրբոց Յակոբեանց Տաճարի աւագ սեղանին ներքեւ եւ ոչ այլուր, եւ թէ անոր աճիւնները դարերէ ի վեր կը մնան աւագ սեղանին ներքեւ եւ աճիւններու այլուր փոխադրութեան ոչ մէկ պատմական յիշատակութիւն կայ:

Սաւարանեանց իր «Պատմութիւն Երուսաղէմի» գրքին մէջ կը գրէ հետեւեալը.. «Սուրբ Գահանայապետիս դերեզմանը ազգային աւանդութեան համաձայն, կը գտնուի Ս. Գաղաքիս մայր եկեղեցիին մէջ, իր անունով կառուցուած աւագ սեղանին ներքեւ: Զայս մասամբ կը հաստատէ նաեւ Լեւոն Ալլատիոս՝ ըսելով. "Յովսափատի ձորէն ոչ շատ հեռու կը գտնուի Յակոբ Առաուածեղբօր վանքը, ուր Հայերը կը բնակին" (Վարք Սրբոց, Վկ. Էակ. Արդ. Հատ. Ժ. եր. 257): Հաւանական է որ Արդարին նահատակութենէն ետք իրենները զայն վերցուցած ու ամփոփած ըլլան ձորին մօտիկ իր սեփական բերնակարանին մէջ, որ է այժմեան Սրբոց Յակոբեանց վանքը: Իսկ նահատակութեան տեղը կը գտնուի ձորին մէջ, Աստուածածնի դերեզմանին ճամբուն վրայ գտնուող կամուրջին քով: Անդէր ու Զաքարիայի դերեզմաններուն դէմ, եւ ուխտատեղի է բոլոր քրիստոնեաներուն, ու սեփական է Հայոց՝ եղերքը գտնուած ջրհորով միասին» (Տիգրան Հ. Թ. Սաւարանեանց, «Պատմութիւն Երուսաղէմի», տպեալ Երուսաղէմ, 1931. Ա. Հատոր, էջ 147-148):

ԲԱԳՐԱՏ ԱՐՔ. ՊՈՒՐՃԷՔԵԱՆ
Անդամ Ս. Յակոբեանց Միաբանութեան

ՍՏԱՅԱՆՔ

ՀԱՅՈՒԹԵԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ
ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐԵԱՆ
ԵՒ ԱՐԴԻ ԵԳԻՊՏՈՍԻ
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ

ՍՈՆԱ ԶԼԻԹԼԵԱՆ

Հրատարակութիւն
Մոնրէալի Եգիպտահայերու Միութեան

Գահատա, 2004

բարբառել ենք նորերս լոյս տեսած մեր դրքոյկ (Լեւոն Միրիջանեան, «Մեր Մեծապանչը», Երեւան, 2004), ուստի բաւարարուենք այսքանով, մեր սիրելի հայ գրչեղբայրներուն յիշեցնելով հին խօսքը, թէ՝ ճշմարտութիւնը քարձր է քարեկամութենից:

Բարեբախտութիւն է, որ մեր չուրջը հնչում են նաեւ սթափ եւ հիմնաւոր ձայներ: Մի այդպիսի ձայն է Գրողների հաժողովում տոքթ. փրոֆ. Սուրէն Դանիէլեանի «Նահանջ առանց երդի եւ համահայկական պատէչներ» խորագրով զեկուցումը («Գրական Թերթ», 2004 Յուլիսի 16): Հայրենիք - Սփիւռք կապերին խորապէս դիտակ մանկավարժն ու ներհուն դրականագէտը միանգամայն լուրջ անհանգստութիւն է արտայայտում Մեսրոպեան ուղղագրութեան հանդէպ տիրական դարձած անհանդուրժողութեան կապակցութեամբ:

Անդրադառնալով մայրենի լեզուի զարգացման առջեւ ծառացած ժամանակակից խնդիրներին, տոքթ. փրոֆ. Սուրէն Դանիէլեանը վերոյիշեալ զեկուցման մէջ ասում է. «... մանաւանդ ուղղագրութեան բնոյթ կարծես պետական մակարդակի թապու է դրուած, եւ վերահսկւում են հարցադրումները, այսինքն՝ թող խօսեն, բայց բնաւորկումներն անխնայ են, ի վերջոյ, Հայաստանում փոքրամասն կողմնակիցները կ'աղմկեն, նրանց չեն լսի, ժամանակն էլ գնում է առաջ, Սփիւռքն էլ իր հերթին հաշտուելու է, քանի որ տեսանելիօրէն մարում է նրա ինքնուրոյն լոյսը: Ահա սա է բայլերի տրամաբանութիւնը: Հիմա, իրր, ժամանակը չէ, թող մնայ յետոյ, իսկ եթէ գայ ենթադրեալ ժամանակը, բանակցող կողմ այլեւս չի լինի»:

Աւուած է սրտի ցաւով, ազգային արժէքների հանդէպ հոգացողութիւնից բղխող տագնապի զգացումով: Եւ աւուած է անողոք ճշմարտութիւնը՝ միտումնաւոր ձգձգումների նպատակի վերաբերեալ. «հիմա ժամանակը չէ», «յետո՛յ», «յետո՛յ»... Իսկ «յետոյ» Պիւռոսեան յաղթանակ կը տանի մեծամասնութիւնը՝ իր փայփայած «արեւելահայերէնի ուղղագրութեամբ», որովհետեւ «քանակցող կողմ այլեւս չի լինի»... Եւ զարձեալ կը կազմակերպուեն համաժողովներ, զարձեալ կը խօսեն ու կը ճառեն՝ «մէկ ազգ, մէկ մշակոյթ» չեւորելով, եւ զարձեալ քարաւան կազմած կը դնան Օշականի Սուրբի չիրիմը համբուրելու՝ թնաւ խղճի խայթ չզգալով Սուրբի ուղղագրութեան դէմ կատարած հաւատուրացութիւնից...

Մենք չատ հեռու չենք այդ «յետոյ»ի դարպասներից, բայց դեռ ամէն ինչ կորած չէ: Եւ կարող է չկորչի՛լ: Կարող է պահպանուի՛լ, փրկուի՛լ, եթէ գործենք միասնաբար, եթէ վերջ տանք յարմարողութեանն ու անհանդուրժողութեանը: Մանաւանդ՝ եթէ վերջ տանք «մօտալուտ հետեւանքների մասին» առասպելաբանելուն...

Լ. Մ.
mirlevon@cornet.am

Օգոստոս 23, 2004

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԻԻԶԱՆԴԻՈՆԸ

ՆՇԱՆ ՊԼԷՏԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՄԱՍ

Ծախահարութիւնը ուժեղ եղաւ, քանի անցորդներ ալ ունկնդիր էին եղած Սարգիս աղայի ճառախօսութեան: Ժողովուրդն մէկը լսաւ.

- Տեսա՞ք մարդը, խելքը գլուխը խօսող մարդը... Շատ ապրէ՛, հայրենակից:

Սարգիս աղա խոնարհութիւնը ըրաւ նըստած տեղը: Ամէնքը չմած ու չացած էին:

Լռութեան մէջ մէյ մէկ հատ ալ քաշեցին աղբային օղիէն: Թօսեալը ըսաւ.

- Ա՛ս ասանկ չ'ըլլար: Իրիկուն եղաւ: Քիչ մըն ալ դուրս ու դարեկրատուն մը երթանք:

Բոլորը համաձայն գտնուեցան: Սարգիս աղան մէկերնին առին եւ դուրս ելան դեպի իմանատունէն: Սկսան քալել դէպի Շիւլի: Նիրացու Տրդատ կ'երգէր.

Արիէ, հայկազունք, յառաջ ընթանայիք
Նահանապրութեան նոր քարեր մ'ալ տանիք...

Ահագին բարմութիւն կար ճամբուն վրայ: Շատեր կ'ըսէին ... Ինչ ձայն, ինչ ձայն...

- Զմանչեա՞ր, Ղալաթիոյ եկեղեցիին երգացողներէն է:

- «Սուրբ սուրբ» մը կ'ըսէ որ...

- Խաղաքը ծախած է...

- Աւելի լաւ:

Թօսեալը գինետունէ մը ներս մտաւ: Միւսները հետեւեցան: Բազմութիւնը զբաղած էր գրեթէ բոլոր սեղանները: Թօսեալը խանութին տիրոջը առջեւ արձանի պէս կեցաւ՝ ըսել ուզելով.

- Շուտ, մեզի սեղան մը ու չորս աթոռ:

Խանութպանը լրար անցաւ: Արձակեց հրամանները: Վազեց Թօսեալըին առջեւ: Ըրաւ խոնարհութիւնը - Հրամմեցէք:

Քիչ վերջ խումբը առաջնորդուեցաւ անկիւն մը, ուր սեղան մը եւ աթոռներ դրուեցան: Ահագին աղմուկ գինետան մէջ: Բերուեցան չիլով օղիները եւ տաք ու պաղ աղանդերները:

Տիրացու Տրդատ դեռ կը ծամէր «Սահմանադրութեան» երգը: Ձեռքին քանի մը դասէթ: Կրակը վերանորոգեցին: Անուշ խօսքեր լսին իրարու: Թօնի միշտ Սարգիս աղայի աչքերուն մէջ կը նայէր: Թօսեալը ըսաւ.

- Տրդատ, բան մը կ'երգե՛ս...

- Չէ, ճանըմ, չատ ալմուկ կայ...

- Դուն բան մը կանչելու եթէ միտք ունես, ես կը լռեցնեմ բազմութիւնը:

- Բան մը կ'ընենք: Քիչ մը վերջը:

- Անանկ է նէ, մէյ մէկ հատ ալ:

- Կենաց... կենացդ... անոյշ... անոյշ անմահութիւն... Աստուած բարին կատարէ... Գործերու յաջողութիւն... երկար կեանք... Ազատութի՛ւն, Ազատութի՛ւն...

Թօսեալը ոտքի կանգնեցաւ ու պոռաց.

- Հայրենակիցներ, հինգ վայրկեան լռութիւն: Մե բարեկամը հայկական երգ մը պիտի կանչէ:

Լռութեան ոյս պատուէրը պատճառ եղաւ որ մարդիկ ու կիներ իրենց աթոռները զարձնեն ձայնին եկած կողմը, ահագին ալմուկ հանելով: Ուրիշներ տապալեցին աթոռներ, այդ առաջարկութեան վրայ յայտնուեցան կարծիքներ, պատահեցան մարդեր ալ որոնք ակսան պոռալ.

- Է՛, լռութի՛ւն, լռութիւն...

- Սո՛ւս, սս՛տ... սո՛ւս...

- Լռեցէ՛ք տէ՛ր...

Ոմանք ոտքերնին դետին զարնել սկսան, ուրիշներ զաւազաններ զարկին դետինը կամ սեղանին վրայ: Կիներ ու մանուկներ ալ չխերը սեղանին զարկին կամ պատառաքաղները չխչերուն ու պնակներուն:

- Լը՛-ռո՛-ւթի՛ւն... լը՛-ռո՛-ւթի՛ւն:

Մէկը պոռաց.

- Սիլանս...

Ուրիշ մը.

- Սիւքիւտ...

Թօսեալը ոտքի վայ մնացած էր անճար վիճակով: Իր աչքերէն հայհոյութիւն կը վազէր: Շրթունքը դողալ սկսաւ: Սարգիս աղայի դարձաւ ու ըսաւ.

- Քիւրտիստան է սա...

Թօնի պատասխանեց.

- Վայրենի են: Բօրֆօ լա Մատօննա... բօրֆօ Տիօ... բօրֆօ Սանթէ...

Սարգիս աղա նցաղ ըրաւ Թօսեալըի, որ նստի: Թօսեալը հնազանդեցաւ: Տիրացու Տրդատի արժանապատուութենէն արիւն կը վազէր:

- Սարգիս աղա ըսաւ, կամաց ու հեղինակաւոր ձայնով.

- Թօսեալը, տեղդ նստէ: Քէյֆերնուս նայինք: Թող լրենք մենէ խնդրեն: Կենացդը: Աս ժողովուրդը մարդ ըլլալու համար դեռ չատ հաց կ'ուզէ: Մինչեւ հիմակ Համիտի հացը կերած են: Թող քիչ մըն ալ Ազատութեան հացը խրսեն: կենացդ:

Սրահին մէջ լռութեան նմանող բան մը ստեղծուեցաւ: Շատեր քննադատութիւնով կը զրաղէին, ուրիշներ ինքնարդարացումով:

- Լռութիւն յանձնարարողները աւելի ալմուկ հանեցին...

- Գաւազաններով լռութիւն պատուիրել չ'ըլլար...

- Թօսեալ չհասկցողին պատուան պէտք է...

- Երկու վայրկեան կզակնին փակել չեն գիտեր...

Մէկը պոռաց իր գլխովի ձայնով.

- Ներողութիւն խնդրելով, վը փափաքինք որ հայկական երգը ըսուի...

- Կ'ուզե՞նք, կ'ուզե՞նք...

Սպասարկող երիտասարդը, ափսէի մը մէջ դրած չորս շիշ օղի եւ բազմապան աղանդերներ՝ մօտեցաւ մեր խումբին.

- Աստնք ընտանիքի մը կողմ է ձեզի կը ղրկուին: Ձեզի համար ապսպրուեցաւ:

- Ո՞վ է աս ընտանիքը...

- Սա միւս ծայրը նստողներն են...

Սարգիս աղա ըսաւ.

- Ծօ՛, Գրիգորիկն է...

- Համբաւեան Գրիգորը, իր կնոջ հետ, իր կնքահօր եւ ուրիշ բարեկամներու հետ:

Թօսեալը երեսը կախեց եւ ըսաւ.

- Մերժենք իր ղրկած օղիները:

- Համբերութիւն: Աստնկ բան չ'ըլլար, ըսաւ Սարգիս աղա:

- Խոզէն թել մը փրցնելը Աստուծոյ հաճոյք կը պատճառէ,- ըսաւ Թօնի:

Տիրացու Տրդատի արժանապատուութեան վէրքը սպիացած էր: կարծիք չէր յայտնեց:

(Շար. 105)

(Շար· Ա· էջէն)

վերադառնան տուն: Նախարարը խաղերու աւարտի նախօրեակին յայտնած էր·«Մենք չենք կարող լինել 180րդ տեղում, որովհետեւ մենք ունենք բաւականաչափ լաւ մարզիկներ, այսօր էլ ունենք այլ երկրներից մեր լաւ մարզիկներին Հայաստան հրաւիրելու, եւ ընդհանրապէս Եւրոպայի, աշխարհի եւ Ոլիմպիական խաղերի ախոյեանութիւններ անեցնելու հնարաւորութիւն»: Այսուհանդերձ, Հայաստանի ինքնաստուգութիւնը եղած է տարբերիլ դրացի բոլոր երկիրներու հաւաքականներէն, ձեռք ձրդուած զերօ արդիւնքով:

***

ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ 125ԱՄԵԱԿԸ

Արամ Մանուկեան (1879-1919) ըր խորհրդանիշ դէմքերէն է 1915ի Վանի հերոսամարտին, ծննդեան 125-ամեակը նշուած է Օգոստոս 27ին Ազգային դրադարանին մէջ ուր դասախօսած է պատմագէտ Արմէն Կարապետեան: Ա· Մանուկեան ծնած է Սիւնիքի մարզը, Շուշիի եւ Երեւանի մէջ ուսանելէ ետք մասնակցած է ազգային ազատագրական պայքարին: Կազմակերպած ու ղեկավարած է Վանի հերոսամարտը, ղեկավարած նաեւ Վանի 70 օրուան անկախութիւնը: Սարդարապատի ու Բաշ Ապարանի մարտերուն ապահոված է բանակին թիկունքը: Առաջին անկախութեան եղած է Ներքին գործերու նախարար: Մահացած է 1919ին Երեւան, թաղուած Թոխմախի պանթէոնին մէջ:

«ՅԱՌԱՋ»Ի ընթացիկ ազդերու սակագինը

	€	
Մահազդ	140	(167,44)
Հոգեհանգիստ	125	(149,50)
Շնորհակալիք	125	(149,50)
Հարսնիք-Նշանուխ	125	(149,50)
Մկրտիք	125	(149,50)

Բոլոր ազդերու սակերուն վրայ, հարկ է աւելցնել 19,60% Թէ·Վէ·Ա· (տե՛ս· փակագիծի մէջ ընդհ· գումարը):

Այս գիները կը վերաբերին մէկ անգամ հրատարակելի ազդերու, ՄԻՆՉԵՒ ՄԷԿ ՔԱՌՈՐԴ ՍԻՒՆԱԿ (25 տող) մահազդներու պարագային եւ 1/8-րդ (12-13 տող) մեռելին:

Առեւտրական եւ այլ ծանուցումներու համար, դիմել թերթին վարչութեան:

Rentrée des classes

Les inscriptions pour l'année 2004/05 à l'école hebdomadaire «Siamanto» de Bagneux auront lieu :
le mercredi 15 septembre à 15 heures

à l'école Henri Wallon,
2 avenue de Stalingrand à Bagneux

Au cours de ces inscriptions, une réunion conviviale aura lieu, comme chaque année, sur le déroulement de la nouvelle année scolaire.

Les cours commenceront le mercredi suivant -22 septembre : le matin pour les plus jeunes enfants -environ 5 à 10 ans-, et l'après-midi pour les adolescents jusqu'au baccalauréat et les enfants au dessus de 10 ans.

Pour tout renseignement :
— Mme Lucie Dossikian: 01 45 46 10 11
— Mme Elisabeth Davidian: 01 46 65 81 53

Pèlerinage à Tallard

A L'OCCASION
DU 1600e ANNIVERSAIRE
DE LA MORT DE SAINT GREGOIRE
sous l'égide
de l'**Eglise Apostolique Arménienne**
avec le concours
de l'**Association Cultuelle**
des Arméniens de Gap
et des Hautes Alpes

DIMANCHE
19 SEPTEMBRE à 10h30

La messe sera célébrée
par le **Révérend Père Zadik AVEDIKIAN**
Recteur de la Cathédrale Apostolique Arménienne de Marseille
et Vicaire du Délégué pour l'Europe du Catholicossat de tous les Arméniens pour le Midi de la France
avec la participation
de la Chorale **Sahak-Mesrop**
sous la direction de
M. Khatchig YILMAZIAN

Renseignements et réservaitons :

— Cathédrale Apostolique Arménienne : Tél. 04 91 77 84 70;
— Association Cultuelle des Arméniens de Gap : Tél. 04 92 51 71 80 / 04 92 51 00 87
Inscriptions S.V.P. avant le 11 septembre

Participation aux frais :
- Aller-retour seul : 20 Euros;
- Aller-retour avec repas : 40 Euros.

CROIX BLEUE DES ARMENIENS DE FRANCE
ՎԵՐԱՄՈՒՏ

ՍԵՊՏԵՄԲԵՐ 2004

— **PARIS**
17 rue Bleue 75009 Paris
Araxie Karanfilian : 01 39 83 71 19
— **ARNOUVILLE**
71 avenue Henric Barbusse
95400 Arnouville-lès-Gonesse
Mireille Guemdjian : 01 39 90 63 89
Hripssimé Altounian : 01 39 87 08 73
— **ISSY-LES-MOULINEAUX**
MCA 45 rue de la Défense
92130 Issy-les-Moulineaux
Chaké Guiragossian : 01 46 42 45 25 (le soir)
— **SEVRAN**
MCA 17 rue Charles Péguy
93190 Livry-Gargan
Madeleine Papazian : 01 43 83 87 68
Ardemis Garabed : 01 43 85 03 76
— **VALENCE**
MCA 32 rue Pompery
26500 Bourg-lès-Valence
Elisabeth Alachian : 04 75 56 12 99 (l'après-midi)
MCA : 04 75 55 12 49
— **DECINES**
MCA 15 rue du 24 avril 1915
69150 Décines
MCA : 04 78 49 42 97
— **GRENOBLE**
40 avenue Ambroise Croizat
38400 St Martin d'Hères
Nicole Saboundjian : 06 79 42 53 91
Sylva Nersessian : 04 76 44 56 43
— **ST MAURICE DE BEYNOST**
Centre Culturel Jacques Brel
01700 St Maurice de Beynost
Odette Tachdjean : 04 78 31 65 07
— **VIENNE**
MCA 9 rue du Cirque
38200 Vienne
Odette Maghakian : 04 74 53 25 91
MCA Vienne : 04 74 53 43 80
— **MARSEILLE-VILLE**
MAJC 12-14 rue Saint Bazile
13001 Marseille
Denise Gabrielian : 04 91 77 61 66 (le soir)

Հայերէն լեզուի դասընթացքներու եւ այլ գործունէութիւններու տեղեկութիւններու համար հեռաձայնել ձեղի մօտ մասնաճիւղի պատասխանատուներուն:

***

ՓԱՐԻԶԻ ՄԱՍՆԱՃԻՒՂ

Դասընթացքները կը սկսին
ՇԱԲԱԹ, ՍԵՊՏԵՄԲԵՐ 18, ԺԱՄԸ 14·30ին
17 rue Պէօ 9րդ թաղամաս - Մեթրօ Գառէ
Մանկապարտէզ 4 տարեկանէն սկսեալ
(կը խնդրուի արագօրէն կապ հաստատել պատասխանատուներուն հետ).
+ CPէն մինչեւ Պաֆալօրէա, նաեւ չափահասներու դասարան:
Կ'ուսուցուին Հայերէն լեզու, Հայոց պատմութիւն, Երգ, Թատրոն, Պար:
Հեռաձայնել՝
- Արթսի Գարաճֆիլեան՝
01·39·83·71·19

***

La Section «Lola Sassouni»
de Marseille
organise du 9 au 23 septembre

un voyage en Arménie

— Hôtel. Tourisme en car air conditionné.
Etchmiadzine, Gumri, Ani, Khor Virab, Noravank, Haghbad, Alaverdi, Gueghart Garni, Datev, Goris, Sardarabad, etc...
— Restaurant tous les soirs et piqueniques assurés.
— 3 jours au Karabagh chez l'habitant ou hôtel (+ 30 Euros).
Départ de Marseille
Prix : 1595 Euros par personne tout compris, visa inclus hors assurance.
Réservations :
- Jeanine : 04. 94. 32. 11. 87
- Marie : 04. 91. 36. 14. 05
- Lina (le soir) : 04. 91. 89. 22. 18

ASSOCIATION SAINTE-CROIX DES ARMENIENS CATHOLIQUES DE FRANCE

DIMANCHE 12 SEPTEMBRE

GRANDE FETE CHAMPETRE

Animée par l'Orchetre SPITAK

qui se déroulera dans les jardins
du Dr et Mme KEGHIAN
4, rue du Dr Rampont, à Villiers-le-Bel
(en cas de pluie, la fête se déroulera dans la salle paroissiale d'Arnouville-lès-Gonesse, 69 avenue Henri Barbusse 95400 Arnouville)

Programme : Divine Liturgie à 11 heures
Repas à partir de 13 heures
Musique par l'Orchestre SPITAK
Jeux pour les enfants
Tirage des deux **Tombolas** (Enfants et Adultes)

Participation aux frais de la journée : Adultes 20 Euros
Enfants 12 Euros

Réservation par tél. : 01 44 59 23 50 (Paroisse de Paris)
01 40 51 11 90 (Centre Culturel)

Association "MACHTOTZ"
Pour la Défense de la Langue Arménienne

Rentrée de l'année scolaire 2004/05

1) Cours intensif d'arménien 1er niveau pour non-arménophones

Ces cours s'adresseront aux débutants de 8 à 70 ans.
Les élèves seront capables de parler, lire et écrire l'arménien
L'enseignement est assuré par Mme **Hilda Kalfayan-Panossian**
avec sa **METHODE AUDIOVISUELLE**
25 SEPTEMBRE 2004 — 22 JANVIER 2005 : STAGE DE 50 HEURES
le samedi matin de 9h à 12h à Paris **(Absentéisme exclu)**

2) cours de 2e, 3e, et 4e niveaux

25 SEPTEMBRE 2004 — FIN JUIN 2005 :
le samedi entre 12h et 15h à Paris
Les nouveaux élèves sont acceptés à ces cours après un test de niveau.

3) Vous pouvez aussi vous procurer votre Manuel d'arménien occidental pour les non-arménophones

Une méthode audiovisuelle utilisable chez soi.
3 volumes en couleur + 1 coffret de 4 cassettes audio
85 Euros + 8 Euros frais d'expédition.

Pour tous ces cours et le manuel :
RENSEIGNEMENTS et INSCRIPTIONS : Dès maintenant
01 47 50 97 51 et 01 39 46 21 66.

Imprimé sur les Presses du Journal «HARATCH»
83 rue d'Hauteville 75010 Paris
Siret : 571 027 317 000 15 — Commission Paritaire : N° 0609 K 84976